ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2023–2024

Հարգելի Լոս Անջելեսի միացյալ շրջանի ընտանիքներ՝

Ես ուրախ եմ ողջունելու ձեզ 2023-2024 ուսումնական տարում: Տարվա սկիզբը հսկայական հնարավորություններ ունի. դա տարվա այն ժամանակն է, երբ աշակերտները կարող են գծել նոր ուղի, սովորել նոր հմտություն կամ հոբբի, գտնել առարկաներ և գործողություններ, որոնք կվառեն իրենց երևակայությունը, կամ մեկնում են ճանապարհորդություն՝ գտնելու իրենց տեղը՝ աշխարհը փոխելու համար: Բարի գալուստ նոր տարի, որը կարող է ամեն ինչ փոխել ձեր աշակերտի համար:

Ես հպարտ եմ, որ վերջերս ավարտեցի իմ առաջին ամբողջական տարին որպես Լոս Անջելեսի միացյալ շրջանի վերակացու: Կարճ ժամանակահատվածում մենք միասին հսկայական բաներ արեցինք: Մենք կայունացրինք ընդգրկվածությունը, ավելացրինք հաճախելիությունը, նվազեցրեցինք քրոնիկական բացակայությունները, գործարկեցինք նոր ծրագրեր և նախաձեռնություններ, ավելացրինք ուսուցման կորցրած ժամանակը կրկնուսուցման և Արագացման օրերի միջոցով, սկսեցինք շրջել ուսման կորստի ալիքը, ապահովեցինք Շրջանի ֆինանսական առողջությունը և բարելավեցինք աշխատավարձն ու աշխատանքային պայմանները մեր նվիրյալ աշխատողների համար: Ձեր համագործակցությունը կարևոր է եղել այս գործում, և ես երախտապարտ եմ, որ ունեմ հիանալի ընտանիքներ՝ համագործակցելու համար ողջ Շրջանում:

Այս ուսումնական տարին կունենա նույն շեշտադրումը, ինչ նախորդ տարին. մենք հավատարիմ և կենտրոնացած ենք մնում մեր աշակերտների վրա և մեր ջանքերը կնվիրենք 2022-26 թվականների ռազմավարական ծրագրի հետագա իրականացմանը: Որպես այս աշխատանքի մի մաս, մենք կձգտենք կանխամտածված և ռազմավարական ակադեմիական արագացում ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ հասնի իր ողջ ներուժին: Ես հավատարիմ եմ նրան, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի իր ողջ կարողությունը և բացարձակ եռանդով հետապնդի իր երազանքները:

Ծնողի/աշակերտի ձեռնարկը ուրվագծում է այն կանոնները և ընթացակարգերը, որոնք առաջնորդում են աշակերտական կյանքը Լոս Անջելեսի Միավորված շրջանում, ինչպես նաև այն ռեսուրսները, որոնք հասանելի են ձեզ և ձեր աշակերտներին: Մենք անում ենք ամեն ինչ այնպիսի առաջարկներ տրամադրելու, որոնք օգուտ կբերեն յուրաքանչյուր աշակերտի, և մենք խրախուսում ենք ձեզ մանրամասնորեն կարդալ այս փաստաթուղթը՝ բացահայտելու այն ծրագրերը, որոնք լավագույնս կաջակցեն ձեր աշակերտին:

Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր ընտանիքներին՝ մեր աշակերտներին և դպրոցներին ձեր մշտական աջակցության համար: Ձեր նվիրվածությունն ու հավատարմությունը իսկապես անփոխարինելի են: Ձեր աշակերտի ակադեմիական փորձի հետ կապված կարևոր տեղեկատվության համար խնդրում ենք ներբեռնել LAUSD Mobile App 3.0-ը, և ձեր դպրոցներից և շրջանից կարևոր հաղորդագրություններ ստանալու համար հետևեք մեզ սոցիալական մեդիայում:

Հարգանքով,

Ալբերտո Մ.Կարվալյու

Դպրոցների վերակացու

ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

<u>ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ</u>
333 South Beaudry Avenue, 24th Floor
Los Angeles, CA 90017
Հեռ.՝ (213) 241-6389
Ֆաքս՝ (213) 241-8953

ԴՈԿՏ. ՋՈՐՋ Ջ. ՄԿԿԵՆՆԱ III – Կրթության խորհրդի շրջան 1
Հեռ.՝ (213) 241-6382 Ֆաքս (213) 241-8441
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Տեղային գրասենյակ՝ 5120 11th Avenue, Los Angeles, CA 90043
Հեռ.՝ (323) 298-3411 Ֆաքս՝ (323) 298-3406
Էլ.հասցե՝ george.mckenna@lausd.net

Դոկտ. ՌՈՍԻՈ ՌԻՎԱՍ – Կրթության խորհուրդ շրջան 2
Հեռ.՝ (213) 241-6020 Ֆաքս՝ (213) 241-8943
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Էլ.հասցե՝ rocio.rivas@lausd.net

ՍՔՈԹ ՇՄԵՐԵԼՍՈՆ – Կրթության խորհուրդ շրջան 3
Հեռ.՝ (213) 241-8333 Ֆաքս (213) 241-8467
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Տեղային գրասենյա՝ 6621 Balboa Blvd., Lake Balboa, CA 91406
Հեռ.՝ (818) 654-3785 Fax. No. (818) 654-3788
Էլ.հասցե՝ scott.schmerelson@lausd.net

ՆԻԿ ՄԵԼՎՈԻՆ – Կրթության խորհուրդ շրջան 4
Հեռ.՝ (213) 241-6387 Ֆաքս (213) 241-8453
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Էլ.հասցե՝ nick.melvoin@lausd.net

ՋԵԿԻ Բ. ԳՈԼԴԲԵՐԳ – Կրթության խորհուրդ շրջան 5
Հեռ.՝ (213) 241-5555
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Էլ.հասցե՝ jackie.goldberg@lausd.net

ՔԵԼԼԻ ԳՈՆԵԶ – Կրթության խորհուրդ շրջան 6
Հեռ.՝ (213) 241-6388 Ֆաքս (213) 241-8451
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Տեղային գրասենյակ՝ Pacoima MS – 9945 Laurel Cyn. Blvd., Pacoima, CA 91331
Հեռ.՝ (818) 686-4560
Էլ.հասցե՝ kelly.gonez@lausd.net

ՏԱՆՅԱ ՕՐՏԻԶ ՖՐԱՆԿԼԻՆ – Կրթության խորհուրդ շրջան 7
Հեռ.՝ (213) 241-6385
Գրասենյակ՝ 333 South Beaudry Avenue, 24th Floor, Los Angeles, CA 90017
Տեղային գրասենյակ՝ տարածաշրջան Հարավ – 1208 Magnolia Ave., Gardena, CA 90247
Հեռ.՝ (310) 354-3506
Էլ.հասցե՝ tanya.franklin@lausd.net

ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱԼԲԵՐՏՈ Մ.ԿԱՐՎԱԼՅՈՒ
Վերակացու
333 South Beaudry Avenue, 24th Floor
Los Angeles, CA 90017
Հեռ.՝ (213) 241-7000
Ֆաքս (213) 241-8442
Էլ.հասցե՝ superintendent@lausd.net

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ

Տարածաշրջան Հյուսիս
6621 Balboa Boulevard
Lake Balboa, CA 91406
(818) 654-3600

Տարածաշրջան Հարավ
1208 Magnolia Avenue
Gardena, CA 90247
(310) 354-3400

Տարածաշրջան Արևելք
2151 North Soto Street
Los Angeles, CA 90032
(323) 224-3100

Տարածաշրջան Արևմուտք
11380 West Graham Place
Los Angeles, CA 90064
(310) 914-2100

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ

Մեծահասակների և կարիերայի կրթություն	(213) 241-3150
Ձանգից հետո (Beyond the Bell)	(213) 241-7900
Խորհրդի քարտուղարություն	(213) 241-7002
Բյուջետային ծառայություններ	(213) 241-2100
Ձարտերային դպրոցների բաժին	(213) 241-0399
Տվյալներ և հաշվետվողականություն	(213) 241-2460
Շրջանի բուժծառայություն	(213) 202-7580
Շրջանի սպասարկման կենտրոն	(213) 241-1000
Ուսումնական բաժին	(213) 241-5333
Դպրոցների գործառնությունների բաժին	(213) 241-5337
Հատուկ կրթության բաժին	(213) 241-6701
Վաղ կրթության բաժին	(213) 241-0415
Հավասար կրթությանը համապատասխանություն	(213) 241-7682
Հավասար հնարավորությունների բաժին	(213) 241-7685
Հաստատությունների ծառայությունների բաժին	(213) 241-4811
Սննդին վերաբերող ծառայությունների բաժին	(213) 241-2993
Մարդկային ռեսուրսների բաժին	(213) 241-6131
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություն	(213) 241-4906
Միջդպրոցական սպորտի բաժին	(213) 241-5847
KLCS 58-րդ ալիք	(213) 241-4000
Խորացված ուսուցման ծրագիր	(877) 462-4798
Սպասարկում և շահագործում	(213) 241-0352
Հաղորդակցության և ՁԼՄ-ների հետ կապերի գրասենյակ	(213) 241-6766
Շրջանի գործառնությունների գրասենյակ	(213) 241-3889
Շրջակա միջավայրի առողջության և անվտանգության գրասենյակ	(213) 241-3199
Գլխավոր տեսուչի գրասենյակ	(213) 241-7700
Գլխավոր ֆինանսական տնօրենի գրասենյակ	(213) 241-7888
Գլխավոր խորհրդականի գրասենյակ	(213) 241-6601
Բժշկական տնօրենի գրասենյակ	(213) 241-6326
Աշակերտների, ընտանիքի և համայնքի ներգրավվածության գրասենյակt	(213) 481-3350
Անձնակազմի հարցերով հանձնաժողով	(213) 241-7800
Դպրոցական ոստիկանության բաժանմունք	(213) 625-6631
Աշակերտների առողջապահական և սոցիալական ծառայություններ	(213) 241-3840
Տրանսպորտային ծառայությունների բաժին	(213) 580-2900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ծրագիր և դասավանդում 1

Ուսուցողական ծրագրեր անգլերեն սովորողների համար եվ Անգլերեն լեզվի հմտության գնահատումներ Կալիֆորնիայի համար (ELPAC) 1

- Ինչպես գրանցել ձեր երեխային Լեզվի յուրացման ծրագրում 1
- Անգլերեն լեզվի հմտության գնահատումներ Կալիֆորնիայի համար (ELPAC) 2
- Վերադասակարգման վերաբերյալ առաջընթացի մոնիտորինգ (Ավարտման չափանիշներ) 2
- Երկլեզվություն և երկգրագիտություն բոլոր Ունիվերսալ անցումային նախադպրոցական - 12 դաս. աշակերտների համար 2
- Բազմալեզու և բազմամշակութային կրթության վարչության (MMED) թվային ընտանեկան ռեսուրսներ 2
- Title VI ամերիկյան հնդկացիների կրթական ծրագիր 2
- Ուսումնական տեխնոլոգիաների նախաձեռնություն (ITI) 2

Ֆիզկական կրթության պահանջների մասին տարեկան ծանուցում 2

Ֆիզիկական պատրաստվածության թեստ 3

Պահածոյացված եվ կենդանի օրգանիզմների օգտագործման այլընտրանքներ բնագիտության դասերին 3

Ծանուցում Առողջապահական կրթության և Կալիֆորնիայի Առողջ երիտասարդության մասին ակտի համապատասխանության վերաբերյալ (Սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ կրթություն) 3

Միջդպրոցական սպորտի բաժին 6

- Պատահարներից աշակերտների ապահովագրում 6

Ավագ դպրոցի ավարտական պահանջներ 6

- Ավարտական պահանջներից ազատում 7

Կրթության այլընտրանքային տարբերակներ ունեցող դպրոցներ 7

Վիրտուալ ակադեմիա 7

Զափահասների կրթության եվ կարիերայի բաժին (DACE) 7

Կալիֆորնիայի նահանգային համալսարանի վաղաժամ գնահատման ծրագիրը (CSU-EAP) 8

Կալիֆորնիայի աշակերտների առաջադիմության եվ առաջընթացի գնահատում (CAASPP) 8

Քոլեջի ընդունելության պահանջները և բարձրագույն կրթության տեղեկատվությունը 9

- CSU ընդունելության պահանջները առաջին կուրսի համար 9
- UC ընդունելության պահանջները առաջին կուրսի համար 9
- SAT/ACT թեստի միավորներ 9

Հավասարություն և հասանելիություն 10

Ոչ խտրականության մասին հայտարարություն 10

Ինտերնետ հասանելիություն 10

Արտադպրոցական ծրագրերի հասանելիությունը 11

Կրթական հավասարություն՝ անկախ ներգաղթի կարգավիճակից, քաղաքացիությունից կամ կրոնական համոզմունքներից 11

Ծանուցում՝ ըստ «հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի» (ADA) 12

Հաշմանդամություն ունեցող աշակերտներ եվ հատուկ կրթություն 12

Հաշմանդամություն ունեցող աշակերտներն՝ ըստ 1973թ. Վերականգնողական ակտի 504 բաժնի 12

Ժամանակավոր հաշմանդամություն ունեցող աշակերտներ 13

Բաժին IX եվ աշակերտներ 13

Սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականություն 14

Անօթեվան վիճակում գտնվող աշակերտները 14

Արտաընտանեկան խնամքի ներքո գտնվող աշակերտներ 15

Անչափահասների արդարադատության համակարգում ներգրավված աշակերտներ 16

Բողոքարկման միասնական ընթացակարգեր (UCP) 16

Վիլյամսի միասնական բողոքարկման ընթացակարգը 18

Առողջություն եվ բարեկեցություն 18

Առողջ ապրելակերպի քաղաքականության ձեվավորում 18

Առողջապահական տեղեկատվություն 19

- Վարակիչ հիվանդությունների կանխարգելում 19
- Ծաքարային դիաբետ 19
- Իմունիզացիայի պահանջներ 19
- Իմունիզացիայի պահանջներ 20
- Բերանի խոռոչի առողջության վերաբերյալ տեղեկություններ 20
- Բժշկական օգնություն ուսումնական էքսկուրսիաների ժամանակ 21
- Բժշկական հետազոտություններ 21
- Covid-19-ի վերաբերկալ առողջության և անվտանգության արձանագրություններ 21
- Դպրոցական հոգեկան առողջությունը 21
- Դպրոցական հոգեկան առողջության կլինիկայի և առողջապահական կենտրոնների վերաբերյալ ակնարկ և ուղղորդման ընթացակարգ 21
- Ինքնասպանությունների կանխարգելում, միջամտություն և հետմիջամտություն 21
- Առողջաբուժական կենտրոնները լոս անջելեսի միացյալ շրջանում 22

Բուժաշխատակից– ընտանիք համագործակցություն 22

Medi-cal-ի ծառայությունները դպրոցում ... 22
Աշակերտների առողջապահական ապահովագրություն ... 22
Ծնողների/օրինական խնամակալների ամենամյա ծանուցում՝ պահպանակների մատչելիության ծրագրի վերաբերյալ (CAP) ... 22
Սննդի սպասարկում ... 23
Սննդի սպասարկման բաժին (Café La) ... 23
- Սնունդը և Café La ճաշացանկերը ... 23

Ծնողների եվ ընտանիքի ներգրավում ... 24
Ուսանողների, ընտանիքի և համայնքի ներգրավվածության գրասենյակ ... 24
- Լոս անջելեսի միասնական քաղաքականություն ծնողների և ընտանիքի ներգրավման վերաբերյալ ... 24
- Հարգանք հայացքների հանդեպ ... 24
- Հարաբերությունների ամրապնդում ... 24
- Ծնողներ-կամավորներ ... 25
- Ծնողների ակադեմիա ... 25

Լոս Անջելեսի միացյալ շրջանի ընտանիքների թեժ գիծ ... 25
Դիտարկումներ դասարանում ... 25
Դպրոցի հաշվետվության քարտ ... 25
«Յուրաքանչյուր երեխա հաջողության է հասնում» ակտը: Title 1-ի դպրոցների մասին ծնողի տեղեկացված լինելու իրավունքը ... 25
Հատուկ կրթություն. Դպրոցի եվ ընտանիքի աջակցման ծառայություններ (SFSS) ... 25
Ծնողական պորտալ ... 26
Բջջային հավելված ... 26
Blackboard connect ծանուցման համակարգ ... 26
- Ի՞նչ համարներ պետք է տրամադրեմ BLACKBOARD CONNECT-ի համար ... 26
- Պե՞տք է էլ. հասցե տրամադրեմ BLACKBOARD CONNECT-ի համար: ... 27
- Զանգերի վերաբերյալ կարևոր խորհուրդներ ... 27
- Ընդհանուր բնույթի ծանուցումներից հրաժարվելը ... 27

Ծնողների եվ համայնքի ռեսուրսների կենտրոնի օգնության գրասեղան ... 27
Շրջանի սպասարկման կենտրոն ... 27
Փոխհատուցում ... 27
- Ի՞նչ կարող են ծնողներն անել արտակարգ իրավիճակի դեպքում ... 28

Լրատվամիջոցների հետ շփում եվ հրապարակայնություն ... 28
Դպրոցական հաճախելություն ... 28
Բնակության վայրի դպրոց ... 28
Դպրոցական օրացույց ... 29
Աշակերտների հաճախման տարբերակներ ... 29
Թույլտվություններ եվ աշակերտի տեղափոխում ... 29
- Միջշրջանային թույլտվություններ ... 29
- Ներշրջանային թույլտվություններ ... 30

Հաճախելիություն ... 30
- Կալիֆորնիայի պարտադիր լիաժամկետ կրթության վերաբերյալ օրենք ... 30
- Բացակայության ստուգում ... 30
- Հարգելի բացակայություն ... 30
- Անհարգելի բացակայություն ... 31
- Դասերից փախուստ ... 31
- Դասերից փախուստի վերաբերյալ ծանուցում ... 31
- Դասերից մշտական/սովորաբար փախուստ և դպրոցի հաճախումների վերանայման խորհուրդ (SARB) ... 31
- Դրսում հայտնվելը փախուստի արդյունքում ... 31

Օտարերկրյա աշակերտների ընդունելություն ... 32
Աշակերտների վարքը եվ դպրոցի անվտանգություն ... 32
Անվտանգություն յուրաքանչյուր դպրոցում. անվտանգության նախագիծ ... 32
Դպրոցի անվտանգության համալիր պլան ... 32
Դպրոցի տարածք այցելուներ ... 32
Ապահով ճանապարհներ դեպի դպրոցներ (SRTS) ... 32
Աշակերտների հետ վարվելու կանոնակարգ ... 32
- Դրական վարքագծի միջամտություններ և աջակցության/վերականգնողական պրակտիկաներ (PBIS/RP) ... 33

Աշակերտի/դպրոցական վարքագծի կանոններ ... 33
Խոսքի ազատություն, ներառյալ քաղաքական վարքը, հանրահավաքները, հավաքները, ցույցերը ... 33
Հանդերձանքի կանոններ/համազգեստներ ... 34
- Լոս անջելեսի միացյալ շրջանի ուղեցույցն աշակերտական հանդերձանքի վերաբերյալ ... 34

Բուլինգի եվ հարկադրաբար խմբում ներգրավելու (HAZING) վերաբերյալ քաղաքականություն ... 34
Աշակերտների անձնական սեփականոիթյուն ... 35
Բջջային հեռախոսներ եվ այլ շարժական սարքեր ... 35
Պատասխանատու օգտագործման քաղաքականություն ... 36
Աշակերտի խուզարկություն ... 36
Դպրոց հաճախման ժամանակավոր կասեցում եվ դպրոցից հեռացում ... 36
Դպրոց հաճախման ժամանակավոր կասեցման/դպրոցից հեռացման հիմքեր ... 37

- Դպրոցից հեռացման առաջադրման հանգամանքներ ... 37
- Հաշմանդամություն ունեցող աշակերտների հաճախման ժամանակավոր կասեցում/դպրոցից հեռացում ... 38
- Հաճախման ժամանակավոր կասեցում ... 38
- Վերակնգնում և վերահաստատում դպրոցից հեռացումից հետո ... 38

Հրազենից զերծ անվտանգ դպրոցներ ... 38
Տեղափոխում այլ դպրոց ... 38
Ալկոհոլի, ծխախոտի, այլ թմրանյութերի եվ բռնության կանխարգելում եվ արգելում ... 38
Արձագանք արտակարգ իրավիճակներին ... 39
Շարժական հավելված լոս անջելեսի դպրոցների անանուն զեկուցման համար (LASAR-LAUSD) ... 39
Ձենքի անվտանգ պահպանում ... 39
Վնասատուների ինտեգրված կառավարման ծրագիր ... 39
Ասբեստի եվ կապարի օգտագործում ... 40
Կալիֆորնիայի Մեգանի օրենքի մասին ծանուցում ... 40
Երեխաների կասկածյալ չարաշահման եվ անտեսման վերաբերյալ զեկուցում ... 40

Աշակերտական փաստաթղթեր ... 41

Աշակերտի փաստաթղթեր, ծնողների իրավունքները ստուգելու, ուղղելու եվ բովանդակության ժխտում ... 41
Բնակավայրի/արտակարգ իրավիճակների վերաբերյալ կոնտակտային տվյալների փոփոխություն ... 41
Անվան/սեռի մարկերի փոփոխության հայցում ... 41
Իրավունքների վերաբերյալ ծանուցում՝ ընտանիքի կրթության իրավունքների եվ գաղտնիության օրենքի (FERPA) ներքո ... 42
- Լրացում աշակերտների իրավունքների պաշտպանության օրենքին (PPRA) ... 43

Գնահատականը փոխելու պահանջի գործընթաց ... 44
Դպրոցում ունեցած փորձի վերաբերյալ հարցում ... 45

Փոխադրումներ ... 45

Դպրոցական ավտոբուսներ ... 45
- Վարքի կանոնները դպրոցի ավտոբուսներում ... 45

Մետրո-ի gopass tap քարտ ... 45

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ և ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԱՆԳԼԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՀՄՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ (ELPAC)

Ինչպես գրանցել ձեր երեխային Լեզվի յուրացման ծրագրում
Ծնողները/օրինական խնամակալները կարող են պահանջել իրենց ընտրած լեզվի յուրացման ծրագիրն իրենց տեղական դպրոցում *Ուսումնական ծրագրում գրանցվելու և տեղակայվելու մասին ծնողների նախնական ծանուցման* միջոցով, նույնիսկ այն լեզվական ծրագրի համար, որը ներկայումս չի առաջարկվում դպրոցում: Եթե հայցվող լեզվական ծրագիրը ներկայումս չի առաջարկվում դպրոցի կայքում, ապա դպրոցի կայքը երեխայի անունը կտեղադրի սպասման ցուցակում, մինչև հայտերի շեմը լրանա: Դպրոցը նաև կտեղեկացնի ընտանիքներին այն դպրոցների մասին, որոնք ներկայումս առաջարկում են ընտրված ծրագիրը: Ընտանիքները կարող են գրանցել իրենց երեխային հասանելի ծրագրին իրենց տեղական դպրոցում կամ դպրոցում, որն առաջարկում է ընտրված ծրագիր: Դպրոցներ, որտեղ 30 և ավելի աշակերտի ծնողները/օրինական խնամակալները, կամ դպրոցի ցանկացած դասարանի 20 և ավելի աշակերտի ծնողները/օրինական խնամակալները դիմում են լեզվի յուրացման ծրագրի համար, կառաջարկեն նման ծրագիր հնարավորության սահմաններում (EC-ի Բաժին 310[a]): Դպրոցը գրավոր կտեղեկացնի ծնողին/օրինական խնամակալին վերը նկարագրված շեմը լրանալուց հետո 10 ուսումնական օրվա ընթացքում: Դպրոցը երեք (3) տարվա ընթացքում կպահպանի ծնողների/օրինական խնամակալների դիմումների գրավոր գրառումները (ներառյալ բանավոր հարցումները), որոնք ներառում են. (1) հարցումի ամսաթիվը; (2) ծնողների/օրինական խնամակալի և երեխաների անունները; 3) հարցման նկարագրությունը և (4) դասարանի մակարդակը: Յուրաքանչյուր դպրոց պետք է ընդունի և վերահսկի ծնողների/օրինական խնամակալների խնդրանքները ամբողջ տարվա ընթացքում, օգնի ծնողներին/օրինական խնամակալներին պարզաբանել դրանք, նաև քննարկի անգլիախոս աշակերտների ծնողների/օրինական խնամակալների խնդրանքները՝ որոշելու, թե արդյոք նրանք ունեն համապատասխան մակարդակ [5 CCR (Կանոնակարգերի քաղաքացիական օրենսգիրք) Բաժին 11311]: Վերը թվարկված բոլոր ծրագրերը նպատակ ունեն զարգացնել Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշակերտների երկլեզու, երկգրագետ և/կամ անգլերենի իմացության հմտությունները:

Լոս Անջելեսի միացյալ շրջանը գնահատում և հարգում է աշակերտների մշակութային և լեզվական արժեքները և առաջարկում է տարբեր ուսումնական ծրագրերի տարբերակներ՝ լավագույնս բավարարելու կրթական կարիքները: Ծնողները/օրինական խնամակալները կարող են ընտրել հետևյալ առաջարկվող ուսումնական ծրագրերից մեկը (1), որը լավագույնս համապատասխանում է իրենց երեխային [EC բաժին 310 (ա)].

Տարրական և միջնակարգ ուսումնական ծրագրեր (K-12)	Ներկայումս առաջարկվող լեզուներ	Թիրախային աշակերտներ
Երկակի լեզվական երկկողմանի ընկղմում (TWI) (K-12)	Իսպաներեն/Անգլերեն Արաբերեն/Անգլերեն Հայերեն/Անգլերեն Ֆրանսերեն/Անգլերեն Ճապոներեն/Անգլերեն Կորեերեն/Անգլերեն Մանդարին/Անգլերեն	Անգլերեն սովորողներ և բնիկ անգլերեն խոսողներ
Երկակի լեզվական միակողմանի ընկղմում (OWI) (K-12)	Իսպաներեն/Անգլերեն Հայերեն/Անգլերեն Կորեերեն/Անգլերեն	Թիրախային լեզվի անգլերեն սովորողներ
Երկակի ընկղմում համաշխարհային լեզուների մեջ (WLI) (K-12)	Իսպաներեն/Անգլերեն Մանդարին/Անգլերեն Կորեերեն/Անգլերեն	Անգլերեն խոսողներ
* Անգլերեն լեզվի և գրագիտության արագացված ծրագիր (L2EAP) (K-12)	Անգլերեն	Անգլերեն սովորողներ (ELPAC-ի 1-2 մակարդակներ)
Հիմնական անգլերեն ծրագիր (K-12)	Անգլերեն	Անգլերեն սովորողներ (ELPAC-ի 3 և 4 մակարդակ) և անգլերեն տիրապետող աշակերտներ
Արագացված ծրագիր երկարաժամկետ անգլերեն սովորողների համար (6-12)	Անգլերեն	Անգլերեն սովորողներ, ովքեր ճանաչված են երկարաժամկետ EL-ներ
Ներգաղթյալների ծրագիր՝ հիմնական լեզվի ուսուցմամբ (6-12)	Անգլերեն	Նոր բացահայտված, սահմանափակ կրթություն ունեցող EL-ները, երեք (3) տարի կամ ավելի քիչ

*Անգլերեն լեզվի և գրագիտության արագացված ծրագիր (L2EAP) հանդիսանում է Շրջանի կառուցվածքի անգլերենի ընկղման (SEI) ծրագրի տարբերակ անգլերեն սովորողների համար (EC բաժիններ 305[a][2] և 306 (c)[3]):
Լեզուների յուրացման ծրագրերը նախատեսված են աշակերտներին աջակցելու համար՝ զարգացնելու հետևյալը.

1. Անգլերենի իմացություն դասարանի մակարդակով;
2. Պետության կողմից ընդունված ակադեմիական առարկաների գիտելիքների չափորոշիչների ձեռքբերում անգլերեն լեզվով;
3. Երկլեզվություն, երկգրագիտություն և սոցիալ-մշակութային իրավասություն երկլեզու կրթական ծրագրերում:

Հասանելի ուսումնական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք դպրոց կամ այցելեք MMED կայքը՝ գլխավոր պլանի ծրագրի բրոշյուրներն ու տեսանյութերը դիտելու համար:

Անգլերեն լեզվի հմտության գնահատումներ Կալիֆորնիայի համար (ELPAC)
Հիմնվելով Տնային լեզվի հարցման պատասխանների վրա՝ նահանգային օրենքը պահանջում է, որ դպրոցական շրջանները գնահատեն նոր ընդունվածների անգլերեն լեզվի իմացությունը, ովքեր խոսում են անգլերենից այլ լեզու՝ օգտագործելով Անգլերեն լեզվի հմտության գնահատումները Կալիֆորնիայի համար (ELPAC):

1. Սկզբնական ELPAC-ը պետք է իրականացվի գրանցման օրվանից առաջին 30 օրացուցային օրվա ընթացքում: Դպրոցները ծնողներին/օրինական խնամակալներին կծանուցեն այս պահանջի մասին՝ *Անգլերեն սովորողների համար տարրական/միջնակարգ ուսումնական ծրագրում գրանցվելու և տեղակայվելու նախնական ծանուցմամբ*;
2. Եթե աշակերտը ճանաչվում է որպես անգլերեն սովորող նախնական ELPAC-ով, նա պետք է ամեն տարի անցնի ամփոփիչ ELPAC, մինչև վերադասակարգման չափանիշները բավարարվեն:

Համակարգչային ELPAC-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք կապվել տեղի դպրոցի հետ կամ այցելել www.elpac.org:

Վերադասակարգման վերաբերյալ առաջընթացի մոնիտորինգ (Ավարտելու չափանիշներ)
Աշակերտների անգլերեն լեզվի զարգացումը և ակադեմիական առաջընթացին ուշադիր կհետևվեն և երեխաներին կաջակցեն՝ ապահովելու համար, որ նրանք կարողանան հնարավորինս արագ համապատասխանել վերադասակարգման չափանիշներին: Ըստ նահանգի պահանջների, անգլերեն սովորող աշակերտը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին վերադասակարգման համար.

1. Չափանիշ 1. Անգլերեն լեզվի իմացության գնահատում (Ընդհանուր ELPAC-ի մակարդակ 4);
2. Չափանիշ 2. Ուսուցչի գնահատում (անցողիկ միավորներ/գնահատականներ անգլերեն լեզվից);
3. Չափանիշ 3. Ծնողի/օրինական խնամակալի կարծիքը և խորհրդատվությունը;
4. Չափանիշ 4. Աշակերտների առաջադիմությունը հիմնական հմտությունների ոլորտում [DIBELS(տարրական)/Կարդալու հարցաշար (միջնակարգ) գնահատումներ]:

Վերադասակարգման չափանիշների մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիտեք Լոս Անջելեսի միացյալ շրջանի վերադասակարգման տեսանյութը: Երբ աշակերտը վերադասակարգվի, նրա առաջադիմությունը կշարունակվի վերահսկվել առնվազն չորս (4) տարի՝ համոզվելու համար, որ նա համապատասխան ակադեմիական առաջադիմություն ունի:

Երկլեզվություն և երկգրագիտություն բոլոր Ունիվերսալ անցումային նախադպրոցական - 12 դաս. աշակերտների համար
Լոս Անջելեսի միացյալ շրջանի K և 1-ին դասարանի Promise to Bilingualism, 5-րդ կամ 6-րդ և 8-րդ դասարանի Pathway to Biliteracy և 12-րդ դասարանի Seal of Biliteracy պարգևները տրվում են այն աշակերտներին, ովքեր իրենց հանձնառությունն են դրսևորել դառնալ երկլեզու և գրագետ և ձեռք են բերել գիտելիքների որոշակի աստիճանի մեկ (1) կամ ավելի լեզուներում, բացի անգլերենից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք MMED World Languages Education կայքը:

Բազմալեզու և բազմամշակութային կրթության վարչության (MMED) թվային ընտանեկան ռեսուրսներ
MMED-ը ռեսուրսներ է ստեղծել՝ աջակցելու աշակերտների լեզվական հմտությունները տանը զարգացնելու համար: Տան պայմաններում ընտանիքի աջակցության այս նյութերը տրամադրում են առաջարկություններ, որոնք ընտանիքները հեշտությամբ կարող են օգտագործել՝ օգնելու շարունակել աշակերտի լեզվական զարգացումը: Ռեսուրսները թվային ձևով հասանելի են անգլերեն և իսպաներեն՝ Elementary Home Mail Digital Resources.pdf և Secondary Home Mail Digital Resources. էջերում:

Title VI ամերիկյան հնդկացիների կրթական ծրագիր
Ամերիկյան հնդիկների Title VI-ի կրթական ծրագրի համար աշակերտների իրավասությունը որոշելու համար աշակերտների ծնողները/օրինական խնամակալները պետք է լրացնեն *Հնդիկ աշակերտի իրավասության հավաստագրման ձևը*, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ ED 506 Form, և ներկայացնեն գրանցման դպրոց: Այս լրացուցիչ ուսումնական ծառայություններն ապահովում են, որ ամերիկյան հնդիկ աշակերտները.

1. Համապատասխանեն պետական ակադեմիական չափանիշներին;
2. Ձեռք բերեն գիտելիքներ հայրենի համայնքների, լեզուների, ցեղերի պատմության, ավանդույթների և մշակույթների մասին;
3. Մշակութային առումով համապատասխան միջոցառումներին մասնակցելու հնարավորություններ ունենան:

Ամերիկացի հնդկացիների, իրավասու աշակերտների ծնողները/օրինական խնամակալները կարող են մասնակցել Շրջանի Ամերիկայի հնդկացիների ծնողական կոմիտեին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք MMED կայքը:

Ուսումնական տեխնոլոգիաների նախաձեռնություն (ITI)
ITI մասնագիտացած է դպրոցների ղեկավարների համար մասնագիտական ուսուցման հնարավորություններ տրամադրելու մեջ՝ լավագույնս աջակցելու ուսումնական տեխնոլոգիաների ինտեգրմանը բոլոր աշակերտների համար: ITI-ի կողմից աջակցվող հիմնական ծրագրերը ներառում են թվային քաղաքացիություն և համակարգչային գիտության ուսուցում:

Թվային քաղաքացիությունը աշակերտների հետ շարունակական ուսումնական աշխատանքի կարևոր բաղադրիչն է՝ նրանց սովորեցնելու առցանց անվտանգության կարևորությունը և դրա դերը քոլեջի և կարիերայի նպատակներում: ITI-ն հովանավորում է Թվային քաղաքացիության ամենամյա շաբաթը՝ դրան աջակցելու համար: Բացի այդ, Համակարգչային գիտության կրթության շաբաթը կենտրոնանում է այնպիսի պրակտիկաների խթանման վրա, որոնք սովորեցնում են աշակերտներին ստեղծել տեխնոլոգիաներ այնպիսի ձևերով, որոնք ազդում են հասարակության վրա:

Ծնողները/օրինական խնամակալները առանցքային դեր են խաղում ուսումնական տեխնոլոգիաների ինտեգրումը հեշտացնելու գործում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ITI կայքը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

1-ից 6-րդ տարրական դասարանների աշակերտները պետք է ստանան ֆիզիկական կուլտուրայի ուսուցում ընդհանուր 200 րոպեից ոչ պակաս յուրաքանչյուր 10 ուսումնական օրվա ընթացքում՝ բացառությամբ դասամիջոցների և ճաշի ընդմիջումների: Տարրական դպրոցները յուրաքանչյուր դասարանի ուսուցչի ֆիզկուլտուրայի գրաֆիկները պետք է տեղադրեն դպրոցի կայքում կամ ուսուցչի դասարանում: Բացի այդ, ֆիզկուլտուրայի գրաֆիկները պետք է փակցվեն դպրոցի գլխավոր գրասենյակում: Ծնողները/օրինական խնամակալները, ովքեր ֆիզկուլտուրայի ժամանակի ծավալի հետ կապված հարցեր ունեն, նախ պետք է դիմեն աշակերտի ուսուցչին կամ տնօրենին: [EC-ի բաժին 51210(a)(7)]

Միջնակարգ դպրոցի աշակերտները պետք է ֆիզկուլտուրայի ուսուցում ստանան ընդհանուր 400 րոպեից ոչ պակաս յուրաքանչյուր 10 ուսումնական օրվա ընթացքում: [EC-ի բաժին 51222 (a)]

Ֆիզկուլտուրայի վերաբերյալ բողոքներ. Ծնողը/օրինական խնամակալը, ով կարծում է, որ իր երեխան չի ստանում անհրաժեշտ քանակությամբ ֆիզկուլտուրայի ուսումնական րոպեներ, կարող է պաշտոնական բողոք ներկայացնել: Բողոքի ձևը կարելի է ձեռք բերել դպրոցում կամ հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/Page/7726, և պետք է ներկայացվի դպրոցի տնօրենին: Ծնողները/օրինական խնամակալները, ովքեր հարցեր կամ մտահոգություններ ունեն ֆիզիկական ակտիվության րոպեների քանակի վերաբերյալ դպրոցի կողմից տրված պատասխանից հետո, կարող են դիմել Շրջանի համապատասխան տարածաշրջանային գրասենյակ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

5-րդ, 7-րդ և 9-րդ դասարանների բոլոր աշակերտները պետք է մասնակցեն Ֆիզիկական պատրաստվածության թեստին: Պետության կողմից ընդունված Ֆիզիկական պատրաստվածության թեստը FITNESSGRAM®-ն է՝ առողջության հետ կապված ֆիզիկական պատրաստվածության չափանիշ: FITNESSGRAM®-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմեք աշակերտի ուսուցչին կամ այցելեք https://achieve.lausd.net/Page/7587:

Ֆիզիկական պատրաստվածության թեստը (PFT) համազգային գնահատման համակարգի մի մասն է և Կալիֆորնիայի դպրոցները աշակերտի մարզավիճակն ու առողջությունը որոշելու ձևերից մեկը: FITNESSGRAM-ի հիմնական նպատակն է օգնել զարգացնել կանոնավոր ֆիզիկական ակտիվության սովորությունը ողջ կյանքի ընթացքում:

Կալիֆորնիան ընտրել է FITNESSGRAM®-ը որպես իր տարեկան PFT 5, 7 և 9 դասարանների աշակերտների համար: PFT-ի արդյունքները աշակերտներին և նրանց ընտանիքներին տալիս են տվյալներ, որոնք նրանք կարող են օգտագործել այլ տեղեկատվության հետ միասին՝ վերահսկելու իրենց ընդհանուր մարզավիճակը: Արդյունքները կարող են օգտագործվել նաև դպրոցների կողմից՝ գնահատելու իրենց ֆիզիկական դաստիարակության ծրագիրը:

Ամբողջական FITNESSGRAM® թեստային մարտկոցը չափում է աշակերտի աշխատանքը հետևյալ ոլորտներում. Հաշմանդամություն ունեցող աշակերտները պետք է թեստ հանձնեն այնքան, որքան թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի ֆիզիկական վիճակը.

1. Աերոբիկ կարողություն
2. Որովայնի ուժ և տոկունություն
3. Վերին մարմնի ուժ և տոկունություն
4. Մարմնի ընդարձակող մկանների ուժ և ճկունություն;
5. Ճկունություն:

Աշակերտները թեստավորվում են փետրվար-մարտ ամիսներին: Ուսուցիչները և ադմինիստրատորները պատասխանատու են աշակերտներին նախապատրաստելու համար, որպեսզի նրանք անեն իրենց լավագույնը թեստի ժամանակ՝ ապահովելով ուսուցում և համապատասխան պրակտիկա փորձարկվող հմտությունների և կարողությունների վերաբերյալ: Առաջարկվում է, որ դպրոցները աշակերտներին տրամադրեն համապատասխան պրակտիկա՝ որպես կանոնավոր ֆիզիկական դաստիարակության (P.E.) ծրագրի մաս ամբողջ տարվա ընթացքում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ FITNESSGRAM®-ի վերաբերյալ ծնողի/օրինական խնամակալի համար բացառություն չկա:

Ծնողները/օրինական խնամակալները կարևոր դեր են խաղում իրենց երեխայի կրթության մեջ և կարող են օգնել իրենց երեխային պատրաստվել քննությանը: Ահա թե ինչպես կարող են օգնել ծնողները/օրինական խնամակալները.

1. Խոսեք PFT-ի մասին ձեր երեխայի հետ: Համոզվեք, որ ձեր երեխան անհանգիստ չէ և պատրաստ է անել առավելագույնը
2. Ասացեք ձեր երեխային, որ դուք և նրա ուսուցիչը երկուսն էլ պատրաստ եք օգնելու այդ ճանապարհի ամեն քայլափոխին, և ցանկանում եք, որ նա ամեն ինչ անի, որպեսզի ավարտի այն, ինչ կարող է
3. Օգնեք, որ երեխան անպայման ամեն օր զբաղվի 60 րոպե ֆիզիկական ակտիվությամբ
4. Երեխան պետք է անպայման լավ քնի և սննդարար նախաճաշ ուտի նախքան թեստավորումը:

PFT-ի մասին ավելին իմանալու համար այցելեք CDE Parent Guides to Understanding կայքը հետևյալ հասցեով՝ https://www.cde.ca.gov/ta/tg/pf/index.asp.

ՊԱՀԱԾՈՅԱՑՎԱԾ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Այն աշակերտները, ովքեր դեմ են կենդանիներին օգտագործող գիտական լաբորատորիաներին մասնակցելուն, պետք է տեղեկացված լինեն բացառության կամ այլընտրանքային գործունեության հնարավորության մասին: Աշակերտները, ովքեր դեմ են մասնակցելու գիտության լաբորատորիայում, որտեղ կօգտագործվեն կենդանիներ, պետք է ունենան իրենց ծնողների/օրինական խնամակալների գրություն՝ այլընտրանքային առաջադրանք խնդրելու մասին: Այս առաջադրանքը պետք է աշակերտի կողմից պահանջի համեմատելի ժամանակի և ջանքերի ներդրում (ԵՀ բաժին 32255.1; Շրջանի քաղաքականություն):

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Սեռական առողջություն և ՄԻԱՎ-ի համապարփակ կանխարգելում - Կրթություն)

Աճը, զարգացումը և սեռական առողջությունը դասավանդվում են 5, 7 և 9-րդ դասարաններում: Տարրական դպրոցների համար ուսուցիչները օգտագործում են ընդունված Կալիֆորնիայի առողջապահական գիտելիքների չափորոշիչները K-12-ի համար՝ բովանդակության համապատասխանության համար: Տարրական դպրոցները պետք է հետևեն Կալիֆորնիայի առողջ երիտասարդության օրենքի (CHYA) Կալիֆորնիայի EC-ի 51930-51931 բաժինների իրականացման չափանիշներին: 5-րդ դասարանի ծրագրային տարբերակները հաստատվում են Ուսուցման բաժնի, Առողջապահական կրթության ծրագրերի կողմից:

Կալիֆորնիայի առողջ երիտասարդության օրենքը ուժի մեջ է մտել 2016թ. Հունվարի 1-ին: Այն պահանջում է սեռական առողջության և մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) կանխարգելման վերաբերյալ ուսուցում, որը պետք է տրամադրվի 7-12-րդ դասարաններում (EC, 51930-51939): Դպրոցները, ներառյալ չարտերային դպրոցները, պարտավոր են (EC-ի բաժին 51930).

1. Աշակերտներին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ պաշտպանելու իրենց սեռական և վերարտադրողական առողջությունը ՄԻԱՎ-ից և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակներից և չնախատեսված հղիությունից;
2. Ապահովել աշակերտներին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով՝ դեռահասների աճի և զարգացման, մարմնի պատկերի, սեռի, սեռական կողմնորոշման, հարաբերությունների, ամուսնության և ընտանիքի վերաբերյալ առողջ վերաբերմունք զարգացնելու համար;
3. Նպաստել սեռականության ըմբռնմանը՝ որպես մարդկային զարգացման բնականոն մասի;
4. Ապահովել, որ աշակերտները ստանան ինտեգրված, համապարփակ, ճշգրիտ և անկողմնակալ սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ ուսուցում և ուսուցիչներին տրամադրել հստակ գործիքներ և ուղեցույցներ այդ նպատակն իրականացնելու համար;
5. Աշակերտներին տրամադրել առողջ, դրական և անվտանգ հարաբերություններ և վարքագիծ ունենալու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

Կիրառվում են հետևյալ սահմանումները (EC-ի բաժին 51931).

1. **Տարիքին համապատասխան.** Անդրադառնում է թեմաներին, հաղորդագրություններին և ուսուցման մեթոդներին, որոնք հարմար են որոշակի երեխաների և դեռահասների խմբերի համար, և որոնք հիմնված են տարիքային կամ տարիքային խմբի համար բնորոշ ճանաչողական, զգացմունքային և վարքային կարողությունների զարգացման վրա;
2. **Սեռական առողջության վերաբերյալ համապարփակ կրթություն.** Նշանակում է կրթություն մարդու զարգացման և սեռականության վերաբերյալ, ներառյալ հղիության, հակաբեղմնավորման և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների վերաբերյալ կրթություն;
3. **Անգլերեն սովորող.** Նշանակում է աշակերտ, ով ունի «սահմանափակ անգլերենի իմացություն», ինչպես սահմանված է դաշնային օրենսդրությամբ;
4. **Մարդու իմունային անբավարարության վիրուս-ի (ՄԻԱՎ) կանխարգելման վերաբերյալ կրթություն.** նշանակում է ՄԻԱՎ-ի և Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) բնույթի, ՄԻԱՎ վարակի փոխանցման ռիսկը նվազեցնելու ռազմավարությունների, ինչպես նաև ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի հետ կապված սոցիալական և հանրային առողջության խնդիրների վերաբերյալ ուսուցում;

5. **Համապատասխան դասընթացներով վերապատրաստված ուսուցիչներ.** Նշանակում է ուսուցիչներ, ովքեր տիրապետում են մարդու սեռականության, առողջ հարաբերությունների, հղիության, ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների վերաբերյալ ամենավերջին բժշկական ճշգրիտ հետազոտությունների մասին գիտելիքներով;
6. **Բժշկական առումով ճշգրիտ.** Նշանակում է, որ այն ապահովված կամ վավերացված է գիտական մեթոդներով իրականացված ուսումնասիրություններով և հրապարակված է գրախոսվող ամսագրերում, և ճանաչվում է որպես ճշգրիտ և օբյեկտիվ համապատասխան ոլորտում փորձ ունեցող մասնագիտական մարմինների կողմից, ինչպիսիք են Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման դաշնային կենտրոնները, Ամերիկյան հանրային առողջության ասոցիացիա, Մանկաբուժության ամերիկյան ակադեմիա և Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջ;
7. **Դպրոցական շրջան.** Ներառում է վարչաշրջանի կրթական խորհուրդները, վարչաշրջանի դպրոցների վերակացուին, Կալիֆորնիայի խուլերի դպրոցը և Կալիֆորնիայի կույրերի դպրոցը:

Առնվազն մեկ անգամ միջին դպրոցում (15-20 ժամ) և ավագ դպրոցում (25-30 ժամ) պահանջվում է համապարփակ սեռական առողջության դասընթաց և ՄԻԱՎ-ի կանխարգելման դասընթաց՝ առարկայի դասավանդման համար վերապատրաստված ուսուցիչների կողմից:

1. Դպրոցական շրջանները պետք է տրամադրեն սեռական առողջության համապարփակ կրթություն, ինչը նշանակում է կրթություն մարդու զարգացման և սեռականության վերաբերյալ, ներառյալ հղիության, ընտանիքի պլանավորման և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ կրթությունը K-ից 12-րդ դասարաններում:
2. Դպրոցական շրջանները կարող են օգտագործել վերապատրաստված Լոս Անջելեսի միացյալ շրջանի անձնակազմը կամ արտաքին խորհրդատուներին, ովքեր փորձ ունեն մարդու սեռականության, հղիության և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ ամենավերջին բժշկական ճշգրիտ հետազոտություններում: Դասավանդումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.
    - Ուսուցումը և ուսուցման համար օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն աշակերտների մտավոր, զգացմունքային և վարքային կարողություններին;
    - Ուսուցանվող ամբողջ տեղեկատվությունը պետք է լինի բժշկական առումով ճշգրիտ և օբյեկտիվ, այսինքն՝ այն պետք է ստուգվի կամ հաստատվի գիտական մեթոդով իրականացված հետազոտության միջոցով, վերանայվի գիտական գործընկերների կողմից և ճանաչվի որպես ճշգրիտ և օբյեկտիվ դաշնային գործակալությունների և առողջապահական մասնագիտական կազմակերպությունների կողմից;
    - Դասավանդումը և նյութերը չպետք է արտացոլեն կողմնակալություն որևէ անձի նկատմամբ՝ 220-րդ Բաժինով պաշտպանված որևէ կատեգորիայի հիման վրա;
    - Ուսուցումը հավասար հիմունքներով պետք է հասանելի լինի անգլերեն սովորող աշակերտին [նկարագրված է Բաժին 306-ի (a) ենթաբաժնում]՝ համահունչ առկա ուսումնական ծրագրին և անգլերեն սովորողի այլընտրանքային տարբերակներին;
    - Դասավանդումը և նյութերը պետք է հարմար լինեն բոլոր ռասաների, սեռերի, սեռական կողմնորոշումների, էթնիկ և մշակութային պատկանելության և հաշմանդամություն ունեցող աշակերտների համար;
    - Ուսուցումը և նյութերը պետք է համապատասխանեն հաշմանդամություն ունեցող աշակերտներին՝ փոփոխված ուսումնական պլանի, նյութերի, ուսումնական ձևաչափի, օժանդակ նյութերի և այլ միջոցների շնորհիվ;
    - Դասավանդումը և նյութերը պետք է հաստատապես ընդունեն, որ մարդիկ ունեն տարբեր սեռական կողմնորոշումներ: Հարաբերությունների և զույգերի քննարկումը կամ օրինակների ներկայացումը պետք է ներառի միասեռական հարաբերությունները;
    - Դասավանդումը և նյութերը պետք է խրախուսեն սեռի, գենդերային արտահայտման, գենդերային ինքնության մասին ուսուցումը և ուսումնասիրեն բացասական գենդերային կարծրատիպերի վնասը;
    - Դասավանդումը և նյութերը պետք է խրախուսեն աշակերտներին խոսել իրենց ծնողների/օրինական խնամակալների կամ վստահելի մեծահասակների հետ մարդկային սեռականության մասին և տրամադրեն դրա համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները;
    - Դասավանդումը և նյութերը պետք է սովորեցնեն և պատրաստեն աշակերտներին ունենալ և պահպանել պարտավորված հարաբերություններ, ինչպիսին է ամուսնությունը;
    - Դասավանդումը և նյութերը պետք է աշակերտներին տրամադրեն գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են առողջ հարաբերություններ ձևավորելու համար, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի, սիրո վրա և զերծ են բռնությունից, հարկադրանքից և ահաբեկումից;
    - Դասավանդումը և նյութերը պետք է աշակերտներին տրամադրեն գիտելիքներ և հմտություններ սեքսուալության վերաբերյալ առողջ որոշումներ կայացնելու և իրականացնելու համար, ներառյալ՝ բանակցելու և մերժելու հմտություններ՝ օգնելու աշակերտներին հաղթահարել հասակակիցների ճնշումը և օգտագործել արդյունավետ որոշումներ կայացնելու հմտություններ՝ խուսափելու բարձր ռիսկային գործունեությունից;
    - Դասավանդումը և նյութերը չեն կարող ուսուցանել կամ խթանել կրոնական դոկտրինան:

Միջնակարգ մակարդակում աշակերտները 7-րդ և 9-րդ դասարաններում անցնում են ամբողջական կիսամյակ, 90-ժամյա առողջապահական կրթության դասընթաց՝ մեկ առարկայից հավատարմագրված առողջապահության ուսուցչի դասավանդումով: Առողջապահական կրթության դասընթացում ներառված են համապարփակ սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխարգելման թեմաները:

1. Այս ուսուցումը պետք է ներառի հետևյալ բոլոր թվարկվածները՝
    - Սովորեցնի ՄԻԱՎ-ի բնույթի մասին, ինչպես նաև՝ սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների մասին և մարդու մարմնի վրա դրանց ունեցած ազդեցության մասին;
    - Սովորեցնի, թե ՄԻԱՎ-ը և այլ սեռավարակներ ինչ ճանապարհով չեն փոխանցվում, այդ թվում՝ կոնկրետ վարքագծի դեպքում վարակի հարաբերական վտանգի մասին տեղեկություններ, ներառյալ՝ սեռական գործողությունների և ներարկվող թմրամիջոցների օգտագործման վերաբերյալ;
    - Սովորեցնի, որ սեռական գործողությունից և ներարկային թմրամիջոցների օգտագործումից խուսափելը ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները կանխելու միակ վստահելի ճանապարհն է, և որ սեռական գործողություն չունենալը չնախատեսված հղիությունից խուսափելու միակ ճանապարհն է: Ուսուցումը նաև պետք է տրամադրի տեղեկություն՝ սեռական գործողությունը հետաձգելու արժեքի մասին՝ միևնույն ժամանակ տրամադրելով բժշկական տեսակետից ճշգրիտ տեղեկություն՝ ՄԻԱՎ-ը և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունները և հղիությունը այլ միջոցներով կանխարգելելու համար;
    - Տեղեկություն տրամադրի Սենդի և դեղորայքների դաշնային ադմինիստրացիայի (FDA) կողմից հաստատված ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների վտանգը նվազեցնելու բոլոր մեթոդների արդյունավետության և անվտանգության վերաբերյալ, այդ թվում՝ հակառետրովիրուսային դեղորայքի օգտագործումը, ինչպիսիք են PrEP-ը և ՄԻԱՎ-ի դեմ պատվաստումը, որը համապատասխանում է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման դաշնային կենտրոնների պահանջներին;
    - Ուսուցանի թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման ռիսկի նվազեցման վերաբերյալ՝ ասեղի օգտագործման և փոխանակելու սովորությունը նվազեցնելու միջոցով;
    - Սովորեցնի ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների բուժման մասին՝ ներառյալ այն մասին, թե հակառետրովիրուսային թերապիան ինչպես կարող է զգալիորեն երկարեցնել ՄԻԱՎ-ով ապրող անձանց կյանքը և նվազեցնել ուրիշներին ՄԻԱՎ-ով վարակելու վտանգի հնարավորությունը;
    - Քննարկի հասարակության ունեցած հայացքները ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ, այդ թվում՝ անհիմն կարծրատիպերը և առասպելները ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող անձանց մասին: Այս ուսուցումը պետք է ընդգծի, որ հաջողությամբ բուժված ՄԻԱՎ-ի վարակակիր անձինք ունեն կյանքի նորմալ տևողություն, և որ բոլոր մարդիկ ՄԻԱՎ-ով վարակվելու որոշակի ռիսկ ունեն, և հետազոտվելը միակ ճանապարհն է՝ իմանալու, թե արդյո՞ք անձը ՄԻԱՎ վարակակիր է;
    - 7-րդ դասարանից սկսած՝ ուսուցումը և նյութերը պետք է տեղեկատվություն տրամադրեն տեղական ռեսուրսների և աշակերտների

իրավունքների՝ սեռական և վերարտադրողական առողջության պահպանման համար տեղական ռեսուրսների մատչելիության վերաբերյալ, ինչպիսիք են՝ հետազոտումը և բժշկական խնամքը ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների դեպքում, հղիության կանխարգելման և խնամքի, ինչպես նաև՝ տեղական ռեսուրսների աջակցությունը՝ սեռական բռնության և ինտիմ զուգընկերոջ դրսևորած բռնության դեպքում;
- Տրամադրի հղիության կանխարգելմանն ուղղված հակաբեղմնավորիչ բոլոր մեթոդների արդյունավետության և անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն, որը հաստատված է Սննդի և դեղորայքների դաշնային ադմինիստրացիայի (FDA) կողմից, այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ անհետաձգելի հակաբեղմնավորիչները: Հղիության վերաբերյալ ուսուցումն ընդգրկում է հղիության բոլոր օրինական հասանելի արդյունքների օբյեկտիվ քննարկումը՝ ներառյալ, սակայն, չսահմանափակվելով՝ ծնող դառնալը, որդեգրումը և աբորտը;
- Ներառի անչափահաս 72-ժամյա կամ ավելի փոքր երեխայի ֆիզիկական խնամքի հանձնման օրենքի մասին տեղեկություն՝ «Առողջության և անվտանգության մասին» օրենսգրքի 1255.7-րդ բաժնի և Քրեական օրենսգրքի 271.5-րդ բաժնի համաձայն;
- Սովորեցնի նախածննդյան խնամքի կարևորության մասին;
- Ներառի սեռական ոտնձգությունների, սեռական բռնության, սեռական չարաշահման և մարդկանց թրաֆիքինգի, առողջ սահմաններ գծելու մեթոդների մասին տեղեկություն և այն մասին, թե ինչպես ապահով օգնություն փնտրել;
- Ներառի տեղեկություն դեռահասների հարաբերությունների չարաշահման և ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության մասին, այդ թվում՝ դրանց նախազգուշացնող նշանների վերաբերյալ:

2. Դպրոցական շրջանների այն դպրոցները, որոնք համապարփակ սեռական առողջության կրթություն են ուսուցանում 7-րդ դասարանից ավելի վաղ, կարող են տրամադրել տարիքին համապատասխան և բժշկական տեսանկյունից ճշգրիտ տեղեկություն՝ անմիջապես վերոնշյալ 1-ից 13-րդ պարբերություններում ընդգրկված գլխավոր թեմաներից որևէ մեկի վերաբերյալ, իսկ 7-րդ դասարանում կամ՝ ավելի վաղ սկսելու դեպքում պետք է բավարարեն հետևյալ պարբերությունները՝
    - Հրահանգումը կամ նյութերը չպետք է սովորեցնեն կամ խթանեն կրոնական ուսմունք;
    - Ուսուցումը կամ նյութերը չպետք է արտացոլեն կամ խթանեն ցանկացած անձի դեմ կողմնակալություն՝ ըստ սեռի, էթնիկ խմբի պատկանելիության, ռասայի, ազգային ծագման, կրոնի, մաշկի գույնի, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության, նախնիների, սեռի, սեռական ինքնության և սեռական կողմնորոշման:

Դրսի խորհրդատուի կողմից վերանայում և հաստատում. Դպրոցի շրջանները կարող են պայմանագիր կնքել դպրոցից դուրս աշխատող խորհրդատուների հետ: Այդ խորհրդատուները և հյուր խոսնակները պետք է ստուգվեն և հաստատվեն Շրջանի առողջապահական կրթության ծրագրի և ուսուցման բաժնի՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման բաժնի կողմից:

Ծանուցում և ծնողի կողմից հրաժարվելը: Դպրոցները պետք է ծնողներին/օրինական խնամակալներին խրախուսեն հաղորդակցվել իրենց երեխայի հետ՝ մարդկային սեռականության և ՄԻԱՎ-ի վերաբերյալ և պետք է հարգեն ծնողների/օրինական խնամակալների՝ իրենց երեխաների կրթությունը այս առարկաների վերաբերյալ վերահսկելու իրավունքները: Դպրոցները պետք է ընթացակարգեր սահմանեն, որոնք ծնողների/օրինական խնամակալների համար դյուրին կդարձնեն նյութերի և գնահատման գործիքների ուսումնասիրությունը, որոնք առնչվում են համապարփակ սեռական առողջությանը և ՄԻԱՎ-ի կանխարգելման կրթությանը: Նահանգն ընդունում է, որ մինչ ծնողները/օրինական խնամակալները մեծապես աջակցում են բժշկական տեսանկյունից ճշգրիտ և համապարփակ սեռական կրթության ուսուցմանը, այդուհանդերձ, նրանք են վերջնական պատասխանատվություն կրում իրենց երեխաներին մարդու սեռականության վերաբերյալ արժեքներ հաղորդելու համար: Լրացուցիչ տեղեկության կամ նյութերը տեսնելու դիմումի համար կապվեք ձեր դպրոցի տնօրենի հետ:

Այն ծնողը/օրինական խնամակալը, ով չի ցանկանում, որ իր երեխան ստանա համապարփակ սեռական առողջության կրթություն կամ ՄԻԱՎ-ի կանխման վերաբերյալ կրթություն, պետք է այդ մասին դպրոցին գրավոր դիմում ներկայացնի: Ծնողը/օրինական խնամակալն իրավունք ունի իր երեխային թույլ տալու կամ չտալու՝ մասնակցել համապարփակ սեռական առողջության, ՄԻԱՎ-ի կանխման կրթության ամբողջ ծրագրին կամ դրա մի մասին, ինչպես նաև այդ կրթությանն առնչվող գնահատումներին՝ հետևյալ պայմանների ներքո՝ (EC-ի Բաշին 51938):

1. Լրացուցիչ տեղեկություններ սեռական առողջության կրթության ուսուցման և ՄԻԱՎ-ի կանխարգելման կրթության վերաբերյալ, ինչպես նաև՝ աշակերտների առողջական վարքագծի ուսումնասիրության մասին, որոնք կօգտագործվեն ուսուցման ժամանակ՝
    - Գրավոր և տեսողական/լսողական կրթության նյութերը, որոնք օգտագործվում են ընդգրկուն սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխման կրթության համար, հասանելի են ուսումնասիրության համար;
    - Դպրոցական շրջանները պետք է ընդգրկուն սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխման կրթությունն ուսուցանեն դպրոցական շրջանի աշխատակազմի կամ դրսից հրավիրված խորհրդատուների կողմից: Դրսից հրավիրված խորհրդատուների կողմից կրթությունն ուսուցանելու դեպքում ծնողը/օրինական խնամակալը պետք է հավելյալ տեղեկացվի, որ դպրոցը կարող է նման ուսուցում ապահովել դասասենյակում կամ ժողովում՝ նրանց միջոցով: Ցանկացած դեպքում դպրոցը պետք է ծնողին/խնամակալին հավելյալ տեղեկացնի (a) ուսուցման ամսաթվի վերաբերյալ, (b) յուրաքանչյուր հյուր խոսնակի կամ խոսնակների կազմակերպությունների կամ մասնաճյուղերի անունները, ինչպես նաև՝ (c) ծնողի/օրինական խնամակալի՝ այս կրթական ծրագրերը ղեկավարող օրենքների պատճենը խնդրելու իրավունքի վերաբերյալ (Կրթության օրենսգրքի բաժիններ 51933 և 51934): Եթե դրսից հրավիրված խորհրդատուների կամ հյուր խոսնակների կողմից ուսուցման նախապատրաստություններն արվել են ուսումնական տարվա սկսվելուց հետո, ապա ծնողի/օրինական խնամակալի ծանուցումը պետք է կատարվի փոստի կամ ծանուցման այլ սովորաբար տարածված եղանակով՝ ոչ ուշ, քան ուսուցումը սկսելուց 14 օր առաջ: Դրսից հրավիրված խորհրդատուի կամ հյուր խոսնակի օգտագործումը շրջանի հայեցողության ներքո է;
    - Ծնողը/օրինական խնամակալը օրենքի պատճենը խնդրելու իրավունք ունի;
    - Ծնողը/օրինական խնամակալը կարող է գրավոր կերպով դիմում ներկայացնել, որ իր երեխան չստանա ընդգրկուն սեռական առողջության կամ ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ կրթություն:
2. Ոչ մի հարցաշար, հարցում և/կամ քննություն չպետք է պարունակի այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են K-ից 12-րդ դասարանի աշակերտի անձնական կարծիքին կամ գործելակերպին՝ սեքսի, ընտանեկան կյանքի, բարոյականության, կրոնի մասին կամ որևիցէ հարցեր, որոնք վերաբերում են ծնողների/օրինական խնամակալների կարծիքներին և գործելակերպերին՝ սեքսի, ընտանեկան կյանքի, բարոյականության, կրոնի մասին՝ բացառությամբ այն դեպքի, երբ ծնողը/օրինական խնամակալը գրավոր կերպով ծանուցվել է, որ տվյալ թեստը, հարցաշարը կամ քննությունը պետք է կիրառվի, և ծնողը/օրինական խնամակալը գրավոր թույլտվություն է տվել, որ աշակերտը կարողանա դրան մասնակցել: Այս օրենքից ելնելով՝ դպրոցները կարող են K-ից 12-րդ դասարաններում կիրառել անանուն, կամավոր, գաղտնի հետազոտություն և գնահատման գործիքներ՝ աշակերտների առողջական վարքը և վտանգները չափելու համար՝ ներառելով թեստեր, հարցաշարեր և հարցումներ, որոնք պարունակում են տարիքին համապատասխան հարցեր՝ սեքսի մասին աշակերտների վերաբերմունքի կամ կիրառումների վերաբերյալ: Ծնողները/օրինական խնամակալները գրավոր կերպով ծանուցվել են, որ պետք է անց կացվի «Դպրոցում ունեցած փորձի մասին հարցում», և ծնողը/օրինական խնամակալը նյութերը նայելու և իր երեխայի մասնակցությունը թույլ չտալու գրավոր դիմումի հնարավորություն է ունեցել (EC Section 51513): «Դպրոցում ունեցած փորձի մասին հարցումը» LA Unified-ի կողմից օգտագործվող անանուն, կամավոր և գաղտնի հետազոտման և գնահատման գործիք է: Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք նայել «Դպրոցում ունեցած փորձի մասին հարցման» բաժինն այս ուղեցույցում կամ՝ հետևյալ հղումով՝ https://achieve.lausd.net/Page/8397:

Աշակերտը չպետք է հաճախի ընդգրկուն սեռական առողջության, ՄԻԱՎ-ի կանխման կրթության որևէ դասի կամ աշակերտի առողջական վարքագծին և վտանգներին վերաբերող որևէ անանուն, կամավոր և գաղտնի թեստի, հարցաշարի կամ հարցմանը, եթե դպրոցը աշակերտի ծնողից/օրինական խնամակալից ստացել է աշակերտին մասնակցությունից ազատելու գրավոր դիմում:

Աշակերտը չի կարող ենթարկվել կարգապահական գործողության, ակադեմիական տույժի կամ որևէ այլ տույժի, եթե աշակերտի ծնողը/օրինական խնամակալը աշակերտին չի թույլատրում ստանալ ընդգրկուն սեռական առողջության և ՄԻԱՎ-ի կանխման կրթություն կամ մասնակցել աշակերտի առողջության վարքագծին և վտանգներին վերաբերող անանուն, կամավոր և գաղտնի թեստերի կամ հարցումների:

Չնայած ընդգրկուն սեռական առողջության մասին կրթությունը, ՄԻԱՎ-ի կանխման կրթությունը կամ աշակերտի առողջության վարքագծին և վտանգներին վերաբերող անանուն, կամավոր և գաղտնի թեստերը, հարցաշարերը կամ հարցումները կիրառվում են, անհրաժեշտ է նաև, որ այլընտրանքային կրթությունը հասանելի լինի այն աշակերտների համար, ում ծնողները/օրինական խնամակալները դիմում են ներկայացրել, որ իրենց երեխաներն այդ ուսուցումը չստանան կամ չմասնակցեն նման թեստին, հարցաշարին կամ հարցմանը:

ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի Միջդպրոցական սպորտի բաժինը վարում է միջին դպրոցի, ինչպես նաև՝ ավագ դպրոցի սպորտային ծրագրեր: Երկու ծրագրերն էլ մշակված են՝ ուսումնական պարապմունքների և սպորտի միջև գործընկերությունն ամրապնդելու, սպորտին մասնակցելու արժեքները խթանելու և այս գործունեության մեջ ներգրավված յուրաքանչյուրի նկատմամբ արժանապատիվ և հարգալից վերաբերմունք ցուցաբերելու նպատակով: Միջդպրոցական սպորտի մասնակցությունը հասանելի է բոլոր ավագ դպրոցների աշակերտներին, այդ թվում՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի մեծ մասի այն դպրոցներին, որոնք առաջարկում են տարրական, միջին և ավագ մակարդակներ միևնույն դպրոցում և մասնագիտացված մագնիս դասընթացներ՝ մեկ տեղում: Սպորտային ծրագրերը դպրոցից դպրոց կարող են փոխվել: Աշակերտները պետք է համապատասխանեն մասնակցության իրավունքի չափանիշներին, որոնք սահմանվում են Կալիֆորնիայի միջդպրոցական դաշնության և Լոս Անջելեսի միացյալ շրջանի միջդպրոցական սպորտի բաժնի կողմից.

1. Պետք է պահպանեն նվազագույնը 2.0 միջին որակական գնահատական (GPA);
2. Ամեն տարի պետք է անցնեն համապարփակ ֆիզիկական բուժզննում՝ Կալիֆորնիայի արտոնագրված առողջապահական ծառայություն մատուցողի կողմից, որը համապատասխանում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի ներկա քաղաքականության պահանջներին;
3. Ներկայացնեն Աշակերտի արտակարգ իրավիճակի ձևաթուղթը, ինչպես նաև ապահովագրությունը հավաստող փաստաթուղթ, որը համապատասխանում է Կալիֆորնիայի կրթական օրենսգրքով պահանջվող չափանիշներին;
4. Ստորագրեն «Ստերոիդների օգտագործման արգելման», «Վարքի կանոնների», «Բուլինգի և հալածանքների վերաբերյալ», «Մրցաշրջանից դուրս պարտավորությունից ազատման», «Ատլետիկ ապահովագրության հավաստագիրը», «Ուղեղի ցնցման մասին տեղեկության», «Սրտի հանկարծակի կանգի մասին» և «Լրատվամիջոցներում հրապարակման թույլտվության» ձևաթուղթերը;
5. Ծնողներից/խնամակալներից պահանջվում է ներկայացնել «Ռիսկերի մասին նախազգուշացված լինելու և համաձայնություն տալու» ձևաթուղթը:

Բոլոր ձևաթղթերը հասանելի են Միջդպրոցական սպորտի բաժնի վեբկայքում՝ https://achieve.lausd.net/athletics. Միջդպրոցական սպորտի մասնակից ավագ դպրոցի աշակերտները, ովքեր ունեն 3.0 կամ ավելի բարձր միջին որակական գնահատական, յուրաքանչյուր մրցաշրջանի վերջում կճանաչվեն որպես Լոս Անջելեսի միացյալ շրջանի գիտուն ատլետներ:

Կալիֆորնիայի միջդպրոցական սպորտի ֆեդերացիայի մրցույթներին մասնակցելու կամ մասնակիցներին ոգևորել ցանկացող յուրաքանչյուր աշակերտ պետք է մասնակցությունից առաջ տարեկան ֆիզիկական զննում (PPE) անցնի որակավորված, Կալիֆորնիայում լիցենզավորված առողջապահական խնամք տրամադրողի կողմից՝ նախքան մրցումների որևէ բաղադրիչին մասնակցելը, ներառյալ փորձերը և վարժանքները: Շրջանն ընդունում է PPE Կալիֆորնիայում լիցենզավորված բժիշկների (MD կամ DO), բուժաշխատակիցների (NP) կամ բժշկի օգնականների (PA) կողմից: Ընտրված օժանդակ մասնակիցները և շքերթի նվագախմբերը պետք է ֆիզիկական զննում անցնեն նվազագույնը մեկ անգամ, նախքան փորձերը, վարժումներն ու մասնակցությունը: Եթե լիցենզավորված առողջապահական խնամք տրամադրողը գտնի, որ ատլետը ուղեղի ցնցում կամ գլխի վնասվածք է ստացել, ապա ատլետից պահանջվում է լրացնել խաղին վերադառնալու վերաբերյալ աստիճանական արձանագրությունը՝ յոթ (7) օրից ոչ պակաս տևողությամբ՝ լիցենզավորված առողջական խնամք տրամադրողի հսկողության ներքո: Միայն Կալիֆորնիայում լիցենզավորված առողջապահական խնամք տրամադրողը, ով վերապատրաստված է ուղեղի ցնցումների կառավարման մեջ և գործում է իր գործունեության շրջանակներում, պետք է գնահատի կասկածվող ցնցումը: Ատլետին թույլ չի տրվի վերադառնալ խաղալու՝ առանց բուժող առողջապահական խնամք տրամադրողի բուժումն ավարտելու մասին գրավոր տեղեկանքի, հաստատված դպրոցի հավատարմագրված բուժաշխատողի կողմից:

Պաշտպանված բնութագրի հիման վրա ոչ մի աշակերտի չի կարելի մերժել նպաստները, զրկել համարժեք հնարավորությունից կամ այլ կերպ խտրականության ենթարկել միջդպրոցական, միջմարզական կամ ակումբային սպորտի բնագավառում: Խտրականության դեմ տեղեկատվության համար այցելեք https://achieve.lausd.net/Page/3586:

Միջդպրոցական սպորտային և Միջին դպրոցի սպորտային ծրագրերի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար կապվեք Միջդպրոցական սպորտի բաժնի հետ՝ (213) 241-5847 հեռախոսահամարով:

Պատահարներից աշակերտների ապահովագրում
Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի 32220-32224 բաժինները Միջդպրոցական սպորտով զբաղվող աշակերտներից պահանջում են ունենալ առողջապահական կամ դժբախտ պատահարների դեպքերի համար բժշկական ապավիրավագրություն, որի մեջ ներառված են բժշկական և հիվանդանոցային ծախսերը (EC-ի բաժիններ 32220-32224): Աշակերտների առողջապահական ապահովագրության դրույթի տակ նշվող առողջապահական ապահովագրության փաթեթները նախատեսված են նաև օգնելու ծնողներին՝ կատարել նահանգային օրենքի պահանջները: Սպորտային, դժբախտ պատահարների և հիվանդությունների դեպքերի համար պետական և մասնավոր ապահովագրության մասին տեղեկություններ կարելի է ստանալ՝ դիմելով Ռիսկերի կառավարման և ապահովագրական ծառայությունների բաժին՝ (213) 241-2176 հեռախոսահամարով: Մասնավոր ապահովագրության մասին տեղեկություններ կարելի է ստանալ նաև Ռիսկերի կառավարման բաժնի կայքում՝ Voluntary Student Accident Program:

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշակերտները պետք է հաջողությամբ ավարտեն A-G դասընթացների հաջորդականությունը՝ որպես Շրջանի ավարտական պահանջների մաս: A-G պահանջները ներկայացնում են հատուկ առարկայական ոլորտներ, որոնք բավարարում են Կալիֆորնիայի նահանգային համալսարանի (CSU) համակարգ ընդունվելու համար նախատեսված նվազագույն պահանջները: Ստորև բերված աղյուսակը ուրվագծում է դասընթացները, որոնք ներառում են A-G դասընթացների հաջորդականությունը Լոս Անջելեսի միացյալ շրջանի ավարտական լրացուցիչ պահանջների հետ միասին: Շրջանի ավարտական պահանջները կազմված են պարտադիր դասերի, ընտրովի դասերի և արտադասարանական պահանջներից:

12-րդ դասարանի աշակերտը, ով բավարար կերպով կատարել է բոլոր ավարտական պահանջները, իրավունք ունի ստանալ դիպլոմ, որտեղ կնշվի բավարար կերպով բոլոր տարրերի ավարտումը, և նա իրավասու է մասնակցել ավարտական արարողությանը: Լոս Անջելեսի միացյալ շրջանը կտրամադրի ավագ դպրոցի շրջանավարտներին գլխարկներ, շղարշներ և թիկնոցներ անվճար՝ ավարտական արարողության ժամանակ օգտագործելու համար: Ծնողները/օրինական խնամակալները և կրթական իրավունքների կրողները հնարավորություն կունենան գնել գլխարկը և թիկնոցը՝ որպես հուշանվեր:

Առարկա (A-G, CDE և Լոս Անջելեսի միացյալ շրջանի ավարտական պահանջներ)	Լոս Անջելեսի միացյալ շրջանի ավարտական պահանջներ 2020-ից 2027 ուս. տարիների համար
A. Պատմություն/Հասարակական գիտություններ	Երեք (3) տարի դիպլոմի համար; երկու (2) տարի A-G-ի համար
B. Անգլերեն	Չորս (4) տարի
C. Մաթեմատիկա	Երեք (3) տարի
D. Բնագիտություն	Երկու (2) տարի - լաբորատոր բնագիտություն. մեկ (1) տարի կենսաբանական և մեկ (1) տարի ֆիզիկական
E. Անգլերենից բացի այլ լեզու	Երկու (2) տարի - նույն լեզու
F. Տեսողական և կատարողական արվեստ	Մեկ (1) տարի - նույն առարկա
G. Քոլեջի նախապատրաստական ընտրովի առարկա	Մեկ (1) տարի
Ֆիզիկական կուլտուրա	Երկու (2) տարի դիպլոմի համար
Առողջություն	Մեկ (1) կիսամյակ
Էթնիկ ուսումնասիրություններ (սկսած 2027 թվականից)	Մեկ (1) կիսամյակ
Սպասարկման ուսուցում ***	
Աշխատանքային ուղի ***	
Ավարտելու համար հարկավոր ընդհանուր կրեդիտների թիվը՝ 210	

*** Արտադասարանային ուսուցման պահանջը վերաբերում է Սպասարկման ուսուցման հաջող ավարտին և աշխատանքային ուղու բացահայտմանը:

Սահմանելով «A-G» ավարտական պահանջները, որոնք համահունչ են Կալիֆորնիայի համալսարանի և Կալիֆորնիայի նահանգային համալսարանի համակարգերի պահանջներին, Խորհրդի 2005թ. հունիսի 14-ի որոշման մեջ ասվում է. «*Ծնողներր/օրինական խնամակալները և աշակերտները կներգրավվեն համաձայնեցված ուսումնական պլանի մշակման մեջ: Բացի այդ, յուրաքանչյուր աշակերտ կստեղծի ավագ դպրոցի դասընթացի պլան կամ կարիերայի և տեխնիկական կրթության ուղի՝ իր ծնողի/օրինական խնամակալի և դպրոցի խորհրդատուի մասնակցությամբ*»:

Բոլոր միջնակարգ դպրոցները պարտավոր են յուրաքանչյուր աշակերտի հետ անցկացնել Անհատականացված ավարտական ծրագրի (IGP) տարեկան հանդիպումներ: Բոլոր աշակերտները պետք է մուտք ունենան բարձրորակ ուսուցում և գիտակցեն, որ իրենց ընտրած դասընթացները երկարաժամկետ ազդեցություն ունեն իրենց հետմիջնակարգ նպատակների և կյանքի վրա: IGP հանդիպումները ընդլայնում են խորհրդատուների, աշակերտների և ծնողների/օրինական խնամակալների միջև անհատական հարաբերությունները՝ կապված ակադեմիական, անձնական և կարիերայի պլանավորման հետ:

Ավարտական պահանջներից ազատում
Խնամակալության ներքո գտնվող աշակերտները, անօթևան վիճակում գտնվող աշակերտները, նախկինում դատապարտված աշակերտները, ակտիվ զինվորական ծառայություն իրականացնողի ընտանիքում ապրող աշակերտները, ներկայումս արտագաղթող երեխաները և նորեկների ծրագրում մասնակցող աշակերտները կարող են ազատվել տեղական ավարտական պահանջներից՝ օրենքով սահմանված կարգով լրացուցիչ չափանիշներին համապատասխանելուց հետո: (EC-ի Բաժիններ 51225.1, 51225.2)

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԴՊՐՈՑՆԵՐ

Այլընտրանքային դպրոցը ստեղծված և կազմակերպված է այնպես, որ ավելի փոքր, անհատականացված միջավայրում աշակերտների կրթական կարիքները հնարավոր լինի բավարարել: Կրթական այլընտրանքներով դպրոցների նպատակն է՝ երաշխավորել, որ աշակերտները լրացնեն ավագ դպրոցի վկայական ստանալու պահանջները, և պատրաստ լինեն կարիերայի և քոլեջ ընդունվելու համար: Կրթական այլընտրանքներով դպրոցներում աշակերտները զարգացնում են իրենց ակադեմիական, սոցիալական և մասնագիտական հմտությունները՝ բարձր որակի կրթական ծրագրի շրջանակներում, որն ուղղված է երեխայի ամբողջական զարգացմանը: Լոս Անջելեսի միացյալ շրջանում կրթական ընտրանքներ ունեցող դպրոցները ներառում են շարունակական դպրոցներ, համայնքային ցերեկային դպրոցներ, հղիների և անչափահաս ծնողների դպրոցներ, անկախ ուսման դպրոցներ և այլն: Այս դպրոցներին օժանդակում է յուրաքանչյուր Տարածաշրջանային գրասենյակ: Հավելյալ տեղեկություններ կարողեք գտնել https://achieve.lausd.net/Page/665 կայքէջում, կամ դիմեք ձեր Տարածաշրջանային գրասենյակ:

ՎԻՐՏՈՒԱԼ ԱԿԱԴԵՄԻԱ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը առաջարկում է վեց (6) Վիրտուալ ակադեմիայի դպրոցներ: Առցանց ակադեմիաները կուսումնասիրեն և կընդլայնեն անկախ ուսուցումը ավելի լայն ձևով, օգտագործելով տեխնոլոգիան և խթանելով ստեղծագործությունը: Յուրաքանչյուր Վիրտուալ ակադեմիա ներառում է տարրական, միջին և ավագ դպրոց: Ծնողները/օրինական խնամակալները կարող են դասակարգել իրենց դպրոցի նախասիրությունները յուրաքանչյուր աշակերտի համար: Տեղադրումը կկատարվի առկայության և նախապատվությունների հիման վրա: Այցելեք enroll.lausd.net՝ Վիրտուալ ակադեմիայի դպրոցում գրանցվելու համար: Թեմաների և ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ LAUSD Virtual Academy:

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ (DACE)

Չափահասների կրթության և կարիերայի բաժինը (DACE) քաջալերում է սովորողներին իրենց ուսումնական, կարիերայի և քաղաքացիական նպատակներին հասնելու համար: DACE–ն ունի 10 հիմնական կրթական կենտրոններում և Լոս Անջելեսի միացյալ շրջանի ավելի քան 86 մասնաճյուղերում: DACE-ն առաջարկում է նաև առցանց ուսուցման տարբերակներ իր Մեծահասակների կրթության վիրտուալ ակադեմիայի միջոցով: Ուսումնական ծրագրերն ընդգրկում են անգլերենը՝ որպես երկրորդ լեզու, քաղաքացիություն, մեծահասակների հիմնական հմտություններ և ավագ դպրոցի դիպլոմ: DACE- ն

առաջարկում է նաև ավելի քան 200 կարիերայի ուղիներ՝ արդյունաբերության 15 տարբեր ոլորտներում, ներառյալ՝ կառուցապատում և շինարարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և առողջապահական գիտություններ: DACE-ը համագործակցում է շրջանային գործընկերների հետ, ինչպիսիք են՝ Լոս Անջելեսի համայնքային քոլեջի շրջանը, Լոս Անջելեսի տնտեսական և աշխատուժի զարգացման վարչությունը և տեղական գործատուների հետ, որպեսզի բոլոր սովորողները ապահովված լինեն՝ քոլեջում և կարիերայում հաջողության հասնելու համար:

DACE-ը տեղական կրթական գործակալությունն է, որը առաջարկում է աշակերտական պրակտիկաների ծրագրեր 65 մասնագիտությունների գծով՝ 34 անհատական ծրագրերի հովանավորներով: DACE-ը նաև առաջարկում է ամենամեծ շրջանային Ավագ դպրոցի համարժեքության (HSE) թեստավորման ցանցը Կալիֆորնիայի նահանգում՝ օգնելով տարեկան հազարավոր աշակերտների, ովքեր ստացել են համարժեքության վկայականներ՝ DACE-ի հատուկ HSE թեստավորման կենտրոնների միջոցով: Բացի այդ, DACE-ն ապահովում է քոլեջի ընդունման և կարիերայի լայն հնարավորություններ՝ խոստումնալից աշակերտների և անգլերեն սովորող չափահաս աշակերտների համար: Արագացված քոլեջի և կարիերայի անցումային (AC^2T) ծրագրում 16-ից 24 տարեկան աշակերտները, ներառյալ՝ արտաքնտանեկան խնամքի տակ գտնվող և անօթևան աշակերտները, աշխատում են ավագ դպրոցի դիպլոմ ստանալու համար՝ միաժամանակ ստանալով անհատական ուսման աջակցություն և համապարփակ խորհրդատվական ծառայություններ: Ինտեգրված կրթության և ուսուցման (IET) ծրագրում անգլերեն սովորող չափահաս աշակերտները, ներառյալ՝ նոր ներգաղթած և փախստական աշակերտները, միաժամանակ ստանում են անգլերեն լեզվի ուսուցում և կարիերայի վերապատրաստում՝ բարձր աշխատավարձով, բարձր հմտություններով աշխատանքի համար առաջընթացն արագացնելու համար:

DACE-ն առաջարկում է «Ընտանիքի հաջողության նախաձեռնություն» ծրագիրը (FSI), որն ծառայում է Շրջանի 20 տարրական և միջին դպրոցներին:Ծրագիրն աջակցում է երկլեզու ընտանիքներին՝ տրամադրելով անգլերեն լեզվի ուսուցում, որը նախատեսված է օգնել ծնողներին/օրինական խնամակալներին իրենց երեխաների ուսումնական հաջողությունների աջակցման գործում:

Լրացուցիչ տեղեկությունների, ներառյալ, թե ինչպես գտնել չափահասների համար ծրագիր, խնդրում ենք զանգահարել (213) 241-3150 հեռախոսահամարով կամ այցելել https://www.launifiedadult.org վեբկայքը:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՂԱԺԱՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ (CSU-EAP)

Վաղաժամ գնահատման ծրագիրը (EAP) CDE-ի, Կալիֆորնիայի նահանգային համալսարանի (CSU) և Կալիֆորնիայի համայնքային քոլեջների (CCC) համատեղ ծրագիրն է: EAP-ը աշակերտներին վաղ ցուցանիշի հնարավորություն է ընձեռնում մինչև ավագ տարին սկսելը իրենց անգլերենի և/կամ մաթեմատիկայի քոլեջի համար պատրաստվածության վերաբերյալ: EAP-ի միավորները բազմաթիվ չափումներից ՄԵԿՆ են, որոնք CSU-ն օգտագործում է որպես աշակերտի պատրաստվածածության ցուցիչ անգլերենի և մաթեմատիկայի վերաբերյալ քոլեջի մակարդակի դասընթացների համար և առաջին կուրսեցիների տեղաբաշխման համար համապատասխան հանրակրթական (GE) անգլերենի և մաթեմատիկայի դասընթացներում, երբ նրանք ընդունվեն CSU:

11-րդ դասարանի բոլոր աշակերտները մասնակցում են EAP-ին Smarter Balanced Summative Assessments-ի միջոցով անգլերեն, գրագիտություն և մաթեմատիկա առարկաների համար, որը տեղի է ունենում գարնանը: EAP կարգավիճակը ներառված է CAASPP Աշակերտների գնահատման զեկույցում (SSR): Յուրաքանչյուր Smarter Balanced թեստի վերջում աշակերտներին նաև հնարավորություն է տրվում իրենց Smarter Balanced Summative Assessments-ի գնահատականները տեղադրել CSU և CCC-ում: Աշակերտները, ովքեր կնախընտրեն չհրապարակել իրենց արդյունքները CSU-ներին, պետք է իրենց արդյունքները տրամադրեն որևէ CSU-ին՝ ըստ պահանջի:

CAASPP-ի CSU/EAP Ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ձեր երեխայի խորհրդատուին կամ՝ դպրոցի գրասենյակ: Լրացուցիչ տեղեկատվություն տեղադրված է հետևյալ հասցեով. http://www.csustudentsuccess.org:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (CAASPP)

Աշակերտների առաջադիմության և առաջընթացի Կալիֆորնիայի գնահատումը (CAASPP) նահանգի ակադեմիական թեստավորման ծրագիրն է: CAASPP-ը տրամադրում է տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել տարեկան կտրվածքով վերահսկելու աշակերտների առաջադիմությունը և ապահովելու, որ բոլոր աշակերտները ավարտեն ավագ դպրոցը պատրաստ լինելով քոլեջի և կարիերայի համար:

CAASPP համակարգը ներառում է հինգ (5) տարբեր թեստավորման ծրագրեր.

1. Smarter Balanced Summative Assessments-ի անգլերեն լեզվի (ELA) և մաթեմատիկայի համար 3-ից 8-րդ և 11-րդ դասարաններում
2. Կալիֆորնիայի այլընտրանքային գնահատում (CAA) ELA-ի և մաթեմատիկայի համար 3-ից 8-րդ և 11-րդ դասարանների իրավասու աշակերտների համար
3. Կալիֆորնիայի բնագիտության թեստեր (CAST) 5-րդ, 8-րդ դասարանների և մեկ անգամ ավագ դպրոցի աշակերտների համար
4. Կալիֆորնիայի այլընտրանքային գնահատում (CAA) գիտության համար 5-րդ, 8-րդ դասարանների և մեկ անգամ ավագ դպրոցի աշակերտների համար
5. Կալիֆորնիայի իսպաներենի գնահատում (CSA) 3-ից 11-րդ դասարանների իրավասու աշակերտների համար:

Բացառությամբ CAA-ի բնագիտության համար, որն անցկացվում է ամեն տարի սեպտեմբերից հունիս ընկած ժամանակահատվածում, CAASPP-ի բոլոր գնահատումները տեղի են ունենում գարնանը: Յուրաքանչյուր թեստի արդյունքները հասանելի են այդ տարվա ամառվա վերջում: Ծնողները/օրինական խնամակալները կարող են մուտք գործել իրենց աշակերտի էլեկտրոնային CAASPP SSR-ը Ծնողների պորտալի միջոցով: Ծնողները/օրինական խնամակալները, ովքեր չունեն Ծնողական պորտալի հաշիվ, խստորեն խրախուսվում են ստեղծել ծնողական պորտալի հաշիվ: Ծնողական պորտալի կայքը պարունակում է գրանցվելու ցուցումներ՝ հաշիվ ստեղծելու համար https://achieve.lausd.net/Page/10470 էջում:

CAASPP SSR-ները ներառում են ընդհանուր գնահատական և ընթացիկ տարվա աշակերտի առաջադիմության մակարդակի նկարագրությունը ELA-ի և մաթեմատիկայի համար: CAASPP SSR-ները կարող են նաև ներառել միավորներ նախորդ երկու (2) տարիների համար: 2020-21 ուս. տարում CDE-ն ճկունության հնարավորություն է տրամադրել շրջաններին՝ 2020-21 ուս. տարվա պետական ամփոփիչ գնահատումների կառավարման վերաբերյալ: Լոս Անջելեսի միացյալ շրջանը օգտվեց այդ տարբերակից և որոշեց, որ 3-ից 8-րդ դասարանների համար դպրոցները կօգտագործեն տեղական գնահատում: 11-րդ դասարանի աշակերտներն հանձնեցին Smarter Balanced Summative Assessments (փոփոխված և կրճատված) անգլերեն լեզվի և մաթեմատիկայի համար, որպեսզի ունենան բոլոր հնարավորությունները Վաղ գնահատման ծրագրին (EAP) մասնակցելու համայնքային քոլեջների և Կալիֆորնիայի նահանգային համալսարանների համար

Ծնողները/օրինական խնամակալները կարող են տարեկան գրավոր դիմում ներկայացնել դպրոց՝ իրենց երեխային CAASPP-ի գնահատումներից որևէ մեկից կամ բոլորից ազատելու համար (EC Բաժին 60615): Եթե ցանկանում եք ազատել ձեր երեխային թեստից, պետական ուղեցույցները պահանջում են, որ ծնողները/օրինական խնամակալները հարցումը գրավոր ներկայացնեն հիմնական դպրոց: Խնդրում ենք որքան հնարավոր է շուտ տեղեկացնել դպրոցին, որպեսզի դպրոցը կարողանա այլընտրանքային միջոցներ ձեռնարկել ձեր երեխայի համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Smarter Balanced-ի վեբ էջը՝ https://ca.startingsmarter.org/ կամ «Ծնողների ուղեցույցների» համար՝ https://www.cde.ca.gov/ta/tg/ca/parentguidetounderstand.asp էջը:

ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի նահանգն ավագ դպրոցից հետո իրենց կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակել ցանկացող աշակերտներին, որպես տարբերակներ, առաջարկում է Կալիֆորնիայի նահանգային համալսարանները (CSU), Կալիֆորնիայի համալսարանները (UC) և մասնավոր քոլեջներ: Համայնքային քոլեջ հաճախելու համար աշակերտը պետք է միայն լինի ավագ դպրոցի շրջանավարտ կամ 18 տարեկան: Աշակերտը կարող է նաև տեղափոխվել CSU, UC կամ մասնավոր քոլեջ համայնքային քոլեջ հաճախելուց հետո:

CSU-ի պահանջները առաջին կուրսեցիների համար
Ավագ դպրոցում աշակերտի վաստակած գնահատականները CSU-ի ընդունելության որոշումների ամենակարևոր գործոնն են: Ավագ դպրոցի գնահատականի միջին միավորը հաշվարկվում է՝ օգտագործելով աշակերտի՝ 9-րդ դասարանից հետո քոլեջի նախապատրաստական A-G բոլոր դասընթացների գնահատականները:

Առաջին կուրսեցիները պետք է բավարարեն հետևյալ համապատասխանության պահանջները՝ լինել ավագ դպրոցի շրջանավարտ կամ համարժեք, ավարտել 15-միավոր A-G համապարփակ հաջորդականության քոլեջի նախապատրաստական դասընթացներ և վաստակել A-G-ի որակավորվող միջին որակավորման միավոր (GPA), ինչպես նկարագրված է ստորև.

1. Կալիֆորնիայի բնակիչները և Կալիֆորնիայի ավագ դպրոցների շրջանավարտները իրավասու կլինեն ընդունվելու համար՝ ունենալով A-G-ի 2.50 կամ ավել GPA;
2. Կալիֆորնիայի ավագ դպրոցի ցանկացած շրջանավարտ կամ Կալիֆորնիայի բնակիչ, որի GPA-ն 2.00-ից 2.49-ի սահմաններում է, կարող է գնահատվել ընդունելության համար՝ լրացուցիչ գործոնների հիման վրա;
3. Կալիֆորնիայի բնակիչ չհանդիսացող աշակերտները կարող են CSU ընդունվելու իրավունք ունենալ՝ 3.00 կամ ավել A-G-ի GPA ունենալու դեպքում, ինչպես նաև՝ ըստ առանձին համալսարանի կողմից օգտագործվող այլ լրացուցիչ գործոնների, ներառյալ կամպուսների և ծրագրերի կողմից նշված գործոնները;
4. Կալիֆորնիայի ցանկացած բնակիչ, որը Կալիֆորնիայի բնակիչ չի հանդիսանում, և ունի 2.47-ից 2.99 GPA, կարող է գնահատվել ընդունելության համար՝ լրացուցիչ գործոնների հիման վրա:

CSU-ն կդիտարկի credit կամ pass դասընթացի գնահատականները որպես A-G պահանջներին համապատասխանող այն դասընթացների համար, որոնք ավարտվել են 2020 թվականի ձմեռային, գարնանային, ամառային կամ աշնանային և 2021 թվականի ձմեռային, գարնանային կամ ամառային ժամկետներում: Մնացած բոլոր դասընթացները պետք է գնահատվեն, և C կամ ավելի բարձր գնահատականը պետք է վաստակվի, որպեսզի դասընթացը բավարարի A-G պահանջներին:

Այն կամպուսները և ծրագրերը, որոնք նշանակվում են որպես բարձր պահանջարկ ունեցող, կարող են կիրառել դիմորդների համար նախատեսված A-G GPA-ի ավելի բարձր շեմեր, ինչպես նաև որոշել լրացուցիչ չափանիշներ և նրանց հարաբերական կշիռները՝ ընդունելության որոշումներ կայացնելիս: Այս դեպքերում աշակերտների A-G GPA-ի և լրացուցիչ գործոնների համակցությունը կօգտագործվի ընդունելության իրավունքը որոշելու համար: Լրացուցիչ գործոնները, որոնք կամպուսները կարող են օգտագործել, ներառում են.

1. A-G-ի նվազագույն պահանջները գերազանցող դասընթացների քանակը;
2. Մաթեմատիկայի և/կամ բնագիտության դասընթացների միջին որակական գնահատականը (GPA);
3. Ընտանիքի եկամուտը;
4. Արտադպրոցական և առաջնորդության ծրագրերում ներգրավում;
5. Կրթական ծրագրի մասնակցություն ավագ դպրոցում (քոլեջին նախապատրաստման ծրագրեր, ինչպիսիք են GEAR UP, Upward Bound, AVID և այլն);
6. Այլ հասանելի տեղեկություններ, որոնք կազդեն համալսարանի ընդունելության որոշմանը:

UC- ի պահանջները առաջին կուրսեցիների համար՝

1. Ավարտել 15 A-G դասընթացներ (նրանցից 11-ը՝ մինչև կրտսեր տարվա ավարտը);
2. Ավարտել առնվազն 15 քոլեջի նախապատրաստական դասընթացներ (A-G դասընթացներ) C կամ ավելի բարձր գնահատականով: 2020 թվականի գարնանը, ամռանը և աշնանը, ինչպես նաև 2021 թվականի գարնանը և ամռանը ստացած P (Pass) կամ CR (Credit) գնահատականները կբավարարեն A-G պահանջները ցանկացած աշակերտի համար, ով ընդունվել է ավագ դպրոց 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների ընթացքում: 2020 թվականի ձմեռային, գարնանային կամ ամառային ժամկետներում ավարտված դասընթացների համար UC-ն նաև կընդունի Pass/Credit: Աշակերտները պետք է ավարտեն այս դասընթացներից առնվազն 11-ը մինչև ավագ դպրոցի վերջին տարվա սկիզբը:

SAT/ACT թեստերի գնահատականները
Ո՛չ CSU, ո՛չ UC համակարգերը չեն հաշվի առնի SAT կամ ACT թեստի միավորները ընդունելության որոշումներ կայացնելիս կամ կրթաթոշակներ տրամադրելիս: Եթե աշակերտները որոշեն ներկայացնել թեստի միավորները որպես դիմումի մաս, դրանք կարող են օգտագործվել որպես իրավասության նվազագույն պահանջների կատարման այլընտրանքային մեթոդ կամ աշակերտի գրանցումից հետո դասընթացի տեղակայման համար:

Լրացուցիչ ռեսուրսներ
Քոլեջի ընդունելության պահանջների վերաբերյալ հավելյալ հարցերի դեպքում խնդրում ենք դիմել հետևյալ կայքերին.

1. https://www.cccco.edu/: Սա Կալիֆորնիայի համայնքային քոլեջների համակարգի պաշտոնական կայքն է: Այն հղումներ է տալիս Կալիֆորնիայի բոլոր համայնքային քոլեջների համար:
2. https://www.assist.org/: Այս ինտերակտիվ կայքը փոխանցվող կուրսերի վերաբերյալ տեղեկություն է տրամադրում այն աշակերտներին, որոնք պատրաստվում են Կալիֆորնիայի համայնքային քոլեջից տեղափոխվել CSU կամ UC;
3. https://www2.calstate.edu/apply: Այս կայքը աշակերտներին և նրանց ընտանիքներին տեղեկություններ է տրամադրում CSU համակարգի, առցանց դիմելու հնարավորության վերաբերյալ և ներառում է CSU-ի բոլոր կամպուսների հղումները;
4. https://www.universityofcalifornia.edu/: Այս կայքը տրամադրում է տեղեկություններ ընդունելությունների, առցանց դիմումի վերաբերյալ և բոլոր UC կամպուսների հղումները;
5. https://achieve.lausd.net/GPS: Այս կայքը ռեսուրսներ է տրամադրում, որպեսզի օգնի աշակերտներին պլանավորել, նախապատրաստել և շարունակել պահպանել բուհական հաջողությունները: Այն տեղեկատվություն է տրամադրում աշակերտների, ընտանիքների, դասավանդողների և համայնքի անդամների համար: Այն նախագծված է՝ աջակցելու քոլեջի եւ կարիերայի պատրաստվածությանը՝ միջին և ավագ դպրոցներում, դեպի քոլեջ և քոլեջի սովորելու ընթացքում՝ հաստատակամության ձևավորման և բուհին պատրաստ լինելու համար:

Մասնավոր քոլեջներն ու համալսարաններն ունեն իրենց ընդունելության պահանջները:

Աշակերտները կարող են նաև հետազոտել կարիերայի տարբերակները՝ տեխնիկական կրթության միջոցով: Սրանք այնպիսի ծրագրեր և դասեր են, որոնք մասնավորապես կենտրոնանում են կարիերայի և/կամ աշխատանքի համար պատրաստվածությանը: Ծրագրերը և դասերը ինտեգրված են ակադեմիական դասընթացների հետ և օժանդակում են ակադեմիական հաջողություններին:

Որպես իրենց տարեկան IGP կոնֆերանսի մաս, աշակերտները կհանդիպեն դպրոցական խորհրդատուի հետ՝ իրենց դպրոցում ընտրելու դասընթացներ, որոնք կհամապատասխանեն քոլեջի ընդունելության պահանջներին և քննարկելու կարիերայի տեխնիկական կրթության դասընթացներին գրանցվելու հնարավորությունները: Փոփոխություններ կամ ուղղման կարիք կա, խնդրում ենք ուղղակիորեն կապվել դպրոցի հետ:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը հանձնառու է ապահովել խտրականությունից, ոտնձգություններից, ահաբեկումից, չարաշահող վարքագծից և/կամ բուլինգից զերծ աշխատանքային և ուսումնական միջավայր: Դպրոցական շրջանն արգելում է խտրականությունը, ոտնձգությունները, ահաբեկումը, չարաշահող վարքագիծը և/կամ բուլինգը՝ ըստ իրական կամ ընկալվող հետևյալ հիմքերով՝ ռասայի կամ էթնիկական ծագման, գենդերի/սեռի (այդ թվում՝գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, հղիության, երեխայի ծննդյան, կրծքով կերակրելու կարգավիճակի և առնչվող բժշկական հանգամանքների), սեռական կողմնորոշման, կրոնի, մաշկի գույնի, ազգային ծագման (ներառյալ՝ լեզվական օգտագործման սահմանափակումները և ըստ Տրանսպորտային միջոցների օրենսգրքի տրված վարորդական իրավունքի տիրապետումը), նախնիների, ներգաղթի կարգավիճակի, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության (ներառյալ՝ կլինիկական դեպրեսիա և երկբևեռ խանգարում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեպատիտ, էպիլեպսիա, նոպաների խանգարում, շաքարախտ, բազմակի սկլերոզ և սրտի հիվանդություն), հիվանդության (քաղցկեղային կամ ժառանգական բնույթի), ռազմական և վետերանի կարգավիճակի, ամուսնական կարգավիճակի, գրանցված քաղաքացիական զուգընկերոջ կարգավիճակի, տարիքի (40 և բարձր տարիքի), ժառանգական տվյալների, քաղաքական հայացքների կամ պատկանելիության (եթե միությունների հետ կապված չէ), անձի՝ այս կամ այն անձի կամ խմբի հետ ասոցացման՝ իրական կամ ընկալվող այս հատկանիշներից որևէ մեկով կամ մի քանիսով կապված, կամ դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով, հրամանագրով կամ կանոնակարգով պաշտպանված որևէ այլ հիմքով՝ ցանկացած ծրագրում կամ գործունեության մեջ, որը վարում է, կամ որին տրամադրում է զգալի աջակցություն:

Խտրականությունը որևէ կրթական ծրագրի, աշխատանքի կամ գործունեության համատեքստում դրսևորած տարբեր վերաբերմունք է՝ ըստ որևէ պաշտպանված հատկանիշի՝ առանց օրինական, խտրականություն չդնելու պատճառի, որը խանգարում կամ սահմանափակում է անհատի ունակությունը՝ մասնակցել կամ օգտվել Շրջանի կողմից տրամադրվող ծառայություններից, գործունեության տեսակներից կամ արտոնություններից, կամ ներառում է աշխատանքային անբարենպաստ գործողություն:

Անբարենպաստ, թշնամական միջավայրում ոտնձգությունը տեղի է ունենում, երբ թիրախը ենթարկվում է որևէ պաշտպանված դասակարգմանն առնչվող անցանկալի վերաբերմունքի, որը թե՛ սուբյեկտիվ կերպով վիրավորական է թիրախի համար, թե՛ վիրավորական կլիներ պաշտպանված դասակարգման հատկանիշներն ունեցող ողջամիտ անձի համար՝ նույն հանգամանքներում, և որը բավականաչափ ծանր, համառ կամ ընդլայնվող բնույթի է, որը խանգարում կամ սահմանափակում է անհատի ունակությունը՝ արդյունավետ կերպով աշխատելու կամ մասնակցելու Շրջանի կողմից առաջարկվող ծառայություններին, գործունեություններին կամ դրանցից օգտվելու հնարավորություններին: Ոտնձգությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, այդ թվում, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ բանավոր մեկնաբանություններ և վիրավորական խոսքեր, գրաֆիկական կամ գրավոր արտահայտություններ, կամ ցանկացած պահվածք, որը կարող է լինել սպառնացող, նվաստացնող բնույթի: Վերոնշյալ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի հիմքով դրսևորված ոտնձգությունն անօրինական խտրականության ձև է, այն չի հանդուրժվի Շրջանի կողմից, և կարող է հանգեցնել կարգապահական գործողության՝ այն իրականացնող աշակերտի կամ աշխատողի նկատմամբ:

Պաշտպանված դասակարգումների իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հատկանիշների հիման վրա խտրականության, ոտնձգության, ահաբեկման, չարաշահող վարքի դրևորման կամ ճնշումների (բուլինգ) ենթարկելու գործողության ականատես լինելու դեպքում դպրոցի անձնակազմից պահանջվում է անմիջապես ձեռնարկել նման գործողությանը միջամտելու քայլեր, երբ այդպես վարվելը անվտանգ է: Նման վարքի մասին դպրոցի/գրասենյակի կողմից որևէ ծանուցում ստանալուց հետո, անկախ այն բանից՝ դա կատարել է աշխատողը, աշակերտը, թե՝ երրորդ կողմը, դպրոցը կամ գրասենյակը պետք է անհապաղ ձեռնարկի պատշաճ քայլեր՝ քննելու կամ այլ կերպ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և շուտափույթ կերպով ձեռնարկի ողջամտորեն հաշվարկված արդյունավետ քայլեր՝ վերջ դնելու նման վարքին, վերացնելու թշնամական միջավայրը, եթե նման միջավայր ստեղծվել է, և կանխելու նման վարքի կրկնվելը: Նշված քայլերը պետք է ձեռնարկվեն անկախ այն բանից՝ անհատը բողոք ներկայացրել է, թե՝ ոչ, կամ խնդրել է դպրոցին/գրասենյակին՝ ձեռնարկել գործողություններ, թե՝ ոչ: Բողոքողները պաշտպանված են վրեժխնդրությունից: Շրջանը արգելում է վրեժխնդիր լինել ցանկացած անձի նկատմամբ, ով ներկայացնում է բողոք կամ բողոքարկում, հայտնում է անհամապատասխանության, խտրականության, ոտնձգության, ահաբեկման, չարաշահող վարքի կամ բուլինգի դեպքերի մասին, կամ մասնակցում է բողոքի ներկայացման կամ հետաքննության գործընթացին:

Խտրականության բացառման այս քաղաքականությունը տարածվում է Լոս Անջելեսի միացյալ շրջան Դպրոցական Շրջանի կառավարչի իրավասության տակ գտնվող ցանկացած դպրոցում/գրասենյակում տեղի ունեցող բոլոր այն գործողությունների վրա, որոնք կապված են դպրոց հաճախելու հետ:

Անօրինական խտրականության կամ ոտնձգությունների այլ ձևերը, անպատշաճ վարքը և/կամատելությունից դրդված միջադեպերը/հանցագործություններն արգելելու մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Շրջանի քաղաքականության այլ փաստաթղթերում, որոնք առկա են բոլոր դպրոցներում և գրասենյակներում: Շրջանի նպատակն է, որ նման բոլոր քաղաքականությունները վերանայվեն հետևողականորեն, որպեսզի ապահովեն անօրինական խտրականությունից պաշտպանության առավելագույն մակարդակ կրթական ծառայությունների և հնարավորությունների տրամադրման ոլորտում:

Տեղեկությունների, աջակցության կամ բողոք ներկայացնելու համար (տե՛ս Բողոքարկման միասնական ընթացակարգերը)՝ աշակերտներին խտրականության, ոտնձգության, վախեցնելու կամ ճնշումների (բուլինգ) ենթարկելու վերաբերյալ՝ վերը նշված իրական կամ ընկալված բնութագրերի պատճառով, դիմեք Ձեր դպրոցի վարչարարին, դպրոցի Խորագիր IX/ճնշումների (բուլինգ) վերաբերյալ բողոքարկուի մենեջերին կամ Շրջանի 504 բաժին և Խորագիր IX համակարգողին՝ Կրթության հավասարության համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով, Equitycompliance@lausd.net էլ. հասցեով կամ այցելեք http://achieve.lausd.net/eeco: Աշխատողներին առնչվող խնդիրների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք «Հավասար հնարավորությունների բաժնի» հետ՝ (213) 241-7685 հեռախոսահամարով: Շրջանի ոչ խտրական քաղաքականության պատճենը հասանելի է ըստ պահանջի կամ առցանց՝ վերը նշված կայքում:

ԻՆՏԵՐՆԵՏԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը տրամադրում է համացանցից և էլեկտրոնային փոստից օգտվելու հնարավորություն՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի համակարգչային ցանցի (LAUSDnet) միջոցով: Շրջանի վեբկայքի հասցեն է՝ https://www.lausd.net: Լոս Անջելեսի միացյալ շրջանի համակարգիչների և ցանցերի օգտագործման բոլոր կանոնները կանոնակարգվում են Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Օգտագործման Պատասխանատու Քաղաքականության» կարգով, որը կարելի է գտնել Լոս Անջելեսի միացյալ շրջանի կայքում՝ https://achieve.lausd.net/rup: LAUSDnet ցանցից մուտքը համացանց և Լոս Անջելեսի միացյալ շրջանի ցանցային ռեսուրսներ, այդ թվում՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի էլ. փոստի հաշիվներ, համարվում են արտոնություններ, ոչ թե՝ իրավունքներ: Համացանցի և էլ. փոստի անհարկի օգտագործողները կարող են զրկվել այդ արտոնություններից: Մուտքը LAUSDnet ցանց անվճար է՝ ակտիվորեն ընդգրկված աշակերտների համար, ովքեր ունեն աշակերտի ինքնությունը հաստատող համար, ինչպես նաև՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի ակտիվ աշխատակիցների և Լոս Անջելեսի միացյալ շրջանի հետ պայմանագրով աշխատող կապալառուների համար: Համացանցի և Լոս Անջելեսի միացյալ շրջանի ցանցային ռեսուրսների անվճար մուտքի տրամադրման նպատակը կանոնավոր ուսումնական կամ գործարար գործունեության իրականացման կամ կրթական հետազոտությունների համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումն է:

Աշակերտները ստանում են էլեկտրոնային փոստի հաշիվներ LAUSDnet-ում՝ այն դպրոցում, որտեղ գրանցված են: Բոլոր աշակերտ օգտատերերը, ովքեր մուտք են գործում ինտերնետ՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի որևէ հաստատությունից կամ որևէ հեռակա վայրից՝ կապվելով Լոս Անջելեսի միացյալ շրջանի որևէ հաստատության հետ, ապա պետք է դպրոցում ունենան «ԱՇԱԿԵՐՏԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՈՂԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ» լրացված ձևաթուղթը:

Աշակերտներին խրախուսում ենք ստեղծել տառերի և թվերի խառնուրդով դժվար գաղտնաբառեր՝ անվտանգությունը երաշխավորելու համար: Աշակերտները պետք է իրենց գաղտնաբառերը պաշտպանեն և այդ տեղեկությունը միշտ գաղտնի պահեն: Բացի այդ՝ աշակերտները ոչ մի պարագայում չպետք է իրենց գաղտաբառը փոխանցեն որևէ այլ անձի:

Լոս Անջելեսի միացյալ շրջանը գործում է «Երեխաների համար ինտերնետային պաշտպանության դաշնային ակտի» (CIPA) համաձայն: Մասնավորապես, «Երեխաների համար ինտերնետային պաշտպանության դաշնային ակտը» պահանջում է, որ դպրոցական շրջաններն օգտագործեն տեխնոլոգիաներ՝ արգելափակելու մուտքը այնպիսի ինտերնետային կայքեր, որոնք՝ (Ա) անպարկեշտ են, (Բ)պարունակում են մանկական պոռնոգրաֆիա, կամ (Գ) վնասակար են անչափահասների համար: Այս տեխնոլոգիաների շրջանցումն արգելված է: Նկատի ունեցեք, որ արգելափակող տեխնոլոգիան կարող է 100%-ով արդյունավետ չլինել, և գոյություն չունի որևէ տեխնիկական փոխարինող միջոց՝ դպրոցում կամ տանը համացանցից օգտվող երեխայի համապատասխան վերահսկման համար: Դպրոցները, որոնք համացանցի մուտք են տրամադրում աշակերտներին, պարտավոր են կրթել նրանց՝ «21-րդ դարում երեխաներին պաշտպանելու մասին ակտի» համաձայն: Ծնողներին/օրինական խնամակալներին խնդրում ենք տանը համացանցի օգտագործումը դարձնել ավելի պատասխանատու, ընդունելի և ապահով: Այնպես, ինչպես համացանցը կարող է օգտագործվել սովորելու համար, այդպես էլ այն կարող է օգտագործվել անպատշաճ կերպով, և աշակերտների համար վտանգ ներկայացնել: Աշակերտներին հիշեցնում ենք, որ իրենց կամ իրենց ընտանիքների վերաբերյալ առցանց չկիսվեն այնպիսի տեղեկությամբ, որը նրանք չէին ցանկանա հասանելի դարձնել հանրությանը: Կարևոր է, որ ծնողները/օրինական խնամակալները տեղյակ լինեն, թե աշակերտները առցանց ինչով են զբաղված: Ծնողները/օրինական խնամակալները և աշակերտները իրենց պաշտպանելու համար քայլեր ձեռնարկելու գործում պետք է ակտիվ նախաձեռնողներ լինեն: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝ այցելելով https://achieve.lausd.net/cybersafety:

Աշակերտների կողմից երաժշտության, լուսանկարների, տեսանյութերի, ծրագրաշարի և փաստաթղթերի ներբեռնումները պետք է համապատասխանեն հեղինակային իրավունքների մասին բոլոր կիրառելի օրենքներին: Բացի այդ՝ ծրագրերի և հավելվածների ներբեռնումները պետք է ուշադիր կերպով վերահսկել՝ պատշաճության տեսանկյունից: Ցանկացած երաժշտություն, լուսանկար, տեսանյութ, ծրագրաշար կամ փաստաթուղթ պետք է ներբեռնել միայն Լոս Անջելեսի միացյալ շրջանի հետ կապված նպատակներով և ոչ թե՝ անձնական: Անձնական նպատակներով ներբեռնումները, մասնավորապես, եթե դրանք հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր են՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի RUP-ի խախտմամբ, արգելված են, և աշակերտները կարող են ենթակա լինեն կարգապահական տույժի՝ չհաստատված և/կամ ապօրինի ներբեռնման գործողությունների համար: LAUSDnet-ի ոչ մի օգտատեր չպետք է ունենա գաղտնի մնալու ակնկալիք: Լոս Անջելեսի միացյալ շրջան-ը, աշակերտների անվտանգությանը նպաստելու նպատակով, իրեն իրավունք է վերապահում՝ հաշիվների և ցանցի բոլոր մուտքերի աուդիտ անցկացնել: Ինտերնետը հանրային ցանց է, և այնտեղ գտնվող էլեկտրոնային փոստը կամ հաղորդակցության այլ ձևերը գաղտնի չեն: LAUSDnet համակարգի օպերատորներին հասանելի են բոլոր օգտատերերի հաշիվների պանակները (դիրեկտորիաները) և տվյալները, էլեկտրոնային փոստը, ինտերնետային էջերը և համակարգի սերվերների վրա պահպանված ցանկացած այլ ֆայլեր: Օգտատերերն են պատասխանատու՝ չնախաձեռնել օգտվել այնպիսի նյութերից, որոնք չեն համապատասխանում Լոս Անջելեսի միացյալ շրջանի նպատակներին, խնդիրներին, քաղաքականությանը և կրթական առաքելությանը, ինչպես նաև՝ ցանկացած քաղաքի, նահանգի և դաշնային օրենքներին:

Աշակերտներից ակնկալվում է առցանց դրսևորել այնպիսի վարք, որը նրանք կդրսևորեին անձամբ շփման ժամանակ: Աշակերտները պետք է խուսափեն ներգրավվել համացանցի այնպիսի օգտագործման մեջ, որը վտանգի է ենթարկում մուտքի հնարավորությունը կամ հանգեցնում է ուրիշի հաշիվ առանց թույլտվության մուտքին: Բացի այդ՝ արգելված է ուրիշ օգտատերերի անունները և էլեկտրոնային փոստի հասցեները ջնջելը, պատճենելը, փոփոխելը կամ կեղծելը, անձի ինքնության քողարկումը կամ ուրիշ օգտատեր(եր)ի անձնավորումը: Ակնկալվում է, որ օգտատերերը չեն օգտագործի LAUSDnet ցանցը՝ ուրիշներին սպառնալու, ստորացնելու, անվանարկելու կամ վարկաբեկելու նպատակով՝ ըստ ռասայական, կրոնական, դավանանքի, մաշկի գույնի, ազգային ծագման, նախնիների, ֆիզիկական հաշմանդամություն ունենալու, գենդերի, սեռի և սեռական կողմնորոշման խտրականության կամ այլ պատճառով: Ավելին, Լոս Անջելեսի միացյալ շրջանի ցանցի և էլեկտրոնային հաղորդակցության տեխնոլոգիական միջոցների, այդ թվում՝ համացանցի և էլեկտրոնային փոստի մուտքը չպետք է օգտագործվի այլ անձանց ճնշելու (բուլինգի) կամ վնասելու նպատակով նմանատիպ այլ գործողության համար: Անձնական համոզմունքի ցանկացած ձևակերպում էլեկտրոնային փոստի մեջ կամ հրապարակված ցանկացած այլ նյութ ընկալվում է որպես հեղինակի անհատական, այլ ոչ թե՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի տեսակետը: Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Օգտագործման պատասխանատու քաղաքականության» խախտումը կարող է հանգեցնել համացանցից/էլեկտրոնային փոստից օգտվելու արտոնությունների դադարեցմանը, և հետագայում հնարավոր է նաև կարգապահական կամ իրավական գործողություն ձեռնարկվել:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

«Զանգից հետո» (BTB) մասնաճյուղը Շրջանի հովանոցային կազմակերպությունն է, որը պատասխանատու է դպրոցական ծրագրերին նախորդող և հաջորդող բոլոր ծրագրերի և ընդլայնված կրթական հնարավորությունների: Ծրագրերը տարբերվում են ըստ դպրոցների: Ստորև ներկայացված են հակիրճ տեղեկություններ, իսկ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝ զանգահարելով (213) 241-7900 հեռախոսահամարով կամ այցելելով BTB-ի ինտերնետային կայք՝ https://btb.lausd.net:

1. Դպրոցի ժամերին նախորդող և հաջորդող ծրագրեր: BTB-ն առաջարկում է Շրջանի կողմից իրականացվող դպրոցի ժամերին նախորդող և հաջորդող դրամաշնորհային ծրագրեր - Ready, Set, Go (դպրոցից առաջ) և LA's BEST, Երիտասարդության զարգացման ծրագիր, YS Plus (դպրոցից հետո) - համագործակցելով Լոս Անջելեսում համայնքային կազմակերպությունների հետ: Այս ծրագրերը տրամադրում են ուսումնական աջակցության, կատարելագործման և ֆիզիկական պատրաստվածության/հանգստի ծրագրեր՝ վերապատրաստված անձնակազմի հսկողության ներքո, ապահով, հյուրընկալ միջավայրում: BTB-ն նաև հովանավորում է բազմազան նախաձեռնություններ այլ գործընկերների հետ, որոնք ընտրված դպրոցներում աշակերտներին տրամադրում են ուսուցում/մենթորություն, վիզուալ և կիրառական արվեստների և շատ այլ հետաքրքիր զարգացնող ծրագրերին մասնակցելու հնարավորություն: Երիտասարդական ծառայություններ (YS) թույլատրելի ծրագիրն առաջարկում է դպրոցից հետո զարգացնող և սպորտային գործունեություն՝ դպրոցից ազատվելուց մինչև ժամը 18:00 տարրական և միջին դպրոցներում՝ 2-5/6 և 6-8-րդ դասարանների աշակերտների համար համապատասխանաբար:
2. Ընդլայնված կրթական հնարավորություններ: Դպրոցներից շատերը ապահովում են ուսումնական ժամերի ընթացքում և/կամ այդ ժամերից դուրս ուսումնական աջակցություն է տրամադրում այն աշակերտներին, ովքեր դասարանի մակարդակի չափանիշներին չհամապատասխանելու վտանգի տակ են: BTB-ն այդ աշակերտների համար օժանդակում է ընդլայնված կրթական հնարավորությունները հետևյալ ծրագրերի միջոցով ՝ «Ավագ դպրոցի կրեդիտների վերականգնման ամառային դպրոցական ծրագիր», ակադեմիական տասնամարտ, ակադեմիական հնգամարտ, երաժշտական կրթություն, «Բացօթյա և բնապահպանական կրթական ծրագիր», որն աջակցում է Կալիֆորնիայի նահանգային գիտության ստանդարտներին և գործունեություն է իրականացնում Clear Creek և Point Fermin բացօթյա կրթական կենտրոններում, և այլ հատուկ ծրագրերի միջոցով՝ ըստ ֆինանսավորման և հասանելիության:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ՝ԱՆԿԱԽ ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻՑ

Երեխաներն իրավունք ունեն անվճար հանրային կրթություն ստանալու՝ անկախ ներգաղթի կամ քաղաքացիության կարգավիճակից կամ կրոնական հավատքից: Ծնողները/օրինական խնամակալները ունեն արտակարգ իրավիճակներում դպրոցին կոնտակտային տվյալներ տրամադրելու հնարավորություն, ներառյալ՝ երկրորդական կոնտակտներ, նշանակելու վստահված չափահաս անձ, որը կարող է հոգ տանել անչափահասի համար՝ ծնողի/օրինական խնամակալի ձերբակալման կամ երկրից վտարման դեպքում:

Ծնողները/օրինական խնամակալները հնարավորություն ունեն լրացնելու Խնամակալի լիազորագրերը կամ այլ փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս վստահված չափահաս անձին լիազորություններ տալ անչափահասի համար կրթական և բժշկական հարցերում որոշումներ կայացնելիս: Աշակերտներն իրավունք ունեն զեկուցելու ատելության հողի վրա հանցագործության մասին կամ բողոք ներկայացնել Լոս Անջելեսի միացյալ շրջանին, եթե նրանց հանդեպ խտրականություն է դրսևորվել, ենթարկվել են հալածանքի, ահաբեկման կամ ճնշումների (բուլինգ)՝ փաստացի կամ սուբյեկտիվ կերպով

ընկալվող ազգության, էթնիկության կամ ներգաղթի կարգավիճակի հիման վրա: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Բողոքարկման միասնական ընթացակարգերի վերաբերյալ բաժինը: Կալիֆորնիայի գլխավոր դատախազության կայքը տրամադրում է «Իմացեք ձեր իրավունքները» վերանգրով ռեսուրսներ՝ ներգաղթյալ աշակերտների և ընտանիքի անդամների համար՝ https://oag.ca.gov/immigrant/rights կայքում: Բացի այդ, այցելեք Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Մենք մեկ (ընտանիք) ենք» կայքէջը՝ https://achieve.lausd.net/weareone:

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ԸՍՏ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ» (ADA)

Լոս Անջելեսի միացյալ շրջանը խտրականություն չի դրսևորի հաշմանդամություն ունեցող համապատասխան անձանց հանդեպ՝ իր ծառայությունների, ծրագրերի կամ գործողությունների մեջ՝ հաշմանդամություն ունենալու հիման վրա (Խորագիր II, Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին 1990 թ. օրենք):

Քաղաքականության և ընթացակարգերի փոփոխություններ. Լոս Անջելեսի միացյալ շրջանը բոլոր խելամիտ փոփոխությունները կիրականացնի քաղաքականության և ծրագրերի մեջ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավոր լինի ապահովել հավասար հնարավորություններ՝ բոլոր ծրագրերից, ծառայություններից և գործունեությունից օգտվելու համար: Օրինակ, ծառայողական նպատակներով կենդանիների ուղեկցությամբ անձինք կարող են մուտք գործել Լոս Անջելեսի միացյալ շրջանի գրասենյակներ, նույնիսկ այնտեղ, որտեղ տնային կենդանիների մուտքը սովորաբար արգելված է:

Արդյունավետ հաղորդակցություն. Ըստ պահանջի Լոս Անջելեսի միացյալ շրջանը տրամադրում է համապատասխան օժանդակ միջոցներ և ծառայություններ, որոնք կհանգեցնեն արդյունավետ հաղորդակցության համապատասխան անձանց համար, ովքեր ունեն խոսքի, լսողության կամ տեսողության խանգարումներ, որպեսզի նրանք կարողանան հավասարապես մասնակցել Լոս Անջելեսի միացյալ շրջանի ծրագրերին, ծառայություններին և գործունեությանը: Յուրաքանչյուր ոք, ով կարիք ունի օժանդակ օգնության կամ ծառայության արդյունավետ հաղորդակցման, կանոնների կամ ընթացակարգերի փոփոխության՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի ծրագրին, ծառայությանը կամ գործունեությանը մասնակցելու համար, պետք է կապ հաստատի միջոցառումը վարող տնօրենի հետ որքան հնարավոր է շուտ, և ոչ ուշ, քան 72 ժամ նախատեսված միջոցառումից առաջ:

Սուրդոթարգմանչի ծառայություններ խնդրելիս անհրաժեշտ է հարցումը տրամադրել միջոցառումից 10 աշխատանքային օր առաջ: Դա պայմանավորված է մեծ պահանջարկով և հավաստագրված թարգմանիչների խիստ ցածր հասանելիությամբ ամբողջ երկրում: Միջոցառումների համար, որոնք չեն անցկացվում Լոս Անջելեսի միասնական գրասենյակում կամ դպրոցում, խնդրում ենք կապվել ADA-ի Համապատասխանության ադմինիստրատորի հետ միջոցառումից առնվազն 72 ժամ առաջ էլ. փոստով ADA-Info@LAUSD.net հասցեով՝ մատչելիության հարմարությունների և/կամ փոփոխությունների մասին տեղեկանալու համար:

Լոս Անջելեսի միացյալ շրջանը հաշմանդամություն ունեցող անձանցից կամ հաշմանդամություն ունեցող անձանց որևէ խմբից գումար չի գանձի օժանդակ օգնություն տրամադրելու, ծառայությունների կամ կանոնների ողջամիտ փոփոխությունների ծախսերը հոգալու համար:

ADA-ն չի պահանջում Լոս Անջելեսի միացյալ շրջանին որևէ գործողություն ձեռնարկել, որը հիմնովին կփոխի իր ծրագրերի կամ ծառայությունների բնույթը կամ՝ անհարկի ֆինանսական կամ անտեղի ֆինանսական կամ վարչական ծանրաբեռնվածության կենթարկի Շրջանին:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար Լոս Անջելեսի միացյալ շրջանի որևէ ծրագրի, ծառայություն կամ գործունեության անմատչելի լինելու մասին բողոքները պետք է ուղղել ADA-ի համապատասխանության հարցերով մենեջերին՝ ADA-Info@LAUSD.net էլ. փոստի միջոցով կամ ՝ (213) 241-4530 հեռախոսահամարով: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել նաև https://achieve.lausd.net/ADA կայքում:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը ձգտում է բացահայտել, գտնել և գնահատել հաշմանդամություն ունեցող աշակերտներին, ովքեր կարող են իրավասու լինել հատուկ կրթական ծառայությունների, որոնք նախատեսված են իրենց կրթական կարիքները հոգալու համար անվճար: Սա ներառում է բարձր շարժունակ աշակերտների, միգրանտ, անօթևանության մեջ հայտնված, խնամատարության համակարգում գտնվող և Լոս Անջելեսի միասնական սահմաններում գտնվող մասնավոր դպրոցներ հաճախող աշակերտներին՝ անկախ նրանց բնակության վայրից: Բոլոր մյուս աշակերտները պետք է ապրեն Լոս Անջելեսի միացյալ շրջանի տարածքում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Child Find կայքը ՝ https://achieve.lausd.net/spedChildFind:

Դպրոցահասակ երեխաների այն ծնողները/օրինական խնամակալները, ովքեր կասկածում են, որ իրենց երեխան կարող է ունենալ հաշմանդամություն, և նա կարող է կարիք ունենալ հատուկ կրթական ծառայությունների՝ պետք է դիմեն իրենց թաղամասի հանրային դպրոցի ադմինիստրատորին: Դպրոցում չընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ծնողները/օրինական խնամակալները, ովքեր կասկածում են, որ իրենց երեխան կարող է հաշմանդամություն ունենալ և իրավասու լինել հատուկ կրթական ծառայություններ ստանալու համար, պետք է դիմեն Վաղ մանկության հատուկ կրթության բաժին՝ (213) 241-4713 հեռախոսահամարով: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են նաև Child Find վեբ էջում՝ https://achieve.lausd.net/spedChildFind հասցեով:

Հատուկ կրթական ծառայությունները նախատեսված են հաշմանդամություն ունեցող աշակերտների կրթական եզակի կարիքները բավարարելու համար և տրամադրվում են անվճար: Այս ծառայությունները հիմնված են գնահատումների վրա և որոշվում են Անհատականացված կրթական ծրագրի (IEP) թիմի կողմից, որը ներառում է աշակերտի ծնող(ներ)ը/օրինական խնամակալ(ները) որպես մասնակից: Շրջանը գնահատում է բազմազանությունը, արդարությունը, ներառականությունը և աշխատում է ապահովելու, որ աշակերտները լիիրավ մասնակիցներ լինեն դպրոցում, որին նրանք հաճախում են: Այս տեսանկյունից, IEP թիմերը աշխատում են զարգացնել աջակցություն և ծառայություններ, որոնք կրթական օգուտ են տալիս աշակերտներին դպրոցում և դասարանում, որտեղ նրանք կհաճախեին, եթե չունենային հաշմանդամություն: Հնարավորության սահմաններում հաշմանդամություն ունեցող աշակերտները պետք է սովորեն իրենց աշխատունակ հասակակիցների կողքին հանրակրթական միջավայրում: Հանրակրթական դասարանը, բոլոր համապատասխան լրացուցիչ հարմարություններով և ծառայություններով, որտեղ աշակերտը լավագույն հնարավորությունն ունի ինտեգրվելու իր ոչ հաշմանդամ հասակակիցների հետ, առաջին կրթական միջավայրն է, որը դիտարկում է IEP թիմը: IEP թիմը պետք է առաջարկի աջակցություն և ծառայություններ հանրակրթական դասարանից դուրս կամ աշակերտին հեռացնի հանրակրթական դասարանից և միջավայրից միայն այն դեպքում, երբ աշակերտի հաշմանդամության բնույթը կամ ծանրությունը այնպիսին է, որ ընդհանուր դասարաններում կրթությունը լրացուցիչ օժանդակ միջոցների և ծառայությունների օգտագործմամբ չի կարող բավարար լինել:

Լրացուցիչ տեղեկություններ հատուկ կրթության գործընթացի մասին, ներառյալ ձեր իրավունքները, երեխայի իրավունքները և ինչպես օգտագործել դրանք Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մասին դաշնային օրենքի (IDEA) և Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի համաձայն, հասանելի է *«Հատուկ կրթության ծառայությունների ծնողների ուղեցույց»* (Ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները) գրքույկում, որը հասանելի է Շրջանի յուրաքանչյուր դպրոցում և Հատուկ կրթության բաժնի կայքում՝ https://achieve.lausd.net/sped, բազմաթիվ լեզուներով: Ծնողներին/օրինական խնամակալներին խրախուսվում է հատուկ կրթության հետ կապված ցանկացած խնդիր լուծել դպրոցի ադմինիստրատորի, հատուկ կրթության ուսուցչի կամ ծառայություն մատուցողի հետ: Որպես այլընտրանք, ծնողները/օրինական խնամակալները ցանկացած պահի կարող են դիմել Հատուկ կրթության բաժնի Ընտանիքի աջակցության ծառայության գրասենյակ՝ (213) 241-6701 հեռախոսահամարով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ՝ ԸՍՏ 1973Թ. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻ 504 ԲԱԺՆԻ

1973 թ. Վերականգնողական Ակտի (Rehabilitation Act) Բաժին 504-ը քաղաքացիական իրավունքների մասին դաշնային օրենք է, որն արգելում է խտրականությունը հաշմանդամների նկատմամբ այն ծրագրերում և աշխատանքներում, որոնք ֆինանսական օժանդակություն են ստանում ԱՄՆ Կրթության դեպարտամենտից: Անհատների նկատմամբ ցանկացած ձևի խտրականությունը, ոտնձգությունը, ահաբեկելը և/կամենշումը/բուլինգը նրանց

իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հաշմանդամության հիմքով՝ անընդունելի են և անհանդուրժելի: Շրջանը շուտափույթ կերպով կքննի հաշմանդամության հիմքով խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման և/կամճնշումների/բուլինգի ցանկացած բողոքներ և կձեռնարկի ողջամիտ գործողություններ՝ վերջ դնելու ապագա միջադեպերին:

Այն աշակերտների համար, որոնք հիրավասու չեն հատուկ կրթության ծառայությունների համար, սակայն բավարարում են հաշմանդամություն ունեցող անձանց սահմանմանը՝ ըստ Բաժին 504-ի, կարող է մշակվել Բաժին 504-ի պլան, որտեղ նշվում են հարմարությունները, լրացուցիչ օժանդակ պարագաները և/կամ ծառայությունները, որոնք կտրամադրվեն, որպեսզի օգնեն, որ ընդհանուր կրթության ծրագիրը աշակերտի համար մատչելի դառնա: Ըստ Բաժին 504-ի՝ Շրջանը պետք է ապահովի ոչ ուսումնական և արտածրագրային ծառայությունները և գործնական աշխատանքներն այնպես, որպեսզի հաշմանդամություններ ունեցող անհատներն ունենան հավասար հնարավորություն՝ մասնակցելու այդ աշխատանքներին: Ծնողները/օրինական խնամակալները պետք է գրավոր կերպով ծանուցվեն Շրջանի ցանկացած որոշումների մասին, որոնք վերաբերվում են իրենց երեխայի գնահատմանը, նույնականացմանը և/կամ կրթական միջավայրում տեղավորմանը, ինչպես նաև պետք է իրազեկվեն իրենց իրավունքի մասին՝ մասնակցելու այդ որոշումներին կամ բողոքարկելու այդ որոշումները՝ համաձայն Բաժին 504-ի:

Բաժին 504-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների կամ դիմում, բողոք ներկայացնելու (տե՛ս Միասնական բողոքարկման ընթացակարգերը) աջակցության, ոչ պաշտոնական միջնորդություն կամ անկողմնակալ լսում վարելու հարցով կապվեք Շրջանի Բաժին 504-ի համակարգողի հետ՝ Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով, էլ. փոստով EquityCompliance@lausd.net, կամ այցելեք https://achieve.lausd.net/eeco:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Տանը կամ հիվանդանոցում ուսուցում է տրամադրվում նահանգի օրենքով սահմանված կարգով՝ ընդհանուր կրթության և հատուկ կրթության համար իրավասու K-ից 12-րդ դասարանների այն աշակերտներին, որոնց ոչ վարակիչ, ժամանակավոր բժշկական հաշմանդամությունը որոշակի սահմանափակ ժամանակահատվածում նրանց թույլ չի տալիս հաճախել ցերեկային ուսուցման կանոնավոր դասերին կամ այլընտրանքային կրթական ծրագրին: Նպատակն է պահպանել աշակերտների ուսուցողական ծրագրի շարունակությունը՝ ժամանակավոր հաշմանդամության ընթացքում: Տնային/հիվանդանոցային ուսուցիչը, ֆիզիկապես ներկա գտնվելով կամ առցանց, տրամադրում է այնպիսի առարկաների/դասընթացների ուսուցում, որոնք հնարավոր առավելագույն չափով կապակցված են աշակերտի դպրոցական ծրագրի հետ: Տնային/հիվանդանոցային ուսուցումը նախատեսված է որպես ժամանակավոր միջանկյալ ծառայություն: Այն չպետք է երկար ժամանակով փոխարինի կանոնավոր կերպով պահանջվող ուսման ծրագրին: Ուսուցումը տանը/հիվանդանոցում կսկսվի, երբ (1) բուժող բժիշկը թույլատրի սկսել այս ծառայությունը՝ ելնելով աշակերտի մասնակցելու կարողությունից և, (2) երբ ծնողից/օրինական խնամակալից ստացվի կրթական պարտականությունների ժամանակավոր փոխանցման մասին թույլտվություն: Տանը/հիվանդանոցում ժամանակավոր ուսուցում տրամադրվում է նաև ընթացիկ Անհատական կրթական ծրագիր (IEP) ունեցող աշակերտներին կամ Բաժին 504-ի պլանում ընդգրկված աշակերտներին՝ որոշակի հանգամանքներում:

ԲԱԺԻՆ IX ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հիմք ընդունելով դաշնային օրենքը, Խորագիր IX-ը, նահանգի օրենքը և Շրջանի քաղաքականությունը՝ ոչ մի աշակերտի չպետք է զրկել մասնակցությունից կամ նպաստներից օգտվելու հնարավորությունից կամ ոչ մի աշակերտի հանդեպ չպետք է դրսևորվի որևէ խտրականություն՝ ըստ իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հետևյալ դասակարգումների՝ սեռի, սեռական կողմնորոշման և գենդերի (այդ թվում՝ գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, ամուսնական կարգավիճակի, ծնող դառնալու, հղիության, երեխայի ծննդաբերության, կրծքով կերակրման, կեղծ հղիության, հղիության դադարեցման և առնչվող բժշկական հանգամանքների) կամ ըստ մեկ այլ անձի կամ խմբի հետ ասոցացման, որը դրսևորում է այս իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հատկանիշներից մեկը կամ մի քանիսը: Աշակերտները հավասար ուսումնական հնարավորություններ ունեն դպրոցում և պետք է հավասար վերաբերմունքի արժանանան Շրջանի բոլոր կրթական ծրագրերում և միջոցառումներում, այդ թվում՝

1. Սպորտ;
2. Ֆիզիկական կրթություն;
3. Դասընթացներ, որոնց կարող են մասնակցել, և դասավանդում, որը ստանում են;
4. Ուսումնական ծրագրերում և միջոցառումներում նրանց հանդեպ վերաբերմունքը;
5. Նրանց տրվող խորհրդատվություն;
6. Արտադասարանական միջոցառումներ, ծրագրեր և ակումբներ, որոնց նրանք կարող են մասնակցել;
7. Պատվոգրեր, հատուկ մրցանակներ, կրթաթոշակներ և ավարտական միջոցառումներ, որոնց նրանք կարող են մասնակցել;
8. Դրամահավաքմանն ուղղված ջանքերը:

Հղի և երեխա ունեցող աշակերտները՝ անկախ իրենց ամուսնական կարգավիճակից, ունեն բոլոր աշակերտների համար սահմանված նույն իրավունքները՝ Շրջանի ցանկացած դպրոց կամ ծրագիր հաճախելու համար՝ խտրականությունից և ոտնձգություններից զերծ միջավայրում: Հղի և երեխա ունեցող աշակերտների համար Շրջանը ողջամիտ հարմարություններ կստեղծի, ներառյալ՝ աշակերտի՝ կրծքով կերակրելու/լակտացիայի կարգավիճակի, ուսումնական կարիքների և հղիության և երեխա ունենալու հետ կապված մասնակցության համար համապատասխան հարմարություններ ստեղծելը, որպեսզի ոչ մի աշակերտ դուրս չմնա մասնակցությունից, չզրկվի նպաստներից, կամ այդ աշակերտի սեռի/գենդերի հիման վրա խտրականություններ չդրսևորվեն: Հղի և երեխա ունեցող աշակերտներն իրավունք ունեն տարբեր վերաբերմունք չստանալ՝ սեռի հիման վրա; նրանք իրավունք ունեն մասնակցել կրթական եւ արտադասարանական գործունեությանը, եթե ֆիզիկապես և հոգեպես ի վիճակի են; նրանցից չպետք է պահանջել մասնակցել անչափահաս հղիների համար ծրագրերին կամ այլընտրանքային կրթական ծրագրերին; նրանց հղիության հետ կապված առողջական խնդիրները պետք է բուժել նույն ձևով և նույն քաղաքականությամբ, ինչպես ցանկացած այլ ժամանակավոր առողջական խնդրի դեպքում; նրանք իրավունք ունեն կամավոր կերպով վերցնել ութ (8) շաբաթ կամ ավել ծնողական արձակուրդ, եթե բժշկական տեսանկյունից այդպես անհրաժեշտ համարվի աշակերտի բժշկի կողմից; ծնողական արձակուրդում գտվելիս նրանցից չպետք է պահանջվի կատարել ուսումնական հանձնարարությունը կամ այլ դպրոցական պահանջները; նրանք իրավունք ունեն վերադառնալ դպրոց և նույն ուսումնական ծրագրին, ինչպես նախքան ծնողական արձակուրդ գնալն էր, կամ կարող են ընտրել այլընտրանքային կրթական ծրագրին մասնակցելը, լրացնել բաց թողնված աշխատանքը, անհրաժեշտության դեպքում վերցնել ավագ դպրոցի հինգերորդ տարին՝ ավարտական պահանջներին բավարարելու համար, և նրանց նկատմամբ ակադեմիական տույժ չպետք է կիրառել՝ այս հարմարություններից օգտվելու համար: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են Know Your Rights: Pregnant and Parenting Students վերնագրով նյութում և դաշնային օրենքի և Կրթության օրենսգրքի հղումով՝ https://achieve.lausd.net/eeco:

Աշակերտները, ովքեր կարծում են, որ իրենց իրավունքները ոտնահարվում են, իրավունք ունեն միջոցներ ձեռնարկել և խրախուսվում են լուծել իրավիճակը՝ դիմելով դպրոցի ադմինիստրատորին, Խորագիր IX/բուլինգի վերաբերյալ բողոքարկուի մենեջերի, հոգեբանի, խորհրդատուի, կամ դպրոցում որևէ վստահելի մեծահասակի հետ կամ՝ գրելով բողոք (Տես՝ Բողոքարկման միասնական ընթացակարգերը): Խրախուսելի է, երբ աշակերտները, հնարավորության դեպքում, իրենց բողոքները լուծում են անմիջապես դպրոցի տարածքում: Աշակերտներ, ովքեր կարծում են, որ իրենց՝ Խորագիր IX-ով սահմանված իրավունքները ոտնահարվել են, իրավունք ունեն բողոք ներկայացնելու: Լրացուցիչ տեղեկությունների կամ օգնության համար կարող եք կապվել դպրոցի ադմինիստրատորի, դպրոցի Խորագիր IX/ճնշումների (բուլինգ) վերաբերյալ բողոքարկուի մենեջերի կամ Շրջանի Խորագիր IX-ի համակարգողի հետ՝ Կրթական հավասարության բողոքների գրասենյակում՝ զանգահարելով (213) 241-7682 համարով, գրելով EquityCompliance@lausd.net հասցեին կամ նամակ ուղարկելով՝ 333 S. Beaudry Avenue, 18th Floor, Los Angeles, CA 90017 հասցեին: Այլապես, այս բնույթի բողոք կարելի է ներկայացնել Քաղաքացիական իրավունքների գրասենյակում: Խորագիր IX-ի և աշակերտների իրավունքների, պաշտպանությունների և հասանելի բողոքարկման գործընթացների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարելի է գտնել https://achieve.lausd.net/eeco կայքում՝ Բաժին IX-ի ներքո:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը հանձնառու է ապահովել սեռական ոտնձգություններից զերծ աշխատանքային և ուսումնական միջավայր: Շրջանն արգելում է սեռական ոտնձգությունների իրականացումն աշխատողների, աշակերտների կամ Շրջանի հետ կամ Շրջանի համար գործարարությամբ զբաղվող անձանց նկատմամբ կամ նրանց կողմից՝ իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող սեռի, սեռական կողմնորոշման, գենդերի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, հղիության, երեխայի ծնվելու, կրծքով կերակրելու/լակտացիայի կարգավիճակի և առնչվող ցանկացած բժշկական հանգամանքի հիման վրա: Այս քաղաքականությանը չհետևելը նահանգային և դաշնային օրենքների խախտում է:

Ըստ Կալիֆորնիայի օրենքի՝ սեռական ոտնձգությունը սահմանվում է՝ որպես անցանկալի սեռական բնույթի գործողություններ, ներառյալ՝ սեռական կապի առաջարկություններ, սեռական բնույթի խնդրանքներ և սեռական բնույթի կամ սեքսի հիման վրա այլ խոսքային, տեսողական կամ ֆիզիկական պահվածք՝ աշխատանքային կամ կրթական միջավայրում գտնվող անձի կողմից, հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությամբ՝

1. Նման պահվածքին զիջելը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կերպով դրվում է որպես պայման՝ անհատի աշխատանքի, ուսումնական կարգավիճակի կամ առաջընթացի համար;
2. Անհատի կողմից նման պահվածքին զիջելը կամ դա մերժելը օգտագործվում է որպես աշխատանքի կամ անհատի վրա ազդող ուսումնական որոշումների հիմք;
3. Անհատի վարքագծին ենթարկվելը կամ դրա մերժումը օգտագործվում է որպես հիմք ցանկացած որոշման համար, որը ազդում է անհատի վրա կրթական հաստատությունում կամ դրա միջոցով հասանելի նպաստների և ծառայությունների, պատվոգրերի, ծրագրերի կամ գործունեության վերաբերյալ;
4. Այդ պահվածքը նպատակ ունի բացասական ազդեցություն թողնելու անհատի աշխատանքային գործունեության արդյունքների, ուսման առաջադիմության վրա, կամ ստեղծելու վախեցնող, թշնամական կամ վիրավորական աշխատանքային կամ ուսումնական միջավայր:.

Ըստ 1972 թ. կրթության փոփոխությունների IX վերնագրի կանոնների՝ սեռի հիման վրա վարքագիծը, որը բավարարում է նշվածներից մեկին (1) կամ մի քանիսին, կարող է սեռական խտրականություն կամ սեռական ոտնձգություն լինել՝

1. Աշխատակիցը Շրջանի օգնության, նպաստի կամ ծառայության տրամադրումը պայմանավորում է անձի կողմից անցանկալի սեռական վարքագծի մասնակցությամբ;
2. Ողջամիտ անձի կողմից անցանկալի վարքագիծը պարզորոշվել է այնքան խիստ, համատարած և օբյեկտիվորեն վիրավորական, որ այն փաստացիորեն զրկում է անձին Շրջանի կրթական ծրագրի կամ գործունեության հավասար հասանելիությունից;
3. Սեռական ոտնձգություն, ժամադրության բռնություն, ընտանեկան բռնություն կամ հետապնդում, ինչպես սահմանված է Clery Act- ով կամ «Կանանց նկատմամբ բռնության մասին» օրենքով:

Վերոնշյալի հիման վրա խտրականությանը, ոտնձգությանը, ահաբեկմանը, չարաշահման վարքագծին կամ ճնշումների ենթարկելուն (բուլինգ) ականատես լինելու դեպքում՝ անձնակազմից պահանջվում է անմիջապես ձեռնարկել նման գործողությանը միջամտելու քայլեր, երբ այդպես վարվելը անվտանգ է: Պահվածքի մասին վարչարարին կամ Խորագիր IX-ի/ճնշումների (բուլինգ) վերաբերյալ բողոքարկուի մենեջերին հայտնելը կարող է լինել պատշաճ միջամտություն: Երբ դպրոցը/գրասենյակը ծանուցվում է պահվածքի մասին, բողոքը լրացվում է, անկախ այդ բանից՝ դա կատարել է աշխատողը, աշակերտը, թե երրորդ կողմը՝ պետք է անհապաղ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ քննելու, աջակցելու քննությանը կամ այլ կերպ որոշելու տեղի ունեցածը և ձեռնարկել ողջամիտ արդյունավետ քայլեր՝ վերջ դնելու նման պահվածքին, վերացնելու թշնամական միջավայրը, եթե նման միջավայր ստեղծվել է, և կանխելու պահվածքի կրկնվելը: Աջակցող միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ անկախ այն բանից, թե անհատը բողոք ներկայացրել է կամ խնդրել է դպրոցին/գրասենյակին գործողություններ ձեռնարկել: Այս քաղաքականությունը վերաբերվում է Լոս Անջելեսի միացյալ շրջան Դպրոցական Շրջանի կառավարչի իրավասության շրջանակում գտնվող ցանկացած գործունեությանը կամ հաճախումներին առնչվող բոլոր իրավական գործողություններին:

Շրջանի ցանկացած աշակերտ կամ աշխատող, որը կարծում է, որ դարձել է սեռական ոտնձգության զոհ, կամ ով ականատես է եղել նման գործողությանը, պետք է խնդիրը ներկայացնի ադմինիստրատորին կամ Խորագիր IX-ի/բուլինգի վերաբերյալ բողոքարկուի մենեջերի ուշադրությանը, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան գործողություններ՝ այն լուծելու նպատակով: Շրջանն արգելում է վրեժխնդիր լինել ցանկացած անձի դեմ, ով սեռական ոտնձգության բողոք է ներկայացրել կամ մասնակցել քննության գործընթացին: Բողոքները պետք է շուտափույթ և արդար կերպով կերպով քննվեն այնպես, որ հնարավորինս առավելագույն չափով հարգվի խնդրո առարկա հանդիսացող կողմերի գաղտնիությունը:

Եթե աշակերտները/ծնողները լրացուցիչ տեղեկությունների կամ աջակցության կարիք ունեն, կարող են դիմել իրենց դպրոցի վարչարարին, դպրոցի Խորագիր IX/ճնշումների (բուլինգ) վերաբերյալ բողոքարկուի մենեջերին կամ Շրջանի Խորագիր IX համակարգողին՝ Կրթության հավասարության համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով, էլ. փոստով՝ EquityCompliance@lausd.net, կամ այցելելով http://achieve.lausd.net/eeco կայքը: Աշխատողներին առնչվող խնդիրների մասին աջակցություն ստանալու համար կապ հաստատեք Հավասար հնարավորությունների բաժնի հետ՝ (213) 241-7685 հեռախոսահամարով:

ԱՆՕԹԵՎԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

«ՄաքՔինին-Վենտոյի (McKinney-Vento) անօթևան երեխաների և դեռահասների համար օժանդակության ակտը» բոլոր անօթևան վիճակում գտնվող դպրոցական տարիքի երեխաներին իրավունք է տալիս ստանալ նույն անվճար և պատշաճ հանրային կրթությունը, որը տրվում է մշտական օթևան ունեցող աշակերտներին: Անօթևան վիճակում գտնվող է սահմանվում այն անհատը, ով **գուրկ է մշտական, կանոնավոր և համապատասխան գիշերակացի վայրից** և կարող է ապրել՝

1. արտակարգ դեպքերի կամ տրանզիտային ապաստանում;
2. ստանդարտներից ցածր շինությունում, ավտոմեքենայում, ավտոտնակում կամ այլ շինությունում, որը նախատեսված չէ որպես գիշերակացի կանոնավոր կացարան մարդկանց համար;
3. մեկ այլ ընտանիքի հետ՝ կացարանի կորստի կամ ֆինանսական խնդիրների պատճառով (սենյակը կիսելով մեկի հետ);
4. հյուրանոցում կամ մոթելում տնտեսական դժվարությունների արդյունքում;
5. բնակվել թրեյլերի/R.V/շարժական տանը կամ ճամբարում;;
6. ժամանակավորապես մեծահասակի հետ, ով նրա ծնողը/օրինական խնամակալը չէ, որը հայտնի է որպես անօթևանություն ապրող առանց ուղեկցող երեխա:

Աշակերտի բնակության վայրի մասին հարցաթերթը (SHQ) բաժանվում է ամեն տարի ուսումնական տարվա սկզբին բոլոր դպրոցներում ընդունելության/գրանցման այլ պահանջվող ձևերի հետ միասին: SHQ մեջ ծնողները/օրինական խնամակալները և առանց ուղեկից երեխաները կարող են նույնականացնել իրենց ներկա բնակության իրավիճակը: Յուրաքանչյուր դպրոցից պահանջվում է դպրոցի տարածքում ունենալ անօթևան աշակերտների հարցերով հատուկ պատասխանատու: Ուսումնական տարվա ընթացքում ցանկացած պահի աշակերտները, ծնողները/օրինական խնամակալները կամ խնամակալները կարող են օգտագործել SHQ-ը դպրոցի տարածքում կամ ուղղակիորեն Աշակերտների առողջության և մարդկային ծառայությունների, Անօթևանների կրթության գրասենյակի հետ (213) 202-7581 հեռախոսահամարով: Այլ ռեսուրսների հետ մեկտեղ SHQ-ն հասանելի է ութ (8) լեզուներով հետևյալ հասցեով՝ https://homelesseducation.lausd.net:

Անօթևան վիճակում գտնվող աշակերտները պետք է կանոնավոր դրպոց հաճախեն: Նրանք ունեն լրացուցիչ իրավունքներ և պաշտպանություն դպրոցում գրանցման հարցում, որոնք նպաստում են իրենց կրթության կայունությանը: Անօթևան երեխաները և աշակերտները իրավունք ունեն հաճախել իրենց

ծնողավայրի դպրոցը և, անհրաժեշտության դեպքում, ընդունվել նույն հաճախման տարածքում գտնվող միջնակարգ դպրոց, նույնիսկ եթե նրանք այլևս չեն ապրում այդ դպրոցների հաճախման սահմաններում: Անօթևան վիճակում գտնվող աշակերտներն իրավունք ունեն հաճախելու իրենց բնակության վայրի կամ իրենց ծնողավայրի դպրոցը, որը ներառում է այն դպրոցը, որտեղ երեխան վերջին անգամ ընդունվել է, կամ որը աշակերտը հաճախել է վերջին 15 ամիսների ընթացքում (ցանկացած դպրոց), և որի հետ նա կապ ունի:

Ծնողի/օրինական խնամակալի, խնամատարի կամ առանց ուղեկցի անօթևան աշակերտի պահանջով՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանը պետք է ապահովի, որ, ըստ անհրաժեշտության՝ հնարավորության դեպքում, տրամադրվի սկզբնական դպրոց տանել-ետ բերելու փոխադրամիջոց:

Դպրոցները պետք է անհապաղ գրանցեն անօթևան աշակերտներին և չեն կարող հետաձգել կամ կանխել գրանցումը իմունիզացիայի կամ դպրոցական փաստաթղթերի բացակայության պատճառով, ինչպիսիք են Անհատական կրթական ծրագիրը (IEP), Բաժին 504 ծրագիրը կամ գնահատականների ամփոփաթերթիկները: Ընդունելությունն արագացնելու համար ընդունող դպրոցի պարտականությունն է պահանջել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նախորդ դպրոց(ներ)ից և ուղղորդել ծնողներին/օրինական խնամակալներին և առանց ուղեկցողի աշակերտներին կիրառելի ծրագրերին և ծառայություններին: Ուղղորդումները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում միայն համայնքային կազմակերպություններով, հատուկ կրթական ծառայություններով, կրկնուսուցմամբ, նախադպրոցական ծրագրերով, արտադպրոցական զարգացման ծրագրերով և ցանկացած այլ համապատասխան կրթական ծառայություններով:

Եթե վեճ է ծագում դպրոցի ընտրության կամ դպրոցում ընդգրկման հարցի առնչությամբ, ապա դպրոցը պետք է անհապաղ ընդունի աշակերտին այն դպրոց, որտեղ փորձ է արվում ընդգրկել նրան, մինչև վեճի վերջնական որոշումը: Աշակերտի ծնողը/օրինական խնամակալը կամ առանց ուղեկցի աշակերտն իրավունք ունի վիճարկել դպրոցի որոշումը: Վեճի որոշման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Անօթևանների կրթության գրասենյակ՝ (213) 202-7581 հեռախոսահամարով:

Շրջանի քաղաքականությունը ազատում է տեղական ավարտական պահանջներից անօթևան աշակերտներին, ովքեր դպրոց են տեղափոխվում ավագ դպրոցի երկրորդ տարուց հետո: Նշանակված դպրոցի անձնակազմը պետք է ծանուցի իրավասու աշակերտներին և նրանց ծնողին/օրինական խնամակալին դասընթացներից և Շրջանի կողմից ընդունված այլ պահանջներից ազատվելու իրենց իրավասության մասին՝ ի լրումն պետական դասընթացների պահանջների (EC-ի Բաժին 51225.1): Անօթևան աշակերտներին մասնակի կամ լրիվ կրեդիտներ կտրամադրվեն մեկ այլ դպրոց հաճախելիս ավարտված կուրսային աշխատանքների համար (EC-ի Բաժին 51225.2): Լոս Անջելեսի միացյալ շրջանի Անօթևանների հարցերով պատասխանատուն պետք է ծանուցվի, եթե անօթևան աշակերտին հեռացնում են՝ հայեցողական արարքի համար, և հրավիրվի IEP-ի ցանկացած հանդիպման, որտեղ պետք է դրսևորվի որոշում (EC-ի Բաժին 48918.1):

ԱՐՏԱԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Այն աշակերտները, ովքեր ենթակա են Երեխաների և ընտանիքի ծառայությունների վարչության կամ Փորձարկման վարչության (որոշ դեպքերում) կողմից վերահսկմանը և տեղավորված են արտոնագրված խնամատար տներում, կարճաժամկետ բնակելի թերապևտիկ ծրագրերում/(STRP) (նախկինում կոչվում էին խմբային տներ), բարեկամների մոտ կամ բնակվում են իրենց բիոլոգիական ծնող(ներ)ի հետ, ունեն լրացուցիչ իրավունքներ և գրանցման պաշտպանություն, որոնք նպաստում են իրենց կրթության կայունությանը: Աշակերտները, որոնք կամավոր տեղաբաշխման համաձայնագրի առարկա են, ընդգրկված են խնամատարության մեջ գտնվող աշակերտների սահմանման մեջ (EC-ի բաժին 42238.01):

Խնամատարության մեջ գտնվող աշակերտները պետք է անհապաղ գրանցվեն դպրոց՝ անկախ դպրոցական փաստաթղթերի առկայությունից, իմունականխարգելման արձանագրություններից, դպրոցական համազգեստից կամ նախորդ դպրոցից տուգանքների առկայությունից: Մանկավարժները, դպրոցի անձնակազմը, սոցիալական աշխատողները, պրոբացիոն ծառայության աշխատակիցները, խնամատարները և այլ շահագրգիռ կողմերը պետք է միասին աշխատեն՝ սպասարկելու խնամատարության մեջ գտնվող աշակերտների կրթական կարիքները (EC-ի բաժին 48853.5):

Խնամատարության տակ գտնվող աշակերտներն իրավունք ունեն հաճախելու իրենց սկզբնական դպրոցը և, անհրաժեշտության դեպքում, ընդունվելու նույն տարածքում գտնվող միջնակարգ դպրոց, նույնիսկ այն դեպքում, երբ աշակերտը ապրում է այլ տարածքում բնակվող ընտանիքի հետ: Դպրոցական շրջանը, որը սպասարկում է այդ աշակերտին, թույլ է տալիս նրան շարունակել ուսումը սկզբնական դպրոցում՝ դատարանի իրավասության ժամկետի ընթացքում: Եթե դատարանի իրավասությունը դադարում է մինչև ուսումնական տարվա ավարտը, ապա աշակերտին թույլատրվում է շարունակել ուսումը սկզբնական դպրոցում ուսումնական տարվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ աշակերտը չի հաճախում ավագ դպրոց, քանի որ նա իրավունք ունի հաճախել մինչև ավարտելը (EC-ի բաժին 48853.5):

Եթե վեճ է ծագում դպրոցի ընտրության կամ գրանցման հետ կապված, դպրոցը պետք է անհապաղ գրանցի աշակերտին այն դպրոցում, որտեղ նա հայտագրվել է: Վեճերի լուծման գործընթացում աշակերտը պետք է պահպանի ընդգրկվածությունը այդ դպրոցում մինչև վեճի վերջնական լուծումը: Վեճերի լուծման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների Աշակերտների աջակցության ծրագրերի բաժին (213) 241-3840 հեռախոսահամարով:

Խնամատարության տակ գտնվող աշակերտները կարող են իրավունք ունենալ՝ ազատվելու տեղական ավարտական պահանջներից: Այն աշակերտները, ովքեր համապատասխանում են ավարտական ազատման չափանիշներին, կարող են ազատվել բոլոր դասընթացներից և Շրջանի կողմից ընդունված այլ պահանջներից: Ավագ դպրոցի ավարտական ազատման իրավունքի չափանիշները հետևյալն են.

1. Աշակերտը պետք է արտաընտանեկան խնամքի ներքո գտնվի;
2. Աշակերտը դպրոցը փոխել է ավագ դպրոցի երկրորդ տարվանից հետո;
3. Աշակերտը չի կարող ողջամտորեն լրացնել Լոս Անջելեսի միացյալ շրջանի ավարտական լրացուցիչ պահանջները՝ չորս (4) տարվա ընթացքում;
4. Կրթական իրավատերը (ERH) պետք է որոշի, որ ավարտելուց ազատումը բխում է աշակերտի շահերից;
5. Աշակերտը պետք է լրացնի Կալիֆոռնիայի ավագ դպրոցի ավարտական պահանջները:

Աշակերտի՝ այս ազատման իրավասությանը համապատասխանելուց հետո նրանց իրավասությունը շարունակվում է, նույնիսկ եթե աշակերտի խնամատարության գործը փակվում է, կամ աշակերտը տեղափոխվում է այլ դպրոց: Անօրինական է դպրոցի, աշակերտի, կրթական իրավատիրոջ, սոցիալական աշխատողի կամ պայմանական ազատազրկման գործով պատասխանատուի համար դիմել կամ պահանջել դպրոցը տեղափոխել՝ աշակերտին տեղական պահանջներից ազատելու իրավունք ստանալու համար (EC-ի բաժին 51225.1):

Ծնողները, խնամակալները, խնամատար հաստատություններում խնամք տրամադրողները, սոցիալական աշխատողները և/կամ փորձարկման համար պատասխանատու պաշտոնյաները երեխայի դպրոցը փոխելու մասին տեղեկանալուն պես պետք է անմիջապես ծանուցեն դպրոցական շրջանին, որպեսզի մասնակի կրեդիտները հնարավոր լինի հաշվել (կիրառելիության դեպքում), և դպրոցական տեղեկագրերը հնարավոր լինի ժամանակին փոխանցել: Բնակավայրը փոխած աշակերտների համար պետք է անցկացնել «Լավագույն շահերից բխող որոշում կայացնելու» հանդիպում կրթական իրավատիրոջ հետ, որպեսզի որոշվի սկզբնական դպրոցը, և թե արդյո՞ք փոխադրամիջոց է անհրաժեշտ աշակերտին իր սկզբնական դպրոցի համար:

Եթե խնամատարության մեջ գտնվող աշակերտին տրվում է կասեցման որոշում (ներառյալ ներդպրոցական կասեցումը), հեռացնելու խորհուրդ, նշանակվել է դրսևորման որոշման հանդիպում, կամ նրան ստիպողաբար տեղափոխել են շարունակական դպրոց, ապա հետևյալի մասին պետք է տեղեկացվեն ծնող/օրինական խնամակալ/կրթական իրավունքների սեփականատեր, անչափահասների խորհրդատու, DCFS սոցիալական աշխատող և ցեղի սոցիալական աշխատող, եթե կիրառելի է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների Աշակերտների աջակցության ծրագրերի բաժին (213) 241-3840 հեռախոսահամարով կամ https://achieve.lausd.net/Page/16356 կայքէջի միջոցով:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Աշակերտներին չպետք է մերժել հանրային դպրոց գրանցումը կամ ետ ընդունումը՝ զուտ այն փաստի հիման վրա, որ նրանք առնչություն են ունեցել անչափահասների արդարադատության համակարգի հետ: Յուրաքանչյուր հանրային դպրոցի շրջան և Լոս Անջելեսի վարչաշրջանի կրթության գրասենյակը (LACOE) պետք է լիովին կամ մասնակի կերպով ընդունի այն կրեդիտները, որոնք աշակերտը ստացել է՝ բավարար կերպով կատարելով դասընթացի հանձնարարությունը ուրիշ հանրային դպրոց, անչափահասների ազատազրկման դպրոց կամ ոչ հանրային դպրոց հաճախելու ժամանակ: Բացառությամբ այն դեպքի, երբ աշակերտն ազատված է պարտադիր դպրոց հաճախելուց, անչափահասների արդարադատության կառույցից կամ որևէ այլ դատարանի կողմից պարտադրված տեղափոխումից հետո վերադարձող աշակերտն ունի բոլոր այլ աշակերտներին հավասար տրամադրված համապատասխան կրթական ծրագրի նույն իրավունքները, և նրան պետք է անհապաղ գրանցել դպրոցում: (EC-ի բաժիններ 51225.2 և 48645.5)

Լոս Անջելեսի միացյալ շրջանը, LACOE-ն և Լոս Անջելես վարչաշրջանի Պրոբացիայի վարչությունն ունեն համատեղ անցումային քաղաքականություն՝ սահմանված արձանագրություններով և ընթացակարգերով: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ անչափահասների դատարանների դպրոցներից Շրջան վերադարձած աշակերտները նույնականացվեն, ապահովվեն համապատասխան տեղաբաշխմամբ և անհրաժեշտության դեպքում կապվեն գործերի կառավարման ծառայությունների հետ նշանակված դպրոցի տարածքում: Այս համատեղ կառույցներն աջակցում են կրթական գրառումների անհապաղ փոխանցմանը, կրեդիտների հաշվարկման և շնորհման միասնական համակարգերին և անհապաղ գրանցմանը: (EC-ի բաժիններ 48645.5, 49069.5, 48647 և 48648.)

Բացի այդ, Շրջանային քաղաքականությունը նախատեսում է ավարտական ազատում այն աշակերտների համար, ովքեր ներգրավված են անչափահասների արդարադատության համակարգում, ովքեր դպրոց են տեղափոխվում ավագ դպրոցի երկրորդ կուրսից հետո, եթե աշակերտը չի պատրաստվում ավարտել չորս (4) տարվա ընթացքում: Նշանակված դպրոցի անձնակազմը պետք է ծանուցի իրավասու աշակերտներին և նրանց ծնողին/օրինական խնամակալին դասընթացներից ազատվելու և Շրջանի կողմից ընդունված այլ պահանջներից՝ ի հավելումն նահանգային դասընթացների պահանջների: Երբ աշակերտը իրավասու է գտնվել այս բացառության համար, նրա իրավասությունը շարունակվում է, նույնիսկ եթե աշակերտի խնամակալության կամ փորձաշրջանի գործը փակվի, կամ աշակերտը տեղափոխվի այլ դպրոց: Անօրինական է դպրոցի, աշակերտի, կրթական իրավունքների կրողի, սոցիալական աշխատողի կամ պրոբացիոն ծառայության աշխատակցի համար պահանջել դպրոց փոխել՝ աշակերտին տեղական պահանջներից ազատվելու համար իրավասու դարձնելու նպատակով (EC-ի բաժին 51225.1): Օրենքը նաև թույլատրում է անչափահասների արդարադատության համակարգում ներգրավված աշակերտներին մասնակի կամ լրիվ կրեդիտներ տրամադրել այլ դպրոց հաճախելիս ավարտված դասընթացների համար:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ (UCP)

Լոս Անջելեսի միացյալ շրջանի առաջնային պարտականությունն է՝ ապահովել կրթական ծրագրերը կարգավորող նահանգային և դաշնային օրենքների և կանոնակարգերի պահպանումը: Շրջանը հետաքննում է այդ օրենքների և կանոնակարգերի պահանջների ենթադրյալ չկատարման վերաբերյալ բողոքները, այդ թվում, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ ցանկացած պաշտպանված խմբի դեմ խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման և/կամ ճնշումների (բուլինգ) դրսևորման ենթադրյալ մեղադրական պնդումները, կամ Շրջանի կողմից իրականացվող բոլոր ծրագրերի և միջոցառումների օրենքներին չհամապատասխանելու հետ կապված բողոքները, որոնք ենթակա են բողոքարկման միասնական ընթացակարգերին՝ ըստ վերը շարադրվածի: Շրջանը հետամուտ կլինի տեղական մակարդակով լուծելու այդ բողոքները՝ ըստ UCP-ի, որոնք շարադրված են Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգրքի Խորագիր 5-ի 4600-4695 բաժիններում, ինչպես նաև՝ ըստ Շրջանի քաղաքականությունների և ընթացակարգերի, ներառյալ՝ Բողոքների միասնական ընթացակարգերին մասնակցելու համար վրեժխնդիր վարքագիծ դրսևորելու մասին ենթադրյալ մեղադրական պնդումների և/կամ այս բողոքների վերաբերյալ Շրջանի որոշումները բողոքարկելու համար: Միասնական ընթացակարգով բողոքը պետք է ներկայացվի Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգրքի Խորագիր 5-ի 4600-4695 բաժիններով սահմանված կարգով:

UCP բողոք կարելի է ներկայացնել՝ հետևյալ ենթադրյալ խախտումների համար՝

1. Չափահասների կրթություն (բաժիններ 8500-8538, 52334.7, 52500-52617);
2. Դպրոցից հետո կրթություն և անվտանգություն (բաժիններ 8482-8484.65);
3. Գյուղատնտեսական կարիերայի տեխնիկական կրթություն (բաժիններ 52460-52462)
4. Բաց թողնված դասաժամերի լրացման կրթություն (բաժիններ 54400)
5. Համախմբված դասակարգային օգնության ծրագրեր [34 CFR բաժիններ 299.10-12, բաժին 64000(a)]
6. Ներգաղթյալների կրթության ծրագրեր (բաժիններ 54440-54445)
7. Կարիերայի տեխնիկական և տեխնիկական կրթության և կարիերայի և տեխնիկական վերապատրաստման ծրագրեր (բաժիններ 52300-52462)
8. Երեխայի խնամքի և զարգացման ծրագրեր (բաժիններ 8200-8498)
9. «Յուրաքանչյուր աշակերտ հաջողության է հասնում» օրենք (20 ԱՄՆ օրենսգրքի բաժին 6301 և հաջորդիվ; EC բաժին 52059)
10. Կառավարության օրենսգրքի 200-րդ, 220-րդ և 11135-րդ բաժիններով սահմանված պաշտպանված խմբերի դեմ անօրինական խտրականություն, հետապնդում, ահաբեկում և կամ բուլինգ, այդ թվում՝ Քրեական օրենսգրքի 422.55-րդ բաժնում սահմանված ցանկացած իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հատկանիշների հիման վրա, կամ ըստ այն հիմք, որ անձը կապված է որևէ անձի կամ խմբի հետ, որը դրսևորում է այդ իրական կամ սուբյեկտիվ կերպով ընկալվող հատկանիշներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ ուսումնական հաստատության կողմից իրականացվող ցանկացած ծրագրի կամ գործունեության մեջ, ինչպես սահմանված է բաժին 210.3 բաժնում, որն ուղղակիորեն ֆինանսավորվում է կամ ստանում է կամ օգուտ է քաղում ցանկացած նահանգային ֆինանսական աջակցության ծրագրի կողմից (կապված աշխատողից աշակերտ, աշակերտից աշակերտ, աշակերտից աշխատող, երրորդ կողմից աշակերտ, աշխատողից երրորդ կողմի հետ)
11. Հղի և ծնող աշակերտների համար նախատեսված հարմարություններ, ներառյալ ողջամիտ պայմաններ կրծքով կերակրող աշակերտների համար (բաժիններ 46015, 222)
12. Տարածաշրջանային մասնագիտական կենտրոններ և ծրագրեր (Բաժին 52300-52334.7)
13. Դպրոցական պլաններ աշակերտի առաջադիմության համար (Բաժին 64001)
14. Դպրոցական խորհուրդներ (Բաժին 65000);
15. Դպրոցների անվտանգության պլաններ (Բաժին 32280-32289);
16. Պետական նախադպրոցական հաստատություններ (Բաժին 8235-8239.1);
17. Պետական նախադպրոցական տարիքի առողջության և անվտանգության հարցերը LEA-ներում, որոնք ազատված են արտոնագրումից (EC-ի Բաժին 8235.5);
18. Ցանկացած այլ նահանգային կամ դաշնային կրթական ծրագիր, որը հանրային ուսուցման պետական տեսուչը կամ նշանակված անձը նպատակահարմար է համարում:
    - Աշակերտից վճարների չթույլատրված գանձում: Աշակերտից չպետք է պահանջվի վճարել կրթական գործունեությանը մասնակցելու համար անհրաժեշտ պարագաների, նյութերի և սարքավորումների համար, եթե նման վճարի գանձումը օրենքով մասնավորապես սահմանված չէ և չի խախտում Կրթական օրենսգրքի 49011 բաժինը: Աշակերտի՝ վճարման մասին բողոքը կարելի է ներկայացնել անանուն, եթե այն տրամադրում է ապացույցներ կամ տեղեկություն, որը հանգեցնում է աշակերտական վճարների մասին օրենքի ենթադրյալ խախտմանը: Բողոքը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մեկ (1) տարվա ընթացքում այն օրվանից, երբ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել: Աշակերտական վճարման խախտման մասին բողոքը նախ պետք է ներկայացնել դպրոցի տնօրենին կամ

գործակալության կառավարչին կամ նրա պաշտոնակատարին: Եթե աշակերտական վճարի գանձման մասին բողոքում հիմք գտնվի, ապա հանրային դպրոցը պետք է փոխհատուցում տրամադրի բոլոր տուժած աշակերտներին և/կամ ծնողներին/օրինական խնամակալներին, որն, ըստ անհրաժեշտության, ներառում է հանրային դպրոցի կողմից ողջամիտ ջանքեր գործադրելը՝ բոլոր տուժած աշակերտներին և ծնողներին/օրինական խնամակալներին լիովին փոխհատուցում ապահովելու համար, որը ենթակա է նահանգային խորհրդի կողմից ընդունված կարգերի միջոցով սահմանված ընթացակարգերին: Շրջանը բարեխիղճ կերպով ողջամիտ ջանքեր կգործադրի՝ պարզելու և ամբողջությամբ փոխհատուցելու բոլոր աշակերտներին, և/կամ ծնողներին/խնամակալներին, ովքեր վճարել են աշակերտական վճարներ բողոքը ներկայացնելուն նախորդող մեկ (1) տարվա ընթացքում:

- Տեղական վերահսկողության և հաշվետվողականության պլանին (LCAP) վերաբերող իրավական պահանջների թերացում: Բողոք այն մասին, որ որևէ դպրոցական շրջան չի կատարել Տեղական վերահսկողության և հաշվետվողականության պլանի պահանջները, կարելի է ներկայացնել՝ օգտվելով միասնական բողոքարկման ընթացակարգերից (EC-ի բաժին 52075): Բողոքը կարելի է ներկայացնել անանուն, եթե այն տրամադրում է ապացույց/տեղեկություն, որը կհանգեցնի բողոքի ապացուցման հիմնավորմանը: Տեղական վերահսկողության և հաշվետվողականության պլանի պահանջները գտնվում են EC-ի բաժին 52060-52076 բաժիններում:
- Ֆիզիկական կրթության ընդունված ծրագրի պահանջները բավարարելու ձախողում: Ներկայիս օրենքը պահանջում է, որ ընդունված ուսումնական ծրագիրը ներառի ուսման որոշակի ոլորտների, ներառյալ՝ ֆիզիկական կրթության ուսուցում՝ ընդհանուր ժամանակահատվածի համար:
- Խնամատարության տակ գտնվող, անօթևան աշակերտների, անչափահասների դատարանների նախկին աշակերտների, զինվորական ընտանիքների երեխաների, գաղթական աշակերտների և նոր ժամանածների համար անհապաղ ընդունելության, Սկզբնական դպրոցում մնալու, տեղական հանրակրթական դպրոց ընդունվելու, մասնակի վարկեր ստանալու, պետական նվազագույն պահանջներով ավարտելու, ակադեմիական ռեսուրսների, ծառայությունների և արտադպրոցական գործունեության հասանելիության կրթական իրավունքները չապահովելը թույլ է տալիս այդ բաժինների պահանջներին չհամապատասխանելու մասին բողոքները լրացնել Շրջանի UCP-ի համաձայն: (EC-ի բաժին 48853, 48853.5, 49069.5, 51225.1 և 51225.2), ըստ հրապարակված ծանուցումների
- Գրանցվելու ձախողում ուսումնական բովանդակություն չունեցող առարկաներում և նախկինում ավարտած կամ գնահատված առարկաներում, որոնք բավարարում են հետմիջնակարգ կրթություն և դիպլոմ ստանալու պահանջներն ու նախադրյալները. 2016-17 ուսումնական տարվանից սկսած՝ Շրջանին արգելվում է 9-12- րդ դասարաններում գրանցված աշակերտներին առանց ուսումնական բովանդակության առարկաներ հանձնարարելը: Աշակերտները չեն կարող գրանցվել առանց ուսումնական բովանդակության դասընթացներում՝ յուրաքանչյուր կիսամյակում մեկ (1) շաբաթից ավելի, կամ այն դասընթացի համար, որն աշակերտը նախկինում ավարտել է և գնահատական ստացել, որը Շրջանի կողմից բավարար է համարվել՝ Կալիֆորնիայի հետմիջնակարգ կրթության հանրային հաստատություններում ընդունման պահանջները և նախադրյալները և ավագ դպրոցն ավարտելու դիպլոմ ստանալու նվազագույն պայմանները բավարարելու համար, բացառությամբ հատուկ պայմանների:

Բողոքը կարող է ներկայացվել անանուն, եթե այն տրամադրում է ապացույցներ կամ տեղեկություններ, որոնցից հետևում է անհամապատասխանության մասին պնդումը, ներառյալ աշակերտների վճարները և LCAP-ի բողոքները: Շրջանը բարեխղճորեն կփորձի ողջամիտ ջանքեր գործադրել՝ բացահայտելու և ամբողջությամբ փոխհատուցելու բոլոր աշակերտներին և/կամ ծնողներին/օրինական խնամակալներին, ովքեր վճարել են աշակերտների վճարները՝ բողոքի ներկայացնելուց առաջ մեկ տարվա ընթացքում: Եթե բողոքում հիմք է գտնվում, տուժած աշակերտին կտրամադրվի միջոց՝ առանց կրթական բովանդակության դասընթացների ժամանակահատվածների, կերակրող աշակերտին ողջամիտ պայմանների, արտաընտանեկան խնամքի ներքո գտնվող երեխաների, անօթևան երեխաների, նախկինում ազատազրկված անչափահաս աշակերտների դեպքում, ովքեր ընդգրկված են Լոս Անջելեսի դպրոցական շրջանում և/կամ զինվորական ընտանիքների աշակերտների համար: Բոլոր տուժած աշակերտներին և ծնողներին/օրինական խնամակալներին պետք է տրամադրվի միջոց՝ աշակերտների վճարների, ֆիզիկական դաստիարակության, ուսումնական արձանագրությունների և/կամLCAPs-ների հետ կապված դեպքերի համար:

Շրջանի համապատասխանության պատասխանատու. Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակի տնօրենը նշանակված է՝ որպես Շրջանի համապատասխանության պատասխանատու, ով ընդունում և ուղղորդում է միասնական բողոքների ընթացակարգով բողոքների քննությունը, պահպանում է բողոքների և դրանց վերաբերյալ հետագա գործողությունների գրանցումները և հետևում Շրջանի կողմից օրենքի պահպանմանը: Լրացուցիչ տեղեկությունների կամ աջակցություն ստանալու համար դիմեք Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ EquityCompliance@lausd.net հասցեով:

Ծանուցում. Շրջանը ամեն տարի պետք է գրավոր ծանուցի իր աշակերտներին, ծնողներին/օրինական խնամակալներին, աշխատողներին, Շրջանի խորհրդատու հանձնաժողովներին, համապատասխան մասնավոր դպրոցների պաշտոնյաներին կամ ներկայացուցիչներին և այլ հետաքրքրված կողմերին՝ Բողոքների միասնական ընթացակարգերի և բողոքներին ընթացք տվող պատասխանատու անձի վերաբերյալ:

Համաձայն Կալիֆորնիայի կանոնակարգի (5 CCR), Գլուխ V-ի, Բաժին 4691-ի Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի յուրաքանչյուր դասարանում, որը ազատված է արտոնագրումից, ծնողները, խնամակալները, աշակերտները և ուսուցիչները կգտնեն Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի համար առողջության և անվտանգության պահանջների մասին ծանուցում ըստ Առողջության և անվտանգության օրենսգրքի (HSC) Բաժին 1596.7925: Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի առողջության և անվտանգության խնդիրների հետ կապված թերությունները կարող են լուծվել UCP-ի միջոցով (HSC Բաժին 1596.7925; EC Բաժին 8235.5): Հակառակ դեպքում, Երեխայի զարգացման ծրագիր գործող լիցենզավորված հաստատությունների վերաբերյալ առողջության և անվտանգության բողոքները կարող են ուղարկվել Սոցիալական ծառայությունների բաժին: UCP ձևերը հասանելի են ըստ պահանջի ցանկացած դպրոցում, Տարածաշրջանային գրասենյակում, դիմելով Կրթական հավասարության համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով, էլ. հասցեով՝ EquityCompliance@lausd.net, կամ մուտք գործելով կայք Բողոքարկման միասնական ընթացակարգերի մասին տեղեկատվության համար՝ http://achieve.lausd.net/eeco: UCP քաղաքականության և բողոքարկման ընթացակարգերի պատճենը հասանելի է անվճար:

UCP-ով բողոքի ներկայացում: Կրթական ծրագրերը կարգավորող դաշնային կամ նահանգային օրենքների կամ կանոնների ենթադրյալ խախտման վերաբերյալ գրավոր բողոքը պետք է ներկայացնել շրջանի Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ, որն այսպիսի բողոքներին պատասխանելու համար նշանակված գրասենյակն է: Բողոքը կարելի է ներկայացնել ոչ ուշ, քան մեկ (1) տարվա ընթացքում այն օրվանից, երբ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել, բացառությամբ վերը նշված դեպքերի: Բողոքը կարելի է ներկայացնել անանուն, եթե այն տրամադրում է ապացույցներ կամ տեղեկություն, որը հանգեցնում է պահանջներին չհամապատասխանելու ենթադրյալ խախտման ապացույցին: Բողոքարկողները պաշտպանված են նրանց հանդեպ հետապնդումներից: Եթե բողոքի առարկան դուրս է տվյալ քաղաքականության սահմաններից, ապա բողոք ներկայացնողը գրավոր կերպով կտեղեկացվի այդ մասին: Քննության և Շրջանի կողմից պատասխանի համար անհրաժեշտ վաթսունօրյա ժամկետը սկսվում է այն պահին, երբ Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակը ստանում է գրավոր բողոքը:

Բողոքների միասնական ընթացակարգի ձևերն, ըստ պահանջի, հասանելի են ցանկացած դպրոցի կամ Տարածաշրջանի գրասենյակում՝ դիմելով Կրթության հավասարության համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ EquityCompliance@lausd.net հասցեով կամ այցելելով Շրջանի վեբկայքը՝ http://achieve.lausd.net/eeco՝ բողոքների միասնական ընթացակարգի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով: Շրջանի բողոքների միասնական ընթացակարգի քաղաքականության և բողոքարկման ընթացակարգերի մասին օրինակը պետք է հասանելի լինի անվճար: Բողոքողները տեղեկացվում են քաղաքացիական իրավունքի պաշտպանության միջոցների մասին, ներառյալ, բայց չսահմանափակվելով արգելանքների կամ այլ միջոցների մասին, կամ նման հրամանները կարող են հասանելի լինել նաև նահանգային կամ դաշնային խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման կամ ահաբեկման օրենքների համաձայն (EC-ի բաժին 262.3):

Շրջանի որոշումների բողոքարկում. Դիմորդը կարող է բողոքարկել UCP-ի բողոքի վերաբերյալ LEA-ի (Տեղական կրթական գործակալության) հետաքննության զեկույցը CDE-ին՝ գրավոր բողոքարկում ներկայացնելով LEA-ի հետաքննության հաշվետվության ամսաթվից 30 օրվա ընթացքում: Բողոքարկում պահանջելու համար դիմորդը պետք է նշի և բացատրի բողոքարկման հիմքերը՝ ներառյալ հետևյալներից առնվազն մեկը (1).

1. LEA-ն չի հետևել իր բողոքարկման ընթացակարգերին. և/կամ
2. LEA-ի հետաքննության զեկույցում բացակայում են իրավական եզրակացության հասնելու համար անհրաժեշտ փաստերը. և/կամ
3. LEA-ի հետաքննության զեկույցում փաստերը էական բացահայտումները հիմնավորված չեն էական ապացույցներով. և/կամ
4. LEA-ի հետաքննության հաշվետվության իրավական եզրակացությունը չի համապատասխանում օրենքին. և/կամ
5. Այն դեպքում, երբ LEA-ն հայտնաբերել է անհամապատասխանություն, ուղղիչ գործողությունները չեն ապահովում պատշաճ լուծում:

Բողոքարկումն ուղարկվում է՝ 1) տեղում ներկայացված բողոքի պատճենով և (2) LEA-ի հետաքննության զեկույցի պատճենով:

Շրջանի որոշումների բողոքարկումները կարող են ուղարկվել՝ California Department of Education
1430 N. Street
Sacramento, CA 95814

Կալիֆորնիայի կրթության դեպարտամենտի կողմից UCP-ի շրջանակներում գտնվող ծրագրերի, ծառայությունների, բողոքարկումների գրասենյակների վերաբերյալ լրացուցիչ կոնտակտային տվյալներ կարելի է գտնել հետևյալ կայքում՝ https://www.cde.ca.gov/re/cp/uc/:

Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի առողջական և անվտանգության վերաբերյալ խնդիրները կարող են լուծվել՝ օգտագործելով UCP (HSC Section 1596.7925; EC-ի բաժին 8235.5): Հակառակ դեպքում՝ երեխայի զարգացման ծրագիր իրականացնող լիցենզավորված հաստատություններում առողջության և անվտանգության վերաբերյալ բողոքները կարող են ուղարկվել սոցիալական ծառայությունների վարչություն:

Տե՛ս *Վիլյամսի բողոքարկման միասնական ընթացակարգը*՝ ուսումնական նյութերի, արտակարգ իրավիճակների կամ հրատապ հարմարությունների պայմանների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու վերաբերյալ, որոնք սպառնում են աշակերտների առողջությանը և անվտանգությանը, ինչպես նաև՝ ուսուցիչների թափուր պաշտոնի կամ անհամապատասխան նշանակումների բողոքների վերաբերյալ:

ՎԻԼՅԱՄՍԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Վիլյամսի միասնական բողոքարկման ընթացակարգը կարևոր տեղեկատվություն է տրամադրում ծնողներին/խնամակալներին, աշակերտներին, ուսուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին՝ հետևյալ ոլորտներում բողոքելու իրավունքների մասին (EC-ի բաժին 35186).

1. Յուրաքանչյուր դպրոց պարտավոր է յուրաքանչյուր աշակերտի, այդ թվում՝ անգլերեն սովորողներին, տրամադրել բավականաչափ դասագրքեր և/կամ ուսումնական նյութ՝ դասի ժամանակ և տանը օգտագործելու համար;
2. Դպրոցը պետք է լինի մաքուր, ապահով, բարվոք վիճակում;
3. Դպրոցի պատշաճ թվով աշակերտական զուգարանները պետք է լինեն մաքուր, համապատասխան պարագաներով մատակարարված և բաց լինեն դպրոցական ժամերի ընթացքում;
4. Յուրաքանչյուր դասարան պետք է ունենա համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչ, այլ ոչ թե՝ մի շարք փոխարինողներ կամ ժամանակավոր ուսուցիչներ: Ուսուցիչը պետք է ունենա համապատասխան որակավորում և համապատասխան առարկայի վերապատրաստում՝ երեխաներին դասավանդելու համար, այդ թվում վերապատրաստում՝ անհրաժեշտության դեպքում անգլերեն սովորողներին դասավանդելու համար:

Բողոքները կարող են ներկայացվել՝ օգտագործելով «Վիլյամսի միասնական բողոքարկման ընթացակարգի» ձևը կամ կարող են նաև անանուն ներկայացվել: Եթե ձևաթուղթը չօգտագործվի, գրավոր բողոքները չեն մերժվելու: Վերոնշյալ հարցերի շուրջ բողոք ներկայացնելու համար ձևաթղթերը կարող են ձեռք բերվել դիմելով՝

1. Դպրոցի գլխավոր գրասենյակ;
2. Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ (213) 241-7682 համարով;
3. WilliamsComplaint@lausd.net էլ. հասցեով;
4. Վերկայք http://achieve.lausd.net/eeco այցելելով:

Ժամանակին որոշում ստանալու համար լրացված բողոքի դիմումները պետք է ներկայացնել հետևյալ հասցեներով և նշել, թե արդյոք բողոքի պատասխան պահանջվում է, թե ոչ՝

1. Դպրոց (գլխավոր գրասենյակ՝ տնօրենին);
2. Համապատասխան տարածաշրջանային գրասենյակ;
3. Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ՝ ֆաքսով՝ (213) 241-3312
4. WilliamsComplaint@lausd.net էլ. հասցեով

a. ԱՄՆ-ի փոստով հետևյալ հասցեին՝ Լոս Անջելեսի միացյալ շրջան - Educational Equity Compliance Office
Williams Complaints
333 South Beaudry Ave., 18th Floor
Los Angeles, CA 90017

Բողոքող կողմը, ով բավարարված չէ ընդունված որոշումով, իրավունք ունի նկարագրել բողոքը Շրջանի կառավարման խորհրդին՝ խորհրդի կանոնավոր հանդիպման ժամանակ: Բացառությամբ այն բողոքների, որոնք վերաբերում են արտակարգ կամ հրատապ սպառնալիք ներկայացնող հարմարությունների պայմաններին, բողոքող կողմն իրավունք չունի դիմելու Կալիֆորնիայի կրթության դեպարտամենտին: Վիլյամսի միասնական բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ հարցերը կարող են ուղղվել Կրթության հավասարության պահանջների համապատասխանության գրասենյակ՝ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ http://achieve.lausd.net/eeco կայքում:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Լոս Անջելեսի միացյալ շրջանն ընդունում է աշակերտների առողջության և բարեկեցության և ուսումնական ձեռքբերումների միջև կարևորագույն հարաբերության դերը. աշակերտները պետք է առողջ լինեն, որպեսզի կրթվեն, և կրթվեն՝ առողջ լինելու համար:

Blueprint for Wellness Policy (Առողջ ապրելակերպ վարելու քաղաքականության նախագիծը) Լոս Անջելեսի միացյալ շրջանի ընդունած քաղաքականությունը և ընդհանուր առողջության և բարեկեցության ծրագրի իրականացման համար ուղեցույցն է: Առողջ ապրելակերպ վարելու քաղաքականության նախագծում ուշադրության կենտրոնում են հետևյալ առողջապահական ոլորտները՝ սննդի ծառայություններ, ֆիզիկական դաստիարակություն, առողջապահական կրթություն, առողջապահական ծառայություններ, դրական հաճախելիություն, դիմադրողականության զարգացում, անվտանգ միջավայր, անձնակազմի բարեկեցություն, ինչպես նաև՝ ծնողի և համայնքի ներգրավվածություն: Այս բարեկեցության քաղաքականությունը նախատեսված է՝ ներառելու

աշակերտների, ծնողների, անձնակազմի և համայնքի բարեկեցությունը: Լրացուցիչ տեղեկություններ և ռեսուրսներ հասանելի են՝ https://achieve.lausd.net/wellnessprograms կայքում կամ՝ (213) 241-3850 հեռախոսահամարով:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այն աշակերտը, ով վերադառնում է դպրոց լուրջ և երկարատև հիվանդությունից, վնասվածքից, վիրահատությունից կամ այլ հոսպիտալացումից հետո (ներառյալ՝ հոգեբուժական և թմրամիջոցների կամ ալկոհոլի դեմ հիվանդանոցային պայմաններում բուժումը) պետք է գրավոր թույլտվություն ունենա Կալիֆորնիայում առողջապահական ծառայություններ մատուցողից՝ դպրոց հաճախելու վերաբերյալ, որը կներառի նաև ֆիզիկական ակտիվությանն առնչվող ցանկացած առաջարկություն: Առողջապահական ծառայություններ մատուցող է սահմանվում Կալիֆորնիայի արտոնագրված բժիշկը [Բժշկական գիտությունների դոկտոր (MD) կամ օսթեոպատիկ բժիշկը (DO), Կալիֆորնիայի արտոնագրված ատամնաբույժը, Կալիֆորնիայի արտոնագրված բուժաշխատողը (NP), Կալիֆորնիայի արտոնագրված մանկաբարձուհին կամ Կալիֆորնիայի արտոնագրված բժշկի օգնականը (PA)]:

Աշակերտը, ով դպրոց է վերադառնում վիրահատական կարերով (կար, ամրակ), վիրակապերով (էլաստիկ վիրակապ, պարսատիկներ), գիպսակապով, սպլինտերով, հենակներով, ձեռնափայտով, ծնկի հենակով կամ ծնկի սկուտերով, կամ հաշմանդամի սայլակով, պետք է գրավոր թույլտվություն ունենա Կալիֆորնիայի արտոնագրված առողջապահական ծառայություններ մատուցողից՝ դպրոց հաճախելու վերաբերյալ, որը կներառի առաջարկներ և/կամ սահմանափակումներ նրա ֆիզիկական ակտիվության, շարժունակության և անվտանգության վերաբերյալ: Բոլոր պարագաները պետք է ապահովված լինեն ծնողների/օրինական խնամակալների կողմից:

Ֆիզիկական կրթության դասից ազատում (10 շաբաթից քիչ) կարող է տրամադրվել այն աշակերտին, ով ի վիճակի չէ մասնակցել կանոնավոր կամ փոփոխված ուսումնական ծրագրին ժամանակավորապես՝ հիվանդության կամ վնասվածքի պատճառով: Դասից ազատելու վերաբերյալ ծնողի/օրինական խնամակալի գրավոր դիմումը ընդունելի է մինչև հինգ (5) օրվա համար, որից հետո գրավոր դիմում է անհրաժեշտ աշակերտի՝ Կալիֆորնիայում արտոնագրված առողջապահական ծառայություններ մատակարարից:

Դպրոցի ղեկավարությունը կարող է հարգելի համարել 12 տարեկան և բարձր տարիքի ցանկացած աշակերտի բացակայությունը՝ բժշկական գաղտնի ծառայություններ ստանալու նպատակով բացակայելու դեպքում՝ առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության: (EC-ի բաժին 46010.1)

Աշակերտներին թույլատրվում է կրել պաշտպանիչ հանդերձանք (գլխարկ, արևապաշտպան հովարներ և/կամ արևային ակնոցներ), երբ գտնվում են դրսում՝ ընդմիջման ժամանակ, մարզադահլիճում և այլն: Դպրոցները կարող են կանոնակարգել արևից պաշտպանող այս հանդերձանքի կամ գլխարկների տեսակը՝ համաձայն Կալիֆորնիայի EC-ի Բաժին 35183.5-ի: Դպրոցները պարտավոր չեն տրամադրել պաշտպանիչ միջոցներ: Աշակերտներին թույլատրվում է օգտագործել արևապաշտպան քսուք և շրթունքների բալզամ (ազատ վաճառքի)՝ որպես արևից կամ քամուց պաշտպանվելու թույլատրելի միջոց՝ դպրոցում գտնվելու ժամանակ դրսում անց կացվող ծրագրերի համար:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելում
Վարակիչ հիվանդությունների ստուգումները կարող են պարբերաբար իրականացվել Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության վարչության (LACDPH) կողմից: Վարակիչ հիվանդության կասկածով աշակերտը կհեռացվի դպրոցից՝ մինչև հետ ընդունվելու ուղեցույցների պայմաններին համապատասխանելը: Հեռացման և հետ ընդունման ուղեցույցները համապատասխանում են դպրոցական շրջանի, Կալիֆորնիայի հանրային առողջապահության վարչության, Կալիֆորնիայի կրթության վարչության և LACDPH-ի սահմանած քաղաքականություններին: Վարակիչ հիվանդություններին առնչվող ուղեցույցներ կարող են նաև տրամադրվել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի և պետական կազմակերպությունների կողմից: Առանձին հիվանդությունների վերաբերյալ ուղեցույցներ ստանալու նպատակով՝ խնդրում ենք հղում կատարել «Դպրոցներում վարակիչ հիվանդությունների ուղեցույցին»՝ https://achieve.lausd.net/Page/12655#spn-content կայքում:

Դպրոց հետ ընդունումը կախված է հիվանդության վիճակից և պատշաճ բուժումից: Ավելի երկար ժամանակ կարող է պահանջվել այն աշակերտների համար, ովքեր չունեն դպրոցի համար պահանջվող որոշ կամ բոլոր պատվաստումները:

Ցանկացած հիվանդությամբ պայմանավորված ջերմություն ունենալու դեպքում (100 F աստիճան կամ ավելի բարձր), աշակերտը նախքան դպրոց վերադառնալը պետք է առնվազն 24 ժամ այլևս չունենա ջերմություն՝ առանց ջերմություն իջեցնող միջոցներ օգտագործելու: Բացի այդ, ախտանշանները պետք է բարելավված լինեն, նախքան դպրոց վերադառնալը:

Դպրոցները կարող են տեղեկացնել ծնողներին/օրինական խնամակալներին դպրոցում ջրծաղիկով, ոջլոտությամբ, COVID-19-ով կամ այլ վարակիչ հիվանդությամբ վարակվելու ռիսկի մասին, որը վտանգում է աշակերտին: Որոշ դեպքերում ծանուցման վերաբերյալ որոշումները կայացնում են հանրային առողջապահության պատասխանատուները: Այն ծնողը/օրինական խնամակալը, ում համար որոշ վարակիչ հիվանդություններ հատուկ վտանգ են ներկայացնում, պետք է կապվի դպրոցի բուժաշխատողի հետ: Ռիսկային են համարվում այն աշակերտները, ովքեր ունեն իմունային համակարգի վրա ազդող հիվանդություն, և ովքեր որոշակի դեղեր են ընդունում՝ քաղցկեղի բուժման կամ օրգանների փոխպատվաստման նպատակով:

COVID-19-ի շարունակվող համավարակի պատճառով՝ հանրային առողջապահության ոլորտի պատասխանատուների ուղեցույցները կարող են ավելացվել կամ փոփոխվել: Լոս Անջելեսի միացյալ շրջանը կշարունակի հետևել հանրային առողջապահության ոլորտի պատասխանատուների կողմից ներկայացված բոլոր պահանջներին և ուղեցույցներին:

Շաքարային դիաբետ
Դպրոցում 1-ին տիպի շաքարախտի վերահսկումը ամենից արդյունավետ է դառնում այն ժամանակ, երբ աշակերտները, ծնողները/օրինական խնամակալները, դպրոցի անձնակազմը, առողջապահական խնամք տրամադրողները և ադմինիստրատորները համագործակցում են միմյանց հետ: Աշակերտներին կաջակցեն արյան մեջ գլյուկոզայի ստուգման, հիպոգլիկեմիայի բուժման, կետոնների ստուգման, ածխաջրերի քանակի և ինսուլինի վերահսկման հարցերում՝ դպրոցի դասաժամերի ընթացքում, եթե կա գրավոր լիազորագիր Կալիֆորնիայում արտոնագրված առողջապահական խնամք տրամադրողի և ծնողի/խնամակալի կողմից: Խնդրում ենք կապվել հավատարմագրված դպրոցի բուժաշխատողի հետ շաքարախտի վերահսկման պլանավորումը սկսելու համար:

«Ի՞նչ է շաքարախտը» տեղեկատվական թերթիկը պետք է տրվի բոլոր ընթացիկ և 7-րդ դասարան փոխադրվող աշակերտներին՝ դպրոցում գրանցման պահին կամ ընդհանուր դասաժամի ընթացքում (EC-ի բաժին 4452.7): Կալիֆորնիայի կրթության դեպարտամենտի (CDE) տեղեկատվական թերթիկը կարելի է գտնել հետևյալ հասցեով. https://www.cde.ca.gov/ls/he/hn/type2diabetes.asp:

Իմունիզացիայի պահանջները
Նոր աշակերտներ չեն կարող ընդունվել, քանի դեռ գործերի ընդունման պահին չեն ներկայացրել ընթացիկ, ամբողջական գրավոր տեղեկանք պատվաստումների վերաբերյալ, որը տրված է առողջապահական խնամք մատուցողի կամ առողջապահության վարչության կողմից: Աշակերտները կարող են պայմանականորեն ընդունվել և գրանցվել, եթե պահանջվող պատվաստումների բացակայող չափաբաժինը ստանալու համար դեռ ժամանակ կա: Արտատնային խնամքի տակ գտնվող, անօթևան, միգրանտ, զինվորական ընտանիքում ապրող կամ Անհատական կրթության ծրագիր (IEP) ունեցող աշակերտներին պետք է պայմանականորեն ընդունել և անմիջապես գրանցել՝ անկախ պատվաստումների մասին գրառումների առկայությունից, կամ պատվաստումների արդիական կամ ամբողջական լինելուց: Իմունիզացիայի պահանջները չեն արգելում աշակերտներին օգտվել հատուկ կրթությունից և հարակից ծառայություններից, որոնք պահանջվում են իրենց IEP-ներով:

Արտոնյալ ժամկետ չի տրվի այն աշակերտներին, ովքեր չունեն պահանջվող այն պատվաստումները, որոնք այժմ պետք է ստանալ: Լոս Անջելեսի միացյալ շրջանի

բոլոր նոր աշակերտները կամ Շրջանի մեջ տեղափոխված աշակերտները պետք է ցույց տան, որ ստացել են բոլոր ընթացիկ պահանջվող պատվաստումները, որպեսզի կարողանան ընդունվել: Բացի այդ՝ բոլոր այն աշակերտները, ովքեր ընդունվում կամ փոխադրվում են 7-րդ դասարան, պետք է ապացույցներ ներկայացնեն այն մասին, որ 7 տարեկանում կամ դրանից հետո ստացել են կապույտ հազի պատվաստանյութ (օրինակ՝ Tdap): Td պատվաստանյութը չի համապատասխանում պահանջներին, սակայն DTap/DTP-ն համապատասխանում են, եթե տրվել են 7 տարեկանը լրանալուց հետո: Բոլոր այն աշակերտներից, ովքեր ընդունվում կամ փոխադրվում են ուրիշ դպրոց՝ ցանկացած դասարանում և/կամ փոխադրվում են 7-րդ դասարան, պահանջվում է ստանալ ջրծաղկի դեմ պատվաստման երկրորդ չափաքանակը: Ծնողներին/օրինական խնամակալներին (խնամակալներին) խրախուսվում է այցելել իրենց երեխայի առողջապահական խնամքի մատակարարին:Դպրոցական պատվաստումների պահանջների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.shotsforschool.org:

Բոլոր աշակերտների պատվաստման կարգավիճակը պարբերաբար պետք է վերանայել: Այն աշակերտներին, ովքեր չեն համապատասխանում նահանգային ուղենիշերի պահանջներին, պետք է բացառել դպրոցից՝ մինչև նշված պահանջների բավարարելը: Այն աշակերտները, ովքեր վարակվել են վարակիչ հիվանդությամբ, որի համար պատվաստում չեն ստացել, կարող են հեռացվել դպրոցից՝ հանրային առողջապահության վարչության հայեցողությամբ: Կալիֆորնիայում միայն արտոնագրված բժիշկ (MD) կամ օսթեոպատիկ բժիշկ (DO) կարող է ազատել ձեր երեխային որոշ կամ բոլոր պատվաստումների պահանջներից՝ առողջական վիճակի պատճառով: 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ դպրոցի և երեխաների խնամքի բոլոր նոր բժշկական ազատումները պետք է տրվեն CAIR-ME- ի միջոցով: Ծնողները/օրինական խնամակալները և բժիշկները կարող են ցանկացած պահի գրանցվել և հաշիվ ստեղծել CAIR-ME-ում: Գրանցվելուց հետո ծնողները/օրինական խնամակալները կարող են մուտք գործել CAIR-ME՝ բժշկական ազատում պահանջելու համար: Ծնողները ազատման դիմումի համարը փոխանցում են իրենց երեխայի բժշկին, որը կարող է մուտք գործել CAIR-ME՝ ազատումը պատրաստելու համար: Երբ ազատումը տրվում է, բժիշկը տպում է երկու (2) էջանոց ձևաթուղթը և պատճենը տրամադրում ծնողներին/օրինական խնամակալներին՝ փոխանցելու իրենց երեխայի դպրոցին կամ երեխայի խնամքի հաստատությանը:

Բժշկից կպահանջվի տրամադրել հետևյալ տեղեկությունները՝ CAIR-ME-ում բժշկական ազատման վերաբերյալ՝

1. Երեխայի հատուկ ֆիզիկական վիճակը կամ բժշկական հանգամանքն այպիսին է, որ պատվաստումը խորհուրդ չի տրվում՝ արտոնագրված բժշկի կողմից;
2. Ազատված է յուրաքանչյուր նշված պահանջվող պատվաստումից;
3. Արդյո՞ք բժշկական ազատումը ժամանակավոր է, թե՞ մշտական;
4. Եթե ազատումը ժամանակավոր է, ապա ստորագրման ամսաթվից հետո վավերականության ժամկետը պետք է լինի ոչ ավել, քան 12 օրացուցային ամիս:

Խորհրդակցության համար կարող եք դիմել դպրոցի բուժանձնակազմին: Կան դպրոցում հիմնված մի շարք կլինիկաներ, որոնք պատվաստումներ են առաջարկում աշակերտներին: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ հանդիպում նշանակելու համար ծնողները/օրինական խնամակալները կարող են զանգահարել Աշակերտների բժշկական ծառայություններ՝ (213) 202-7590 համարով:

Դեղորայքը դպրոցներում

Յուրաքանչյուր աշակերտ, ով դպրոցի կանոնավոր օրվա ընթացքում պետք է ընդունի դեղատոմսով կամ ազատ վաճառվող դեղեր, կարող է օժանդակություն ստանալ դպրոցի բուժաշխատողից կամ դպրոցի որևէ այլ հատուկ աշխատակցից (EC Section 49423), եթե դպրոցական շրջանը տարեկան ստանա՝

1. Գրավոր հայտարարություն Կալիֆորնիա նահանգի արտոնագրված առողջապահական ծառայություններ մատուցողի կողմից՝ դեղորայքի անվան, ընդունման մեթոդի, դեղաչափի և ժամանակացույցի վերաբերյալ մանրամասն տեղեկություններով;
2. Բժշկի կամ վիրաբույժի կողմից տրված գրավոր թույլտվություն, որը վերաբերում է աշակերտի կողմից ասթմայի ինհալացիոն դեղամիջոցներ կրելուն և ինքնուրույն օգտագործելուն: Այն տրվում է բժշկի կամ վիրաբույժի կողմից, որը պայմանագիր է կնքել կանխավճարային երկազգային առողջապահական ծրագրի հետ, որը օրինականորեն գործում է Մեքսիկայի օրենսդրության համաձայն, որը լիցենզավորված է որպես առողջության խնամքի սպասարկման ծրագիր Կալիֆորնիայում ըստ Կալիֆոռնիայի օրենքին (EC-ի բաժին 49423.1): Գրավոր թույլտվությունը պետք է տրամադրվի ինչպես անգլերեն, այնպես էլ իսպաներեն և ներառի բժշկի կամ վիրաբույժի անունը և կոնտակտային տվյալները:
3. Գրավոր հայտարարություն ծնողի/օրինական խնամակալի, կրթական իրավունքներ կրողի («Ծնող») կողմից, ով արտահայտում է ցանկություն, որ դպրոցական շրջանն օժանդակի աշակերտին՝ առողջապահական ծառայություններ մատուցողի հայտարարության մեջ նշված խնդիրների շուրջ;
4. Հնարավորության դեպքում՝ ցանկալի է, որ արտոնագրված առողջապահական խնամք տրամադրողները դեղի ընդունման այնպիսի ժամանակացույց մշակի, որ կբացառի կամ նվազագույնի կհասցնի դեղորայքի ընդունման անհրաժեշտությունը դպրոցի դասաժամերի ընթացքում: Ծնող(ներ)ին/խնամակալ(ներ)ին խորհուրդ է տրվում իրենց արտոնագրված առողջապահական խնամք տրամադրողին խնդրել, որ հաշվի առնվի նման կերպով հարմարեցնելը;
5. Գրավոր թույլտվությունները պետք է թարմացվեն ամեն տարի, եթե կարգում կան որևէ փոփոխություններ, կամ երբ կա լիցենզավորված առողջապահական ծառայություններ մատուցողի փոփոխություն: Թույլտվությունն ուժի մեջ է գտնվում մեկ (1) օրացուցային տարվա ընթացքում՝ լիազորված առողջապահական ծառայություններ մատուցողի ստորագրության օրվանից սկսած;
6. Ծնողի/օրինական խնամակալի կողմից արված ուղղումները կամ փոփոխությունները դեղորայքի վերաբերյալ չեն ընդունվի կամ իրագործվի, քանի դեռ նման փոփոխությունները գրավոր կերպով չեն տրամադրվել արտոնագրված առողջապահական խնամք տրամադրողի կողմից՝ ծնողի գրավոր թույլտվության ձևի հետ միասին;
7. Ծնողը/օրինական խնամակալը իրավունք ունի ցանկացած պահի չեղյալ համարել նրանց համաձայնությունը դպրոցում դեղորայք կիրառելու վերաբերյալ: Ծնողը պետք է գրավոր հայտարարություն ներկայացնի, իսկ դպրոցի բուժաշխատողը այդ մասին կտեղեկացնի առողջապահական ծառայություններ մատակարարին:

Աշակերտներն չեն կարող իրենց մոտ ունենալ կամ օգտագործել դեղեր դպրոցի տարածքում առանց գրավոր համաձայնության, բացառությամբ, եթե այդպիսի համաձայնությունը չի խախտում պաշտպանված առողջապահական տեղեկություններ (Կալիֆորնիայի ընտանիքի մասին օրենսգրքի բաժին 6925): Այնուհանդերձ, աշակերտները կարող են կրել և ինքնուրույն օգտագործել որոշ դեղեր (օրինակ՝ ասթմայի ինհալացիոն կամ ինքնաներարկվող էպինեֆրին դեղամիջոցներ), եթե դպրոցական շրջանը ստանա համապատասխան փաստաթղթեր, որոնք ընդգրկում են՝

1. Գրավոր հայտարարություն Կալիֆորնիայում արտոնագրված առողջապահական ծառայություններ մատուցողի կողմից, որում մանրամասն նշված է դեղի անունը, դեղի ընդունման մեթոդը, դեղաչափը և ժամանակացույցը և որը հաստատի, որ աշակերտը կարող է ինքնուրույն ընդունել այդ դեղը;
2. Գրավոր հայտարարություն ծնողի/խնամակալի կողմից, ով համաձայնություն է տալիս, որ աշակերտն ընդունի դեղն ինքնուրույն՝ ազատելով դպրոցի հավատարմագրված բուժաշխատողին կամ առողջապահական ծառայություններ մատուցող այլ բուժանձնակազմին դեղամիջոցի հետ կապված ցանկացած հարցի շուրջ առողջապահական խնամք մատուցողի հետ խորհրդակցելուց, և ազատելով դպրոցական շրջանին և դպրոցական անձնակազմին որևէ բացասական ազդեցության հետ կապված պարտավորությունից;
3. Դասաժամերի ընթացքում դեղորայքն ինքնուրույն կառավարելու/իր մոտ պահելու մասին լրացված պայմանագիրը, որը ստորագրված է աշակերտի և դպրոցի բուժաշխատողի կողմից: Ինքնուրույն ընդունվող դեղորայքը չարաշահող աշակերտը ենթակա է որոշակի կարգապահական գործողությունների և ինքնուրույն ընդունելու արտոնության վերացմանը (EC-ի բաժին 48900):

Դպրոցական շրջաններից, վարչաշրջանի կրթության գրասենյակներից և չարտերային դպրոցներից պահանջվում է մատակարարել արտակարգ իրավիճակների համար նախատեսված էպինեֆրինի ինքնաներարկիչներ՝ դպրոցի բուժաշխատողներին և վերապատրաստված անձնակազմին, ովքեր կամավորներ են և լիազորված են օգտագործել էպինեֆրինի ինքնաներարկիչներ՝ անհապաղ բուժօգնություն ցույց տալու այն աշակերտներին, ովքեր ունենում են կամ ողջամտորեն կարծում են, որ ունեն անաֆիլակտիկ ռեակցիա (խիստ ալերգիկ ռեակցիա) (EC-ի բաժին 49414):

Բերանի խոռոչի առողջության վերաբերյալ տեղեկություններ

Մանկապարտեզի երեխաները, ովքեր ընդունվում են հանրային դպրոց, կամ առաջին դասարանի աշակերտները, ովքեր նախկինում հանրային դպրոց չեն

հաճախել, պետք է ապացույց ներկայացնեն բերանի խոռոչի առողջության հետազոտման մասին մինչև ուսումնական տարվա մայիսի 31-ը (EC-ի բաժին 49452.8): Այս հետազոտումը կարող է իրականացվել ոչ ավելի վաղ, քան հանրային դպրոց ընդունումից 12 ամիս առաջ: Բերանի խոռոչի առողջության հետազոտումը պետք է կատարվի արտոնագրված ատամնաբույժի կամ այլ արտոնագրված կամ գրանցված ատամնաբուժական մասնագետի կողմից: Ծնողը/օրինական խնամակալը կարող է ազատվել բերանի խոռոչի առողջության հետազոտման պահանջի կատարումից, եթե ստորագրեն հրաժարման մասին փաստաթուղթ, որում նշված է, որ իրենք չեն գտել այնպիսի ատամնաբուժարան, որն ընդուներ իրենց երեխայի ապահովագրությունը, չեն կարողացել բավարար գումար տրամադրել հետազոտման համար կամ չեն ցանկացել, որ իրենց երեխայի բերանի խոռոչը հետազոտվի: Այն աշակերտների և ընտանիքների համար, որոնք չեն կարողացել կատարել բերանի խոռոչի առողջության հետազոտման պահանջը, տուգանք չի նախատեսվում: Աշակերտին չեն հեռացնի դպրոցից հետազոտման պահանջը չկատարելու կամ հրաժարման մասին փաստաթուղթ ստորագրելու համար:

Բժշկական օգնություն ուսումնական էքսկուրսիաների ժամանակ
Յուրաքանչյուր աշակերտի ծնողը/օրինական խնամակալը պետք է կրթական էքսկուրսիայի համար տրամադրի գրավոր թույլտվություն, ինչպես նաև՝ բժշկական խնամքի համար լիազորագիր: Առողջական խնդիրներ ունեցող/բուժման պայմաններում գտնվող աշակերտների ծնողների/օրինական խնամակալների պատասխանատվությունն է տրամադրել բոլոր անհրաժեշտ դեղորայքը, պարագաները և սարքավորումները էքսկուրսիայի համար՝ մեկնումից առնվազն հինգ (5) ուսումնական օրվա ընթացքում: Էքսկուրսիայի ժամանակ դեղորայքի (դեղատոմսով և առանց դեղատոմսի) կիրառման համար ծնողները/օրինական խնամակալները պետք է լրացրած լինեն «Դպրոցի ժամերի ընթացքում դեղորայք ընդունելու մասին» ձևը, որը ներառում է ծնողի/օրինական խնամակալի ստորագրությունը և Կալիֆորնիայի արտոնագրված առողջապահական խնամք տրամադրողի գրավոր օրդերը՝ ստորագրությամբ և ամսաթվով: Եթե աշակերտը Մասնագիտացված առողջական խնամքի ծառայության (Արձանագրություն) կարիք ունի, ապա ՊԵՏՔ Է ունենա «Ծնողի համաձայնություն և լիազորված առողջական խնամք տրամադրողի լիազորագիր» ընթացիկ լրացված ձևը, որը ընդգրկում է էքսկուրսիայի ամսաթիվ(եր)ը:

Բժշկական հետազոտություն
Երեխաների առողջության և հաշմանդամության կանխարգելման (CHDP) ուղեցույցի համաձայն 1-ին դասարանի բոլոր աշակերտները պետք է անցնեն համապարփակ բժշկական հետազոտություն ֆիզիկական քննություն և առողջական վիճակի գնահատում դպրոց ընդունվելուց առաջ 18 ամսվա ընթացքում կամ 1-ին դասարան ընդունվելուց հետո երեք (3) ամսվա ընթացքում (Առողջության և անվտանգության կանոնագիրք, բաժին 124085): Երեխաների առողջության և հաշմանդամության կանխարգելման ներքո կամ դրան համարժեք այլ հետազոտություն պետք է կատարվի մասնավոր բուժհաստատության, Առողջապահության վարչության կլինիկայի կամ Շրջանի աշակերտների համար նախատեսված բժշկական ծառայությունների անձնակազմի կողմից: Վաղ մանկական տարիքի ծրագրեր ընդունվող բոլոր երեխաները պետք է բժշկական հետազոտություն անցնեն: Առաջին անգամ Լոս Անջելեսի միացյալ շրջանում ընդունված աշակերտներին խրախուսում են դպրոց ներկայացնել բժշկական հետազոտության վերաբերյալ նոր զեկույց, չնայած դա պարտադիր չէ:

Եթե աշակերտը չունի առողջական ապահովագրություն, ունի փոխհատուցման սահմանափակ հնարավորություն կամ նրանց փոխհատուցում է Medi-Cal-ը, ապա նա իրավունք ունի Երեխաների առողջության և հաշմանդամության կանխարգելման ներքո անվճար հետազոտություն անցնելու Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի կլինիկաներից (SBCs) մեկում (1): Եթե Երեխաների առողջության և հաշմանդամության կանխարգելման ներքո անցկացվող հետազոտության պահանջներին համապատասխանելու հետ կապված օգնության կարիք լինի, խնդրում ենք դիմել դպրոցի բուժքրոջը: Եթե ծնողները/օրինական խնամակալները չեն ցանկանում, որ իրենց երեխան հետազոտվի դպրոցում, նրանք պետք է հանձնեն դրա վերաբերյալ տարեկան գրավոր հաստատում դպրոցի ադմինիստրատորի և բուժքրոջ հետ (EC-ի բաժին 49451):

Աշակերտների տեսողության և լսողության սկրինինգը պետք է կատարվի դպրոցում նահանգի պահանջներին համապատասխան (EC-ի բաժին 49452): 7-րդ դասարանի բոլոր աղջիկները և 8-րդ դասարանի տղաները կարող են հետազոտվել հնարավոր սկոլիոզի համար (ողնաշարի անբնական թեքվածություն): Ծնողներին/օրինական խնամակալներին պետք է տեղեկացնեն պարտադիր սկրինինգ թեստերի արդյունքների վերաբերյալ, եթե հետագա ուշադրության կարիք լինի: Այն ծնողները/օրինական խնամակալները, ովքեր չեն ցանկանում, որ իրենց երեխան հետազոտվի դպրոցում (ներառյալ տեսողության և լսողության սկրինինգները) պետք է դրա վերաբերյալ տարեկան գրավոր հաստատում ներկայացնեն դպրոցի ադմինիստրատորին և դպրոցի բուժքրոջը (EC-ի բաժին 49451):

9-12-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտ, ով ծրագրում է մասնակցել միջդպրոցական սպորտային մրցումների, պետք է անցնի տարեկան համապարփակ ֆիզիկական քննություն, որը սովորաբար կոչվում է Սպորտային բժշկական հետազոտություն, Քալիֆորնիայի լիցենզավորված բուժհաստատության կողմից, որը համապատասխանում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի ընթացիկ կանոնակարգին: Եթե աշակերտը չունի անձնական բուժհաստատություն, ապա բժշկական հետազոտությունները հասանելի կարող են լինել դպրոցի բժիշկների և բուժքույրերի կողմից այցի ընթացքում: Դպրոց ընդունվելիս այց նշանակելու համար, Երեխաների առողջության և հաշմանդամության կանխարգելման, և/կամ Սպորտային բժշկական հետազոտության համար խնդրում ենք զանգահարել բժշկական ծառայությունների գրասենյակ (213) 202-7584 կամ (213) 202-7590 հեռախոսահամարներով կամ այցելեք վերկայք՝ https://achieve.lausd.net/Page/12532#spn-content:

COVID-19-ի վերաբերկալ առողջության և անվտանգության կանոններ
Լոս Անջելեսի միացյալ շրջանը նվիրված է դպրոցական համայնքի առողջության և անվտանգության ապահովման գործին: Շրջանի COVID-19-ի հետ կապված առողջությանն ու անվտանգությանը վերաբերող թարմացումներին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել https://achieve.lausd.net/covid:

Հոգեկան առողջությունը դպրոցում
Աշակերտների առողջապահական և մարդկային ծառայությունների և հոգեկան առողջության կենտրոնն առաջարկում է հոգեկան առողջությանը վերաբերող մի շարք ծառայություններ, որոնք ապահովում են արդյունավետ բուժում, և աջակցում է երեխաներին, երիտասարդներին, ընտանիքներին, որպեսզի նրանք զարգանան և հաջողակ կյանք ունենան: Ծառայությունները մատուցվում են դպրոցներում, կլինիկաներում, առողջության կենտրոններում և տարբեր ծրագրերի միջոցով ողջ Շրջանում:

Դպրոցում հոգեկան առողջության կլինիկաների և առողջապահական կենտրոնների վերաբերյալ ակնարկ և ուղղորդման ընթացակարգ
Դպրոցական հոգեկան առողջության կլինիկաներում և առողջապահական կենտրոններում աշխատում են լիցենզավորված մանկական հոգեբույժներ և հոգեբուժական ոլորտի սոցիալական աշխատողներ: Անձնակազմին փաստի վրա հիմնված պրակտիկաների միջոցով սովորեցնում են բուժել դեպրեսիա, տագնապայնություն, վարքի խանգարում և տրավմա: Դեղորայքային միջամտության ծառայությունները հասանելի են այն աշակերտների համար, ովքեր Դպրոցում հոգեկան առողջության կլինիկաների ակտիվ պացիենտներ են և ունեն Medi-Cal առողջապահական ապահովագրություն կամ չունեն ապահովագրություն: Դպրոցի անձնակազմը և ծնողներ/օրինական խնամակալները կարող են զանգահարել որևէ կլինիկա որպեսզի քննարկել հոգեկան առողջության ծառայություններից օգտվելու կարգը:

Կլինիկաներում և առողջապահական կենտրոններում մատուցվող բոլոր ծառայությունները գաղտնի են: Լրացուցիչ տեղեկությունների համար և ծառայությունների համար ուղեգիր ստանալու համար այցելեք դպրոցի հոգեկան առողջությանը վերաբերող վեբկայքը՝ website at: https://achieve.lausd.net/smh:

Ինքնասպանության կանխարգելում, միջամտություն և հետագա աշխատանքներ
Ինքնասպանությունը հանրային առողջության լուրջ խնդիր է, որն ազդում է հսկայական քանակի ընտանիքների, ընկերների, դասընկերների, գործընկերների և համայնքի վրա: Ինքնասպանության կանխարգելումը պետք է լինի աշակերտներին աջակցող և նրանց հետ աշխատող բոլոր չափահասների, ներառյալ ծնողների/օրինական խնամակալների, ընտանիքների, տեղական համայնքային կազմակերպությունների, հոգեկան առողջությամբ զբաղվողների և դրա հետ կապված մասնագետների միասնական ջանքերի արդյունքը: Նպատակն է պակասեցնել ինքնասպանության դեպքերի թիվը կրթության, իրազեկման և ծառայությունների միջոցով:

Եթե կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում ԱՆՀԱՊԱՂ օգնություն է հարկավոր, զանգահարեք 911: Հոգեբուժական արտակարգ իրավիճակի դեպքում կապվեք Լոս Անջելեսի վարչաշրջանի Մտավոր առողջության վարչության 24 ժամ աշխատող ACCESS կենտրոնի հետ՝ (800) 854-7771:

Ճգնաժամային աջակցության համար զանգահարեք 988 Suicide and Crisis Lifeline, որը հասանելի է օրը 24 ժամ՝ 988 կամ (800) 273-8255 հեռախոսահամարներով:

Լրացուցիչ տեղեկությունների, խորհրդատվության և ուղեգրերի համար զանգահարեք Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների՝ դպրոցում մտավոր առողջության բաժին՝ (213) 241-3840 հեռախոսահամարով կամ այցելեք https://achieve.lausd.net/smh: Դպրոցի մտավոր առողջության անձնակազմը հասանելի է խորհրդատվության համար ամբողջ տարվա ընթացքում՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 08:00–ից մինչև 16:30:

Առողջաբուժական կենտրոնները լոս անջելեսի միացյալ շրջանում
Առողջաբուժական կենտրոններն աշակերտներին և համայնքին տրամադրում են կենսական նշանակություն ունեցող առողջական և մտավոր առողջության ծառայություններ, խթանում են առողջությունը, բարեկեցությունը և կարիերայի ուղիները: Առողջաբուժական կենտրոնները գործարկվում են համայնքային առողջապահական մատակարարների կողմից՝ համագործակցելով Լոս Անջելեսի միացյալ շրջանի հետ՝ բժշկական և մտավոր առողջության համապարփակ ծառայություններ մատուցելու համար:

Աշակերտներին կարող են հասանելի լինել մի շարք ծառայություններ, այդ թվում՝ պատվաստումներ, ֆիզիկական (ներառյալ սպորտային ֆիզիկական վարժություններ), առողջ երեխաների պարբերաբար ստուգումներ, հիվանդությունների համար այցեր, զգայուն բնույթի ծառայություններ, վարքագծային առողջապահական ծառայություններ և մասնագիտացված խնամքի ուղեգրեր:

Չափահասները նույնպես կարող են օգտվել այնպիսի ծառայությունների ցանկից, ինչպիսիք են՝ շաքարախտի, հիպերտոնիայի, խոլեստերոլի հետազոտումները և բժշկական վերահսկումը, ինչպես նաև չափահասների պատվաստումները, տուբերկուլյոզի հետազոտումները, մասնագիտացված խնամքի ուղեգրերը: Բոլոր առողջաբուժական կենտրոններն ընդունում են Medi-Cal և My Health LA ապահովագրական փաթեթները: Առողջության ապահովագրության կարիք ունենալու դեպքում կարող եք կապ հաստատել Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների, Երեխաների հասանելիությունը առողջապահական խնամքին և Medi-Cal ծրագրի (CHAMP)-ի անձնակազմի հետ՝ աջակցություն ստանալու համար՝ (213) 241-3840 հեռախոսահամարով:

Ընթացիկ տեղեկատվության և կլինիկաների և առողջության կենտրոնների ցանկի համար այցելեք Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների վեբկայքը՝ https://achieve.lausd.net/shhs, և սեղմեք Wellness Network – Wellness Centers հղմանը:

ԲՈՒԺԱՇԽԱՏԱԿԻՑ–ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բուժաշխատակից-ընտանիք համագործակցությունն անվճար, կամավորական ծրագիր է՝ առաջին անգամ հղիացող/ծնող դարձող դեռահասների համար: Ծրագիրը ներառում է դպրոցի որակավորված և հավատարմագրված բուժաշխատակցի կողմից (գրանցված բուժաշխատակից)՝ առանձին տնային այցելություններ հղիության ողջ ընթացքում, և շարունակում է աջակցել երիտասարդ ծնողին, մինչև երեխան կդառնա երկու (2) տարեկան: Բուժքույրն օգնում է հղի/ծնող դարձած դեռահասին՝ առողջ անցկացնել հղիությունը և ունենալ առողջ երեխա: Ծրագիրն ուղղորդում է դեռահասին՝ դառնալու ավելի լավ ծնող և հասնելու իր կրթական նպատակներին: Իր առաջին երեխան ունեցող դեռահասը, ով համապատասխանում է սույն պահանջներին, խրախուսվում է ընդգրկվելու ծրագրում՝ հղիության հնարավորինս վաղ փուլում: Տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել (213) 202-7534 հեռախոսահամարով:

MEDI-CAL-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Medi-Cal-ի մասին հետևյալ տեղեկությունները տրամադրվում են հաշմանդամություն ունեցող Medi-Cal-ի իրավասու երեխաների ծնողներին/օրինական խնամակալներին: Երեխաները համապատասխանում են Medi-Cal-ի ծառայություններից օգտվելու պահանջներին՝ ելնելով տարբեր գործոններից, այդ թվում՝ ընտանիքի անդամների քանակից, ընտանիքի եկամտի չափից և հաշմանդամությունից: Medi-Cal-ի մասին լրացուցիչ տեղեկություններով հետաքրքրվող ծնողները/օրինական խնամակալները կարող են զանգահարել Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Երեխաների առողջապահության մատչելիության և Medi-Cal ծրագրի» (CHAMP) օգնության գծի անվճար հեռախոսահամարով՝ (866) 742-2273 կամ այցելել https://achieve.lausd.net/CHAMP: Օգնության գիծն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև 16:00:

Լոս Անջելեսի միացյալ շրջանը տրամադրում է պահանջվող բոլոր ծառայությունները, որոնք սահմանված են երեխայի Անհատական ուսումնական ծրագրում (IEP-ում)՝ առանց լրացուցիչ ծախսեր առաջացնելու ծնողների/օրինական խնամակալների համար: Այդուհանդերձ, Լոս Անջելեսի միացյալ շրջանը կարող է փոխհատուցում ստանալ այդ ծառայությունների մատուցած ծախսերի դիմաց՝ դաշնային Medicaid (Կալիֆորնիայում կոչվում է Medi-Cal) ծրագրից, ինչը մեծացնում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի բոլոր աշակերտներին առողջապահական ծառայություններ տրամադրելու հնարավորությունները: Medi-Cal-ի համար իրավասու ծնողները/օրինական խնամակալները լիազորում են Լոս Անջելեսի միացյալ շրջանին՝ դիմումներ ներկայացնելու Medi-Cal-ի կողմից փոխհատուցման համար, երբ ծնողը/օրինական խնամակալը ստորագրում է համաձայնություն «Հատուկ կրթության գնահատման պլանի» կամ IEP-ի (Անհատական կրթական ծրագրի) համար, բացառությամբ այն դեպքի, երբ ծնողը/օրինական խնամակալը ստորագրում է Medi-Cal-ին հաշիվ ներկայացնելու համար ծնողի կողմից չլիազորելու (Parent Medi-Cal Non-Authorization to Bill) ձևը: Ծնողները/օրինական խնամակալները կարող են Լոս Անջելեսի միացյալ շրջանի Medi-Cal-ի գրասենյակից պահանջել այդ ձևաթուղթը՝ զանգահարելով (213) 241-0558 հեռախոսահամարով: Ձևաթղթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները պարունակում է նաև ծնողների համար նախատեսված *Հատուկ կրթության ծառայությունների ուղեցույցը* (ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները): Փոխհատուցում փնտրելիս, Լոս Անջելեսի միացյալ շրջանին կարող է անհրաժեշտ լինել հրապարակել աշակերտական տվյալները, բժշկական տեղեկատվություն և/կամ աշակերտին վերաբերող այլ տեղեկություններ՝ որպես սովորական գործարքային մաս: Դպրոցական ծառայությունների համար Medi-Cal-ի փոխհատուցումը չի ազդում աշակերտի Medi-Cal նպաստների վրա առողջապահական այլ հաստատություններում: Կալիֆորնիայի աշակերտների համար Medi-Cal-ի վրա սահմանափակումներ չկան:

Լոս Անջելեսի միացյալ շրջանի Medi-Cal-ի փոխհատուցման և համապատասխանության ծրագիրը հետևում է «Առողջապահական ապահովագրության դյուրակրության և հաշվետվողականության ակտի» (HIPAA) բոլոր դրույթներին: Խնդրում ենք ծանոթանալ Ծնողների/աշակերտների ձեռնարկի ձևաթղթերի բաժնում ներառված «Գաղտնիության գործելակերպերի ծանուցման» նամակին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Երեխաների առողջապահության մատչելիության և Medi-Cal ծրագիրը» (CHAMP) կարող է օգնել ծնողներին իրենց երեխաներին անվճար կամ ցածր գներով առողջապահական ապահովագրության ծրագրերում ընդգրկելու հարցում, ինչպիսիք են՝ Medi-Cal-ը և Covered California-ն: Սրանք ծրագրեր են երեխաների համար՝ անկախ նրանց ներգաղթի կարգավիճակից: Գրանցման հարցերով աջակցություն ստանալու համար ծնողները կարող են զանգահարել «Երեխաների առողջապահության մատչելիության և Medi-Cal ծրագրի» (CHAMP) անվճար օգնության գիծ՝ (213) 241-3840 հեռախոսահամարով, կամ այցելել CHAMP-ի կայք՝ https://achieve.lausd.net/CHAMP: Դպրոցները կարող են աշխատակազմին կամ ծնողներին այս ծրագրերի մասին ներկայացնելու համար հանդիպումներ կազմակերպել՝ կապվելով CHAMP-ի գրասենյակի հետ: Օգնության գիծն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը 08:00-ից մինչև 16:30:

ԾՆՈՂՆԵՐԻ/ՕՐԻՆԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (CAP)

Ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդությունը (ՁԻԱՀ) խրոնիկական, կյանքին սպառնացող հնարավոր վտանգ է, որի հարուցիչը մարդու իմունային անբավարարության վիրուսն է (ՄԻԱՎ): ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները մեր համայնքում տարածված են համաճարակի նման: Հանրային առողջապահության վիճակագրությունը և զեկույցները ցույց են տալիս, որ գնալով ավելի մեծ թվով երիտասարդներ իրենց դեռահաս տարիքում ներգրավվում են այնպիսի գործողությունների մեջ, որոնք նրանց ենթարկում են վարակվելու վտանգին: Թեև Շրջանն առաջարկում է կրթություն, որը շեշտում է սեռական գործողությունից զերծ մնալը՝ որպես վարակի կանխարգելման միակ հարյուր տոկոսանոց արդյունավետ միջոց, այդուամենայնիվ, Շրջանը նաև գիտակցում է, որ ոչ բոլոր աշակերտները զերծ կմնան սեռական գործողությունից, ուստի և նրանց պետք է սովորեցնել, որ

պահպանակի ճիշտ օգտագործումը ապահովում է պաշտպանություն՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ վիրուսների սեռական ճանապարհով վիրուսի փոխանցումից: Նկատի ունենալով այս փաստերը և համագործակցելով բժշկական ու հանրային առողջապահական մարմինների հետ՝ Կրթության խորհուրդը 1992 թ. ընդունել է քաղաքականություն, որի համաձայն՝ աշակերտներին տրամադրվում են պահպանակներ, եթե ծնողները/օրինական խնամակալները գրավոր կերպով չեն դիմում դպրոցի բուժաշխատակցին՝ մերժելով դրա թույլտվությունը:

Շրջանի՝ «Պահպանակների հասանելիության ծրագիրը» Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջապահության վարչության միջոցով անվճար պահպանակներ կտրամադրի այն աշակերտներին, ովքեր կդիմեն նման խնդրանքով: Այն ծնողները/օրինական խնամակալները, ովքեր չեն ցանկանում, որ իրենց երեխան պահպանակներ ստանա, կարող են գրավոր նամակ ուղարկել դպրոցի բուժաշխատողին կամ դպրոցի համար նշանակված CAP-ի անձնակազմի անդամին: Պահպանակները հասանելի դարձնելով՝ Շրջանը որևէ պատասխանատվություն չի կրում:

ՄՆՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ՄՆՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ (Café LA)

Café LA-ն առաջարկում է ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի (USDA) դաշնային սննդի հետևյալ ծրագրերը. Դպրոցական նախաճաշի ծրագիր (SBP), Ազգային դպրոցական ճաշի ծրագիր (NSLP), Երեխաների և մեծահասակների սննդի ծրագիր (CACFP) և «Ամառային սնունդ» դպրոցական ծրագիր (SFSP):

2023-24 ուսումնական տարվա համար Կալիֆորնիայի Համընդհանուր սննդային ծրագիրը կշարունակի անվճար նախաճաշ և ճաշ տրամադրել բոլոր աշակերտներին: Մենք կշարունակենք խթանել «Նախաճաշ դասարանում» ծառայությունը՝ աջակցելու մեր աշակերտներին: CACFP-ի համաձայն՝ ընթրիքը հասանելի կլինի նաև դպրոցական ճամբարներում գտնվող աշակերտների համար:

Եթե ծնողները/խնամակալներն հարցեր ունեն դպրոցում սննդի սպասարկման վերաբերյալ, ապա դրանց պատասխանները ստանալու լավագույն միջոցը ձեր երեխայի դպրոցում սննդի ծառայությունների կառավարչին դիմելն է: Նրանք շատ գիտակ են սննդի ծառայությունների, սննդի պատրաստման, սանիտարահիգիենիկ պայմանների, անվտանգության և առաջարկվող այլ ծրագրերի բոլոր ոլորտներում: Ծրագրերի, ինչպես նաև սննդային ռեսուրսների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք https://achieve.lausd.net/cafela կայքը կամ զանգահարեք (213) 241-6419 / (213) 241-6409 համարներով:

Սնունդը և Café LA ճաշացանկերը
Լոս Անջելեսի միացյալ շրջանն առաջատար է առողջ սնվելու և ապրելակերպի խթանման ոլորտում՝ գիրության, շաքարախտի և առողջական այլ խնդիրների դեմ պայքարելու համար: Կրթական խորհուրդը ընդունել է երեխաների սնուցման լավ փորձը խթանելու քաղաքականություն: Դրանք ներառում են.

1. «Սննդամթերքի և սնուցման քաղաքականության բարելավում», որը ձգտում է բարելավել սննդի հասանելիությունը աշակերտների համար՝ հանձնարարելով, որ աշակերտներին հատկացվի ոչ պակաս, քան 20 րոպե սնվելու ժամանակ;
2. «Պատշաճ սննդի ձեռք բերման քաղաքականություն», որը խթանում է այն սննդամթերքի գնումներին, որոնք աջակցում են տեղական տնտեսություններին, շրջակա միջավայրի կայունությանը, արժեքավոր աշխատուժին, կենդանիների բարեկեցությանը և սնուցմանը:

Ճաշացանկը մշակվել է սննդաբանների թիմի կողմից և շարունակում է կատարելագործել և կիրառել սննդի ամենաբարձր չափանիշները: Մենյու կարելի է մուտք գործել Yum Yummi կայքից՝ http://lausd.yumyummi.com:

Մեր ճաշացանկերը պահպանում են հետևյալ սկզբունքները՝ ապահովելով, որ յուրաքանչյուր աշակերտ դպրոցում գտնի առողջ և ախորժելի սնունդ՝

1. Առաջարկվում է ճաշացանկի մեծ ընտրություն՝ ամեն օր ընդգրկելով բուսական և վեգան սննդի տարբերակներ, թարմ աղցաններ և սենդվիչների տարբերակներ;
2. Մատուցվում են միայն ամբողջական հացահատիկով հարուստ մթերքներ;
3. Ամեն օր առաջարկվում են թարմ մրգեր և բանջարեղեն;
4. Առաջարկվում է միայն առանց հակաբիոտիկներով հավ;
5. Մասնակցություն «Առանց մսի երկուշաբթի» ծրագրին, որի շրջանակներում երկուշաբթի օրվա ճաշացանկը բաղկացած է միայն բուսական մթերքից;
6. Սնունդը պարունակում է ոչ ավելի, քան 30% ճարպից ստացված ընդհանուր կալորիաներ, ոչ ավելի, քան 10%՝ հագեցած ճարպից, և չկան ավելացված տրանս ճարպեր;
7. Սնունդը չի պարունակում արհեստական գույներ, համեր, նատրիումի գլուտամատ (MSG), նիտրատներ կամ սուլֆիտներ;
8. Հաշվի է առնվում աշակերտների կարծիքը՝ ճաշացանկի բոլոր հնարավոր կերակրատեսակների համտեսի արդյունքում, և ճաշացանկում տեղադրվում են միայն աշակերտների կողմից բարձր գնահատված կերակրատեսակները:

Եթե երեխային անհրաժեշտ է հատուկ սննդակարգ կամ կերակրի ծառայության հատուկ կարիքներ, ապա ծնողներին/օրինական խնամակալներին խնդրում ենք ձեռք բերել «Լոս Անջելեսի միացյալ շրջանի հատուկ սննդակարգ պահանջելու համար բժշկական հայտարարության» ձևը՝ Սննդի ծառայության կառավարչից կամ դպրոցի բուժաշխատողից, կամ վերկայքում՝ https://achieve.lausd.net/cafela: Հետևյալ ձևերը և տեղեկությունները կարող եք գտնել Nutritional Information and Special Needs հղումով Menu էջի տակ՝

1. Լոս Անջելեսի միացյալ շրջանի բժշկական տեղեկանքը հատուկ սնունդ պահանջելու համար;
2. Ծնողի/օրինական խնամակալի դիմումը սոյայի կաթը հեղուկ կաթով փոխարինելու համար;
3. Սննդի անալիզ;
4. Ածխաջրերի հաշվարկ;
5. Սննդային ալերգենների և բաղադրության ցանկ:

Եթե ծնողները/խնամակալներն ունեն որևէ հարց հատուկ սննդակարգի կամ ճաշացանկերի վերաբերյալ, խնդրում ենք կապվել Տարածաշրջանային գրասենյակի սննդագետի հետ:

Կոնտակտային տվյալներ	Շրջանի մասնաճյուղ	Էլ.փոստ	Հեռախոս
Homa Hashemi, R.D. ավագ սննդդագետ	Արևելք	homa.hashemi@lausd.net	(213) 241-2969
Kim Nguyen սննդագետ	Հյուսիս	lduyen.nguyen@lausd.net	(213) 241-2988
Kayley Drain սննդագետ	Հարավ	kayley.drain@lausd.net	(213) 241-2994
Ivy Marx, R.D. ավագ սննդագետ	Արևմուտք	ivy.marx@lausd.net	(213) 241-1064

FNS սնուցման աջակցության բոլոր այլ ծրագրերի համար պետական կամ տեղական գործակալությունները և նրանց ենթասպասարկողները պետք է տեղադրեն հետևյալ խտրականության դեմ հայտարարությունը.

Համաձայն քաղաքացիական իրավունքների դաշնային օրենքի և ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի (USDA) քաղաքացիական իրավունքների կանոնակարգերի և քաղաքականության՝ այս հաստատությանը արգելվում է խտրականություն դրսևորել ըստ ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, սեռի (ներառյալ գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման), հաշմանդամության, տարիքի, կամ հաշվեհարդար տեսնել կամ վրեժխնդրություն՝ քաղաքացիական իրավունքների նախկին գործունեության համար:

Ծրագրի մասին տեղեկատվությունը կարող է հասանելի լինել անգլերենից բացի այլ լեզուներով: Հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր կարիք ունեն հաղորդակցման այլընտրանքային միջոցներ ծրագրի մասին տեղեկատվություն ստանալու համար (օրինակ՝ Բրայլ, խոշոր տպագիր, աուդիո ձայնագրություն, ամերիկյան ժեստերի լեզու), պետք է կապ հաստատեն պատասխանատու պետական կամ տեղական գործակալության հետ, որը կառավարում է ծրագիրը, կամ USDA-ի TARGET կենտրոնի հետ՝ (202) 720-2600 հեռախոսահամարով (ձայնային և TTY), կամ կապվեն USDA-ի հետ Դաշնային փոխանցման ծառայության միջոցով (800) 877-8339:

Ծրագրի վերաբերյալ խտրականության մասին բողոք ներկայացնելու համար բողոքատուն պետք է լրացնի AD-3027 ձևը, USDA ծրագրի վերաբերյալ խտրականության բողոքի ձևը, որը կարելի է ձեռք բերել առցանց՝ https://www.usda.gov/sites/default/files/documents/ad-3027.pdf, USDA-ի ցանկացած գրասենյակից՝ զանգահարելով (866) 632-9992 հեռախոսահամարով կամ նամակ գրելով USDA-ին: Նամակը պետք է պարունակի բողոքատուի անունը, հասցեն, հեռախոսահամարը և ենթադրյալ խտրական գործողության գրավոր նկարագրությունը՝ բավական մանրամասն՝ քաղաքացիական իրավունքների հարցերով քարտուղարի օգնականին (ASCR) տեղեկացնելու քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման բնույթի և ամսաթվի մասին: Լրացված AD-3027 ձևաթուղթը կամ նամակը պետք է ներկայացվի USDA հետևյալ եղանակներով՝

1. **Փոստ՝** U.S. Department of Agriculture
   Office of the Assistant Secretary for Civil Rights
   1400 Independence Avenue, SW
   Washington, D.C. 20250-9410; կամ
2. **Ֆաքս՝** (833) 256-1665 կամ (202) 690-7442; կամ
3. **Էլ. փոստ՝** Program.Intake@usda.gov

Տվիալ հաստատությունը հավասար հնարավորություններ տրամադրող գործատու է:

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի քաղաքականություն ծնողների և ընտանիքի ներգրավման վերաբերյալ
Լոս Անջելեսի միացյալ շրջանն ընդունում է, որ, երբ դպրոցները և ծնողները/օրինական խնամակալները կազմում են ամուր գործընկերություններ, ապա ուսման մեջ հաջողության հասնելու երեխաների ներուժը զգալիորեն բարելավվում է: Կիրառելի օրենքները, Շրջանի քաղաքականությունը և Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Ծնողները՝ որպես հավասար գործընկերներ» խորհրդի որոշումը, որը պարունակում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի ծնողների իրավունքների և պարտականությունների օրինագիծը, ուղղորդում են բոլոր դպրոցների և Շրջանի գործելակերպը՝ կապված ընտանիքների ներգրավվածության հետ իրենց երեխաների կրթության մեջ: Դպրոցի անձնակազմը և ընտանիքները կարող են այցելել https://achieve.lausd.net/Page/9651՝ դիտելու Լոս Անջելեսի միացյալ շրջանի ծնողների և ընտանիքի ներգրավման քաղաքականությունը Title 1 դպրոցների համար: Աշխատակազմի և ընտանիքների համար ծնողների ներգրավվածության քաղաքականության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հղումով՝ https://achieve.lausd.net/pcss:

Հարգանք հայացքների հանդեպ
Լոս Անջելեսի միացյալ շրջանն առաջարկում է ծնողներին/օրինական խնամակալներին առաջնորդելու տարբեր հնարավորություններ: Յուրաքանչյուր դպրոց, որը ստանում է դաշնային միջոցներ, ստեղծում է Դպրոցի խորհուրդ (SSC): Որպես SSC-ի անդամներ, ծնողները/օրինական խնամակալները ներգրավված են դպրոցի կրթական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման, այս ծրագրին աջակցելու համար կատեգորիալ միջոցների օգտագործման և երեխաների կրթության մեջ ծնողների/օրինական խնամակալների ներգրավման ծրագրի գործընթացներում: Բացի այդ, բոլոր դպրոցները, որտեղ 21 և ավելի անգլերեն սովորող (EL) աշակերտներ կան, չներառյալ Վերադասակարգված սահուն անգլերենի իմացությամբ (RFEP) աշակերտները, պարտավոր են ստեղծել Անգլերեն սովորողների խորհրդատվական կոմիտե (ELAC): Անդամներն ընտրվում են ուսումնական տարվա սկզբում դպրոցական խորհուրդների և հանձնաժողովների համար, և երբ կան թափուր տեղեր: Շրջանը պետք է նաև ստեղծի Անգլերեն սովորողների շրջանային խորհրդատվական կոմիտե (DELAC), որը բաղկացած է ELAC-ի նախագահներից ողջ Շրջանից: Բացի DELAC-ից, կան նաև երկու (2) Շրջանային մակարդակի հանձնաժողովներ, որտեղ անդամները հավաքվում են՝ ծանոթանալու Շրջանի ծրագրերին և ծառայություններին, և նրանք առաջարկում են Շրջանին իրենց մեկնաբանությունները: Երկրորդ կոմիտեն Համայնքային խորհրդատվական կոմիտեն է (CAC), որտեղ իրավասու անդամները ներկայացնում են դիմում, որը վերանայվում է անդամակցության համար: Իրավասու ներկայացուցիչներ ներառում են աշակերտներ, հատուկ կարիքներ ունեցող աշակերտների ծնողներ/ օրինական խնամակալներ: CAC-ն առաջարկում է մեկնաբանություններ, որոնք համահունչ են Հատուկ կրթության տեղական տարածքային ծրագրին: Շրջանային մակարդակի երրորդ կոմիտեն Ծնողների խորհրդատվական կոմիտեն է, որն առաջարկում է մեկնաբանություններ Շրջանի Տեղական վերահսկողության և հաշվետվողականության պլանի (LCAP) համար: Անդամներն ընտրվում են LCAP ուսումնական խմբերի նիստերի ժամանակ, որոնք անց են կացվում տարածաշրջաններում՝ տարվա երկրորդ հանդիպման ժամանակ: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/Page/9648:

Ամեն տարի բոլոր ծնողները/օրինական խնամակալները «Դպրոցական փորձի մասին հարցման» միջոցով Լոս Անջելեսի միացյալ շրջանին տրամադրում են տեղեկություն տարբեր հարցերի վերաբերյալ իրենց ընկալումների մասին, այդ թվում՝ այն մասին, թե դպրոցներում որքանով են ողջունում իրենց՝ որպես գործընկերներ: Դպրոցական փորձի մասին հարցումն անց է կացվում աշնանը: Տեղեկությունը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/Page/8397:

Եթե ծնողները/օրինական խնամակալները ունեն հարցեր, մտահոգություններ կամ բողոքներ, նրանք կարող են դիմել դպրոց: Բողոքի միասնական ընթացակարգին (UCP) (բողոքներ խտրականության, ահաբեկման և այլ հարցերի վերաբերյալ) պատկանող գործերի համար կարելի է պաշտոնական բողոք ներկայացնել: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք տեսնել այս ձեռնարկի UCP բաժինը կամ կապվել Կրթական հավասարությանը համապատասխանության գրասենյակ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ էլ. փոստով EquityCompliance@lausd.net հասցեով:

Խնդրում ենք այցելել https://schooldirectory.lausd.net/schooldirectory/՝ դպրոցի նպատակների, ծրագրերի, ֆինանսավորման, ծառայությունների և ցանկացած լրացուցիչ տեղեկատվության մասին իմանալու համար: Որոնեք դպրոցը և սեղմեք Budget Availability Report:

Հարաբերությունների ամրապնդում
Ծնողները/օրինական խնամակալները հնարավորություն ունեն մասնակցելու սեմինարներին, որոնք ուղված են աջակցելու աշակերտի ուսմանը տան պայմաններում, շրջանի և նահանգի առաջնահերթություններին կամ նախաձեռնություններին վերաբերող սեմինարներին, ինչպես նաև ծնողների/օրինական խնամակալների առաջնորդության և հզորացման սեմինարներին: Բոլոր ծնողները/օրինական խնամակալները, ներառյալ նրանք, ովքեր հանդիսանում են այն

աշակերտների ծնողներ/օրինական խնամակալներ, ովքեր անգլերեն սովորողներ են, միգրանտ ընտանիքներից են կամ հաշմանդամություն ունեցող են, ունեն հասանելիություն դպրոցական գործունեությանը և ծրագրերին: Կան ուսուցման հնարավորություններ, ներառյալ ուսումնական խմբերը և հանդիպումները տարածաշրջաններում, ինչպես նաև դպրոցներում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք դպրոց կամ այցելեք՝ https://achieve.lausd.net/Page/9651: Տարածաշրջանային Ծնողների և համայնքի ներգրավվածության թիմի հետ կապվելու համար այցելեք՝ https://achieve.lausd.net/regions: Բացի այդ, Հատուկ կրթության բաժինը տրամադրում է անվճար ռեսուրսներ հաշմանդամություն ունեցող աշակերտների ծնողների/օրինական խնամակալների համար՝ ներառյալ նրանց տեղեկատվություն առաջարկելը աշակերտի կրթության և ներգրավվելու ուղիների մասին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայություններին (213) 241-6701 հեռախոսահամարով:

Ծնողներ-կամավորներ
Լոս Անջելեսի միացյալ շրջանը գնահատում է կամավորներին որպես կարևոր գործընկերներ տան և դպրոցի միջև հաղորդակցության ամրապնդման և աշակերտի ձեռքբերումներին աջակցելու գործում: Ծնողները/օրինական խնամակալները կարող են պահանջել կամավոր տրամադրել իրենց ժամանակը և ռեսուրսները դպրոցական ծրագրերի և հարմարությունների բարելավման համար՝ Շրջանի աշխատակիցների հսկողության ներքո [EC-ի բաժին 51101(a)(3)]: Դպրոցի կամավորներն աջակցում են դպրոցներին՝ աջակցություն ցուցաբերելով ուսուցիչներին և այլ աշխատակիցներին տարբեր գործողությունների միջոցով, ինչպես հեռակա, այնպես էլ անձամբ: Առցանց դիմումի հետ կապված օգնության կարիք ունեցող ծնողները/օրինական խնամակալները կարող են դա խնդրել դպրոցից: Ծնողները/օրինական խնամակալները կարող են նաև մուտք գործել Կամավորների կառավարման առցանց համակարգ Ծնողների պորտալի միջոցով: Կամավորական ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների և դիմում ներկայացնելու ընթացքում պահանջվող տեղեկությունների համար նախ դիմեք դպրոց, կամ այցելեք Աշակերտների, ընտանիքի և համայնքի ներգրավվածության գրասենյակի կայքը՝ https://achieve.lausd.net/volunteer:

Ընտանեկան ակադեմիա
Ընտանեկան ակադեմիան նախատեսված է օգտագործելու ընտանիքների առժանիքները, որպեսզի նրանք հզորացվեն, քանի որ ընտանիքները աջակցում են իրենց երեխային վաղ տարիներից մինչև քոլեջ և կարիերայի հաջող սկիզբ: Այս ջանքերը կլրացնեն ընտանեկան գիտելիքները՝ դրանք կապելով իրենց երեխայի զարգացման համար գործող ուսուցման, ինչպես նաև իրենց կարիերան և կյանքի որակը բարելավելու հնարավորության հետ: Ընտանիքները կարող են այցելել https://achieve.lausd.net/familyacademy՝ դիտելու և ներբեռնելու վերին նարների և անհատական միջոցառումների ցանկը: Այցելեք Ընտանեկան ակադեմիայի կայքը նաև՝ գրանցվելու Equity Course Pathway-ում, 7 դասից բաղկացած դասընթաց, որտեղ ընտանիքները սովորում են խմբերով և ներգրավվում են մշակութային համապատասխան ուսումնական ծրագրերում, սահմանում են ընտանիքի ներգրավվածությունը և մշակում իրենց գործողությունների ծրագիրը՝ երեխաների կրթության մեջ ներգրավված մնալու համար: Դասընթացները մասնակիցներին հնարավորություն են տալիս կիսվելու նախնական գիտելիքներով և ապրած փորձով՝ միաժամանակ խթանելով ակտիվ երկկողմանի փոխգործակցությունը և ցուցադրելով ուսուցման կիրառումը: Ընտրեք չորս (4) ուղիներից մեկը (1)՝ բազմալեզու սովորողներ, սև ամորթ և աֆրոամերիկացի սովորողներ, ամենաերիտասարդ սովորողներ և հատուկ կարիքներով սովորողներ:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ ՇՐՋԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԵԺ ԳԻԾ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը պարտավորվում է տրամադրել բացառիկ սպասարկում ծնողներին/օրինական խնամակալներին, համայնքի անդամներին և աշխատակիցներին: Օգնության գրասենյակը տեղեկատվություն և օգնություն է տրամադրում բոլոր ոլորտներում, որոնք վերաբերում են Լոս Անջելեսի միացյալ շրջանի ընտանիքներին, համայնքներին և աշխատակիցներին: Ծնողների/օրինական խնամակալների և համայնքի անդամների համար Ընտանեկան թեժ գիծը հասանելի է (213) 443-1300 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 6:00-ից մինչև 18:00:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ

Հատկապես ծնողների համար (ներառյալ օրինական խնամակալները և կրթության իրավունք ունեցողները). «*Յուրաքանչյուր աշակերտի հաջողության*» ակտի 1116-րդ բաժին «Ծնողների և ընտանիքի ներգրավվածություն»-ի համաձայն՝ ընտանիքները պետք է ունենան «ողջամիտ հասանելիություն անձնակազմին, կամավոր լինելու և իրենց երեխայի դասերին մասնակցելու հնարավորություններին: Կալիֆորնիայի Կրթական օրենսգրքի 51101 հոդվածի համաձայն՝ ծնողների իրավունքները սահմանում են, որ ծնողների դասարանի դիտարկումները պետք է լինեն «դիմելուց հետո ողջամիտ ժամկետում, դիտարկելու այն դասարանը կամ դասարանները, որտեղ իրենց երեխան ընդգրկված է, կամ դպրոցն ընտրելու նպատակով, որտեղ նրանց երեխան կգրանցվի՝ համաձայն ցանկացած Ներշրջանային կամ միջշրջանային աշակերտների հաճախումների քաղաքականության կամ ծրագրի պահանջների»: Դպրոցները չպետք է կամայական ժամանակային սահմանափակումներ անեն:

ԴՊՐՈՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

Շրջանը պետք է ամեն տարի թողարկի Դպրոցի հաշվետվության քարտ (SARC) յուրաքանչյուր դպրոցի համար (EC Բաժին 35256): SARC-ը հրապարակվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա փետրվարի 1-ին: Պատճենը հասանելի է ըստ պահանջի դպրոցում և հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/SARC:

«ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ Է ՀԱՄՆՈՒՄ» ԱԿՏԸ: TITLE 1-Ի ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾՆՈՂԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում Title I-ի դրամական միջոցներ ստացած տեղական կրթական հաստատություններից պահանջվում է ծանուցել ծնողներին/օրինական խնամակալներին, ում աշակերտ(ներ)ը հաճախում են Title 1-ի դպրոց, որ նրանք կարող են պահանջել և ստանալ ժամանակին աշակերտի ուսուցիչների մասնագիտական որակավորումների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ առնվազն այն տեղեկությունը, թե արդյո՞ք ուսուցիչը՝

1. Համապատասխանեցվել է նահանգային որակավորման և լիցենզավորման չափանիշներին՝ դասարանի մակարդակների և առարկայական այն ոլորտների համար, որտեղ ուսուցիչը դասավանդում է;
2. Դասավանդում է արտակարգ իրավիճակների ներքո կամ այլ ժամանակավոր կարգավիճակում (օրինակ՝ Ժամանակավոր պրակտիկանտի թույլտվություն);
3. Դասավանդում է այն առարկայի բնագավառում, որի համար դասավանդման վկայագիր:

Բացի այդ, Title 1 դպրոց հաճախող աշակերտների ծնողները/օրինական խնամակալները կարող են պահանջել աշակերտին սպասարկող ուսուցչի օգնականների (TA) որակավորում: TA որակավորումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ https://achieve.lausd.net/Page/13604: Լոս Անջելեսի միացյալ շրջանը կարող է աշխատանքի ընդունել ցանկացած որակավորված անձի, ով ունի ժամանակավոր վկայական՝ որպես TA ծառայելու համար (EC-ի բաժին 44926): Բոլոր TA-ները պետք է գրանցված լինեն որպես աշակերտ քոլեջում կամ համալսարանում:

Եթե ծնողները/օրինական խնամակալները ցանկանում են տեղեկություններ ուսուցիչների և/կամ ՏԱ-ների մասնագիտական որակավորումների վերաբերյալ, նրանք կարող են կապվել դպրոց և տեղեկացնել նրանց, որ դիմում են «Ծնողների իմացության իրավունքի» վերաբերյալ և նշել, թե ում մասնագիտական որակավորումներն են նրանք շահագրգռված ստանալ:

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (SFSS)

Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայությունները (SFSS) հանձնառու են հաշմանդամություն ունեցող աշակերտների ընտանիքներին տրամադրել տեղեկատվություն, օգնություն և միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրենց երեխաների կրթության իմաստալից մասնակիցներ դառնալու համար: SFSS-ն արձագանքում է հատուկ կրթության հետ կապված բոլոր հարցումներին և նպաստում է Շրջանի աշխատակազմի, աշակերտների և ծնողների/օրինական խնամակալների համագործակցությանը՝ հատուկ կրթության հետ կապված խնդիրների լուծմանն աջակցելու համար:

Բացի այդ, SFSS-ն ուսումնասիրում է ծնողների բողոքները՝ հատուկ կրթության ենթադրյալ խախտումների վերաբերյալ, որպեսզի Շրջանին հնարավորություն տա լուծելու այդ բողոքները և նվազեցնել ծնողների/օրինական խնամակալների արտաքին բողոքների մեխանիզմներ որոնելու կարիքը: «Բողոքը» դա Հաշմանդամություն ունեցող անհատների կրթության մասին ակտի (IDEA), Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի, հատուկ կրթության և դրա իրականացման կանոնակարգերի հետ կապված խախտում է: SFSS-ը նպաստում է Շրջանի աշխատակիցների և ծնողների/օրինական խնամակալների համագործակցությանը՝ ժամանակին օրինական լուծում տալու համար: «Լուծումը» կարող է լինել (1) հատուկ գործողություն, որը իրականացվում է դպրոցի կամ Շրջանի այլ վարչության կողմից, որը տրամադրում է համապատասխան միջոց, կամ (2) առաջարկվող հետագա քայլեր, որոնք ծնողը/օրինական խնամակալը կարող է ընտրել, եթե որոշվի, որ հատուկ կրթության խախտում տեղի չի ունեցել:

Տեղեկությունների կամ աջակցություն ստանալու համար խնդրում ենք դիմել Հատուկ կրթության, դպրոցի և ընտանիքների աջակցության ծառայությունների բաժին՝(213) 241-6701 հեռախոսահամարով:

ԾՆՈՂՆԵՐԻ ՊՈՐՏԱԼ

Ծնողների պորտալը մեկանգամյա առցանց համակարգ է, որը հասանելի է 24/7: Կայքը արդիականացվել է մինչև նոր վեր և հավելվածային հարթակի: Բոլոր ծնողները/օրինական խնամակալները պետք է գրանցվեն Լոս Անջելեսի միասնական ծնողական պորտալում, որն ապահով կերպով կապում է նրանց գործիքներին և աշակերտի դպրոցական գրառումներին, որոնք կօգնեն նրանց աջակցել աշակերտի ակադեմիական հաջողություններին: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/parentportal:

Գրանցվելու համար կայքում՝ https://parentportalapp.lausd.net, ձեզ անհրաժեշտ է հետևյալը՝

1. Անձնական էլ. փոստի հասցե;
2. Օգտագործողի անուն և գաղտնաբառ (ձեր ընտրությամբ);
3. Աշակերտի չորս թվանշանով անվտանգության կոդը (PIN կոդը, որն ուղարկվում է ԱՄՆ-ի փոստով կամ կարելի է վերցնել դպրոցից);
4. Աշակերտի ծննդյան ամսաթիվը;
5. Աշակերտի Շրջանի ID համարը:

Ընթացիկ տվյալները, որոնք հասանելի են ծնողներին, ներառում են՝

1. Հաճախումներ և դասացուցակ;
2. Գնահատականներ և առաջադրանքներ;
3. Անհատական կրթական ծրագրեր (IEPs) (Հատուկ կրթության աշակերտների համար):

Լրացուցիչ հնարավորությունների համար այցելեք՝ PASSport Module Information Short - Անգլերեն/Իսպաներեն :

Ծնողները/օրինական խնամակալները կարող են օգտագործել իրենց ծնողական պորտալի տվյալները՝ Շրջանի անլար ցանցին միանալու համար, երբ գտնվում են իրենց աշակերտների կամպուսներում:

ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

Ծնողներին/օրինական խնամակալներին հասանելի է հեշտ օգտագործվող դպրոցի բջջային սմարթֆոնի հավելվածը (App), որը տրամադրում է իրական ժամանակում թարմացվող տեղեկություն աշակերտի գնահատականների, հանձնարարությունների, հաճախման, դպրոցական միջոցառումների, Շրջանի օրացույցի, ճաշարանի մենյուի, ավտոբուսի երթուղիների և ուշացումների մասին: Հավելվածը հասանելի է անգլերեն, իսպաներեն և կորեերեն լեզուներով: Լոս Անջելեսի միացյալ շրջանի Բջջային հավելվածը կարելի է գտնել App Store-ում LAUSD անվանումով:

BLACKBOARD CONNECT ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Լոս Անջելեսի միացյալ շրջանն օգտագործում է շրջանի ծանուցման համակարգ, որը կոչվում է Blackboard Connect (BBC)՝ ծնողների/օրինական խնամակալների և աշխատակիցների հետ շփվելու արտակարգ իրավիճակների, հաճախումների, դպրոցական միջոցառումների և ծնողների/օրինական խնամակալների և աշակերտի վրա ազդող այլ կարևոր խնդիրների վերաբերյալ: BBC-ի ծառայությունը թույլ է տալիս Լոս Անջելեսի միացյալ շրջանին անհատական ձայնային հաղորդագրություններ ուղարկել ընտանիքի տուն, աշխատավայր կամ բջջային հեռախոսներին, նաև հաղորդակցություն էլփոստի, տեքստային հաղորդագրությունների և սոցիալական ցանցերի միջոցով: Ծնողները/օրինական խնամակալները պատասխանատու են SMS-ներին վերաբերող ծախսերի համար: Ծնողները/օրինական խնամակալները կարող են նշել, թե որ հեռախոսով են ցանկանում ստանալ ընդհանուր ծանուցումներ, հաճախումների և արտակարգ իրավիճակների մասին հաղորդումներ՝ լրացնելով Աշակերտի արտակարգ իրավիճակների ձևը: Լոս Անջելեսի միացյալ շրջանն ի վիճակի է մի քանի րոպեների ընթացքում հասնել յուրաքանչյուրին Շրջանում՝ հիմնվելով BBC-ի հնարավորությունների վրա: Ծնողներին/օրինական խնամակալներին ավելի տեղեկացված և ներգրավված պահելը հանգեցնում է աշակերտի բարձր առաջադիմության և աշակերտի անվտանգության: Խնդրում ենք օգնել մեզ՝ տրամադրելով մեզ ընթացիկ կոնտակտային տվյալներ՝ լրացնելով Աշակերտների արտակարգ իրավիճակների ձևը https://achieve.lausd.net/Page/9244 վեր էջում: Եթե կոնտակտային տվյալները փոխվեն կամ պետք է շտկվեն, խնդրում ենք ուղղակիորեն կապվել դպրոցի հետ:

Ի՞նչ համարներ պետք է տրամադրեմ Blackboard Connect-ի համար

Լինում են բազմաթիվ դեպքեր, երբ դպրոցը փորձում է դիմել ծնողներին/օրինական խնամակալներին.

1. **Ընդհանուր** ծանուցման հաղորդագրություններն ուղարկվում են օրվա ընթացքում: Այս հաղորդագրությունները ոչ արտակարգ իրավիճակային բնույթի են և ծանուցում են մոտեցող միջոցառումների կամ հիշեցումների վերաբերյալ;
2. **Հաճախման** վերաբերյալ հաղորդագրությունները սովորաբար ուղարկվում են առավոտյան և վաղ երեկոյան ժամերին: Այս հաղորդագրություններն ուղարկվում են, որպեսզի տեղեկացնեն ծնողներին/օրինական խնամակալներին, որ երեխան ունի անհարգելի բացակայություն կամ ուշացում մեկ (1) կամ մի քանի դասից, կամ՝ բացակա էր ողջ օրը: Ամենահարմար հեռախոսահամարը ցերեկային հեռախոսահամարն է: Աշխատող ծնողներին/օրինական խնամակալներին խրախուսում ենք տրամադրել իրենց աշխատանքային կամ բջջային հեռախոսահամարը: Խորհուրդ է տրվում, որ հաճախումների համար տրված հեռախոսահամարը չլինի տան հեռախոսահամարը, եթե օրվա ընթացքում տանը ոչ ոք չի լինում;
3. **Արտակարգ** իրավիճակների վերաբերյալ ծանուցման հաղորդագրությունները արտակարգ բնույթի են և ուղարկվում են, երբ դա հիմնավորված է: Ծնողները/օրինական խնամակալները պետք է տրամադրեն այն հեռախոսահամարը, որով նրանց հետ կապվելը մեծ մասամբ արթուն եղած ժամերի ընթացքում ամենահավանականն է: Blackboard Connect-ը կգանգահարի ծանուցման համակարգում պահվող բոլոր հեռախոսահամարներով, ներառյալ՝ ընդհանուր և հաճախման ծանուցումների համարներով՝ ծնողների/օրինական խնամակալների հետ կապ հաստատելը երաշխավորելու համար: Այս հեռախոսահամարը պետք է լինի ծնողինը/խնամակալինը և ոչ թե՝ աշակերտի արտակարգ իրավիճակի ձևում եղած այլընտրանքային կոնտակտները: Եթե դպրոցին չհաջողվի կապ հաստատել ծնողի/օրինական խնամակալի հետ, ապա կօգտագործվեն աշակերտի արտակարգ իրավիճակի ձևում եղած այլընտրանքային կոնտակտները;
4. **Ուսուցչի** հաղորդագրությունները ուղարկվում են ծնողներին/օրինական խնամակալներին՝ տեղեկացնելու համար երեխայի ակադեմիական կարգավիճակի, ընդհանուր վարքային, աշխատանքային սովորությունների և դասարանի վերաբերյալ հիշեցումների և ծանուցումների վերաբերյալ: Այս հաղորդագրությունները ուղարկվում են հեռախոսի, էլ. փոստի կամ տեքստային հաղորդագրության միջոցով և օգտագործվում է տրամադրված ընդհանուր հեռախոսահամարը:

Պե՞տք է էլփոստի հասցե տրամադրեմ Blackboard Connect-ին:

1. Կան բազմաթիվ դեպքեր, երբ հաղորդագրությունները, որոնք ներառում են մուլտիմեդիա ռեսուրսներ, ինչպիսիք են տեղեկագրերը, տեսանյութերը և գրաֆիկական պատկերները, ուղարկվում են միայն էլ. փոստի միջոցով: Ապահովելու համար, որ ծնողները/օրինական խնամակալները կստանան այս հաղորդագրությունները, խնդրում ենք նաև տրամադրել դպրոցին առնվազն մեկ (1) էլ. հասցե:

Զանգերի վերաբերյալ կարևոր խորհուրդներ

1. Երբ զանգ է գալիս դպրոցից (կամ Լոս Անջելեսի միացյալ շրջանից), ապա զանգողի անվան դիմաց կհայտնվի դպրոցի (կամ Լոս Անջելեսի միացյալ շրջանի) հեռախոսի համարը;
2. Հաղորդագրություն լսելիս ետնաֆոնի աղմուկը կարող է ստիպել համակարգին դադար տալ և կրկին միանալ: Blackboard Connect ծանուցման համակարգը մանրակրկիտ կերպով կարգավորված է՝ որոշելու, թե արդյոք հաղորդագրությունը հասել է անձին, թե պատասխանող սարքին/ձայնային փոստին, իսկ ետնաֆոնի աղմուկը կարող է ազդել հաղորդագրության ուղարկման վրա: Հնարավորության դեպքում տեղափոխվեք լուռ տարածք կամ սեղմեք հեռախոսի լռեցման կոճակը;
3. Եթե բաց եք թողել հաղորդագրության որևէ մաս, խնդրում ենք մնալ կապի մեջ և հեռախոսի վրա սեղմել * (աստղանիշ) կոճակը՝ կրկին լսելու ամբողջ հաղորդագրությունը: Այլապես, ծնողները/օրինական խնամակալները կարող են կրկին լսել վերջին հաղորդագրությունները՝ զանգահարելով (855) 473-7529:

Ընդհանուր բնույթի ծանուցումներից հրաժարվելը

Յուրաքանչյուր ծնող կարող է հրաժարվել հեռախոսով, էլ. փոստով կամ տեքստային հաղորդագրության միջոցով ընդհանուր բնույթի ծանուցումներ ստանալուց.

1. Երբ զանգ եք ստանում, լսեք հաղորդագրության վերջում դրանցից հրաժարվելու մասին տեղեկությունը: Հաղորդագրությունները կրկին ստանալու նպատակով զանգահարեք (855) 502-7867 այն հեռախոսահամարից, որով նախկինում ստանում էիք զանգեր:
2. Տեքստային հաղորդագրություններից հրաժարվելու համար հետևեք տեքստային հաղորդագրության վերջում տրված հրահանգներին: Տեքստային հաղորդագրություններ կրկին ստանալու համար ուղարկեք «START LAUSD» 91841 համարին;
3. Էլեկտրոնային փոստի ստանալուց հրժարվելու համար հետևեք էլ. փոստի հաղորդագրության վերջում ցուցումներին: Էլ. փոստի հաղորդագրություններ կրկին ստանալու համար դիմեք Blackboard Connect-ի գրասենյակ:

Դա կազդի միայն ընդհանուր ծանուցումների վրա: Հաճախումների և շտապ օգնության հետ կապված զանգերի ուղարկումը կշարունակվի:

Խնդրում ենք ձեր երեխայի միջոցով դպրոց վերադարձնել «Աշակերտի արտակարգ իրավիճակների կոնտակտային տվյալների» լրացված ձևը, որքան հնարավոր է շուտ: Ձեր կոնտակտային տվյալների փոխոխության կամ ճշգրտման դեպքում անմիջապես կապվեք դպրոցի հետ: Միայն դպրոցը կարող է փոխել ձեր կոնտակտային տվյալները: Ծնողների/օրինական խնամակալների համար շտապ օգնության հեռախոսահամարը կարող է փոխվել Ծնողների պորտալի միջոցով՝ https://achieve.lausd.net/parentportal:

Կարևոր է, որ դպրոցն ունենա ձեր ներկայիս տվյալները, որպեսզի կարողանաք ստանալ կարևոր հաղորդագրություններ: Անձնական բոլոր տվյալները պահվում են խստագույնս գաղտնի և Լոս Անջելեսի միացյալ շրջանի անվտանգության քաղաքականությանը համապատասխան:

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ HELPDESK

Լոս Անջելեսի միացյալ շրջանը պարտավորվում է տրամադրել հաճախորդների բացառիկ սպասարկում Շրջանի գլխավոր հեռախոսահամարով (213) 241-1000 բոլոր զանգահարողներին և Լոս Անջելեսի միացյալ գլխամասային գրասենյակի բոլոր այցելուներին: Շրջանի սպասարկման կենտրոնը, որը գործում է երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 07:00-ից մինչև 17:00-ը, հասանելի է Լոս Անջելեսի համապատասխան գրասենյակ զանգահարողներին օգնելու համար:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը պարտավորվում է տրամադրել բացառիկ հաճախորդների սպասարկում ծնողներին/օրինական խնամակալներին, համայնքի անդամներին և աշխատակիցներին: Helpdesk-ը տրամադրում է տեղեկատվություն և օգնություն բոլոր ոլորտներում, որոնք վերաբերում են Լոս Անջելեսի միացյալ շրջան ընտանիքներին, համայնքին և աշխատակիցներին: Ծնողների/օրինական խնամակալների և համայնքի անդամների Helpdesk-ին կարող եք դիմել (213) 443-1300 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 06:00-ից մինչև 18:00-ը:

ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Որպես իրենց կրթության մաս՝ աշակերտներին տրամադրվում են նյութեր և սարքավորումներ, ներառյալ դասագրքեր և սարքեր, որոնք օգնում են ուսուցմանը: Գոյություն ունեն որոշակի ընթացակարգեր, որպեսզի Շրջանը պահպանի այդ նյութերը, և դրանք հասանելի լինեն բոլոր աշակերտներին: Աշակերտները պետք է խնամքով վերաբերվեն ուսումնական նյութերին, գրադարանի գրքերին, սարքերին և դպրոցական այլ գույքին: Ստորև բերված են եղանակներ, որոնք կօգնեն ձեր աշակերտին հասկանալ այս պատասխանատվությունը՝

1. Ուսուցողական նյութերի, գրադարանի գրքերի, սարքերի և դպրոցական այլ գույքի խնամքով վարման օրինակ ցուցաբերել;
2. Օգնել աշակերտներին փոխառության ժամանակահատվածում գտնել գրքեր պահելու ապահով վայր;
3. Տեղեկացնել աշակերտներին, որ վանդալիզմը ոչ միայն հանցագործություն է, այլև ծնողները/օրինական խնամակալները կարող են ֆինանսական պատասխանատվության ենթարկվել պատճառած վնասի համար:

Ծնողները/օրինական խնամակալները պետք է հնարավորինս շուտ դպրոցին տեղեկացնեն դպրոցի գույքի վնասման մասին: Եթե աշակերտի սարքը վնասված է, ապա նրան կտրամադրվի փոխարինող՝ վնասված սարքը վերադարձնելուց հետո՝ հասանելիությունն ապահովելու համար: Եթե աշակերտը միտումնավոր չի վերադարձնում սարքը կամ դիտավորյալ վնասում է դասագրքերը՝ կտրելով, վնասելով կամ այլ կերպ վնաս հասցնելով դպրոցի գույքին, ապա Քաղաքացիական օրենսգրքի և Կրթության օրենսգրքի, ինչպես նաև Շրջանի քաղաքականության համաձայն, ծնողները պատասխանատվություն են կրում դպրոցի գույքին, ներառյալ դասագրքերին և/կամ սարքերինն պատճառված վնասների համար: Քաղաքացիական Օրենսգրքի 1714.1 կետը նախատեսում է, որ անչափահասի ցանկացած միտումնավոր սխալ վարքագիծ, որը հանգեցնում է մեկ ուրիշի գույքին կամ անձին պատճառված վնասի, պետք է հանդիսանա ծնողի/օրինական խնամակալի պատասխանատվությունը, ով խնամում և վերահսկում է տվյալ անչափահասին բոլոր քաղաքացիական վնասների դեպքում, և խնամակալություն և վերահսկողություն ունեցող ծնողը/օրինական խնամակալը անչափահասի հետ միասնաբար և առանձին կերպով պատասխանատվություն է կրում ցանկացած վնասի համար, որն ի հայտ է եկել միտումնավոր սխալ վարքագծի արդյունքում և չի գերազանցում 25000 դոլար, բացի օրենքով այլ կերպ սահմանված պատասխանատվությունից: Կալիֆորնիայի EC-ի բաժին 48904 (a)(1)-ը նախատեսում է, որ անչափահասի ծնողը/օրինական խնամակալը պատասխանատվություն է կրում դպրոցական շրջանի առջև այն ամբողջ գույքի համար, որը փոխառվել է և չի վերադարձվել կամ միտումնավոր կերպով վնասվել է անչափահասի կողմից: Պատասխանատվությունը չպետք է գերազանցի 20900 դոլար՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ, որը, կախված ինֆլյացիայից, ճշգրտվում է ամեն տարի ՝ ըստ EC-ի բաժին 48904(a)(2)-ի: Ստանալով ծանուցումը՝ ծնողը/օրինական խնամակալը կարող է վերադարձնել գույքը կամ վճարել չվճարված պարտավորությունը: Եթե ծնողը/օրինական խնամակալը չի վերադարձնում գույքը կամ չի վճարում պարտքը, ապա Վնասահատուցման բաժնի կողմից ծնողի/խնամակալի դեմ կարող է հարուցվել փոքր պահանջատիրական հայց: Եթե ծնողը/օրինական խնամակալը չի կարող փոխհատուցել վճռված գումարը, ապա կարող է դիմել սեփականատեր-պարտապան լման համար: Սա օրենքի մի մասն է կազմում, քանի որ այդ իրերը գնում են պետական միջոցներով: Այնուամենայնիվ, ստորև ներկայացվում են կարևոր կետեր.

Դպրոցին ունեցած պարտքի պատճառով դպրոցը չպետք է բացասական քայլեր ձեռնարի աշակերտի կամ նախկին աշակերտի նկատմամբ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով ստորև նշվածով, բոլոր այն դեպքերում, որոնք չեն ենթադրում դիտավորյալ վնաս կամ կորուստ՝

1. Ամբողջական կրեդիտի մերժում դասի ցանկացած առաջադրանքի համար;
2. Դասարանային գործունեությանը լիարժեք և հավասար մասնակցության մերժում;
3. Կամպուսի կրթական հաստատությունների մուտքի մերժում, ներառյալ, բայց չսահմանափակվելով գրադարանով;
4. Գնահատականներ դնելու կամ պատճեններ տրամադրելու մերժում;
5. Դիպլոմ տրամադրելու մերժում;
6. Արտադպրոցական գործունեության, ակումբի կամ սպորտի մասնակցության սահմանափակում կամ արգելում;
7. Կրթական գործունեության, էքսկուրսիայի կամ դպրոցական արարողության մասնակցության սահմանափակում կամ բացառում:

Եթե դպրոցը պարզի, որ դպրոցի գույքը վնասվել է կամայական գործողությունների արդյունքում, դպրոցը կարող է՝

1. Ծնողին և աշակերտին առաջարկել այլընտրանք՝ գումարը վճարելու փոխարեն: Վճարման այլընտրանքները պետք է հաստատվեն ծնողի կողմից: Ցանկացած այլընտրանք, որը ներառում է ծառայություն կամ աշխատանք՝ վճարման փոխարեն, պետք է համապատասխանի Աշխատանքային օրենսգրքի բոլոր դրույթներին, ներառյալ՝ երիտասարդության զբաղվածությանը վերաբերող բաժիններին;
2. Տրամադրել մանրամասն հաշիվ-ապրանքագիր՝ ծնողի պարտքի գումարի համար;
3. Սահմանվել վճարման ծրագիր, և յուրաքանչյուր վճարումից հետո կտրամադրվի անդորրագիր:

Վճարման փոխարեն ծառայության կամ աշխատանքի օրինակները կարող են ներառել գրադարանային ծառայությունը, ծառայության ուսուցման նախագիծ կատարելը, առաջադրանքը կամ հետազոտական զեկույցը և այլն:

Ինչ կարող են ծնողներն անել արտակարգ իրավիճակի դեպքում
Ծնողները/օրինական խնամակալները պետք է ծանոթ լինեն դպրոցի արտակարգ իրավիճակների ընթացակարգերին, դիմեն դարպասների վայրերը տրամադրելու համար, և փոփոխության դեպքում թարմացնեն իրենց կոնտակտային տվյալները: Ծնողները/օրինական խնամակալները պետք է ստուգեն իրենց բջջային հեռախոսները՝ դպրոցից արտակարգ իրավիճակի վերաբերյալ հաղորդագրություններ ստանալու համար: Ծնողները/օրինական խնամակալները պետք է հիշեն, որ դպրոցներն ունեն տեղում արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգեր, որպեսզի պաշտպանեն բոլոր աշակերտներին, և, որ դպրոցները հետևելու են այս ընթացակարգերին՝ արտակարգ իրավիճակների դեպքում:

Ներբեռնեք անվճար Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Համայնքների արտակարգ իրավիճակների» ծրագիր հավելվածը՝ ծնողների/օրինական խնամակալների և աշակերտների համար՝ https://achieve.lausd.net/emergencyapps հղումով: Տեղեկություն այն մասին, թե ինչպես է Լոս Անջելեսի միացյալ շրջանը պատրաստվում և արձագանքում արտակարգ իրավիճակներին, հասանելի է https://parentemergencyinformation.lausd.net կայքում:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Երբեմն թղթակիցները և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչներ կարող են այցելել դպրոցներ՝ գրելու, լուսանկարելու կամ տեսանկարելու այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ սպորտային իրադարձություններ, դպրոցական ժողովներ, հատուկ ծրագրեր կամ լրատվական տեսանկյունից արժեք ներկայացնող դեպքեր: Աշակերտին լուսանկարելը պահանջում է ծնողի/օրինական խնամակալի թույլտվությունը: Ծնողները/օրինական խնամակալները ստորագրում են լիազորման և պատասխանատվությունից ազատման ձևաթուղթը, որը տուն է ուղարկում այս ձեռնարկի հետ՝ այդ մասին թույլտվություն ստանալու նպատակով: Հրապարակային լիազորման և պատասխանատվությունից ազատման ներառում է դպրոցների կամ Շրջանի կողմից լավ նորությունների հրապարակումը՝ lausd.net, Ֆեյսբուքի, Թվիթերի կամ այլ սոցիալական լրատվամիջոցների կայքերում: Այն ծնողները/օրինական խնամակալները, ովքեր չեն ցանկանում, որ իրենց երեխայից հարցազրույցվերցնեն, տեսանկարեն կամ լուսանկարեն, չպետք է ստորագրեն կամվերադարձնեն այդ ձևաթուղթը: Այդուհանդերձ, նույնիսկ ստորագրված ձևի դեպքում աշակերտները կարող են մերժել հարցազրույց տալը կամ լուսանկարվելը՝ այդ մասին հայտնելով ուսուցչին:

Հրապարակային լիազորման և պատասխանատվությունից ազատման ձևաթուղթը վերաբերում է միայն այն աշակերտներին, ովքեր գտնվում են դպրոցի տարածքում: Դպրոցի տարածքը լքելուց և հասարակական վայրում գտնվելիս, ինչպես օրինակ՝ մայթին, թղթակիցները և լուսանկարիչները հարցեր տալու կամ լուսանկարներ կամ տեսանյութեր անելու համար թույլտվություն հարցնելու կարիք չունեն: Այդ պատճառով՝ ամենից լավ կլինի խոսել երեխայի հետ, որպեսզի նա նախապես իմանա ձեր նախընտրության մասին, եթե հայտնվի նման իրավիճակում: Ձևը հասանելի է նաև հետևյալ հասցեով՝ https://bit.ly/3sDkUcE:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ԴՊՐՈՑ

6-ից 18 տարեկան յուրաքանչյուր անձ, ով ազատված չէ ուսուցումից, ենթակա է պարտադիր ցերեկային կրթություն ստանալուն, և յուրաքանչյուր ծնող/օրինական խնամակալ կամ այլ անձ, ով վերահսկում է աշակերտին կամ պատասխանատու է նրա համար, պետք է աշակերտին ուղարկի նրա բնակության վայրում գտնվող պարտադիր ցերեկային ուսուցման դպրոց կամ շարունակական ուսուցման դպրոց կամ դասերի՝ իր բնակության վայրում՝ այն լրիվ ժամանակով, որը սահմանված է որպես դպրոցական օրվա տևողություն (EC-ի բաժին 48200): Եթե ծնողներն ամուսնալուծված են, իրավական կարգով բաժանված են, կամ ամուսնացած չեն և ապրում են առանձին, ապա աշակերտը կարող է հաճախել ծնողներից որևէ մեկի բնակության վայրում գտնվող դպրոցը: Կրկնակի ընդգրկումը դպրոցներում խստորեն արգելվում է, և կարող է լինել միայն մեկ (1) գրանցված բնակության վայր [Կառավարության օրենսգրքի բաժին 244(b)]: Դպրոցներն ունեն բնակության վայրը ստուգելու պարտականություն: Դպրոցներն ընդունում են մի շարք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս երեխայի տարիքը կամ բնակության վայրը: Ծնողները/օրինական խնամակալները երբեք պարտավոր չեն տեղեկություն տրամադրել իրենց քաղաքացիության/ներգաղթի կարգավիճակի մասին, որպեսզի երեխան դպրոցում գրանցվի: Ծնողները/օրինական խնամակալները երբեք պարտավոր չեն տրամադրել սոցիալական ապահովության համարը, որպեսզի երեխան գրանցվի դպրոցում: Այն դեպքերում, երբ ծնողները/օրինական խնամակալները ի վիճակի չեն տրամադրել երեխայի բնակության վայրը հավաստող փաստաթղթեր, ապա բնակությունը ստուգելու նպատակով կօգտագործվի գրավոր վկայություն տալու ձևը: Բնակության վայրի վերաբերյալ փաստաթղթերը տրամադրելու համար ծնողները/խնամակալներն ունեն 30 օր ժամանակ՝ երեխային դպրոցում գրանցելու օրվանից սկսած:

Այն աշակերտը, որը չի ապրում իր ծնողի/օրինական խնամակալի հետ, կարող է հաճախել շրջանի սահմաններում գտնվող դպրոց, եթե նա հանդիսանում է՝

1. Աշակերտ, ով գրանցված է երեխաների համար կանոնավոր հաստատված լիցենզավորված հաստատությունում, լիցենզավորված խնամատարի տանը կամ ընտանիքում՝ ըստ «Բարեկեցության և հաստատությունների մասին» օրենսգրքի: Պատասխանատու չափահաս անձը կամ խնամակալը պետք է այդ գրանցման մասին ապացույց ներկայացնի դպրոց;
2. առանց ուղեկցի անօթևան երիտասարդ;
3. աշակերտ, ում համար միջշրջանային հաճախումը հաստատվել է;
4. ծնողական խնամքից զերծ անչափահաս, ում բնակության վայրը գտնվում է դպրոցական շրջանի սահմաններում;
5. աշակերտ, ով բնակվում է նահանգային հիվանդանոցում, որը գտնվում է դպրոցական շրջանի սահմաններում;
6. աշակերտ, ով ապրում է խնամատու մեծահասակի հետ (ենթակա է ստուգման՝ դպրոցի կամ Շրջանի անձնակազմի կողմից):

Ակտիվ զինվորական ծառայություն իրականացնողի ընտանիքում ապրող աշակերտը կարող է շարունակել իր կրթությունը սկզբնական դպրոցում՝ անկախ ուսումնական տարվա ընթացքում բնակավայրի որևէ փոփոխությունից, քանի դեռ երեխան զինվորական ծառայություն իրականացնողի ընտանիքից է:

Երեխային պետք է թույլատրվի ընդգրկվել սննդային սխեմայի մեջ: Եթե զինվորական կարգավիճակը փոխվի, ապա K-ից 8-րդ դասարանների աշակերտները կարող են շարունակել մնալ մինչև ուսումնական տարվա ավարտը: Ավագ դպրոցի աշակերտը կարող է շարունակել, մինչև դպրոցն ավարտելը: Նոր դպրոցը պետք է անմիջապես գրանցի աշակերտին, նույնիսկ եթե կան վճարներ, տուգանքներ, կամ, եթե աշակերտը չունի սովորաբար գրանցման համար անհրաժեշտ հագուստը կամ տեղեկագրերը:

Ձեր տան հասցեին համապատասխան դպրոց գտնելու համար կարող եք այցելել https://rsi.lausd.net/ResidentSchoolIdentifier/ և ընտրել «Find a School» բաժինը, սեղմել «Resident School Identifier»-ին, կամ զանգահարել՝ (213) 241-1000 հեռախոսահամարով:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Շրջանի օրացույցը և անձնակազմի զարգացման օրերը հասանելի են հետևյալ հասցեով՝ 2023-2024 Instructional Calendar կամ կապ հաստատելով դպրոցի հետ: Եթե դրանից հետո նախատեսված է անձնակազմի զարգացման որևէ ազատ օր, դպրոցը պետք է տեղեկացնի տուժած աշակերտների ծնողներին/օրինական խնամակալներին որքան հնարավոր է շուտ, բայց ոչ ուշ, քան մեկ (1) ամիս առաջ նախատեսված ազատ օրվանից [EC-ի բաժին 48980(c)]:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Բացի շրջանի կողմից նշանակված դպրոցներից [EC Section 48980 (h)] ընտանիքները ունեն այլ դպրոցների տարբերակներ, որոնցից կարող են ընտրել որևէ մեկը իրենց երեխաների համար:

Տարածքի, ակադեմիական առաջարկների, արտադպրոցական գործունեության և այլնի հիման վրա դպրոցներ որոնելու համար այցելեք https://goto.lausd.net: Կայքը նաև հնարավորություն է տալիս ծնողներին/օրինական խնամակալներին ծանոթանալ Շրջանի ընտրության ծրագրերին, ներառյալ խորացված ուսուցումով, երկակի լեզուներով, ընդլայնված ուսուցումով և տրանսպորտային փոխադրումների իրավունքով դպրոցները: Այս ընտրովի ծրագրերը պահաջում են դիմումի ձևեր, որոնք հասանելի են առցանց, և կարող են լրացվել կայքի միջոցով: Թղթային տարբերակով դիմումները հասանելի են ձեր տեղական դպրոցում, գրադարանում կամ Տարածաշրջանային գրասենյակում: Եթե ծնողները/խնամակալներն ունեն հարցեր կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեն, խնդրում ենք դիմել Magnet Program ծնողների աջակցման գիծ՝ (877) 462-4798 հեռախոսահամարով:

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը հաստատել է թույլտվության քաղաքականություն՝ օգնելու ուսանողներին և ընտանիքներին բացահայտելու լավագույն դպրոցական տարբերակը: Առանձնացման նպատակների, հասանելի տարածքի և ծախսերի գործոնների դիտարկումը պարտադիր կերպով ներգրավված են թույլտվության քաղաքականության բոլոր ասպեկտներում: Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն և յուրաքանչյուր մարզում նշանակված ադմինիստրատորը թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրի աշակերտներին, ծնողներին/օրինական խնամակալներին և համայնքին: Թույլտվություն հայցող ցանկացած անձի հնարավորություն կտրվի դիմել դրա համար:

Ոչ ոքի չեն մերժի տեղեկություններ տրամադրել բողոքարկման գործընթացի վերաբերյալ: Դպրոց կամ Տարածաշրջան, որը մերժում, չեղյալ է համարում կամ ուժը կորցրած է ճանաչում թույլտվության հայտը, կտեղեկացնի ծնողին/օրինական խնամակալին բողոքարկման ընթացակարգերի մասին: Տեղեկությունների կեղծումը, կամ թույլտվություն ձեռք բերելու, կամ պահպանելու համար անհրաժեշտ չափանիշների փոփոխությունը կարող է հիմք հանդիսանալ թույլտվության հայտն անմիջապես մերժելու կամ ուժը կորցրած ճանաչելու համար:

Թույլտվությունների ընթացակարգերի մասին տեղեկությունները հասանելի են առցանց՝ http://studentpermits.lausd.net, և Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների, Աշակերտների ծառայությունների, Թույլտվությունների գրասենյակի և աշակերտների տեղափոխությունների միջոցով թույլտվությունների և աշակերտների տեղափոխությունների գրասենյակի միջոցով՝ (213) 202-7547 հեռախոսահամարով:

Միջշրջանային թույլտվություններ
Թույլտվությունների և աշակերտների տեղափոխությունների գրասենյակը վարչական պատասխանատվություն ունի՝ միջշրջանային թույլտվությունների հայտերի և դրանց բողոքարկումների համար: Միջշրջանային թույլտվությունները տրվում են այն աշակերտներին, ովքեր տեղափոխվում են Լոս Անջելեսի միացյալ շրջանի մեջ կամ դրանից դուրս: Բոլոր միջշրջանային թույլտվություններին պետք է ընթացք տա Թույլտվությունների և աշակերտների տեղափոխությունների գրասենյակը: Դպրոցի պաշտոնյաները չեն կարող շնորհել, մերժել կամ ուժը կորցրած ճանաչել միջշրջանային թույլտվությունները: Լոս Անջելեսի միացյալ շրջանի թույլտվության դիմումը պետք է լրացվի առցանց՝ http://studentpermits.lausd.net կայքում, և դիմումը պետք է հանձնվի դիմումի համար նախատեսված ժամանակաշրջանում: Միջշրջանային ԵԼՔԱՅԻՆ թույլտվությունների դիմումների ներկայացման ժամկետը հաջորդ ուսումնական տարվա համար յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ից մինչև ապրիլի 30-ն է՝ բոլոր աշակերտների համար: Ծնողների աշխատանքի ընդունվելու կապակցությամբ տեղափոխության ելքային թույլտվության դիմումները կլինեն միակ դիմումները, որոնք կընդունվեն նշված ամսաթվից հետո: ՄՈՒՏՔԱՅԻՆ միջշրջանային դիմումների ժամկետը հաջորդ ուսումնական տարվա համար սկսվում է փետրվարի 1-ին: Յուրաքանչյուր դիմում կուսումնասիրվի առանձին՝ ըստ սեփական հատկանիշների: Միջշրջանային ելքային թույլտվությունների բոլոր դիմումները պետք է լրացվեն էլեկտրոնային եղանակով և պետք է ներկայացվեն նշանակված հայտի ժամկետում: Թղթային դիմումները չեն ընդունվի:

Շրջանը կքննի միջշրջանային ԵԼՔԱՅԻՆ թույլտվությունների դիմումները կապված հետևյալի հետ՝
1. Ծնողի/օրինական խնամակալի աշխատանք;
2. Մասնագիտացված ծրագիր;
3. Շարունակական գրանցում;
4. Եղբոր կամ քրոջ թույլտվություն;
5. Երեխայի խնամք;
6. Բուլինգի թիրախ;
7. Ակտիվ զինվորական ծառայություն իրականացնող ծնողի երեխա;
8. Բացառության խնդրանք:

Շրջանը կքննի միջշրջանային ՄՈՒՏՔԱՅԻՆ թույլտվության դիմումները կապված հետևյալի հետ՝
1. Ծնողի/օրինական խնամակալի աշխատանք;
2. Մասնագիտացված ծրագիր;
3. Շարունակական գրանցում;
4. Եղբոր կամ քրոջ թույլտվություն;
5. Երեխայի խնամք;
6. Բուլինգի թիրախ;
7. Ակտիվ զինվորական ծառայություն իրականացնող ծնողի երեխա;
8. Բացառության խնդրանք:

Ներշրջանային թույլտվություններ
Թղթային դիմումները և ներշրջանային թույլտվությունների ընթացակարգերը կարելի է ձեռք բերել Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոցում: Ներշրջանային թույլտվությունները (դպրոցից դպրոց Լոս Անջելեսի միացյալ շրջանի տարածքում) մշակվում են անձամբ՝ բնակության վայրի դպրոցում և այն դպրոցում, որի համար դիմելու եք: Ներշրջանային թույլտվության դիմումները առցանց հասանելի չեն: Ներշրջանային թույլտվությունները բողոքարկվում են Տարածաշրջանային գրասենյակի միջոցով՝ գործառնությունների ադմինիստրատորի մոտ: Ներշրջանային թույլտվությունները թույլ են տալիս աշակերտներին տեղափոխել Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոցից մեկ այլ Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոց: Այս փոխադրումները նախաձեռնվում են ծնողի/օրինական խնամակալի խնդրանքով: Փոխադրման թույլտվությունները կարող են տրվել հետևյալ պատճառներից մեկի (1) կամ մի քանիսի հիման վրա.

1. Ծնողի/օրինական խնամակալի աշխատանք;
2. Մասնագիտացված ծրագիր;
3. Շարունակական գրանցում;
4. Եղբոր կամ քրոջ թույլտվություն;
5. Երեխայի խնամք;
6. Բուլինգի թիրախ;
7. Անվտանգություն և պաշտպանություն;
8. Բացառություն:

Ներշրջանային թույլտվությունները տրվում են միայն այն դեպքում, եթե դիմորդը իրավասու է, և եթե թե՛ բնակության դպրոցի, և թե՛ ընտրած դպրոցի ադմինիստրատորները հաստատեն դիմումը: Այս թույլտվությունները տրանսպորտային արտոնություններ չեն սահմանում:

ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Աշակերտի ամենօրյա հաճախումը կարևոր է ակադեմիական հաջողություններին աջակցելու համար: Որոշ բացակայություններ անխուսափելի են և կարող են առաջանալ հանրային առողջապահության կողմից սահմանված անվտանգության ընթացակարգերի պատճառով: Մենք շնորհակալություն ենք հայտնում ծնողներին/օրինական խնամակալներին իրենց աջակցության համար, քանի որ Լոս Անջելեսի միացյալ շրջանը շարունակում է առաջնահերթություն տալ առողջությանը և անվտանգությանը: Աշակերտները, ովքեր լավ հաճախում են, շատ ավելի հավանական է, որ հաջողակ լինեն, ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական ոլորտում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ամեն օր դպրոց հաճախի, եթե բացակայելու համար հարգելի հիմնավորում չկա (EC-ի բաժին 48200): Դպրոցներից պահանջվում է պահպանել հաճախումների արդի գրանցումներ ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Լրացուցիչ տեղեկությունները և ռեսուրսները հասանելի են Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների Աշակերտների սպասարկման կայքում՝ https://achieve.lausd.net/pupilservices կամ հեռախոսով՝ (213) 241-3840:

Կալիֆորնիայի պարտադիր լիաժամկետ կրթության վերաբերյալ օրենք
6-ից 18 տարեկան յուրաքանչյուր անձ, որը այլ կերպ ազատված չէ, պետք է հաճախի հանրային դպրոց լրիվ դրույքով (EC-ի բաժին 48200): Աշակերտները պետք է հաճախեն հանրակրթական դպրոց իրենց ծնողի/օրինական խնամակալի, կրթական իրավունքների կրողի կամ խնամողի բնակության վայրի դպրոցական շրջանում: Բացի այդ, 18 տարեկանից փոքր անչափահասներին արգելվում է դպրոցական ժամերին ներկա գտնվել հասարակական վայրում՝ առանց հիմնավոր պատճառաբանության (Լոս Անջելեսի շրջանային օրենսգրքի Բաժին 13.57.010): Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են LACC Section 13.57.010 կայքում:

Բացակայության ստուգում
Ծնողի/օրինական խնամակալի պատասխանատվությունն է փաստաթղթեր տրամադրել աշակերտի դպրոց վերադառնալուց հետո տասը (10) ուսումնական օրվա ընթացքում, որպեսզի բացակայությունները չգրանցվեն՝ որպես չպարզված/անհարգելի և չհամարվեն դասերից փախուստ: Բացակայությունները ներառում են դպրոցից ուշանալը, դպրոցը վաղ լքելը և դասաժամերը բաց թողնելը: Ծնողից/օրինական խնամակալից աշակերտի բացակայության վերաբերյալ պատճառների մասին տեղեկանալուց հետո հետևյալ աշխատակազմը կարող է ստուգել հիվանդության կամ կարանտինի պատճառով բացակայության հիմնավորությունը (Կալիֆորնիայի օրենսգիրք, Գլուխ 5, բաժին 421).

1. Դպրոցի կամ հանրային առողջության բուժաշխատակիցը;
2. Հաճախման վերահսկիչը (օրինակ՝ Աշակերտների սպասարկում և հաճախում բաժնի (PSA) Խորհրդատուն);
3. Բժիշկը;
4. Տնօրենը;
5. Ուսուցիչը;
6. Դպրոցի շրջանի ցանկացած այլ որակավորված աշխատակից, ում նման ստուգում վարելն է հանձնարարված:

Դպրոցի տեղամասի անձնակազմը, որը լիազորված է ստուգել ցանկացած տեսակի բացակայության պատճառաբանությունը, կարող է պատճառաբանության իրական լինելու վերաբերյալ ներկայացված փաստերի կասկածի դեպքում բացակայության հիմնավորումը հաստատելու նպատակով լրացուցիչ տեղեկություններ պահանջել, և/կամ կարող է մերժել բացակայությունը հարգելի համարել (Կալիֆորնիայի օրենսգիրք, Գլուխ 5, բաժին 306):

Ցանկացած աշակերտի համար, ով նախկինում հաճախակի բաց է թողել դասերը ծնողի/խնամակալի կողնից հիմնավորված պատճառներով, դպրոցները կարող են չեղյալ համարել ծնողի/խնամակալի կողնից բացակայությունը արդարացնելու իրավունքը:

Հարգելի բացակայություններ
Աշակերտի բացակայությունը հարգելի է, եթե այն պայմանավորված է հետևյալով.

1. Աշակերտի հիվանդություն կամ վնասվածք;
2. Կարանտին;
3. Բժշկական, ատամնաբուժական, տեսաչափական կամ քիրոպրակտիկ ծառայություններ;
4. Հոգեկան կամ վարքային առողջություն (աշակերտի հոգեկան առողջության կամ վարքագծային առողջության օգտին բացակայություն).
5. Մասնակցություն անմիջական ընտանեկան անդամի (օրինակ՝ մայր, հայր, տատիկ, պապիկ, եղբայր, քույր կամ այլ բարեկամի, ով ապրում է աշակերտի անմիջական ընտանիքում) հուղարկավորությանը (մեկ (1) օր՝ նահանգի ներսում, երեք (3) օր՝ նահանգից դուրս)
6. Երդվյալ ատենակալի պարտականություն;
7. Այն երեխայի հիվանդությունը կամ բուժումը, ում համար տվյալ աշակերտը համարվում է խնամող ծնող (երեխայի հիվանդության համար բժշկի տեղեկանք չի պահանջվում) (EC-ի բաժին 48205);
8. Ընտանիքի այն անդամի հետ ժամանակ անցկացնելը, ով զինվորական ծառայության է կանչվել, կամ զորացրվել կամ նոր է վերադարձել մարտական գոտում ակտիվ զինվորական ծառայությունից (ընտանիքի անմիջական անդամ, առավելագույնը՝ երեք (3) օր);
9. Բժշկական նպատակով դասից ազատում;
10. Ընտրությունների համար տեղամասային խորհրդում ծառայելը;
11. Մասնակցել աշակերտի հպատակագրման արարողությանը;
12. Կասեցումը վերացված բողոքարկման ընթացակարգով:

«Արդարացված անձնական պատճառները» նշանակում է, որ աշակերտի բացակայության մասին գրավոր հարցում է արվել ծնողի կողմից, և հաստատվել է տնօրենի կամ նրա ներկայացուցչի կողմից: Այս կարգի բացակայությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում թվարկածով՝

1. Դատարանում ներկայանալը;
2. Հուղարկավորության արարողությանը մասնակցում (երկարացված օրեր);
3. Ճահ չհետապնդող կազմակերպության (օրենսդիր/դատական) կողմից առաջարկվող կրթական սեմինարի հաճախում;
4. Մասնակցություն աշխատանքային սեմինարին;
5. Կրոնական առանձնավայր այցելություն (մեկ կիսամյակում չպետք է գերազանցի չորս (4) ժամը);
6. Ժամանցային ոլորտի աշխատանք՝ ուժի մեջ գտնվող աշխատանքային արտոնագրի դեպքում (ոչ ավել, քան հինգ (5) հաջորդական օր կամ առավելագույնը՝ հինգ (5) բացակայություն յուրաքանչյուր ուսումնական տարվա համար);
7. Կրոնական կամ մշակութային տոնի նշում, արարողություն կամ աշխարհիկ պատմական հիշատակում;
8. Կրոնական կրթություն (հաճախել նվազագույն դպրոցական օր; պատահում է ոչ ավել, քան դպրոցական ամսվա մեջ չորս (4) օր);
9. Երեխաներին աշխատավայր տանելու օր;

Պատշաճ կերպով ստուգելուց հետո, որ բացակայությունը տեղի է ունեցել վերը նշված որևէ պատճառով, դպրոցը բացակայությունը հարգելի կհամարի:

Այն աշակերտը, ով բացակայել է դպրոցից վերը նշված հարգելի պատճառներով, իրավունք կստանա լրացնել բոլոր հանձնարարություններն ու քննությունները, որոնք բաց են թողնվել բացակայության ընթացքում, և, որոնք ողջամտորեն հնարավոր կլինի ապահովել, և բավարար արդյունքների դեպքում կստանա ամբողջական կրեդիտ: Այն ուսուցիչը, ում դասընթացից աշակերտը բացակայել է, պետք է որոշի, թե ինչ քննություններ և առաջադրանքներ ողջամտորեն համարժեք կլինեն այն քննություններին ու առաջադրանքներին, որ աշակերտը բաց է թողել այդ ընթացքում:

Անհարգելի բացակայություններ
Այն բացակայությունները, որոնց համար բացատրություն չի ներկայացվում կամ ցանկացած բացակայություն՝որևէ այլ պատճառով, որը վերը նշված ՀԱՐԳԵԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ցանկի մեջ չի մտնում, կարող է համարվել անհարգելի: Լոս Անջելեսի միացյալ շրջանից օրենքով պահանջվում է բոլոր բացակայությունների համար բացատրություն պահանջել ծնողից/օրինական խնամակալից (գրավոր կամ բանավոր հիմնավորում)՝ տասը (10) օրվա ընթացքում: Աշակերտի բացակայությունը կարող է դասակարգվել որպես դասերից փախուստ (տես՝ Դասերից փախուստի և Դպրոցական հաճախումների ստուգման խորհուրդի (SARB) բաժինները ստորև):

ԱՆՀԱՐԳԵԼԻ բացակայությունների թվում են՝
1. Ընտանիքի համար գործեր անելը;
2. Դայակություն անելը;
3. Արձակուրդները կամ ուղևորությունները;
4. Եղանակային պայմանները;
5. Փոխադրամիջոցի խնդիրները:

Դասերից փախուստ
Պարտադիր ցերեկային կրթության կամ պարտադիր շարունակական կրթության ենթակա ցանկացած աշակերտ, ով մեկ ուսումնական տարվա ընթացքում երեք անգամ դպրոցից բացակայում է և/կամ երեք (3) անգամ դասերից ուշանում է 30 րոպեից ավել՝ առանց վավեր հիմնավորման, կամ այս դեպքերի որևիցէ համադրություն է առաջանում, ապա այդ աշակերտը համարվում է «դասերից փախչող»՝ ըստ օրենքի [EC-ի բաժին 48260 (a)]:
Աշակերտին, որպես «դասերից փախչող», նախնական դասակարգման դեպքում դպրոցական շրջանը պետք է աշակերտի ծնողին/օրինական խնամակալին տեղեկացնի հետևյալի մասին.
1. Աշակերտը դասերից փախչում է;
2. Ծնողը/օրինական խնամակալը պարտավոր է պարտադրել աշակերտին դպրոց հաճախել;
3. Այն ծնողը/օրինական խնամակալը, ով չի կատարել այդ պարտականությունները, կարող է մեղադրվել օրինազանցության մեջ և դատական կարգով հետապնդման ենթակա լինել;
4. Լոս Անջելեսի միացյալ շրջանում հասանելի են այլընտրանքային կրթական ծրագրեր;
5. Ծնողը/օրինական խնամակալը իրավունք ունի հանդիպել դպրոցի համապատասխան աշխատակազմի հետ՝ աշակերտի դասերից բացակայելը քննարկելու նպատակով;
6. Աշակերտը կարող է հետապնդման ենթակա լինել;
7. Խորհուրդ է տրվում, որ ծնողը/օրինական խնամակալը աշակերտին դպրոց ուղեկցի և մեկ (1) օր աշակերտի հետ դասերին ներկա գտնվի (EC-ի բաժին 48260.5):

Դասերից փախուստի վերաբերյալ նամակի ծանուցում
6-ից 18 տարեկան աշակերտների ծնողներին/օրինական խնամակալներին դասերից փախչելու վերաբերյալ նամակ է ուղարկվում, եթե նրանց երեխան ուսումնական տարվա ընթացքում ունի երեք (3) կամ ավելի անհարգելի բացակայություն, դասերից ժամանակից շուտ լքում և/կամ 30 րոպե կամ ավել ուշացում: Եթե բացակայությունից հետո տասը (10) ուսումնական օրվա ընթացքում հիմնավոր արդարացում չի տրամադրվել, այն կմնա չպարզված և կհամարվի դասերից փախուստ: Նույն ուսումնական տարվա ընթացքում Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոցում կուտակված անհարգելի կամ չպարզված բացակայությունները հաշվի են առնվում բացակայության դասակարգման մեջ: Ծնողները/օրինական խնամակալները, ովքեր ստանում են դասերից փախուստի մասին ծանուցում, կարող են կապվել իրենց երեխայի դպրոցի հետ (այն դպրոցի, որտեղից ստացվել է այդ նամակը), եթե կարծում են, որ սխալմամբ են այդ մասին ծանուցագիր ստացել: Դպրոցի տեղամասի աշխատակիցները պետք է մուտքագրեն հաճախումների գրանցումների բոլոր ուղղումները ոչ ուշ, քան մինչև համապատասխան ուսումնական տարվա հունիսի 30-ը:

Դասերից մշտական/սովորաբար փախուստ և Դպրոցի հաճախումների վերանայման խորհուրդ (SARB)
Ցանկացած աշակերտ համարվում է դասերից սովորաբար փախչող, եթե ուսումնական տարվա ընթացքում երեք (3) կամ ավել անհարգելի բացակայության վերաբերյալ զեկուցում է եղել, և Լոս Անջելեսի միացյալ շրջանի համապատասխան պաշտոնյան կամ աշխատակիցը բարեխիղճ կերպով ջանքեր է գործադրել՝ աշակերտի ծնողի/օրինական խնամակալի և հենց աշակերտի հետ առնվազն մեկ խորհրդակցություն ունենալու համար (EC-ի բաժին 48262):

Ցանկացած աշակերտի, ով համարվում է դասերից սովորաբար փախչող կամ, ով դասերին անկանոն է հաճախում կամ, ով մշտապես անկարգապահ է կամ անփութորեն է դպրոց հաճախում, կարելի է ուղորդել Դպրոցի հաճախման վերանայման խորհուրդ (SARB): Դպրոցի հաճախման վերանայման խորհրդի ներկայացուցիչը ծնողներին/օրինական խնամակալներին ծանուցում կուղարկի՝ նրանց տեղեկացնելով Դպրոցի հաճախման վերանայման խորհրդի լսման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ: Ծանուցման մեջ կնշվի, որ աշակերտը և ծնողները/օրինական խնամակալները պետք է հանդիպեն Դպրոցի հաճախման վերանայման խորհրդի հետ (EC-ի բաժին 48263.5):

Լոս Անջելեսի միացյալ շրջանը համագործակցում է Լոս Անջելես վարչաշրջանի Շրջանային դատախազի գրասենյակի և Լոս Անջելեսի Քաղաքային դատախազի գրասենյակի հետ՝ դասերից փախչող աշակերտներին և նրանց ընտանիքներին օժանդակություն տրամադրելու նպատակով:

Դրսում հայտնվելը փախուստի արդյունքում
Լոս Անջելեսի դպրոցի ոստիկանական բաժնի ոստիկանների կողմից դպրոցի տարածքից դուրս հայտնաբերված աշակերտները կարող են ստանալ դասերից փախուստի շրջանցման ուղեգիր: Հայտնաբերված աշակերտները և ծնողները/օրինական խնամակալները այնուհետև հանդիպում են Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշակերտների ծառայությունների և հաճախումների խորհրդատուի հետ (PSA)՝ Youth Source-ի կենտրոններից որևէ մեկում (1), որոնք գտնվում են

Լոս Անջելես քաղաքի ողջ տարածքում: Աշակերտները ստանում են կրթական գնահատում՝ ակադեմիական, հաճախումների և սոցիալական-զգայական կարիքների/վարքի վերաբերյալ՝ նրանց ուժեղ կողմերը և կարիքները բացահայտելու նպատակով: Այնուհետև աշակերտների ծառայությունների և հաճախումների խորհրդատուն տրամադրում է դպրոցում և համայնքում ծառայությունների համապատասխան ուղեգրեր և համագործակցում է աշակերտի դպրոցի աշխատակազմի հետ՝ համակարգելու և շարունակական օժանդակություն ապահովելու նպատակով:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների առողջության և սոցիալական ծառայությունների օտարերկրյա աշակերտների ընդունելության գրասենյակը (FSAO) պատասխանատու է օտարերկրյա աշակերտների գրանցման և տեղակայման համար Շրջանի նշված ավագ դպրոցներում: F-1 կամ J-1 վիզա ունեցող օտարերկրյա աշակերտները կարող են սովորել միայն Ավագ դպրոցում: Օտարերկրյա աշակերտների ընդունելության գրասենյակը Լոս Անջելեսի միացյալ շրջանի միակ գրասենյակն է, որը լիազորված է թողարկել և ստորագրել Ձև I-20-ը Շրջանի անունից:

Գործընթացի և օտարերկրյա աշակերտների ընդունելության իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://achieve.lausd.net/Page/12902#spn-content կայքը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐՔԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴՊՐՈՑՈՒՄ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Անվտանգության նախագիծը մտցնում է բարելավումներ Դպրոցի անվտանգության համալիր պլանի մեջ, նոր համակարգեր՝ դպրոցների, ընտանիքների և համայնքի միջև հաղորդակցությունը խթանելու, ինչպես նաև դպրոցներում դրական վարքագծի խթանման ազգային ճանաչված գործընթացներ և պրակտիկա: Նախագիծը նաև արտացոլում է շարունակական զարգացումը և համագործակցությունը համայնքային գործընկերների հետ՝ ապահովելու անվտանգ երթուղիներ դեպի դպրոցներ, կառուցողական և իմաստալից հարաբերություններ աշակերտների և աշխատակիցների միջև, և անդրադառնում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշակերտների և ընտանիքների ընդհանուր բարեկեցությանը: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ հասցեում՝ Every School Safe: A Blueprint for Safety:

ԴՊՐՈՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՊԼԱՆ

Անվտանգ դպրոցի համալիր պլանը (ISSP) յուրաքանչյուր դպրոցի համար անդրադառնում է դպրոցի անվտանգությանը, բռնության կանխարգելմանը, բնապահպանական վտանգներին, արտակարգ իրավիճակներին պատրաստվածությանը, երթևեկության անվտանգությանը, ճգնաժամային միջամտությանը և առողջությանը: Ծնողները/օրինական խնամակալները կարող են ավելին իմանալ իրենց երեխայի դպրոցի ISSP-ի մասին տնօրենից կամ Դպրոցի անվտանգության պլանավորման կոմիտեի անդամից, որը պատասխանատու է ամեն տարի ծրագրի վերանայման և թարմացման համար: ISSP-ի պատճենը հասանելի է հանրության դիտման համար յուրաքանչյուր դպրոցի գլխավոր գրասենյակում (EC-ի բաժին 32282):

ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Դպրոց այցելող բոլոր անձինք պետք է ունենան տնօրենի/տնօրենի ներկայացուցչի համաձայնություն: Այցելության թույլտվությունը, հնարավորության դեպքում, պետք է տրվի դիմելու պահին, կամ՝ դիմելու պահից հետո որոշակի խելամիտ ժամանակահատվածում: Դպրոցի աշակերտ չհանդիսացող երեխաները չեն կարող գտնվել դպրոցի տարածքում՝ առանց նախապես տնօրենից թույլտվություն ստանալու: Այցելուները չեն կարող միջամտել, խանգարել կամ էական խոչընդոտ ստեղծել որևէ դասարանում կամ դպրոցական միջոցառմանը: Այցելուները պարտավոր են՝

1. Հարգել դասին այցելության թույլտվություն ստանալու համար դպրոցում ընդունված կարգը;
2. Դպրոց ժամանելուն պես լրացնել այցելության թույլտվության դիմումը;
3. Մտնել և դուրս գալ դասարանից հնարավորինս անաղմուկ՝ ծնողների կողմից դասարանային դիտորդության համար;
4. Դասարանային դիտորդության ընթացքում չզրուցել աշակերտների, ուսուցիչների և/կամ օգնականների հետ;
5. Չմիջամտել որևէ դպրոցական միջոցառմանը;
6. Չչարաշահել դպրոցական դիտորդությունների տևողությունը և հաճախականությունը;
7. Անհրաժեշտության դեպքում, դիտորդությունից հետո ուսուցչին կամ տնօրենին հանդիպելու համար հետևել դպրոցում հաստատված ընթացակարգին;
8. Ծանոթանալ և հետևել դպրոցում ընդունված կարգապահական կանոններին;
9. Դպրոցից հեռանալուց առաջ հետ վերադարձնել այցելության թույլտվությունը:

Ցանկացած անձ, ով խաթարում է դպրոցի տեղամասի գործունեությունը կամ չի հետևում դպրոցում ընդունված կանոններին և/կամ ընթացակարգերին, ենթակա է դպրոցի տարածքից հեռացման, ինչից հետո հետագայում կարող է արգելվել նրա այցելությունը դպրոց:

ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹՈՒՂԻՆԵՐ ԴԵՊԻ ԴՊՐՈՑ (SRTS)

Անվտանգ երթուղիներ դեպի դպրոց (SRTS) համայնքի վրա հիմնված ծրագիր է՝ բարելավելու երթևեկության անվտանգությունը փողոցների բարելավման և կրթության միջոցով: Լոս Անջելեսի տրանսպորտի դեպարտամենտը (LADOT) համագործակցում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի հետ՝ վարելու անվտանգության կրթական արշավներ, դպրոցական գոտիների/թաղամասերի փողոցների նախագծեր և հետիոտների ու հեծանվորդների անվտանգության ծրագրեր:

Safety Valet ծրագիրը դա մեկ միջոց է, որն օգնում է դպրոցներին բարելավել տրանսպորտային միջոցների երթևեկությունը առավոտյան ժամերին: Շրջակա միջավայրի և անվտանգության գրասենյակը (OEHS) և Լոս Անջելեսի դպրոցի ոստիկանության բաժանմունքը (LASPD) օգնում են դպրոցներին իրականացնել այս ծրագիրը: Ճանապարհային անվտանգության և SRTS-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Անվտանգ դպրոցական երթևեկության ծրագիր՝ https://achieve.lausd.net/Page/4238, կամ LADOT՝ https://ladot.lacity.org/projects/safety-programs#safe-routes-to-school:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը հանձնառու է երաշխավորելու, որ աշխատակիցները և աշակերտների հետ աշխատող կամ շփում ունեցող բոլոր անձինք աշակերտների հանդեպ դրսևորեն աջակցող, դրական, պրոֆեսիոնալ և ոչ շահագործող վերաբերմունք: Լոս Անջելեսի միացյալ շրջանը չի հանդուրժի աշակերտների նկատմամբ անհարկի վարքագիծ կամ վարք իր աշխատողների կամ աշակերտների հետ աշխատող կամ շփում ունեցող որևէ անձի կողմից: Աշխատողների կամ աշակերտների հետ աշխատող կամ շփում ունեցող որևէ անձի վարքագծի կամ վարքի վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունեցող ծնողներին/օրինական խնամակալներին խրախուսում ենք խոսել դպրոցի ադմինիստրատորի հետ:

Աշակերտների հետ վարվելու կանոնակարգում նշվում է հետևյալը.
Շրջանի առաջնահերթությունը մեր աշակերտների անվտանգությունն է: Բոլոր աշխատակիցները, ինչպես նաև անհատները, ովքեր աշխատում են կամ

շփվում են աշակերտների հետ (օրինակ՝ կամավորներ, մենթորներ, մարզիչներ և այլն) պետք է նկատի ունենան աշակերտների նկատմամբ զգայուն և աջակից լինելու և պատասխանատու և էթիկական վարքագծի հնարավոր կամ ընկալելի խախտման միջև եղած տարբերությունը:

Թեև Շրջանը խրախուսում է աշակերտների հետ դրական հարաբերությունների զարգացումը, աշխատակիցներից և անհատներից, ովքեր աշխատում են կամ շփվում են աշակերտների հետ, ակնկալվում է, որ լավ դատողություն դրսևորեն, պահպանեն մասնագիտական չափանիշներն ու էթիկական սահմանները և զգուշացվեն, որ հիշեն այս ուղեցույցները և, երբ հնարավոր է, խուսափեն հետևյալից, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.

1. Աշակերտ(ներ)ի հետ կամ աշակերտ(ներ)ի ներկայությամբ վարքագիծ դրսևորելը, որը ոչ պրոֆեսիոնալ է, ոչ էթիկական, անօրինական, անբարոյական կամ շահագործող;
2. Անհատական հանդիպում ցանկացած սեռի աշակերտի հետ փակ դռների հետևում կամ միայն աշակերտների համար նախատեսված տարածքներում (օրինակ՝ զուգարաններ, հանդերձարաններ), բացառությամբ դպրոցի հետ կապված հատուկ նպատակների (օրինակ՝ գնահատումներ, խորհրդատվություն, պահանջվող ծառայություններ, հսկողություն);
3. Դպրոցից վերջին ադմինիստրատորի հեռանալուց հետո աշակերտ(ներ)ի հետ մնալ կամպուսում; կան բացառություններ, ինչպիսիք են հետդպրոցական ծրագրերը, ուսուցիչները, ովքեր փորձեր են անում աշակերտների հետ դրամատիկական/երաժշտական գործունեության համար կամ մարզում են ակադեմիական տասնամարտի աշակերտներին՝ նախապես վարչական հաստատմամբ.
4. Արտոնյալ վերաբերմունքի տրամադրում և/կամ աշակերտ(ներին) նվերներ, պարգևներ կամ խրախուսանքներ տալը, որոնք կապված չեն դպրոցի հետ, և որոնց համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկվում է, որ աշակերտը (ները) պետք է ինչ-որ բան ասի կամ անի ի վերադարձ;
5. Ուղղակիորեն կամ աշակերտ(ներ)ի ներկայությամբ ժեստերի, հայտարարությունների կամ մեկնաբանությունների կատարումը, որոնք չեն համապատասխանում տարիքին, ոչ պրոֆեսիոնալ են, կամ կարող են համարվել սեռական բնույթի, անպարկեշտ, վիրավորական, վախեցնող, ահաբեկող, անհանգստացնող, խտրական կամ նվաստացնող;
6. Աշակերտ(ներ)ին դիպչելը, նրա հետ ֆիզիկական շփում ունենալը, կամ հագուստ հանելու պահանջ ներկայացնելը, որը չի համապատասխանում տարիքին կամ աշխատողի/անհատի մասնագիտական պարտականությունների շրջանակում չէ;
7. Ներգրավվել ցանկացած վարքագծի, որը վտանգում է աշակերտներին, ներառյալ ֆիզիկական բռնությունը կամ բռնության սպառնալիքը;
8. Ոգելից խմիչք կամ ապօրինի կամ չարտոնված նյութ օգտագործելը կամ վերահսկվող նյութի տիրապետումը կամ տարածումը աշխատավայրում կամ դպրոցի կողմից հովանավորվող գործունեության ընթացքում;
9. Աշակերտներին տեղափոխել անձնական մեքենայով՝ առանց ադմինիստրատորի և ծնողի նախօրոք ձևակերպված պատշաճ գրավոր թույլտվության ձևի՝ Շրջանում հաստատված պատճառներով;
10. Աշակերտ(ներ)ի հետ հանդիպելը, տանելը, կամ ուղեկցելը կամպուսից դուրս՝ այլ գործողությունների համար, բացառությամբ շրջանի կողմից հաստատված դպրոցական ճամփորդության, գործունեության կամ դաշտային ճամփորդության;
11. Աշակերտներին անձնական կոնտակտային տվյալներ տրամադրելը կամ աշակերտներից դրանք պահանջելը և/կամ աշակերտ(ների) հետ շփվելը բանավոր, գրավոր, հեռախոսով/էլեկտրոնային փոստով/էլեկտրոնային ձևով/վեբ-տեսախցիկով, ինտերնետով, սոցիալական մեդիայի միջոցով կամ անձամբ այն նպատակների համար, որոնք հատուկ չեն վերաբերում դպրոցին;
12. Նկարներ կամ տեսանյութեր նկարելը կամ աշակերտներից պահանջելը, բացառությամբ դպրոցի հետ կապված հատուկ նպատակների՝ համապատասխան հաստատումներով:

Թեև աշխատողի/անհատի մտադրությունը կարող է զուտ մասնագիտական լինել, նրանք, ովքեր մասնակցում են վերը նշված վարքագծին, պոտենցիալ կերպով ենթարկվում են անպատշաճ ընկալումների: Ցանկացած անձանց, ովքեր ականատես են լինում սահմանների հնարավոր խախտումներին, խորհուրդ է տրվում հայտնել նման վարքագծի մասին: Շրջանը լրջորեն է վերաբերվում նման հարցերին և կարող է պարտավորվել հետաքննել մեղադրանքները, ինչպես դա երաշխավորված է և/կամ երբ տրվել է իրավապահ մարմինների թույլտվությունը, և ձեռնարկել համապատասխան վարչական ուղղիչ/կարգապահական գործողություններ: Շրջանն արգելում է հաշվեհարդարը ցանկացածի նկատմամբ, ով հաղորդում կամ մասնակցում է անպատշաճ վարքագծի հետաքննությանը:

Անհատները, ովքեր լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեն, պետք է դիմեն դպրոցի ադմինիստրատորին, Տարածաշրջանային գրասենյակին կամ Կրթական հավասարության համապատասխանության գրասենյակին (213) 241-7682 հեռախոսահամարով կամ էլ. փոստով՝ EquityCompliance@lausd.net:

Դրական վարքագծի միջամտություններ և աջակցության/վերականգնողական պրակտիկաներ (PBIS/RP)
Լոս Անջելեսի միացյալ շրջանի Կարգապահության հիմունքների քաղաքականությունը նշում է, որ յուրաքանչյուր աշակերտ, նախադպրոցական մինչև մեծահասակ, ինչպես նաև շրջանի և դպրոցական համայնքի բոլոր անդամներն ունեն անվտանգ, առողջ, ողջունելի, հաստատող, ներառական, հարգալից, վերականգնող ուսումնական և աշխատանքային միջավայրի իրավունք: Սա ձեռք է բերվում տրավմայի/դիմակայունության մասին տեղեկատվության վրա հիմնված Բազմաստիճան աջակցության համակարգերի (MTSS) համահունչ կառուցվածքի ընդունման և ներդրման միջոցով, որը ներառում է. վարքագծային դրական ակնկալիքների և սոցիալ-էմոցիոնալ հմտությունների ուսուցում, աշակերտների վարքագծի ամրապնդում և ուղղում, ինչպես նաև մասնակցում վերականգնման աշխատանքներին, պրակտիկաներ, ներառյալ առողջ հարաբերություններ կառուցելը և վերականգնող հարցերի օգտագործումը: Լոս Անջելեսի միասնական ռազմավարական ծրագիրը վերահաստատում է Շրջանի հանձնառությունը դրական վարքագծի/վերականգնողական պրակտիկայի միջամտությանը և աջակցությանը (PBIS/RP)՝ համայնքային և վավերական հարաբերություններ կառուցելու, հաճախելիությունը բարձրացնելու, թեստի միավորները բարելավելու, կասեցումները նվազեցնելու և դպրոցի ընդհանուր դրական մշակույթին ու մթնոլորտին աջակցելու համար:

Ծնողները/օրինական խնամակալները անբաժանելի դեր են խաղում յուրաքանչյուր դպրոցի ստեղծման և իրենց PBIS/RP ծրագրի իրականացման գործում: Սա ներառում է համայնքի կառուցման աշխատանքներում ներգրավվելը, դպրոցի/դասարանի ակնկալիքներին աջակցելը, աշակերտի համապատասխան վարքագծի ամրապնդումը և վերականգնողական բնույթի միջոցառումների օգտագործումը:

Լրացուցիչ տեղեկություններ և ռեսուրսներ հասանելի են նաև հետևյալ հասցեով՝ https://achieve.lausd.net/PBIS_RP:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ/ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Դպրոցական վարքագծի կանոնները պետք է համապատասխանեն Շրջանի քաղաքականությանը, ներառյալ Կարգապահության քաղաքականությանը: Նախքան միջոցառումներին անցնելը, աշակերտներին պետք է աջակցել՝ սովորելու հմտությունները, որոնք անհրաժեշտ են գործնականում կիրառելու, պահանջները բավարարելու և դրական դպրոցական մշակույթին և մթնոլորտին նպաստելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել դպրոց:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔԸ, ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐԸ, ՀԱՎԱՔՆԵՐԸ, ՑՈՒՅՑԵՐԸ ԵՎ ԱՅԼՆ

Աշակերտներն ունեն խոսքի ազատության իրավունք և կարող են մասնակցել քաղաքական կամ ազատ խոսքի միջոցառումների, երբ գտնվում են դպրոցի տարածքում: Աշակերտները կարող են բաժանել գրականություն, որը կարտացոլի նրանց տեսակետներն ու կարծիքները: Աշակերտները կարող են հավաքվել դպրոցի տարածքում դասերից դուրս ժամանակահատվածում՝ քննարկելու իրենց կարծիքներն ու տեսակետները և կարող են մասնակցել խաղաղ ցույցերի դպրոցի տարածքում դասերից դուրս ժամանակահատվածում: Աշակերտները, ներառյալ դպրոցի ավարտական միջոցառման և այլ դպրոցական հավաքույթների ժամանակ խոսնակ աշակերտները, կարող են, առանց կարգապահական գործողության, իրականացնել այս իրավունքները, քանի դեռ նրանց խոսքը, արտահայտությունը կամ վարքն անպարկեշտ, անվայել, զրպարտչական, վիրավորական բնույթ չեն կրում, չեն հրահրում աշակերտներին ոչնչացնել գույքը կամ վնաս հասցնել որևէ անձի, կամ չեն պատճառում դպրոցի գործունեության էական ապակայունացում:

Կալիֆորնիայի օրենսդրությունը թույլատրում է դպրոցի ադմինիստրատորներին սահմանել ողջամիտ չափանիշներ այն աշակերտների համար, ովքեր ցանկանում են իրականացնել իրենց ազատ խոսքի իրավունքները՝ դպրոցի կամպուսում կամ դպրոցական օրվա ընթացքում: Դպրոցական տարածքի ադմինիստրատորները կարող են սահմանափակումներ կիրառել ժամանակի, տեղի, խոսելաձևի կամ գործողությունների նկատմամբ՝ բոլոր աշակերտների և Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշխատակիցների համար դպրոցի տարածքն ապահով և խաղաղ պահելու նպատակով: Այն աշակերտները, ովքեր չեն հետևի դպրոցի տարածքի ադմինիստրատորների հրահանգներին կամ Լոս Անջելեսի միացյալ շրջանի քաղաքականությանը՝ կապված ցույցերի, հավաքների, նստացույցերի և այլնի հետ, կարող են ենթարկվել կարգապահական տույժի:

Այն աշակերտները, ովքեր կամավոր լքում են դպրոցի կամպուսը կամ դասասենյակը որևէ ցույցի ժամանակ, կհրահանգվեն վերադառնալ դպրոցի կամպուս կամ դասասենյակ: Այս հրահանգը կատարելու աշակերտի մերժումը կհանգեցնի անհարգելի բացակայության արձանագրման: Աշակերտի՝ դպրոցի տարածքից դուրս գալու դեպքում դպրոցի ադմինիստրատորները աշակերտների անվտանգությունն ու բարեկեցությունը պաշտպանելու օրինական պարտավորություն չունեն: Եթե աշակերտների ցույցը կամ դասադուլը խանգարում է ընդհանուր հանրությանը, ապա տեղական իրավապահ մարմինները կարող են արձագանքել ստեղծված իրավիճակին: Լոս Անջելեսի միացյալ շրջանը ոչ մի հսկողություն չունի տեղական իրավապահ մարմինների՝ իրավիճակը կարգավորելու գործում:

Չնայած Լոս Անջելեսի միացյալ շրջանը ճանաչում և հարգում է աշակերտի ազատ խոսքի իրավունքները, այդուհանդերձ, Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշխատակիցներն աշխատանքային ժամերին կամ, հանդիսանալով Լոս Անջելեսի միացյալ շրջանի ներկայացուցիչ կամ գործակալ, չեն խթանի, հաստատի կամ խրախուսի աշակերտներին՝ մասնակցելու որևէ ցույցի, նյութեր բաժանելուն, հավաքների, նստացույցի կամ դասադուլի: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել դպրոցի ադմինիստրատորին:

ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ/ՀԱՄԱԶԳԵՍՏՆԵՐ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը գիտակցում է, որ աշակերտների հագուստը և սանրվածքն աջակցում են նրանց ազատ արտահայտվելու իրավունքին՝ ուսման միջավայրի համար նպատակահարմարության շրջանակներում:

Լոս Անջելեսի միացյալ շրջանի Ուղեցույցն աշակերտական հանդերձանքի վերաբերյալ

1. Բոլոր աշակերտները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն անձնական անվտանգության և հագուստի համապատասխանությանը՝ դպրոցական գործունեության համար: Մասնագիտացված դպրոցական ծրագրերն ու դասարանները, ինչպիսիք են՝ գիտական լաբորատորիան, փայտի արհեստանոցը կամ խոհարարական արվեստը, կարող են պահանջել մասնագիտացված հագուստ կամ սահմանել եզակի սահմանափակումներ՝ կապված անվտանգության և արդյունաբերական ստանդարտների հետ (օրինակ ՝ մազակալներ, պաշտպանիչ ակնոցներ, առանց ծալքերի թևեր և փակ կոշիկներ): Անկախ ամեն ինչից, ոչ մի հագուստ չի կարող վտանգ առաջացնել աշակերտի կամ այլոց առողջության կամ անվտանգության համար, և հագուստը պետք է ծածկի մարմնի ինտիմ մասերը: Ինտիմ մասերը, ընդհանուր առմամբ, վերաբերում են լողազգեստով ծածկված մասերին:
2. Լոս Անջելեսի միացյալ շրջանը և Դպրոցական խորհրդի քաղաքականությունը հաստատում են աշակերտների՝ գենդերային արտահայտման իրավունքը:
3. Դպրոցները կարող են փոփոխել դպրոցական միջոցառումների համար հագուստի կանոնները, ինչպես օրինակ՝ ներկայացումների, մրցույթների, արշավների և տոնական միջոցառումների ժամանակ:
4. Արգելվում է կրել այնպիսի հագուստ, զարդեր և անձնական իրեր, օրինակ՝ ուսապարկեր և գրքերի պայուսակներ, որոնք պարունակում են գռեհիկ, սեռական բնույթի, խտրական, անպարկեշտ, զրպարտիչ, սպառնալից բառեր կամ պատկերներ, խթանում են անօրինական կամ բռնի բովանդակություն, օրինակ՝ զենքերի, թմրանյութերի, ալկոհոլի, ծխախոտի կամ թմրանյութերին առնչվող իրերի ապօրինի օգտագործումը:
5. Մազերը, կիսամորուքները, բեղերը և մորուքները կարող են լինել ցանկացած երկարության կամ ոճի, իսկ հագուստը կարող է լինել ցանկացած նորաձևության, ոճի կամ դիզայնի:
6. Աշակերտներին թույլատրվում է կրել կրոնական զարդեր կամ հանդերձանք, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ խաչ, յարմուլկե, գլխաշոր կամ թյուրբան/չալմա:
7. Աշակերտներին թույլատրվում է դպրոցական օրվա ընթացքում բացօթյա գործունեության համար կրել արևապաշտպան հանդերձանք, ներառյալ, բայց չսահմանափակվելով գլխարկներով:
8. Այն աշակերտները, ովքեր ազգային ճանաչում ունեցող հեղինակավոր երիտասարդական կազմակերպությունների մասնակից են, ինչպիսիք են Աղջիկների/տղաների սկաուտները, 4-H ակումբը կամ ROTC-ն, իրավունք ունեն կրելու այդ կազմակերպության համազգեստն այն օրերին, երբ կազմակերպությունը նախատեսել է հանդիպում անցկացնել:
9. Դպրոցական հագուստը պետք է համապատասխանի Շրջանի ուղեցույցներին դպրոցական հանդերձանքի և համազգեստի վերաբերյալ:

Դպրոցները կարող են ընդունել աշակերտների տեղական, դպրոցական հագուստի կանոններ և/կամ սահմանել կամավոր համազգեստի քաղաքականություն՝ վարչակազմի, ուսուցչական կազմի, աշխատակազմի, ծնողների/օրինական խնամակալների և աշակերտների կարծիքները հաշվի առնելով: Սա կարող է ներառել աշակերտների հագուստի կարճաժամկետ կամ ժամանակավոր սահմանափակումներ: Տեղական ընդունված դպրոցական հագուստի կանոնները պետք է համապատասխանեն Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշակերտների հագուստի մասին ուղեցույցներին և գործող օրենքներին, կանոնակարգերին և դատարանի որոշումներին:

Ընդհանուր առմամբ, աշակերտների հանդերձանքի վրա կարող են սահմանափակումներ կիրառվել, երբ առկա է առողջության և անվտանգության պահպանման հատուկ և օբյեկտիվ անհրաժեշտություն և/կամ կրթական ծրագրի էական խաթարումը կանխելու նպատակով:

Դպրոցական համազգեստի քաղաքականության մասին պատշաճ ծանուցում պետք է տրամադրվի բոլոր ծնողներին/խնամակալներին, աշակերտներին և դպրոցի անձնակազմին: Դպրոցական համազգեստի քաղաքականության մասին կրկնօրինակը տրվում է յուրաքանչյուր աշակերտին՝ առնվազն ընդունվելու պահին, և բոլոր աշակերտներին՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին (առնվազն տարեկան), որը ներառում է դրանից հրաժարվելու տարբերակը և ընթացակարգը՝ առանց հետևանքների և հետապնդման:

ԲՈՒԼԻՆԳԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԽՄԲՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ (HAZING) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը պարտավորություն է ստանձնել ապահովելու անվտանգ և քաղաքակիրթ ուսումնական և աշխատանքային միջավայր և կոշտ դիրքորոշում է որդեգրել բուլինգի, հարկադրման կամ որևէ այլ վարքագծի նկատմամբ, որը ոտնահարում է աշակերտների ու աշխատակիցների անվտանգությունն ու բարեկեցությունը կամ խոչընդոտում է ուսումնառության կամ դասավանդման գործընթացներին: Այս քաղաքականությունը պետք է ներառի այն վարքագծերը և գործողությունները, որոնք տեղի են ունենում աշակերտների, Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշխատողների և նրանց հետ կապակցված չափահասների շրջանում: Այս քաղաքականությունը կիրառելի է դպրոցներում, Լոս Անջելեսի միացյալ շրջանին առնչվող ծրագրերում, դասարանական աշխատանքների և միջոցառումների ժամանակ, դպրոց գնալիս և դպրոցից վերադառնալիս, ինչպես նաև՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի իրավական բոլոր այլ ոլորտներում: Լոս Անջելեսի միացյալ շրջանն արգելում է վրեժխնդիր վարք ցուցաբերել յուրաքանչյուրի նկատմամբ, ով բողոք է ներկայացնում կամ մասնակցություն է ունենում բողոքի հետաքննման գործընթացին: Այս քաղաքականությունը կիրառվում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի իրավասության շրջանակներում գտնվող բոլոր անձանց հանդեպ:

Բոլոր աշակերտները և աշխատակազմն անօտարելի իրավունք ունեն հաճախել դպրոցի տարածքներ, որոնք ապահով են, անվտանգ և խաղաղ [Կալիֆորնիա նահանգի Սահմանադրության Հոդված 1, բաժին 28]: Ճնշումների ենթարկելու (բուլինգ) և հարկադրման վերաբերյալ քաղաքականությունը, որը գրված է Դաշնային ուղեցույցների և Կալիֆորնիայի Կրթական Օրենսգրքի համաձայն, պահանջում է, որ բոլոր դպրոցները և ողջ անձնակազմը խթանեն հարգանք և հանդուրժողականություն:

«Բուլինգ» նշանակում է ցանկացած դաժան կամ շարունակական ֆիզիկական կամ բանավոր գործողություն կամ վարքագիծ, ներառյալ գրավոր կամ էլեկտրոնային ակտի միջոցով կատարված հաղորդակցությունները, և ներառյալ մեկ (1) կամ ավելի արարքներ, որոնք կատարվել են աշակերտի կամ աշակերտների խմբի կողմից, ինչպես սահմանված է Բաժին 48900.2, 48900.3 կամ 48900.4՝ ուղղված մեկ (1) կամ ավելի աշակերտներին, որոնք ունեն, կամ կարելի է ողջամտորեն կանխատեսել, որ կունենան հետևյալ հետևանքներից մեկը (1) կամ ավելին՝

1. Խելամիտ աշակերտի կամ աշակերտների մեջ վախ սերմանել այդ աշակերտի կամ աշակերտների անձին կամ ունեցվածքին վնաս հասցնելու վերաբերյալ;
2. Խելամիտ աշակերտի վրա էականորեն վնասակար ազդեցություն թողնել, պատճառելով վնաս նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը;
3. Խելամիտ աշակերտին էական վնաս պատճառել իր ուսումնական առաջադիմության մեջ;
4. Էականորեն միջամտել խելամիտ աշակերտի մասնակցությանը դպրոցի կողմից տրամադրվող ծառայություններին և գործունեությանը, կամ արտոնություններից օգտվելու կարողությանը:

Աշակերտը, ով ներգրավված է բուլինգում դպրոցում կամ դպրոցին առնչվող գործունեության կամ միջոցառումների ընթացքում, կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Կիբերբուլինգը ահաբեկման ձև է, որը ներառում է էլեկտրոնային գործողություններ, ինչը նշանակում է, որ ստեղծումը կամ փոխանցումը ծագել է դպրոցի տարածքում կամ դրա սահմաններից դուրս՝ էլեկտրոնային սարքի միջոցով, ներառյալ, բայց չսահմանափակվելով հեռախոսով, անլար հեռախոսով կամ այլ անլար կապի սարքով, համակարգչով, կամ փեյջերով, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.

1. Հաղորդագրություն, տեքստ, ձայն, տեսանյութ կամ պատկեր;
2. Գրառում սոցիալական ցանցի ինտերնետային կայքում, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.
   - «Վառված էջի» տեղադրում կամ ստեղծում : « Վառված էջ» նշանակում է ինտերնետային կայք, որը ստեղծված է առաջին (1) պարբերությունում թվարկված էֆեկտներից մեկ (1) կամ ավելին ստանալու նպատակով.
   - Մեկ այլ իրական աշակերտի վստահելի անձնավորում ստեղծում՝ առաջին (1) պարբերությունում թվարկված ազդեցություններից մեկը (1) կամ ավելին ստանալու նպատակով: «Վստահելի անձնավորում» նշանակում է գիտակցաբար և առանց համաձայնության անձնավորել աշակերտին՝ աշակերտին վախեցնելու նպատակով և այնպես, որ մեկ այլ աշակերտ ողջամտորեն հավատա, որ անձը եղել է կամ կա այն աշակերտը, ով նմանակել է մեկ ուրիշին.
   - Կեղծ պրոֆիլի ստեղծում՝ A-ից D-ում նշված, էֆեկտներից մեկին կամ մի քանիսին հասնելու համար: «Կեղծ պրոֆիլ» նշանակում է մտացածին աշակերտի պրոֆիլ կամ պրոֆիլ, որն օգտագործում է իրական աշակերտի նմանությունը կամ հատկանիշները, բացի այն աշակերտից, ով ստեղծել է կեղծ պրոֆիլը:

Կիբերհարձակումը, որը տեղի է ունենում համալսարանից դուրս և էապես խաթարում է դպրոցի ուսումնական միջավայրը, կարող է ընկնել Լոս Անջելեսի միասնական իրավասության ներքո:

Սեքստինգը և կիբերսեքսուալ ճնշումներն անպատշաճ, սեռական բնույթի էլեկտրոնային հաղորդակցության ձևեր են: Հրապարակումից հետո անձը նկարի օգտագործման վերահսկողություն չունի: Անչափահասների սեռական բնույթի նկարների տեղադրումն ու տարածումը կարող է համարվել մանկական պոռնոգրաֆիա կամ երեխայի չարաշահում: Մասնակիցները կարող են կարգապահական և/կամ հնարավոր քրեական պատասխանատվության ենթակա լինել: Աշակերտները պետք է հաշվի առնեն սեքստինգի հնարավոր հետևանքները՝ ամբողջ կյանքի ընթացքում:

Հորդորում ենք այն ծնողներին/օրինական խնամակալներին և աշակերտներին, ովքեր կասկածում են, որ դպրոցի կամպուսում բուլինգ է գործադրվել, գրավոր ձևով ներկայացնել իրենց մտահոգությունները և աշխատել դպրոցի տնօրինության հետ, ովքեր կքննարկեն այդ պնդումները և կաշխատեն ներգրավված կողմերի հետ՝ որոշում կայացնելու համար: Հավելյալ տեղեկություններ կամ օժանդակություն ստանալու նպատակով դիմեք համապատասխան Տարածաշրջանային գրասենյակ՝ https://achieve.lausd.net/regions հասցեով:

Հարկադրաբար խմբում ներգրավելը (hazing) նախաձեռնություն է կամ պատրաստվող նախաձեռնություն կամ արարողակարգ, որը կապված է աշակերտական որևէ կազմակերպությունում կամ մարմնում անդամակցության հետ՝ անկախ նրանից, թե արդյոք այն պաշտոնապես ճանաչված է կրթական հաստատության կողմից, թե՝ ոչ, որը հավանական է, որ կպատճառի լուրջ մարմնական վնասվածք կամ անձի ստորադասում կամ նվաստացում՝ պատճառելով ֆիզիկական կամ մտավոր վնաս նախկին, ներկա կամ ապագա աշակերտին: Հեյզինգը չի ներառում սպորտային միջոցառումները կամ դպրոցի կողմից թույլատրված միջոցառումները:

Խնդրում ենք այցելել Մարդկային հարաբերությունների, բազմազանության և հավասարության գրասենյակի կայքը՝ https://achieve.lausd.net/human-relations՝ ռեսուրսների և խորհրդատվության համար:

Խտրականության կամ ոտնձգության մասին պնդումների համար դիմեք Կրթական հավասարության համապատասխանության գրասենյակ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ այցելեք https://achieve.lausd.net/domain/383 կայքէջը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արժեք ներկայացնող անձնական իրերը (բջջային հեռախոսներ, շարժական սարքեր, պլանշետներ, տեսախցիկներ, էլեկտրոնային խաղեր, ռադիոընդունիչներ, լազերային սկավառակների խաղարկիչներ, անձնական համակարգիչներ և այլն) չպետք է դպրոց բերել, քանի որ հնարավոր է՝ տեղի ունենա դրանց կորուստ, գողություն կամ վնասում: Բացի այդ, այսպիսի իրերը կարող են կրթական գործընթացի ընթացքում ուշադրությունը շեղել, այդ պատճառով դպրոցի անձնակազմը կարող է դրանք բռնագրավել: Դպրոցի շրջանը պատասխանատվություն չի կրում կորցված կամ գողացված իրերի համար (այդ թվում՝ դարակներում փակված իրերի համար):

ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ

Բջջային հեռախոսների կամ ցանկացած էլեկտրոնային շարժական սարքի օգտագործումը աշակերտների կողմից թույլատրված չէ համալսարանում սովորական դպրոցական ժամերին: Աշակերտներին թույլատրվում է ունենալ բջջային հեռախոսներ կամ այլ էլեկտրոնային շարժական սարքեր, ինչպիսիք են տեսախցիկները, էլեկտրոնային խաղերը, հաշվողական սարքերը, պլանշետները և այլն, այն պայմանով, որ ցանկացած այդպիսի սարք պետք է մնա անջատված և պահվի դարակում, ուսապարկում, դրամապանակում, գրպանում, կամ այլ վայրերում, որտեղ դա տեսանելի չէ սովորական դպրոցական ժամերին: Աշակերտներին թույլատրվում է օգտագործել բջջային հեռախոսներ կամ այլ էլեկտրոնային շարժական սարքեր կամպուսում, դպրոցից առաջ և հետո կամ դպրոցական գործունեության ընթացքում, որոնք տեղի են ունենում դպրոցական ժամերից դուրս:

Պետական և ազգային գնահատումների ժամանակ աշակերտները երբեք չեն կարող օգտագործել չարտոնված էլեկտրոնային սարքեր՝ թեստավորման ողջ ընթացքում:

Համալսարանում գտնվելու ընթացքում աշակերտները միշտ պետք է կատարեն դպրոցի անձնակազմի պահանջը, եթե այդպիսին ներկայացվում է՝

դադարեցնելու բջջային հեռախոսի և/կամ այլ էլեկտրոնային շարժական սարքի օգտագործումը դասերից առաջ կամ հետո: Դպրոցները կարող են ընդունել բջջային հեռախոսների ավելի խիստ քաղաքականություն Դպրոցի խորհրդի միջոցով:

Բջջային հեռախոսի օգտագործումը դպրոցական ավտոբուսում միայն արտակարգ իրավիճակների համար է, և վարորդի թույլտվությունը պահանջվում է: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Փոխադրման ծառայություններ՝ (800) 522-8737 հեռախոսահամարով: Լոս Անջելեսի միացյալ շրջանը պատասխանատու չէ բջջային հեռախոսների կամ այլ էլեկտրոնային շարժական իրերի կորստի կամ գողության համար:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատասխանատու օգտագործման քաղաքականությունը (RUP) համաձայնագիր է Շրջանի, ծնողների/օրինական խնամակալների և աշակերտների միջև, որը նախանշում է Շրջանի տեխնոլոգիայի և ինտերնետի համապատասխան օգտագործումը: RUP-ի նպատակն է կանխել չարտոնված կամ անօրինական գործողությունները Շրջանի ցանցերում, համակարգերում, և զգայուն տեղեկատվության փոխանցումը: RUP-ը նկարագրում է ծնողների/օրինական խնամակալների և աշակերտների տարբեր պարտականությունները, ինչպիսիք են դրական թվային քաղաքացիության կիրառումը, անձնական տեղեկատվության գաղտնիությունը, գաղտնաբառի պաշտպանությունը և Շրջանի սարքավորումների խնամքը:

Յուրաքանչյուր ուսումնական տարի բոլոր ծնողները/օրինական խնամակալները և աշակերտները, ովքեր օգտագործում են Շրջանի ցանցային հավելվածները, հաշիվը և/կամ ինտերնետը, պետք է ստորագրեն RUP ձևաթուղթը և այն վերադարձնեն դպրոց, որտեղ այն կպահվի ֆայլում: RUP ձևը հասանելի է հետևյալ հասցեով՝ BUL-999-13 Responsible Use Policy 2019:

ԱՇԱԿԵՐՏԻ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ի Սահմանադրության 4-րդ փոփոխությունը անհատներին պաշտպանում է անօրինական խուզարկություններից: Այդուհանդերձ, օրենքը դպրոցի պաշտոնյաներին թույլ է տալիս կատարել աշակերտների խուզարկություններ՝ որոշակի սահմանափակ հանգամանքներում.

1. Ողջամիտ կասկածի հիմքով խուզարկություններ;
2. Եթե աշակերտը դրսևորել է այնպիսի վարք, որը դպրոցի ադմինիստրատորին ստիպում է ունենալ ողջամիտ կասկած, որ նա կատարել է հանցագործություն կամ պատրաստվում է կատարել հանցագործություն, կամ խախտել է կիրառելի օրենքներ, կանոնակարգեր կամ դպրոցի կանոնները, ապա ադմինիստրատորը կարող է կատարել խուզարկություն այդ աշակերտի նկատմամբ: Ադմինիստրատորը պետք է՝
    - Կարողանա ձևակերպել կասկածի պատճառը և միջադեպին առնչվող փաստերը և/կամ հանգամանքները;
    - Կարողանա ողջամտորեն կապել աշակերտի արարքը որևէ կոնկրետ միջադեպի, հանցագործության, կանոնի կամ օրենքի խախտման հետ;
    - Հիմնվի իր իսկ իմացած և/կամ այլ ականատեսներից ստացված թարմ, արժանահավատ տեղեկությունների վրա;
    - Վերահսկի, որ ողջամիտ կասկածի հիմքով կատարված խուզարկությունը չափից ավելի չլինեն՝ նկատի ունենալով աշակերտի տարիքը, սեռը և զանցանքի բնույթը;
3. Ողջամիտ կասկածի հիմքով աշակերտի խուզարկություն կատարելիս դպրոցի պաշտոնյաները պետք է պահպանեն հետևյալ գործելակերպերը՝
    - Կատարել խուզարկություն միայն այն դեպքում, երբ կան կասկածի հստակ և որոշակի պատճառներ, և առկա են փաստեր, որոնք աշակերտին կապում են զանցանքի որևէ կոնկրետ միջադեպի հետ;
    - Բաճկոնները, դրամապանակները, գրպանները, ուսապարկերը, պայուսակները և աշակերտի ունեցած այլ պիտույքները կարող են խուզարկվել՝ խելամտորեն անհրաժեշտ չափով;
    - Ոչ մի դեպքում չպետք է կատարել մարմնի խուզարկություն կամ մերկացնելով խուզարկություն;
    - Խուզարկությունը կարող են կատարել խուզարկվող աշակերտի սեռին պատկանող դպրոցի պաշտոնատարները, երբ դա հնարավոր է;
    - Ողջամիտ կասկածի հիմքով խուզարկությունները պետք է կատարվեն առանձնացված վայրում, որտեղ խուզարկությունը տեսանելի չի լինի մյուս աշակերտների կամ դպրոցի անձնակազմի համար (բացառությամբ դպրոցի ադմինիստրատորի կամ նշանակված վկայի):

ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ԴՊՐՈՑԻՑ ՀԵՌԱՑՈՒՄ

Աշակերտների կարգապահության և հեռացման հարցերով գրասենյակը (SDES) վերահսկում և օգնություն է տրամադրում Շրջանում աշակերտների պաշտոնական կարգապահությանը վերաբերող բոլոր խնդիրների համար: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք https://achieve.lausd.net/Page/629 կամ կապվեք (213) 202-7555 հեռախոսահամարով:

Դպրոց հաճախման ժամանակավոր կասեցումը սահմանվում է, որպես ուղղիչ նպատակով աշակերտի հեռացում ընթացիկ դասերից: Աշակերտին կարելի է ժամանակավոր հեռացնել ոչ ավելի, քան հինգ (5) հաջորդական դպրոցական օրով [EC-ի բաժին 48925 (d)]:

Դպրոցից հեռացումը սահմանվում է, որպես աշակերտի ազատում՝ (1) անմիջական վերահսկողությունից և ստուգումից, կամ՝ (2) դպրոցի աշխատակազմի ընդհանուր վերահսկողությունից [EC 48925 (b)]: Լոս Անջելեսի միացյալ շրջանում SDES-ը պատասխանատու է հեռացման ենթակա աշակերտների համար արդար և անկողմնակալ լսումների համար, ինչպես նաև՝ համապատասխան ընթացակարգով իրավունքներ ապահովելու համար: Աշակերտը կարող է հեռացվել առանց ժամանակավոր կասեցում կիրառելու («անմիջապես» հեռացում), ուստի հեռացման ժամանակահատվածում նրան չի թույլատրվի հաճախել կամ մասնակցել Լոս Անջելեսի միացյալ շրջանի որևէ դպրոց կամ ծրագրին, կամ հեռացման կիրառումը կարող է դադարեցվել, ինչի դեպքում հեռացված աշակերտը կարող է հեռացման ժամանակահատվածում մասնակցել Լոս Անջելեսի միացյալ շրջանի որևէ այլընտրանքային կրթական ծրագրի (EC-ի բաժին 48917): Հեռացման ժամանակահատվածը կարող է ներառել կիսամյակի մնացած ժամանակահատվածը, որի ընթացքում խորհուրդը հեռացրել է աշակերտին, կամ՝ կիսամյակի մնացած ժամանակահատվածը՝ գումարած հաջորդ կիսամյակը, կամ մեկ օրացուցային տարի՝ կախված աշակերտի կատարած խախտումից և/կամ նախկինում նրա սոցիալական ադապտացման փորձից: Աշակերտները, որոնց առաջարկվում է հեռացնել, իրավունք ունեն հեռացման լսումների և դիմելու Կրթական խորհրդին՝ նախքան խորհուրդը հեռացնելու վերջնական որոշում կայացնի: Հեռացման բողոքը կարող է ներկայացվել Լոս Անջելեսի վարչաշրջանի Կրթության գրասենյակ:

1. Ժամանակավոր կասեցումներ կամ հեռացումներ սահմանելու իրավասությունը տարածվում է դպրոցական գործունեությանը և հաճախումներին առնչվող վատ վարքի վրա, որը ի հայտ է գալիս ցանկացած ժամանակ, այդ թվում, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝
    - Դպրոցի տարածքում գտնվելիս;
    - Դպրոց գնալիս և դպրոցից վերադառնալիս;
    - Ճաշի ընդմիջման ժամանակ, լինի դա դպրոցի տարածքում թե դրանից դուրս;
    - Դպրոցի կողմից հովանավորվող որևէ միջոցառման գնալիս, միջոցառման ընթացքում կամ միջոցառումից վերադառնալիս;
    - Դպրոցական ավտոբուսով երթևեկելիս
    - Վիրտուալ դասասենյակի կարգավորումներ
2. Այլ ուղղիչ միջոցներ (միջամտություններ) (EC-ի բաժին 48900.5)

Ժամանակավոր դասից հեռացումը, այդ թվում նաև՝ վերահսկվող ժամանակավոր հեռացումը (ինչպես օրինակ՝ դպրոցի տարածքում գտնվելը կամ դասարանից դուրս հանելը) պետք է կիրառել միայն այն դեպքում, երբ այլ ուղղիչ միջոցները ձախողվել են պատշաճ վարքի դրսևորման համար և/կամ առկա է անվտանգությանը սպառնացող ռիսկ: Կիրառված այլ ուղղիչ միջոցների մասին պետք է արձանագրություն կազմել և պահել աշակերտի կարգապահական թղթապանակում և հասանելի դարձնել (EC-ի բաժին 49069.7):

Ուսուցիչը կարող է աշակերտին հեռացնել դասից EC-ի 48900 բաժնում թվարկված ցանկացած արարքի համար, բացառությամբ EC-ի 48900 (k)(1) բաժնում նկարագրված դիտավորյալ անհնազանդության, ինչպես նշված է Խորհրդի հետևյալ որոշման մեջ. Դպրոցական կարգապահության քաղաքականություն և Դպրոցի մթնոլորտի վերաբերյալ իրավունքների օրինագիծ: Ուսուցչի կողմից դասից հեռացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հղումով՝ https://achieve.lausd.net/Page/629:

ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՄԱՆ/ԴՊՐՈՑԻՑ ՀԵՌԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐ (EC-Ի ԲԱԺԻՆ 48900 ET. SEQ.)

1. (1) Աշակերտը ֆիզիկական վնասվածք է պատճառել, փորձել է պատճառել կամ սպառնացել է վնաս պատճառել մեկ ուրիշ անձի;
   (2) Միտումնավոր կերպով ուժ կամ բռնություն է գործադրել մեկ ուրիշի հանդեպ, բացի ինքնապաշտպանության դեպքերից;
2. (Տիրապետել, վաճառել կամ այլապես տրամադրել է ցանկացած հրազեն, դանակ, պայթուցիկ նյութ կամ այլ վտանգավոր առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ, այս տեսակի որևէ առարկայի տիրապետելու պարագայում, աշակերտը տվյալ առարկային տիրապետելու համար նախօրոք ստացել է գրավոր թույլտվություն դպրոցի լիազորված աշխատողից, ինչը համաձայնեցվել է տնօրենի կամ տնօրենի ներկայացուցչի հետ;
3. Ապօրինաբար տիրապետել, օգտագործել, վաճառել կամ այլապես տրամադրել է կամ եղել է առողջության և անվտանգության օրենսգրքի բաժին 10-ի Գլուխ 2-ում (սկսած 11053 կետից) թվարկված որևէ վերահսկվող նյութի, ոգելից խմիչքի կամ ցանկացած այլ տիպի հարբեցնող նյութի ազդեցության տակ;
4. Ապօրինաբար առաջարկել, կազմակերպել է Առողջության և անվտանգության օրենսգրքի Մաս 10-ի գլուխ 2-ում (սկսած 11053 կետից) թվարկված որևէ վերահսկվող նյութի՝ ալկոհոլային խմիչքի կամ ցանկացած այլ տիպի հարբեցնող նյութի վաճառքը կամ բանակցել է նշված նյութերի վաճառքի համար, այնուհետև վաճառել, առաքել կամ որևէ այլ կերպ մեկ ուրիշ անձի մատակարարել է հեղուկ կամ պինդ նյութը՝ ներկայացնելով դա որպես վերահսկվող նյութ, ալկոհոլային խմիչք կամ հարբեցնող նյութ;
5. Կատարել կամ փորձել է կատարել գողություն կամ շորթում;
6. Վնաս է հասցրել կամ փորձել է վնաս հասցնել դպրոցական կամ մասնավոր գույքին;
7. Գողացել է կամ փորձել է գողանալ դպրոցի կամ մասնավոր գույք;
8. Տիրապետել կամ օգտագործել է ծխախոտ, կամ ծխախոտ ու նիկոտին պարունակող արտադրատեսակներ, այդ թվում, բայց ոչ միայն՝ սիգարետներ, սիգարներ, փոքր սիգարներ, մեխակով սիգարետներ, անծուխ ծխախոտ, քթախոտ, ծամելու փաթեթներ և բետել: Այնուամենայնիվ սույն կետը չի արգելում աշակերտին օգտագործել կամ պահել բժշկի կողմից նշանակված դեղեր;
9. Կատարել է անվայել արարք կամ շարունակաբար օգտագործել է հայհոյական կամ գռեհիկ խոսքեր;
10. Ապօրինաբար պահել է կամ ապօրինաբար առաջարկել, կազմակերպել է թմրանյութերի պատրաստման կամ օգտագործման պարագաների և նյութերի վաճառքը, կամ բանակցել է դրանց վաճառքի համար, ինչպես դա սահմանված է Առողջության և անվտանգության օրենսգրքի բաժին 11014.5-ում;
11. (1) Խոչընդոտել է դպրոցական (համադպրոցական) միջոցառումներին (ժամանակավոր դուրս հանելը հնարավոր է միայն ադմինիստրատորի կողմից; դպրոցից չհեռացնել) (4-ից 12-րդ դասարաններ);
12. Իմանալով ընդունել է գողացված դպրոցական կամ մասնավոր գույք;
13. Պահել է նմանակված հրազեն;
14. Կատարել է կամ փորձել է կատարել սեռական բռնություն, կամ ձեռք է տվել մեկ ուրիշի մարմնի սեռական մասերին՝ առանց վերջինիս համաձայնության;
15. Հետապնդել, սպառնացել կամ ահաբեկել է մի աշակերտի, որը դպրոցական կարգապահական վարույթի մեջ ընդգրկված է որպես բողոքող վկա կամ վկա՝ նպատակ հետապնդելով կա՛մ տվյալ աշակերտին հետ պահել ցուցմունք տալուց, կամ վրեժ լուծելով տվյալ աշակերտից՝ որպես վկա հանդես գալու համար, կամ՝ երկուսն էլ;
16. Ապօրինաբար առաջարկել, կազմակերպել է վաճառել, կամ բանակցել է վաճառել կամ վաճառել է միայն դեղատոմսով վաճառվող «Սոմա» դեղը;
17. Զբաղվել է կամ փորձել է զբաղվել ճնշումների միջոցով խմբերում ընդգրկելու գործողություններ;
18. Բուլինգի գործողություններին մասնակցություն, որը սահմանվում է որպես ցանկացած լուրջ կամ շարունակական ֆիզիկական կամ բանավոր գործողություն կամ վարք, ներառյալ գրավոր կամ էլեկտրոնային հաղորդակցությունը, որն ուղղված է հատուկ աշակերտի կամ աշակերտների խմբին: Բուլինգինգը ներառում է կիբերսեքսուալ ահաբեկում, ինչպես սահմանված է ԵՄ 48900(r) բաժնում;
19. Օժանդակել է մեկ այլ անձի ֆիզիկական վնասվածք հասցնելուն կամ ֆիզիկական վնասվածք հասցնելու փորձին կամ դրդել է նման արարքի կատարումը (միայն ժամանակավոր հեռացում):

48900.2 Կատարել է սեռական ոտնձգություն (4-ից 12-րդ դասարաններ):

48900.3 Կատարել, փորձել է կատարել, սպառնացել է կատարել կամ մասնակցել է ատելության հողի վրա կատարվող բռնի արարքի (4-ից 12- րդ դասարաններ):

48900.4 Միտումնավոր կերպով մասնակցել է դպրոցական շրջանի աշխատակազմի կամ աշակերտների դեմ ուղղված ոտնձգություններին, սպառնալիքներին կամ ահաբեկման գործողություններին (4-ից 12-րդ դասարաններ):

48900.7 Ահաբեկչական սպառնալիքներ է տվել դպրոցի աշխատողների կամ գույքի հասցեին, կամ երկուսը միասին:

Նախքան դպրոցից ժամանակավոր հեռացնելը, դպրոցի տնօրենը/պաշտոնակատարը ոչ պաշտոնական ժողով կանցկացնի աշակերտի հետ, որտեղ աշակերտը կտեղեկացվի կարգապահական գործողության պատճառի մասին, այդ թվում՝ հարկ եղած դեպքում, ուղղիչ այլ միջոցների և ապացույցի մասին, որոնք ձեռնարկվել են նախքան դպրոցից հեռացնելը, ինչպես նաև հնարավորություն կտրվի աշակերտին՝ ներկայացնելու իր տարբերակը և փաստերը (EC-ի բաժին 48911): Եթե դպրոցը որոշում է, որ կա արտակարգ իրավիճակ, որը սահմանվում է որպես իրավիճակ, որը հստակ վտանգ է ներկայացնում աշակերտների կամ դպրոցի անձնակազմի կյանքին, անվտանգությանը կամ առողջությանը, ապա ոչ պաշտոնական ժողով չի պահանջվում: Տե՛ս Grounds for Suspension and Expulsion

Դպրոցից հեռացման առաջադրման հանգամանքներ (EC-ի բաժին 48915)
Տնօրենը կամ դպրոցների վերակացուն պետք է առաջադրի աշակերտի հեռացումը հետևյալ որևէ հանցանքի դեպքում, որը կատարվել է դպրոցի տարածքում, կամ դպրոցի տարածքից դուրս՝ դպրոցական միջոցառման ժամանակ, բացի այն դեպքերից, երբ տնօրենը կամ դպրոցների վերակացուն պարզում է, որ տվյալ պայմաններից ելնելով հեռացումը անհրաժեշտ չէ, կամ եթե գտնում է, որ այլընտրանքային պատժի միջոցները կհանդիսանան բավարար, տվյալ պարագայում՝

1. Մեկ ուրիշ անձին ֆիզիկական վնասվածք հասցնելը, բացի ինքնապաշտպանության դեպքից;
2. Դանակի կամ մեկ ուրիշ վտանգավոր առարկայի առկայությունը, որը աշակերտին ողջամիտ օգտագործման համար հարկավոր չէ;
3. Հետևյալ վերահսկվող նյութերի ապօրինի տիրապետումը, բացի հետևյալից՝
   - Առաջին բռնագրավումը ոչ ավելի քան 1 ունցիա մարիխուանա տիրապետելու համար, բացի խտացված կանեփից;
   - Առանց դեղատոմսի դեղորայքի առկայությունը՝ աշակերտի կողմից բժշկական նպատակով օգտագործման համար, կամ բժշկի կողմից աշակերտի համար դուրս գրված դեղորայք;
4. Գողություն կամ շորթում;
5. Դպրոցի որևէ աշխատակցի նկատմամբ հարձակումը կամ ծեծը:

Տնօրենը կամ դպրոցների վերակացուն պետք է անմիջապես կասեցնի և առաջադրի այն աշակերտի հեռացումը, որը նրա պարզորոշմամբ կատարել է ստորև նշված որևէ գործողությունը՝ դպրոցում կամ դպրոցի տարածքում, կամ դպրոցական ծրագրերում մասնակցելիս, դպրոցի տարածքից դուրս՝

1. Հրազենի տիրապետում, վաճառք կամ պատրաստում;
2. Անձի վրա դանակ թափահարում;
3. Վերահսկվող նյութերի անօրինական վաճառք;
4. Սեռական հարձակում գործելը կամ սեռական հարձակման փորձ;
5. Պայթուցիկ նյութերի առկայություն:

Տնօրենը կամ դպրոցների վերակացուն կարող է առաջադրել աշակերտի հեռացումը դպրոցից մնացած հիմքերով (ինչպես նշված է EC-ի բաժին 48900-ում):

Հաշմանդամություն ունեցող աշակերտների հաճախման ժամանակավոր կասեցում/դպրոցից հեռացում
Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար օրենքը պահանջում է լրացուցիչ ընթացակարգեր և քննարկումներ:

Հաճախման ժամանակավոր կասեցում.

Հատուկ կրթություն. Երբ հատուկ կրթական ծառայություններից օգտվող աշակերտը ժամանակավորապես հեռացվում է, ապա դպրոցի աշխատակազմը պետք է որոշի՝ անհրաժե՞շտ է արդյոք հրավիրել Անհատական կրթական ծրագրի քննարկման ժողով՝ Վարքի միջամտության պլան կազմելու համար, թե՞ պետք է վերանայել և փոփոխել արդեն իսկ գոյություն ունեցող Վարքի միջամտության պլանը (BIP)՝ առավել նպատակաուղղված վարքային ուսուցում և միջամտություններ կազմակերպելու համար՝ վատ վարքագծի կրկնվելը կանխելու նպատակով: Եթե աշակերտին տրվել է կասեցում, որը (1) ուսումնական տարվա ընթացքում հասել է առնվազն հինգ (5) կուտակային օրվան, (2) ուսումնական տարվա ընթացքում հասել է 10 կուտակային օրվան, ապա պետք է անցկացվի «Կասեցման IEP» կասեցման առաջին օրվանից սկսած 10 ուսումնական օրվա ընթացքում: IEP թիմը պետք է մտածի, թե արդյոք անհրաժեշտ է ավելացնել և/կամ փոփոխել աջակցություն(ներ) և/կամ ծառայություն(ներ):

Բաժին 504՝ Այն աշակերտը, որն ունի Բաժին 504-ով նախատեսված ծրագիր, համարվում է ընդհանուր հանրակրթական դպրոցի աշակերտ և կարող է ժամանակավորապես հեռացվել նույնքան օր, որքան հանրակրթական դպրոցի աշակերտը, սակայն 10-օրյա հեռացման դեպքում Բաժին 504 Դրսևորման որոշման ժողովում պետք է լինի վերլուծություն՝ վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, փոփոխելու ընթացիկ Բաժին 504 պլանը՝ ներառյալ համապատասխան հարմարեցումները թարմացնելը կամ մշակելը, ըստ պահանջների:

Հեռացում
Հատուկ կրթություն. Հատուկ կրթական ծառայություններից օգտվող աշակերտին դպրոցից հեռացման հրամանը ներկայացնելուց առաջ Անհատական կրթական ծրագրի խումբը պետք է հրավիրի նախահեռացման ժողով և կատարի աշակերտի արարքների վերաբերյալ որոշմանը նվիրված ժողով: Եթե հաշմանդամություն ունեցող աշակերտը հեռացվում է դպրոցից, նա իրավունք ունի հեռացման ժամկետում օգտվելու այն ծառայություններից, որոնք նախատեսված են իր անհատական կրթական ծրագրով: Աշակերտը նաև իրավունք ունի հեռացման ժամկետում գտնվելու ընթացքում օգտվել այն ծառայություններից, որոնք հասանելի են հեռացումից հետո (տես ստորև՝ «Վերականգնումը և վերահաստատումը հեռացումից հետո»): Եթե աշակերտը չի հեռացվում դպրոցից, ապա նրան տեղավորում են աշակերտի Անհատական կրթական ծրագրով սահմանված ամենահարմար միջավայրում:

Բաժին 504՝ Ըստ Բաժին 504-ի սպասարկվող աշակերտի վտարումը համարվում է տեղի կարգապահական փոփոխություն, և կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե դպրոցի Բաժին 504-ի թիմը անցկացնում է աշակերտի վարքում հաշմանդամության պատճառի դրսևորում (MDA) լինելը կամ չլինելը որոշելու քննություն և պարզում է, որ կարգապահական գործողության ենթարկվող աշակերտի վարքը հաշմանդամության ուղղակի դրսևորում չէ և/կամ ուղղակի հետևանք չէ այն բանի, որ Շրջանը ձախողել է իրականացնել աշակերտի Բաժին 504-ի ծրագիրը՝ հարկ եղած դեպքում: Այնուամենայնիվ, եթե աշակերտի հեռացման հանձնարարականը ներառում է անօրինական թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործումը կամ պահպանումը, աշակերտը կորցնում է 504-րդ Բաժինով նախատեսված ընթացակարգային պաշտպանությունը, ներառյալ Դրսևորման որոշման վերլուծություն կատարելու պահանջը՝ նախքան տեղաբաշխման կարգապահական փոփոխությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ծնողների ուղեցույցը Հատուկ կրթության ծառայությունների համար(ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները):

Հաճախման ժամանակավոր կասեցման և փոխադրման բողոքարկում
Հաճախման ժամանակավոր կասեցման և փոխադրման բողոքարկումները կարող են ուղղակիորեն ներկայացվել Տարածաշրջանային գրասենյակ:

Դպրոցից հեռացման վերակնգնում և վերահաստատում
EC Բաժիններ 48916 և 48916.1-ի և Համագումարի 922 օրինագծի համաձայն՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանը ստեղծեց Աշակերտների կարգապահության և հեռացման հարցերով աջակցության բաժին (SDES)՝ ապահովելու AB 922-ի պարտադիր ծառայություններ և հեշտացնելու վերականգնումը բոլոր հեռացված աշակերտների համար: Այն օրվանից, երբ Խորհուրդը միջոցներ է ձեռնարկում հեռացնելու համար, հեռացումն ուժի մեջ է մտնում: Լոս Անջելեսի միացյալ շրջանում հեռացման կիրարկումների մեծ մասը կասեցվում է, և աշակերտներին թույլատրվում է մնալ Շրջանում՝ վերականգնողական միջամտություններ ստանալու համար SDES բաժնի կողմից տրամադրված AB 922 Ծրագրի միջոցով: Հեռացման կարգադրությունից հետո AB 922-ի աշխատակազմն աշխատում է Խորհրդի անունից՝ համակարգելու ծառայությունները, ներառյալ դպրոցական տեղավորումը, բոլոր հեռացված աշակերտների համար: Յուրաքանչյուր հեռացված աշակերտի համար մշակվում է վերականգնողական ծրագիր, որը ներառում է, բայց չի սահմանափակվում վարքագծի, հաճախումների և ակադեմիական առաջադիմության բարելավմամբ: AB 922 Ծրագրի նպատակն է օգնել աշակերտներին ձեռք բերել ակադեմիական և սոցիալական հմտություններ, որոնք կնպաստեն դպրոցական հաջող փորձ ունենալու նրանց կարողությանը, երբ նրանք վերադառնան ավանդական դպրոցական ծրագրին:

ՀՐԱԶԵՆԻՑ ՁԵՐԾ ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑՆԵՐ

Դպրոցական ուսումնական հաստատություններում հրազեն պահելն արգելված է «Զենքից զերծ անվտանգ դպրոցներ» դաշնային օրենքով և Կալիֆորնիայի օրենքով: Հրազենով հայտնաբերված աշակերտներին կկալանավորեն, կզրկեն դպրոց հաճախելուց և կառաջարկեն հեռացնել: Զենքի առկայությունը ներառում է, բայց չի սահմանափակվում պահարաններում, դրամապանակներում, ուսապարկերում կամ ավտոմեքենաներում պահելով:

ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԱՅԼ ԴՊՐՈՑ

Բարելավման տեղափոխումները (OT) դպրոցի կամ Շրջանի կողմից նախաձեռնված, մանրամասնորեն ծրագրված աշակերտի տեղափոխման ծրագիր է՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոցներում՝ իրավական պաշտպանական և ուղղիչ պատճառներով: Այն տրվում է աշակերտի վատ վարքագծի դեպքում՝ որպես ուղղիչ այլընտրանքային միջոց, երբ պատշաճ վարքագիծ ապահովելու այլ միջամտությունները ձախողվել են, կամ, երբ ներկա դպրոցում աշակերտի գրանցված լինելը անվտանգության ռիսկ է առաջացնում իրեն կամ մյուսների համար: Տեղափոխման նպատակն է՝ նվազագույնի հասցնել այն գործոնները, որոնք խոչընդոտում են կրթական գործընթացին, և այդպիսով ստեղծել դպրոցական այնպիսի պայմաններ, որոնք բոլորի համար ապահով են և նպաստում են ուսմանը [EC-ի բաժիններ 35160, 35160.1, 48900 (w)]:

ԱԼԿՈՀՈԼԻ, ԾԽԱԽՈՏԻ, ԱՅԼ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐԳԵԼՈՒՄ

Շրջանը օգտագործում է մի շարք միջոցներ՝ ուղղված թմրամիջոցների չարաշահմանն ու բռնությանը, ներառյալ՝ կանխարգելիչ կրթության, կանխարգելման ծառայությունների, միջամտության ռազմավարությունների, խորհրդատվական ծառայությունների և համայնքահեն առողջապահական խմբերին ուղղորդման համակարգերի օգտագործումը: Ծխելը, վեյփինգը և բոլոր ծխախոտի արտադրանքի, մարիխուանայի, ալկոհոլի կամ այլ թմրամիջոցների

օգտագործումը, ներառյալ դեղատոմսով դեղերի չարաշահումը, արգելված են Շրջանի բոլոր օբյեկտներում, ներառյալ Շրջանի սեփականություն հանդիսացող, վարձակալված շենքերը, և Շրջանի տրանսպորտային միջոցներում:

Ըստ *BUL-3403.1-ի, 2001 թվականի «Ոչ մի երեխա ետևում» ակտի պահանջների բարարարում և Title IV-ի «Անվտանգ և թմրամիջոցներից զերծ դպրոցների և համայնքների» ակտ, առողջության նախագիծը* և *Ինտեգրված անվտանգ դպրոցի ծրագիրը* պահանջում են ապացույցների վրա հիմնված միջամտություններ թմրամիջոցների չարաշահման և բռնության կանխարգելման համար: Ըստ *BUL-3277.2, Կանխարգելում, Վաղ միջամտություն, Դաղարեցում, Միջամտություն և Թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի և այլ տոքսիկացնող նյութերի վերաբերյալ աշակերտներին աջակցելու միջոցներ* վերաբերում է աշխատակիցներին և աշակերտներին: Վարչաշրջանի կողմից ընդունված միջամտությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ https://heplausd.net/preventioneducation/: Այս միջամտությունների իրականացումը դպրոցներում նկարագրված է տարբեր դասարանների համար REF-3398.1, REF-3404.1 և REF-3405.1 փաստաթղթերում:

K-12-ում ընդգրկված աշակերտները պետք է ստանան թմրամիջոցների և ծխախոտի չարաշահման մասին ուսուցում, որը ներառված է աշակերտների ընդհանուր առողջության դասընթացում (Առողջության և անվտանգության օրենսգրքի բաժին 11998; EC-ի բաժիններ 51260, 51890): Թմրամիջոցների չարաշահման և բռնության մասին դացընթացի բովանդակությունը դասավանդվում է ըստ *Կալիֆորնիայի առողջապահական կրթության բովանդակության ստանդարտների հանրային դպրոցների K-12 դասարանների համար*: Արդյունավետ ուսուցման համար Կալիֆորնիայի կրթության վարչությունը խորհուրդ է տալիս, որ պետական դպրոցները տարեկան 6-10 ժամ տրամադրեն ալկոհոլի, ծխախոտի օգտագործման, այլ թմրամիջոցների և բռնության կանխարգելման մասին կրթությանը:

Էլեկտրոնային ծխախոտի վաճառքն անչափահասներին արգելված է, ինչը նշանակում է, որ աշակերտները չպետք է ունենան նման սարքեր [Քրեական օրենսգրքի բաժին 308(a)(1)(H)]: Նիկոտինի առաքման էլեկտրոնային համակարգեր (ENDS) օգտագործող, ունեցող կամ առաջարկող, դրանց վաճառքը կազմակերպող աշակերտները **կարող են** ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Եթե պարզվի, որ աշակերտները ունեն այդ սարքերը, ապրանքները կամ որևէ այլ ատրիբուտ, իրերը կվերցվեն և չեն վերադարձվի աշակերտներին: Ծնողներին/օրինական խնամակալներին կտրվի ողջամիտ ժամանակ՝ սարքերը հետ բերելու համար՝ նախքան դրանք հեռացնելը, քանի որ դրանք համարվում են վտանգավոր նյութեր:

Ծնողներին և աշակերտներին խրախուսվում է օժանդակություն ստանալու համար դիմել իրենց դպրոցի տեղամաս: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմե՛ք Կրթության բաժնի առողջապահական կրթության ծրագրին կամ՝ ձեր Տարածաշրջանային գրասենյակի սոցիալական-հուզական ուսուցման ուսուցիչ խորհրդատուին:

ԱՐՁԱԳԱՆՔ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

Արտակարգ իրավիճակների ժամանակ հանրային դպրոցները համայնքում ամենաապահով շինությունների թվում են: Կալիֆորնիայի հանրային դպրոցները հանրային մյուս շինությունների համեմատ կառուցված են ավելի բարձր չափանիշներով՝ ինչպես պահանջում է Տեղանքի մասին ակտը (Field Act): Հետևաբար, դպրոցները, որպես կանոն, ավելի քիչ վնասներ կկրեն երկրաշարժից, քան բնակելի կամ կոմերցիոն շինությունները: Դպրոցները նաև ունեն հրդեհներից ապահովագրման լայնածավալ համակարգեր, որոնք ներառում են հակահրդեհային ազդանշաններ և ջրցան համակարգեր և նախատեսված են աշակերտներին և անձնակազմին պաշտպանելու համար:

Ընդհանրապես, դպրոցներն արձագանքում են արտակարգ իրավիճակներին՝ աշակերտներին հնարավորինս ամենաապահով վայր տեղափոխելով: Հրդեհի կամ երկրաշարժի դեպքում աշակերտներին կտեղափոխեն դասասենյակներից դուրս՝ շենքերի տարածքից հեռու որևէ ապահով հավաքատեղի՝ սովորաբար դպրոցի դաշտ կամ խաղահրապարակ: Փակի տակ մնալու կամ տեղում պատսպարվելու դեպքում աշակերտներին կտեղափոխեն ներս՝ օգտագործելով շենքերը որպես պաշտպանություն:

Արտակարգ իրավիճակների ժամանակ այն ծնողները/օրինական խնամակալները, ովքեր ցանկանում են դպրոցից վերցնել իրենց երեխաներին, հնարավոր է մոտենան դպրոցի շրջագծի մոտ գտնվող Հարցման դարպասին և ներկայացնեն ինքնությունը հաստատող փաստաթուղթ: Սա հատուկ վայր է, որը դպրոցները կօգտագործեն արտակարգ իրավաճակների ժամանակ աշակերտներին դուրս թողնելու համար: Խնդրում ենք հիշել, որ աշակերտներին դուրս կթողնեն միայն այն անձի հետ, ում անունը նշված է աշակերտի՝ Արտակարգ իրավիճակների տեղեկության քարտում: Ծնողները/օրինական խնամակալները պետք է վստահ լինեն, որ Աշակերտի արտակարգ իրավիճակների քարտում նշված տեղեկությունը արդի է և ճշգրիտ, և ծանուցեն դպրոցին ամեն անգամ, երբ արտակարգ իրավիճակների կոնտակտային տվյալներում փոփոխություններ են լինում:

Բռնության սպառնալիքի դեպքում աշակերտներին կպատսպարեն փակ դասասենյակում՝ հեռու այն ամենից, ինչը կարող է վնասել իրենց: Արտակարգ իրավիճակի դեպքում, երբ դպրոցի կամպուսը պետք է պաշտպանվի, ծնողները/օրինական խնամակալները չեն կարող իրենց երեխաներին դպրոցից վերցնել՝ մինչև իրավապահ մարմինների կողմից դպրոցի տարածքը ապահով չհայտարարվի: Նման հանգամանքներում աշակերտները պատսպարվում են ապահով վայրում՝ իրենց իսկ անվտանգության համար, և նրանց դուրս կթողնեն միայն այն ժամանակ, երբ ապահով լինի:

ՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆԱՆՈՒՆ ՁԵԿՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ (LASAR-LAUSD)

Լոս Անջելեսի դպրոցների անանուն զեկուցման (LASAR-LAUSD) բջջային հավելվածը (App) կառավարվում է Լոս Անջելեսի միացյալ շրջանի կողմից և շահագործվում է Լոս Անջելեսի դպրոցի ոստիկանության բաժնի կողմից: Դա հավելված է աշակերտների, ծնողների/օրինական խնամակալների և հանրության համար: LASAR-LAUSD-ը հասանելի է միջադեպի կամ հանցագործության մասին հաղորդելու համար, որն ազդում է դպրոցի անվտանգության վրա, սակայն նախատեսված է ոչ ակտիվորեն առաջացող իրավիճակների համար: Արտակարգ իրավիճակների կամ անվտանգության հետ կապված գործողությունների մասին, որոնք նույն պահին են տեղի ունենում, պետք է հաղորդել 911 կամ Լոս Անջելեսի դպրոցական ոստիկանության հաղորդակցության կենտրոն (213) 625-6631 հեռախոսահամարով: LASAR-LAUSD-ը անվճար ներբեռնվող հավելված է, որը կարելի է գտնել App Store-ում:

ՁԵՆՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը գործողություններ է ձեռնարկում համալսարանները պաշտպանելու հրազենային բռնության սպառնալիքից: Աշակերտներին հրազենից պաշտպանելու համար Լոս Անջելեսի միացյալ շրջանը ցանկանում է ձեր ուշադրությունը հրավիրել անչափահասներին զենքի անզգույշ պահումից պաշտպանելու իրավական պարտավորության վրա: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել զենք պահելու մասին օրենքներում այստեղ՝ Safe Storage of Handguns, Los Angeles Municipal Code section 55.21 և Criminal Storage of a Firearm, California Penal Code section 25100(A):

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի քաղաքականությունը ներառում է Վնասատուների ինտեգրված կառավարումը (IPM): Այս ծրագրի բոլոր ասպեկտները կհամապատասխանեն դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև վարչաշրջանի կանոնակարգերին: Վնասատուները կվերահսկվեն աշակերտների և անձնակազմի առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու, արդյունավետ ուսումնական միջավայր պահպանելու և դպրոցական շենքերի և տարածքների ամբողջականությունը պահպանելու համար: Լոս Անջելեսի միացյալ շրջանի նպատակն է ապահովել վնասատուների խնդիրները կառավարելու ամենաանվտանգ և նվազագույն ռիսկային մոտեցումը՝ միաժամանակ պաշտպանելով մարդկանց, շրջակա միջավայրը և գույքը: Շրջանի քաղաքականությունը կենտրոնանում է երկարաժամկետ կանխարգելման վրա և վնասատուների դեմ պայքարի համապատասխան մեթոդներ ընտրելիս առաջին հերթին ուշադրություն կդարձնի ոչ քիմիական մեթոդներին:

Հատուկ կոմիտե, ինչպես նաև Լոս Անջելեսի միացյալ շրջանի աշխատակիցներ, պատասխանատու է վերոնշյալ քաղաքականության իրականացման, այդ թվում՝ ցածր ռիսկայնության պեստիցիդների և հերբիցիդների հաստատման համար: Պեստիցիդները և հերբիցիդները պետք է նախապես հաստատվեն Լոս Անջելեսի միացյալ շրջանի Շրջակա միջավայրի առողջության և անվտանգության գրասենյակի կողմից՝ դրանց բաղադրության, նախազգուշական միջոցների և օգտագործման ցածր ռիսկայնության մեթոդների ուշադիր ուսումնասիրությունից հետո: Պեստիցիդները և հերբիցիդները կարող են կիրառվել միայն Լոս Անջելեսի միացյալ շրջանի՝ վնասատուների կառավարման արտոնագրված տեխնիկական աշխատակիցների կողմից: Պեստիցիդների/հերբիցիդների օգտագործումը չի թույլատրվում դպրոցին կից աշխատակազմի, կապալառուների, աշակերտների կամ ծնողների կողմից:

Լոս Անջելեսի միացյալ շրջանը պեստիցիդների կիրառությունների մասին ծանուցում է ծնողներին/օրինական խնամակալներին, աշխատակիցներին և աշակերտներին՝ տրամադրելով IPM-ի և դրա նպատակների ամփոփ նկարագիրը, ծրագրի քաղաքականությունը, «Ծանուցման վերաբերյալ դիմումի» ձևաթերթը և սույն ձեռնարկում ներառված՝ IPM-ի թիմի կողմից հաստատած ապրանքատեսակների ցանկը:

Հետևյալ տեղեկությունները մատչելի են նաև դպրոցի գլխավոր գրասենյակում՝

1. Հաստատված պայքարի միջոցների ցուցակը
2. Դպրոցում իրականացվող IPM-ի աշխատանքների տեղեկամատյանը
3. Ծանուցման խնդրանքի ձևը՝ ծնողների/օրինական խնամակալների կողմից ստորագրման համար, եթե նրանք ցանկանում են 72 ժամ առաջ տեղեկացվել պեստիցիդների/հերբիցիդների օգտագործման մասին (բացառությամբ անհետաձգելի իրավիճակների, որոնք կորոշվեն IPM ծրագրի Համակարգողի կողմից):

Ծնողները/օրինական խնամակալները պետք է տեղեկացնեն դպրոցի տնօրենին Ծանուցման հարցման ձևաթղթում, եթե կարծում են, որ իրենց երեխայի առողջության վրա կարող են ազդել թունաքիմիկատները:

Նախազգուշացնող նշանները պետք է նկատելիորեն փակցված լինեն ցանկացած տարածքի շուրջը՝ առնվազն 72 ժամ առաջ և նշանակված ժամկետով՝ ոչ-անհետաձգելի իրավիճակում ցուցակում չընդգրկված պեստիցիդների/հերբիցիդների օգտագործումից հետո: Նախազգուշական նշանի տեղադրման ժամանակը որոշվում է՝ ըստ քիմիական նյութի տեսակի և ազդեցության գործողության ժամկետի: Ըստ վերը սահմանված անհետաձգելի իրավիճակի դեպքի՝ նշանների տեղադրումը կատարվում է կիրառության ժամանակ: IPM ծրագրի և քաղաքականության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ծնողները/օրինական խնամակալները կարող են դիմել Լոս Անջելեսի միացյալ շրջանի սպասարկման և գործառնությունների մասնաճյուղային գրասենյակ՝ (213) 241-0352 հեռախոսահամարով: Տեղեկությունները հասանելի են նաև https://achieve.lausd.net/Page/18939:

ԱՍԲԵՍՏԻ ԵՎ ԿԱՊԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ասբեստի վտանգի արտակարգ արձագանքման ակտի համաձայն Շրջանի յուրաքանչյուր դպրոց ունի ասբեստի կառավարման ծրագիր, որը պարզում է, թե որտեղ են տեղակայված ասբեստ պարունակող շինարարական նյութերը դպրոցում, և ինչպիսին են այդ նյութերի վիճակը: Դպրոցները պարտավոր են տեղեկացնել անձնակազմին և ծնողներին/օրինական խնամակալներին՝ նախքան ասբեստի հեռացման աշխատանքները սկսելը: Պլանը թարմացվում է յուրաքանչյուր վեց (6) ամիսը մեկ և, հարկ եղած դեպքում, դպրոցի գլխավոր գրասենյակում հասանելի է ուսումնասիրման համար:

Նախքան 1980-ականները, երկրում տարածված էին կապարի հիմքով ներկերը: Սակայն որոշ նոր ներկեր նույպես կարող են կապար պարունակել: Այդ պատճառով՝ ենթադրվում է, որ Լոս Անջելեսի միացյալ շրջանում բոլոր մակերևույթները (ինչպիսիք են պատերը, պատուհանների շրջանակները, գնդակների արկղները) կապար են պարունակում: Լոս Անջելեսի միացյալ շրջանը պահանջում է, որ բոլոր կապալառուները և անձնակազմը, ովքեր գործ ունեն ներկված մակերևույթների հետ, վերապատրաստում անցնեն, որպեսզի այս նյութի հետ ապահով լինի աշխատելը: Եթե այսպիսի վերանորոգումները տեղի են ունենում այն տարածքներում, որտեղ կան վեց (6) տարեկանից ցածր աշակերտներ, ապա ծնողները/օրինական խնամակալները, դպրոցի անձնակազմը կտեղեկացվեն աշխատանքների մասին և նրանց կուղարկվի Բնապահպանական գործակալության գրքույկը՝ «Կապարի անվտանգության ապահովման համար վերանորոգման վավերացված ուղեցույցը»: Այս գրքույկը տեղեկություններ է տրամադրում կապարի վտանգների, առողջության մասին, և թե ինչպես պետք է այս աշխատանքը տեղի ունենա: Գրքույքը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.epa.gov/sites/default/files/documents/renovaterightbrochure.pdf: Կապար պարունակող նյութերով վերանորոգման աշխատանքների վերաբերյալ ծնողների և տնօրենների ծանուցումների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Բնապահպանական առողջության և անվտանգության գրասենյակի (OEHS) անվտանգության տեղեկագիր թիվ 19-03-ում, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/wu62gox:

Կապարը սովորաբար օգտագործվում էր նաև սանտեխնիկայի և կից հարմարանքների մեջ: Լոս Անջելեսի միացյալ շրջանն ակտիվորեն վերահսկում է ջրի որակը և ստուգում կապարի քանակը խմելու ջրի մեջ: Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի բոլոր դպրոցները ստուգվել են կապարի համար: Խմելու ջրի մեջ կապարի մասին տեղեկության, այդ թվում՝ նմուշառման արդյունքների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝ https://achieve.lausd.net/Page/3450:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՄԵԳԱՆԻ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ծնողները/օրինական խնամակալները և հասարակության անդամներն իրավունք ունեն վերանայել գրանցված սեռական հանցագործների վերաբերյալ տեղեկությունները Դպրոցական շրջանի տեղական իրավապահ մարմնի գլխավոր գրասենյակում: (Քրեական օրենսգրքի բաժին 290.4): Համաձայն Շրջանի քաղաքականության՝ դպրոցի տնօրենը կամ նշանակված անձը պետք է ամեն տարի ստուգի բոլոր կամավոր դիմորդներին, այդ թվում՝ Լոս Անջելեսի միացյալ աշխատակից կամավորներին և շարունակող կամավորներին ուսումնական տարվա սկզբին կամ նախքան կամավոր ծառայությունը սկսելը ըստ Կալիֆորնիայի Մեգանի օրենքի առցանց տվյալների բազայի՝ սեռական հանցագործների համար, հետևյալ հասցեով՝ http://www.meganslaw.ca.gov/:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՍԿԱԾՅԱԼ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵԿՈՒՅՈՒՄ

Ձեկուցման պահանջները

Ընդհանուր առմամբ, երեխայի բռնությունը մեկ այլ անձի կողմից ոչ պատահական կերպով երեխային հասցված ֆիզիկական վնասվածքն է կամ մահը: Երեխայի բռնության օրինակները կարող են ընդգրկել, բայց սահմանափակված չեն հետևյալ թվարկվածներով՝ ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, այդ թվում՝ անչափահասին սեռական առևտրային նպատակով բռնությունը, միտումնավոր դաժանությունը և մտավոր տառապանք պատճառելը: Երեխային անտեսելը նշանակում է երեխայի հանդեպ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերել՝ երեխայի բարեկեցության համար պատասխանատու անձի կողմից՝ երեխայի առողջությանը կամ բարեկեցությանը վնաս կամ սպառնալիք մատնանշող հանգամանքներում, և կարող է ներառել գործողությունների կամ բացթողումների միջոցով վնասի պատճառումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով թվարկվածով՝ սննդի, հագուստի կամ բժշկական օգնության տրամադրման միտումնավոր ձախողումը: Շրջանի ցանկացած աշխատակից, ով տեղյակ է կամ ողջամիտ կասկած ունի, որ երեխայի բռնություն կամ անտեսում է տեղի ունեցել կամ տեղի է ունենում, օրենքով պետք է անմիջապես կամ, որքան գործնականում հնարավոր է շուտ, զանգահարի և զեկուցի երեխայի բռնության կասկածի մասին երեխաների պաշտպանության ծառայության համապատասխան գործակալությանը, ինչպես օրինակ՝ ոստիկանության տեղական բաժին, Լոս Անջելեսի շրջանի Շերիֆի բաժին, կամ Երեխաների և ընտանիքի հարցերով ծառայությունների վարչությանը, իսկ զեկույցը պետք է ներկայացվի 36 ժամվա ընթացքում: Լոս Անջելեսի դպրոցական շրջանի դպրոցի ոստիկանության բաժանմունքը (LASPD) *օրենքի համաձայն չի համարվում երեխաների պաշտպանության ծառայությունների գործակալություն: Այդ պատճառով՝ LASPD ոստիկանության բաժնի սպաները չեն կարող լինել երեխայի բռնության վերաբերյալ զեկույցներ ընդունողներ:* Երեխայի բռնության կասկածի վերաբերյալ զեկույցները գաղտնի են պահվում այնպես, ինչպես նման զեկույց հաղորդող աշխատակցի ինքնությունը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՇԱԿԵՐՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ, ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄ

Աշակերտների բոլոր գրառումների ստուգումը պետք է կատարվի սովորական դպրոցական ժամերին: Ավարտելուց հետո ծնողի/օրինական խնամակալի (կամ աշակերտի, երբ կիրառելի է) և դպրոցի պաշտոնյայի համար կնշանակվի փոխադարձ հարմար ժամանակ: Շրջանի հավաստագրված աշխատակիցը պետք է ներկա լինի՝ աջակցելու և գործելու որպես ֆայլի պահապան: Երբ մեկ (1) աշակերտի մասին գրառումը ներառում է այլ աշակերտների վերաբերյալ տեղեկատվություն, ծնողը/օրինական խնամակալը (կամ աշակերտը, երբ կիրառելի է), ով ցանկանում է ստուգել և ուղղել այդպիսի նյութը, կարող է տեսնել միայն այն մասը, որը վերաբերում է այդ ծնողի/օրինական խնամակալի երեխային: Եթե ծնողը/օրինական խնամակալը (կամ աշակերտը, երբ կիրառելի է) պահանջում է աշակերտի արձանագրության ամբողջական կամ մասնակի պատճենը, կտրամադրվի դրա պատճենը: Դպրոցը կամ Տարածաշրջանային գրասենյակը կարող են պատճենահանման վճար գանձել:

Կալիֆորնիայի EC-ի բաժին 49070-ը նախատեսում է, որ բոլոր աշակերտների գրառումների համար, բացի գնահատականներից, ծնողը/օրինական խնամակալը (կամ նախկին աշակերտը) կարող է վիճարկել այդպիսի գրառումների բովանդակությունը՝ նախկան հանդիպելով տնօրենի հետ: Եթե տնօրենը բավարարում է ծնողի/օրինական խնամակալի առարկությունը, գրառումը կուղղվի կամ կջնջվի: Եթե ծնողի/օրինական խնամակալի առարկությունը չբավարարվի, ծնողը/օրինական խնամակալը կարող է բողոք ներկայացնել: Բողոքարկումները նախ պետք է կատարվեն Տարածաշրջանային գրասենյակի տեսուչին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Կրթական խորհրդին: Տարածաշրջանային գրասենյակի տեսուչը և Կրթական խորհուրդը կարող են անկողմնակալ հանձնաժողով հրավիրել՝ առարկության առարկայի վերաբերյալ հետաքննություն անցկացնելու համար: Եթե խումբը բավարարի ծնողի/օրինական խնամակալի առարկությունը, վիճարկվող նյութի ուղղումը, հեռացումը կամ ոչնչացումը կկատարվի: Եթե ծնողի/օրինական խնամակալի առարկությունը ի վերջո մերժվում է, ծնողը/օրինական խնամակալն իրավունք ունի տրամադրել գրավոր հայտարարություն՝ իրենց առարկության վերաբերյալ: Այս հայտարարությունը դառնում է աշակերտի դպրոցական փաստաթղթերի մի մասը, եթե և մինչև այն պահը, երբ առարկվող տեղեկատվությունը չի փոխվել կամ հեռացվել:

1. Գնահատականների վիճարկման հետ կապված առանձին գործընթաց կա: Խնդրում ենք տեսնել Գնահատականի փոփոխության հարցումների գործընթացին վերաբերող բաժինը:
2. Ծնողի կամ չափահաս աշակերտի կողմից զննման, վերանայման կամ վիճարկման ենթակա աշակերտական տեղեկագրեր չեն այն արձանագրությունները կամ տեղեկությունը, որ պահվում են որևէ դպրոցի պաշտոնյայի կողմից՝ բացառապես անձնական հղում կատարելու կամ օգտագործման նպատակներով, և որոնք ոչ ոքի հասանելի չեն՝ բացառությամբ պաշտոնյային փոխարինողին:
3. Աշակերտի կրթության տեղեկագրերը կուղարկվեն այն դպրոց, ուր աշակերտը մտադրություն ունի ընդունվել՝ ըստ այդ դպրոցի կողմից գրավոր դիմումի:

Բողոքներ
Ծնողները/խնամակալներն իրավունք ունեն Շրջանի ընթացակարգերից բխող գաղտնիության իրավունքին առնչվող բողոք ներկայացնել Կալիֆորնիայի նահանգային կրթության վարչությանը և/կամ Ընտանեկան քաղաքականությանը համապատասխանության գրասենյակ՝ Family Policy Compliance Office, U.S. Department of Education, 400 Maryland Ave., Washington, DC 20201 հասցեով:

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ծնողների/օրինական խնամակալների պարտավորությունն է դպրոցին տեղեկացնել հասցեի, հեռախոսահամարի կամ արտակարգ իրավիճակների դեպքում կոնտակտային տվյալներին առնչվող որևէ փոփոխության մասին: Եթե դպրոցը կատարել է իր պարտականությունը՝ բնակավայրի տեղեկությանը վերաբերող 7 ծանուցման պահանջների հարցում, ապա ընտանիքի կողմից հասցեի փոփոխության մասին 30 օրացուցային օրվա ընթացքում չզեկուցելը կհանգեցնի շարունակական գրանցման թույլտվության իրավունքի զրկմանը: Ծնողները/օրինական խնամակալները պետք է ապահովեն հնարավորություն՝ իրենց երեխա(ներ)ի վերաբերյալ և՛ գրավոր (ԱՄՆ փոստ), և՛ բանավոր հաղորդակցություն (հեռախոս, բջջային) ստանալու համար:

Յուրաքանչյուր աշակերտի առողջության և բարեկեցության պաշտպանման և ծնողի/օրինական խնամակալի կամ խնամատարի հետ անմիջապես կապ հաստատելը դյուրին դարձնելու նպատակով՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանը ծնողից/օրինական պաշտպանից պահանջում է արտակարգ իրավիճակների համար կոնտակտային տվյալներ ներկայացնել դպրոցում պաշտոնական Արտակարգ իրավիճակների դեպքում տվյալների քարտի վրա (EC-ի բաժին 49408): Յուրաքանչյուր ծնող/օրինական խնամակալ կամ խնամատար պետք է լրացնի «Աշակերտի արտակարգ իրավիճակների կոնտակտային տվյալների» ձևը յուրաքանչյուր աշակերտի համար՝ ընդունելության ժամանակ, և անհրաժեշտության դեպքում կամ առնվազն տարեկան մեկ անգամ պետք է ներկայացնի թարմացված ձևաթուղթ: Արտակարգ իրավիճակների դեպքում տվյալների քարտը պետք է ընդգրկի հետևյալը, սակայն չսահմանափակվի թվարկածով՝

1. Տան հասցե և ներկայիս հեռախոսահամար՝ ներառյալ բջջային հեռախոս և էլեկտրոնային փոստի հասցե;
2. Աշխատավայրի/բիզնեսի հասցեներ և հեռախոսահամարներ;
3. Բարեկամի/ընկերոջ անուն, հասցե և հեռախոսահամար, ովքեր ծնողի/օրինական խնամակալի անհասանելի լինելու դեպքում լիազորված են արտակարգ իրավիճակում աշակերտին դպրոցից վերցնել և խնամել;
4. Եթե աշակերտը տնից դպրոց և դպրոցից տուն ավտոբուսով է գնում, ներառեք նրա երթուղու վերաբերյալ տեղեկություններ՝ երթուղու համարը, ավտոբուս նստելու և իջնելու վայրը: Հաշմանդամություն ունեցող աշակերտների ծնողները/օրինական խնամակալները նույնպես պետք է նշանակեն չափահաս որևէ այլ անձի՝ արտակարգ իրավիճակի դեպքում իրենց երեխային դպրոցից վերցնելու համար:

Աշակերտներին դպրոցից վերցնելու հնարավորություն կունենան միայն այն անձինք, ում անունը նշված է Աշաշկերտի արտակարգ իրավիճակների տվյալների մասին քարտում՝ բացառությամբ ծնողների/օրինական խնամակալների կողմից առանձին դեպքերի համար ներկայացված գրավոր թույլտվության: Ծնողները/օրինական խնամակալները պարտավոր են թարմացնել արտակարգ իրավիճակների տվյալները յուրաքանչյուր տարի և ցանկացած պահի, երբ փոփոխություն է տեղի ունենում նախնական տրամադրված ցանկացած կոնտակտային տեղեկատվության մեջ: Արտակարգ իրավիճակների համար տրամադրված ծնողների/օրինական խնամակալների և բարեկամների/ընկերների հեռախոսահամարները կարելի է փոխել Ծնողների պորտալի միջոցով՝ https://achieve.lausd.net/Page/10470:

ԱՆՎԱՆ/ՍԵՌԻ ՄԱՐԿԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՑՈՒՄ

Աշակերտների փաստաթղթերը ներառում են օրինական ճանաչված անունը և սեռի մարկերը: Եթե ծնողը/օրինական խնամակալը/չափահաս աշակերտը ցանկանում է, որ աշակերտը ճանաչվի նախընտրելի անունով/սեռով, որը տարբերվում է օրինական ճանաչվածից, ծնողը/օրինական խնամակալը/չափահաս աշակերտը կարող է լրացնել անվան/սեռի մարկերի փոփոխության հայտի ձևը, որը հասանելի է դպրոցում: Նախընտրելի անունը/սեռը կհայտնվի Շրջանի կողմից ստեղծված հաղորդակցությունների և գրառումների մեծ մասում, բայց ոչ բոլորում, թեև օրինական անունը/սեռը կշարունակի օգտագործվել փաստաթղթերում, ինչպես պահանջվում է օրենքով: Եթե անունը/սեռը փոփոխվում է դատարանի որոշմամբ, խնդրում ենք պատճենը տրամադրել դպրոցին, որպեսզի կարողանան թարմացնել աշակերտի փաստաթղթերը:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (FERPA) ՆԵՐՔՈ

Ընտանիքի կրթության իրավունքների և գաղտնիության օրենքը (FERPA) և EC-ի բաժին 49060 ու հաջորդները որոշ իրավունքներ են թույլ տալիս ծնողներին և 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի աշակերտներին (իրավասու աշակերտներին) դպրոցականի ուսումնական տեղեկագրերի վերաբերյալ: Այդ իրավունքներն են՝

1. Աշակերտի ուսումնական տեղեկագրերը զննելու և ուսումնասիրելու իրավունք՝ դպրոցին այդ մասին հարցում անելուց հինգ (5) օր հետո:
   - Իրավունքը ստանալու համար ծնողները/օրինական խնամակալները կամ իրավասու աշակերտները պետք է գրավոր հարցում ներկայացնեն տնօրենին (կամ դպրոցի համապատասխան պաշտոնյային), որը կբացահայտի աշակերտի կրթական գրառումները, որոնք նրանք ցանկանում են վերանայել: Դպրոցի աշխատակիցը միջոցներ կձեռնարկի իրավունքը ստանալու համար և կտեղեկացնի ծնողին/օրինական խնամակալին կամ իրավասու աշակերտին այն ժամանակի և վայրի մասին, որտեղ կարող են ստուգվել գրառումները:
2. Աշակերտի ուսումնական տեղեկագրում փոփոխություն պահանջելու իրավունքը, որը ծնողը/օրինական խնամակալը կամ իրավասու աշակերտը կարծում է, որ սխալ են, ապակողմնորոշող կամ այլ կերպ խախտում են աշակերտի անձնական կյանքի իրավունքները:
   - Այն ծնողները/օրինական խնամակալները կամ իրավասու աշակերտները, ովքեր ցանկանում են դպրոցից պահանջել փոփոխել գրառումը, պետք է գրեն դպրոցի տնօրենին (կամ դպրոցի համապատասխան պաշտոնյային), հստակորեն նշեն իրենց կողմից փոփոխված գրառման մասը և նշեն, թե ինչու պետք է այն փոխվի: Եթե դպրոցը որոշի չփոխել գրառումը, ինչպես ծնողը/օրինական խնամակալը կամ իրավասու աշակերտը խնդրել է, դպրոցը կտեղեկացնի ծնողին/օրինական խնամակալին կամ իրավասու աշակերտին որոշման և այդ որոշումը բողոքարկելու նրանց իրավունքի մասին: Բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կտրամադրվեն ծնողին/օրինական խնամակալին կամ իրավասու աշակերտին: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս այս ձեռնարկի «Աշակերտների տվյալները, ծնողների իրավունքները ստուգելու, վերանայելու և վիճարկելու բովանդակությունը» բաժինը:
3. Գրավոր համաձայնագիր տրամադրելու իրավունք, նախքան դպրոցը կբացահայտի անհատին Անձամբ նույնականացնելու ինֆորմացիան (PII)՝ աշակերտի զեկուցաքարտից, բացառմամբ այն դեպքերի, որ ըստ FERPA-ի/նահանգային օրենքի կարող են բացահայտել առանց համաձայնության:
   - Մեկ (1) բացառություն, որը թույլ է տալիս տեղեկատվություն հրապարակել առանց համաձայնության, դա դպրոցի պաշտոնյաների համար հրապարակումն է, ովքեր ունեն օրինական կրթական շահեր: Դպրոցի աշխատակիցը օրինական կրթական շահ ունի, եթե նա պետք է վերանայի կրթական արձանագրությունները՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու համար: Դպրոցի պաշտոնյաները բաժանվում են երկու (2) լայն կատեգորիաների.
     1) Դպրոցի պաշտոնյան սովորաբար այն անձն է, որին դպրոցը աշխատանքի է ընդունել, որպես ադմինիստրատոր, դասդեկ/պատասխանատու, ուսուցիչ, կամ որպես աջակցող անձնակազմի անդամ (դրանց մեջ են մտնում առողջապահական և բժշկական անձնակազմը և իրավապահ մարմինները), կամ այն անձը, որը դպրոցի խորհրդի անդամ է;
     2) Դպրոցի պաշտոնյան կարող է նաև լինել կամավոր կամ կապալառու՝ դպրոցից դուրս, որոնք կատարում են ինստիտուցիոնալ ծառայություններ կամ գործառույթ, որի համար դպրոցն այլապես պետք է օգտվեր իր սեփական աշխատակազմից, և ովքեր դպրոցի անմիջական հսկողության տակ են՝ ուսումնական տեղեկագրերից աշակերտին անձամբ նույնականացնելու տեղեկության օգտագործման և պահպանման համար: Օրինակ՝ փաստաբաններ, աուդիտորները, բժշկական խորհրդատուներ կամ թերապևտներ, ծնողներ/օրինական խնամակալներ կամ այն աշակերտները, որոնք կամավոր ծառայում են դպրոցի պաշտոնական հանձնաժողովում, օրինակ՝ կարգապահական կամ բողոքարկման հանձնաժողովներ, կամ ծնող/օրինական խնամակալ, աշակերտ, կամ այլ կամավորներ, որոնք օգնում են դպրոցի մեկ այլ պաշտոնյայի իր գործերում:

Իրավունք՝ ներկայացնելու բողոք ԱՄՆ-ի Կրթության վարչություն՝ կապված դպրոցի կամ դպրոցական շրջանի կողմից FERPA-ի պահանջների չհամապատասխանելու ենթադրյալ դեպքերի հետ: FERPA-ն կառավարող գրասենյակի անունը և հասցեն է՝

Family Policy Compliance Office/U.S. Department of Education
400 Maryland Avenue, SW
Washington, DC 20202

Ընտանիքի կրթության իրավունքների և գաղտնիության մասին օրենքը (FERPA) թույլ է տալիս անձնական տվյալների բացահայտումը աշակերտների ուսումնական տեղեկագրերից՝ առանց ծնողի/օրինական խնամակալի կամ իրավասու աշակերտի համաձայնության, եթե բացահայտումը համապատասխանում է FERPA-ի կանոնակարգի բաժին 99.31-ում նշված որոշակի պահանջներին: Բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտումը տրամադրվում է դպրոցի պաշտոնյաներին, ըստ դատական հրամանների կամ օրինական դատական ծանուցագրերի, լիազորված ինֆորմացիոն տեղեկատուների և ծնողին/օրինական խնամակալին կամ իրավասու աշակերտներին տրամադրվող դեպքերի, FERPA-ի կանոնակարգի բաժին 99.32-ը պահանջում է, որ դպրոցն արձանագրի տվյալ բացահայտումը: Ծնողները/օրինական խնամակալները և իրավասու աշակերտներն իրավունք ունեն զննելու և ուսումնասիրելու գրանցված բացահայտումները: Ըստ նահանգային և դաշնային օրենքի՝ դպրոցը կարող է աշակերտի ուսումնական տեղեկագրերից տրամադրել անձնական տվյալներ՝ առանց ծնողի կամ աշակերտի նախապես համաձայնության, եթե հայցող կողմն ունի օրինական կրթական նպատակ և գտնվում է հետևյալ կատեգորիաներից մեկում՝

1. Այլ դպրոցների պաշտոնյաներ, ներառյալ՝ ուսուցիչներ, որոնք ուսուցչական հաստատություններից են կամ այնպիսի հաստատություններից, որոնց դպրոցը հաստատել է որպես օրինական ուսումնական նպատակ ունեցող: Դրանց թվում են կապալառուները, խորհրդատուները, կամավորները կամ այլ կողմեր, որոնց հետ համագործակցում է դպրոցը՝ տարբեր ինստիտուցիոնալ ծառայությունների կամ գործառույթների համար՝ բաժին 99.31(a)(1)(i)(B)(1)–(a)(1)(i)(B)(2) նշված պայմաններին համապատասխանելու դեպքում [բաժին 99.31(a)(1)];
2. Այլ դպրոցի պաշտոնյաներ, դպրոցական համակարգ կամ այն հետմիջնակարգ կրթական հաստատություն, որտեղ աշակերտը փորձում է կամ մտադիր է ընդունվել, կամ որտեղ աշակերտն արդեն գրանցված է, եթե բացահայտման նպատակն առնչություն ունի աշակերտի գրանցման կամ տեղափոխության հետ՝ ըստ բաժին 99.34-ի պահանջների [բաժին 99.31(a)(2)] և [EC-ի բաժին 49068];
3. ԱՄՆ գլխավոր վերահսկիչի գրասենյակի, ԱՄՆ գլխավոր դատախազի, ԱՄՆ կրթության քարտուղարի կամ նահանգային և տեղային ուսումնական հաստատությունների լիազորված ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Կալիֆորնիայի կրթության վարչությունը՝ ծնողի/խնամակալի կամ իրավասու աշակերտի նահանգում: Այս դրույթի ներքո բացահայտումները կարող են կատարվել՝ ըստ բաժին 99.35 պահանջների՝ աուդիտի կամ դաշնային և նահանգի կողմից խրախուսվող կրթական ծրագրերի հետ կապված, կամ դաշնային օրինական պահանջներին համապատասխանեցման կամ հետևելու նպատակով: Այս անձինք հետագայում կարող են PII-ից բացահայտումները փոխանցել արտաքին կողմերին, որոնք նշանակված են իրենց կողմից՝ որպես իրենց ներկայացուցիչներ՝ իրենց անունից որևէ աուդիտ, գնահատում, կամ օրենքի իրականացում կամ համապատասխանեցման գործողություն կատարելու համար՝ [բաժիններ 99.31(a)(3) և 99.35];
4. Ֆինանսական օգնության հետ կապված, որի համար աշակերտը դիմել է, կամ ստացել է, եթե տեղեկությունն անհրաժեշտ է, որպեսզի որոշվի աշակերտի իրավասությունը, աջակցության գումարի չափը, աջակցության պայմանները, կամ՝ իրականացվի այդ աջակցության տրամադրման պայմանները [բաժին 99.31(a)(4)];
5. Նահանգի և տեղական պաշտոնյաներին կամ մարմիններին, որոնց տեղեկությունը մասնավորապես թույլ է տրված բացահայտելու Նահանգի այն հաստատությունից, որ վերաբերում է անչափահասների արդարադատության համակարգին և համակարգի՝ այն աշակերտին արդյունավետորեն ծառայելու կարողությանը, ում ուսումնական տեղեկագրերը թողարկվել են, մինչ դատավճիռ կայացնելը՝ ըստ բաժին 99.38-ի [բաժին 99.31(a)(5)];
6. Կազմակերպություններ, որոնք ուսումնասիրություններ են անում դպրոցների համար կամ դպրոցների անունից՝ հետևյալ նպատակներով՝ (a) զարգացնել, հաստատել կամ կազմակերպել նախնական թեստեր, (b) կազմակերպել աշակերտական օգնության ծրագրեր կամ (c) բարելավել կրթությունը [բաժին 99.31(a)(6)];

7. Հավատարմագրված կազմակերպություններ՝ իրենց հավատարմագրման գործառույթներն իրականացնելու նպատակով [բաժին 99.31(a)(7)];
8. Իրավասու աշակերտի ծնողներ/խնամակալներ, եթե աշակերտը, IRS-ի հարկային նպատակներից ելնելով, կախվածության մեջ է ծնողից [բաժին 99.31(a)(8)];
9. 16 կամ ավելի բարձր տարիքի աշակերտ, ով ավարտել է 10-րդ դասարանը;
10. Առանց ուղեկցի անօթևան աշակերտ, ով 14 կամ ավելի բարձր տարիքի է;
11. Արտակարգ իրավիճակի հետ կապված համապատասխան անձինք, եթե տեղեկությունն անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանեն աշակերտի կամ այլ անձանց առողջությունը կամ անվտանգությունը: Դպրոցները կամ դպրոցական շրջանները, որոնք տալիս են այսպիսի տեղեկություններ՝ սույն ենթագլխի համաձայն, պետք է համապատասխանեն Դաշնային կանոնների օրենսգրքի Գլուխ 34-ի բաժին 99.32-ին (a)(5);
12. Այն գործակալությունները կամ կազմակերպությունները, որոնք կապ ունեն աշակերտի կողմից ֆինանսական աջակցության համար ներկայացրած դիմումի կամ այն ստանալու հետ: Այնուամենայնիվ, աշակերտի կամ նրա ծնողների անձնական նույնականացումը կարող է բացահայտվել, եթե դա անհրաժեշտ լինի ֆինանսական աջակցության նպատակներով աշակերտի իրավասության համար, ֆինանսական օգնության գումարի չափը որոշելու համար, հատկացվող ֆինանսական օգնության պայմանները որոշելու համար, կամ ֆինանսական աջակցության պայմաններն իրականացնելու նպատակով;
13. Դատական հրամանին ենթարկվելու նպատակով կամ օրինական դատական ծանուցագրի դեպքում [բաժին 99.31(a)(9)];
14. Առողջապահական կամ անվտանգության արտակարգ իրավիճակների հետ կապված՝ համապատասխան պաշտոնատար անձինք՝ ըստ բաժին 99.36-ի [բաժին 99.31(a)(10)];
15. Տեղեկություն այն մասին, որ դպրոցը նշանակել է «տեղեկատվական ֆայլերի ցուցակ»՝ ըստ բաժին 99.37-ի [բաժին 99.31(a)(11)], եթե ծնողը/օրինական խնամակալը/իրավասու աշակերտը չի հրաժարվել տվյալների բացահայտումից:

Տեղեկատվական ֆայլերի ցուցակը կամ գրառումների տեղեկատուն սովորաբար այն տեղեկությունն է, որը չի համարվում վնասակար կամ բացահայտվելու դեպքում՝ անհատի անձնական կյանքի ներխուժում չէ, կարող է նաև տրամադրվել դպրոցից դուրս կազմակերպությանը, առանց ծնողի նախնական համաձայնության: Այս տեղեկատուի հիմնական նպատակն է՝ դպրոցին կամ դպրոցական շրջանին հնարավորություն տալ, որ որոշակի դպրոցական հրապարակություններում ներառվի երեխայի ուսումնական տվյալները: Օրինակները ներառում են՝

1. Ազդաթերթ, որում գրված է աշակերտի անունը և դերը թատերական ծրագրում;
2. Տարեգիրք;
3. Պատվո ցուցակ կամ այլ խրախուսական ցուցակներ;
4. Ավարտական ծրագրեր:

Եթե ծնողը/օրինական խնամակալը չի ցանկանում, որ դպրոցը կամ Լոս Անջելեսի միացյալ շրջանը տրամադրի գրառումների տեղեկատուի տվյալները՝ դպրոցի կամ Շրջանի հրապարակումների մեջ, ըստ վերը նշվածի, խնդրում ենք այդ մասին գրավոր տեղեկացնել դպրոցին:

Դպրոցից դուրս կազմակերպությունների մեջ մտնում են, բայց չեն սահմանափակվում թվարկածով՝ կազմակերպություններ, որոնք պատրաստում են դասարանական մատանիներ կամ հրատարակում են տարեգրքեր: Բացի այդ, դաշնային օրենքը պահանջում է դպրոցական շրջաններից, որոնք օգնություն են ստանում ըստ 1965-ի տարրական և միջնակարգ կրթական ակտի (ESEA), փոփոխությունների համաձայն, զինվորական հավաքագրողներին տեղեկություն տրամադրեն, ըստ պահանջի, միջնակարգ դասարանների աշակերտների մասին՝ նրանց անունները, հասցեները և հեռախոսի համարները, եթե ծնողները/օրինական խնամակալները նախապես չեն տեղեկացրել դպրոցական շրջաններին, որ չեն ուզում հրապարակել իրենց աշակերտների մասին տեղեկությունները՝ առանց իրենց նախնական գրավոր համաձայնության:

Աշակերտի մասին գրառումների տեղեկատուից ստորև նշված բոլոր տվյալները կարող են տրամադրվել լիազորված ստացողին, եթե չկա գրավոր դիմում դպրոցին, որ հետևյալ տեղեկությունները չհրապարակվեն, ինչպես նշված է Տեղեկությունների տրամադրման ձևաթղթում՝

1. Անուն;
2. Հասցե;
3. Հեռախոսահամար;
4. Ծննդյան թիվը;
5. Հաճախման ամսաթվերը (օրինակ՝ ըստ ուսումնական տարվա կամ կիսամյակի);
6. Ներկա և ամենավերջին հաճախած դպրոց(ներ)ը;
7. Շնորհված աստիճաններ, պատվոգրեր և մրցանակներ:

Գրառումների տեղեկատուից տվյալներ ստանալու համար Շրջանի կողմից լիազորված երրորդ կողմի ստացողների ցուցակը ներառված է Տեղեկություն տրամադրման ձևաթղթում: Եթե ծնողը/օրինական խնամակալը չի ցանկանում, որ իրենց դպրոցը կամ դպրոցական շրջանը տրամադրի ստորև նշված տվյալների տեսակները՝ որպես երեխայի ուսումնական գրառումներից ստացված տեղեկությունների ցանկ՝ առանց ծնողի/օրինական խնամակալի նախնական գրավոր համաձայնության, ապա պետք է այդ մասին տեղեկացնել դպրոցին՝ օգտագործելով Տեղեկությունների տրամադրման ձևաթուղթը՝ այս ձեռնարկից: Բացի այդ, ծնողները/օրինական խնամակալները կամ իրավասու աշակերտները պետք է տան իրենց համաձայնությունը, որպեսզի գրառումների տեղեկատուից տվյալներ տրամադրվի այն աշակերտների մասին, որոնք իրավասու են օգնություն ստանալ՝ ըստ Մաքինի-Վենտոյի՝ անօթևանների կրթական աջակցության ակտի (EC-ի բաժին 49073): Նման համաձայնագրի բացակայության դեպքում՝ աշակերտի մասին այս տեղեկությունները չեն տրամադրվի:

12-րդ դասարանի բոլոր աշակերտները համարվում են Cal Grant-ի դիմորդներ, եթե աշակերտները չեն որոշել հրաժարվել դրանից (EC-ի բաժին 69432.9): Այս տեղեկատվությունը կարող է փոխանցվել՝ ֆինանսական օգնության իրավասության որոշման նպատակով [EC-ի բաժին 49076(a)(2)(B)]: Դրամաշնորհից չհրաժարված ավագ դասարանների աշակերտների համար շրջանները պետք է Կալիֆորնիայի աշակերտների օժանդակության հանձնաժողովին (CSAC) տրամադրեն նրանց միջին որակական գնահատականները (GPA), անունները, ավարտելու ամսաթիվը, դպրոցի ծածկագիրը, աշակերտի նույնականացման համարը, սեռը, ծննդյան ամսաթիվը և հասցեն՝ Cal Grant-ի իրավասությունը պարզելու և քոլեջին համապատասխան ֆինանսական օգնության պարգևատրումներ ցուցաբերելու նպատակով: Առանց դպրոցի շրջանի կողմից հաստատված միջին որակական գնահատականների տեղեկության՝ CSAC-ը չի կարող Cal Grant-ի իրավասությունը պարզել: 18 տարեկան ավագ դասարանների աշակերտները կամ 18 տարեկանից ցածր ավագ դասարանների աշակերտների ծնողները/օրինական խնամակալները կարող են հրաժարվել Cal Grant-ի ավտոմատ կերպով դիմորդներ համարվելուց: Հրաժարվելու համար ծնողները կամ չափահաս աշակերտները պետք է լրացնեն «Տեղեկություններից հրաժարման ձևաթուղթը» և այն վերադարձնեն դպրոց՝ մինչև նշված վերջնաժամկետը:

Լրացում Աշակերտների իրավունքների պաշտպանության օրենքին (PPRA)

Աշակերտների իրավունքների պաշտպանության փոփոխությունը (PPRA) տարրական և միջնակարգ աշակերտների ծնողներին/օրինական խնամակալներին տալիս է որոշակի իրավունքներ հարցումների անցկացման, շուկայավարման նպատակով տեղեկատվության հավաքման և օգտագործման և որոշակի ֆիզիկական զննումների վերաբերյալ: Դրանք ներառում են հետևյալ իրավունքները, բայց չեն սահմանափակվում թվարկածով՝

1. Համաձայնություն, նախքան աշակերտները կներկայացնեն հետևյալ պաշտպանվող ոլորտներից մեկին (1) կամ մի քանիսին վերաբերող հարցում («պաշտպանված տեղեկատվության հարցում»), եթե հարցումն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտի (ED) ծրագրով՝
    - Աշակերտի կամ աշակերտի ծնողի քաղաքական պատկանելություն կամ համոզմունքներ;

- Աշակերտի կամ աշակերտի ընտանիքի հոգեկան կամ հոգեբանական խնդիրներ;
- Սեռական վարք կամ վերաբերմունք;
- Անօրինական, հակասոցիալական, ինքն իրեն հանցանքի մեջ մեղադրող կամ նվաստացնող վարքագիծ;
- Այլ անձանց քննադատական գնահատականներ, որոնց հետ հարցվածները սերտ ընտանեկան հարաբերություններ ունեն;
- Օրինական ճանաչված արտոնյալ կապեր, ինչպիսիք են՝ իրավաբանները, բժիշկները կամ նախարարները;
- Աշակերտի կամ աշակերտի ծնողի կրոնական գործելակերպերը, պատկանելիությունը կամ համոզմունքները, կամ;
- Եկամուտ, բացառությամբ օրենքի պահանջների՝ ծրագրի իրավասությունը որոշելու համար:

2. Ստանալ ծանուցում և հնարավորություն՝ աշակերտին ազատելու հետևյալից.
   - Ցանկացած այլ պաշտպանված տեղեկատվության հարցում ՝ անկախ ֆինանսավորումից;
   - Ցանկացած ոչ հրատապ, ինվազիվ ֆիզիկական զննում կամ սքրինինգ, որը պահանջվում է որպես հաճախելիության պայման, իրականացվում է դպրոցի կամ նրա գործակալի կողմից և անհրաժեշտ չէ աշակերտի անմիջական առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար, բացառությամբ լսողության, տեսողության կամ սկոլիոզի զննումների, կամ որևէ ֆիզիկական զննում կամ հետազոտություն, որը թույլատրվում կամ պահանջվում է նահանգային օրենսդրությամբ;
   - Գործողություններ, որոնք ներառում են աշակերտներից ստացած անձնական տեղեկատվության հավաքագրում, բացահայտում կամ օգտագործում՝ շուկայավարման կամ վաճառելու կամ այլ կերպ տեղեկատվությունը ուրիշներին տարածելու համար: (Սա չի վերաբերում աշակերտներից ստացած անձնական տեղեկատվության հավաքագրմանը, բացահայտմանը կամ օգտագործմանը՝ բացառապես աշակերտների կամ կրթական հաստատությունների համար կրթական նյութեր կամ ծառայություններ մշակելու, գնահատելու կամ մատուցելու համար):
3. Ըստ պահանջի և մինչև կառավարումը կամ օգտագործումը ստուգել.
   - Աշակերտների պաշտպանված տեղեկատվական հարցումները և երրորդ անձանց կողմից ստեղծված հարցումները;
   - Այն գործիքները, որոնք օգտագործվում են աշակերտներից անձնական տեղեկություններ հավաքելու համար՝ վերը նշված շուկայավարման վաճառքի կամ բաշխման այլ նպատակներից որևէ մեկի համար;
   - Ուսումնական նյութը, որն օգտագործվում է որպես կրթական ծրագրի մաս:

Այս իրավունքները ծնողներից/խնամակալներից փոխանցվում են աշակերտին, որը 18 տարեկան է, կամ նահանգային օրենքով ծնողական խնամքից զերծ անչափահաս է:

Շրջանը, ծնողների հետ խորհրդակցելով, ընդունել է քաղաքականություն այս իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև աշակերտների գաղտնիությունը պաշտպանելու միջոցառումներ՝ պաշտպանված տեղեկատվական հարցումների անցկացման և անձնական տվյալների հավաքագրման, բացահայտման կամ օգտագործման համար՝ շուկայավարման, վաճառքի կամ բաշխման այլ նպատակներով: Շրջանը ուղղակիորեն կտեղեկացնի ծնողներին/օրինական խնամակալներին այս քաղաքականության մասին առնվազն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և էական փոփոխություններից հետո: Շրջանը նաև ուղղակիորեն կտեղեկացնի, օրինակ՝ U.S. փոստի կամ էլ. փոստի միջոցով, այն աշակերտների ծնողներին/օրինական խնամակալներին, ովքեր նախատեսում են մասնակցել ստորև նշված հատուկ գործողություններին կամ հարցումներին, և հնարավորություն կտա ծնողին հրաժարվել կոնկրետ գործունեությանը կամ հարցմանը իր երեխայի մասնակցությունից: Շրջանը այս մասին կծանուցի ծնողներին/օրինական խնամակալներին ուսումնական տարվա սկզբին, եթե Շրջանը որոշի այդ ժամանակվա գործունեության կամ հարցումների կոնկրետ կամ մոտավոր ամսաթվերը: Ուսումնական տարվա մեկնարկից հետո նախատեսված հարցումների և գործողությունների համար ծնողներին/օրինական խնամակալներին կտրամադրվի ծանուցում նախատեսված գործողությունների և ստորև թվարկված հարցումների վերաբերյալ, և հնարավորություն կտրվի իրենց երեխային զերծ պահել նման գործունեությունից և հարցումից: Ծնողներին/օրինական խնամակալներին հնարավորություն կտրվի նաև վերանայել համապատասխան հարցումները: Ստորև բերված է հատուկ գործունեության և հարցումների ցանկ, որոնք ընդգրկված են այս ուղղակի ծանուցման պահանջի մեջ՝

1. Աշակերտներից հավաքված անձնական տեղեկատվության հավաքագրում, բացահայտում կամ օգտագործում՝ շուկայավարման, վաճառքի կամ այլ բաշխման նպատակով;
2. Ցանկացած պաշտպանված տեղեկատվության հարցման կառավարում, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն չի ֆինանսավորվում ED-ի կողմից;
3. Ցանկացած ոչ շտապ, ինվազիվ ֆիզիկական զննում կամ սքրինինգ, ինչպես նկարագրված է վերևում:

Ծնողները, ովքեր կարծում են, որ իրենց իրավունքները խախտվել են, կարող են բողոք ներկայացնել հետևյալ հասցեով՝

Student Privacy Policy Office
U.S. Department of Education
400 Maryland Avenue, SW
Washington, D.C. 20202

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ծնողները/խնամակալներն իրավունք ունեն խնդրել փոխել աշակերտի գնահատականը հետևյալ հիմքերով՝

1. Սխալ
2. Խարդախություն
3. Անբարեխղճություն
4. Գնահատական նշանակելու ոչ կոմպետենտություն (EC-ի բաժին 49066)

Երբ հանրային դպրոցներում դասավանդվող որևէ դասընթացի համար գնահատականներ են ստանում, ապա յուրաքանչյուր աշակերտի վաստակած գնահատականը պետք է լինի տվյալ դասընթացի ուսուցչի կողմից որոշված գնահատական: Վերը նշված հիմքերից որևէ մեկի բացակայության դեպքում գնահատականը կլինի վերջնական:

Գնահատականը փոխելու մասին ցանկացած պահանջ պետք է սկսվի դասարանում ուսուցչի հետ՝ գնահատականի զեկույցը փոստով ուղարկելուց հետո 30 օրվա ընթացքում: Ուսուցչի հետ հարցը չլուծելու դեպքում՝ հաջորդ քայլը գրավոր դիմում ներկայացնելն է տնօրենին: Հարցին լուծում չտրվելու դեպքում՝ որոշումը կարող է բողոքարկվել Տարածաշրջանի վերակացուի հետ, և, ի վերջո, ակադեմիական հարցերով պետի հետ: Յուրաքանչյուր փուլում ծնողն իրավունք ունի ներկայացնել տեղեկություններ՝ իր պահանջը հիմնավորելու նպատակով: Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ, ապա խնդրում ենք կապ հաստատել ձեր դպրոցի տնօրենի հետ կամ դիմել ձեր Տարածաշրջանային մասնաճյուղի տնօրենին՝ ստանալու BUL-1926.3-ի «Դիմում աշակերտի գնահատականը փոխելու վերաբերյալ» կրկնօրինակը:

ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄ

Դպրոցում ունեցած փորձի մասին հարցումը, որն անց է կացվում յուրաքանչյուր աշնանը, արժեքավոր տեղեկություն է տրամադրում շահագրգիռ կողմերին Լոս Անջելեսի միացյալ շրջանի մասին: Հարցումը իրականացվում է դպրոցների կողմից հոկտեմբերից մինչև դեկտեմբեր: Դպրոցի փորձի մասին հետազոտությունը, որը մշակված է ծնողների/օրինական խնամակալների, ուսուցիչների, միությունների և համայնքային կազմակերպություններից ստացված ներդրումների միջոցով, արձանագրում է ծնողների/օրինական խնամակալների, անձնակազմի և 4-ից 12-րդ դասարանի աշակերտների ընկալումները՝ դպրոցում իրենց փորձի մասին: Խորհուրդ է տրվում, որ բոլոր ավանդական տարրական, միջին դպրոցի և ավագ դպրոցների, ինչպես նաև՝ վաղ ուսումնական կենտրոնների, առաջնային կենտրոնների, առաջնային կրթական կենտրոնների, հատուկ կրթական կենտրոնների, կամ ընտրական դպրոցների և փոխկապակցված չարտերային դպրոցների մասնաճյուղերի հարցվողները լրացնեն դպրոցում ունեցած փորձի մասին հարցաթերթիկը: Աշակերտները և դպրոցի անձնակազմը հարցումը լրացնում են առցանց: Ծնողները/օրինական խնամակալները կարող են ընտրել լրացնել իրենց հարցաթերթիկը առցանց կամ թղթային տարբերակով/մատիտով: Ծնողները/օրինական խնամակալները կարող են նաև վերանայել հարցումը և գրավոր խնդրել, որ իրենց երեխան(երեխաները) չմասնակցեն հարցմանը (EC-ի բաժին 51513); հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել դպրոց: Դպրոցում ունեցած փորձի մասին հարցման տվյալները զեկուցվում են ամեն գարնանը, որպեսզի դպրոցներին հնարավորություն տրվի պլանավորել և պատրաստվել մյուս տարվա ուսումնական տարվա համար: Դպրոցների տվյալները տրամադրվում են ինտերակտիվ վահանակի միջոցով, որը հասանելի է https://achieve.lausd.net/Page/14935 կայքում: Դպրոցում ունեցած փորձի հարցաթերթիկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել https://achieve.lausd.net/Page/8397:

ՓՈԽԱԴՐՈՒՄ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐ

Փոխադրման ծառայությունը տրամադրվում է միայն արտոնված ծրագրերում ընդգրկված իրավասու աշակերտներին: Նախքան ուսումնական տարվա սկիզբը ձեզ կուղարկվի ձեր երեխայի տրանսպորտային ժամանակացույցի պաշտոնական ծանուցումը (Transportation Mailer-ի և/կամ Parent Portal-ի միջոցով): Այսպիսի տեղեկությունը կարող է ներառել դպրոցական ավտոբուսի ժամերը, ավտոբուսի կանոնները, կոնտակտային տվյալները և այլ հարակից տեղեկությունները: Դպրոցը սկսելուց հետո գրանցված աշակերտներին այս ծանուցումը կուղարկվի յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթը:

Ձեր երեխայի փոխադրման հետ կապված՝ կարևոր է իմանալ, որ՝

1. Ծնողները/օրինական խնամակալները պետք է երեխաների հետ ծանոթանան ավտոբուսի կանոններին;
2. Ծնողները/օրինական խնամակալները և երեխաները պետք է այցելեն ավտոբուսի կանգառ՝ դասերը սկսելու օրվանից մեկ օր առաջ, և համոզվեն, որ երեխաները գիտեն տնից կանգառ և կանգառից տուն ամենից ապահով ճանապարհը;
3. Աշակերտները պետք է պատրաստ լինեն ավտոբուս նստել իրենց ժամատախտակում նշված ժամից հինգ (5) րոպե շուտ և համոզվեն, որ ավտոբուսը ժամանելիս լինեն վարորդի համար տեսանելի նշված վայրում;
4. Երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով՝ ծնողները/օրինական խնամակալները կամ լիազորված անձը պետք է ամեն օր կանգառում լինի՝ երեխայի ավտոբուս նստելու և ավտոբուսից իջնելու պահին;
5. Ծնողները/օրինական խնամակալները և երեխաները պետք է իմանան իրենց երթուղու համարը, դպրոցի անունը և կանգառի գտնվելու վայրը: Եթե ավտոբուսն ուշանում է 15 րոպե կամ ավել, խնդրում ենք զանգահարել Դպրոցական փոխադրման ավտոբուսների կայան՝ (800) LA-BUSES/(800) 522-8737;
6. Երեխաներին վերցնելու և իջեցնելու ժամերը կարող են փոփոխվել՝ կախված երթուղու փոփոխություններից, դասերի սկսվել- ավարտվելու ժամերից: Երթևեկության վիճակը և/կամ եղանակային պայմանները նույնպես կարող են ազդել ճանապարհի ժամանակի վրա;
7. Աշակերտների կոնտակտային տվյալների փոփոխության դեպքում ծնողները/օրինական խնամակալները պետք է անմիջապես տեղեկացնեն դպրոցին, ինչպես օրինակ՝ բնակության վայրի կամ հեռախոսահամարների փոփոխության մասին;
8. Եթե ծնողները/օրինական խնամակալները դպրոցական ավտոբուսի փոխադրման վերաբերյալ ունեն հարցեր կամ մտահոգություններ, խնդրում ենք զանգահարել (800) LA-BUSES/(800) 522-8737 կամ այցելել https://achieve.lausd.net/transportation;
9. Անհատական կրթական ծրագրում (IEP) ընդգրկված աշակերտներին, որը ներառում է փոխադրումը որպես համապատասխան ծառայություն, պետք է դիմավորի ծնողը, չափահաս կամ լիազորված անձ;
10. Pre-K-ից 2-րդ (նախակրթարանից մինչև 2-րդ դասարան) դասարանի աշակերտներին դասերից հետո պետք է դիմավորի ծնողը, չափահաս կամ լիազորված անձ՝ նշանակված ավտոբուսի կանգառում;
11. Ավտոբուսից աշակերտին դիմավորող յուրաքանչյուր անձ պետք է կարողանա ցույց տալ իր ինքնությունը հաստատող փաստաթուղթ, որպեսզի կարողանա ընդունել նշված աշակերտին:

Վարքի կանոնները դպրոցի ավտոբուսներում
Աշակերտները, ովքեր օգտվում են Շրջանի տրանսպորտից, ակնկալվում է, որ հարգալից կերպով վարվեն ավտոբուսի վարորդի, դպրոցի անձնակազմի, այլ աշակերտների կամ համայնքի որևէ անդամի հետ: Դպրոցական ավտոբուսով երթևեկող աշակերտները պետք է պահպանեն նույն վարքագիծն ավտոբուսում, ինչպես դա անում են դպրոցում: Ապահովել, որ ավտոբուսում և շրջակայքում կանոնավոր վարքագիծ լինի դպրոցական ավտոբուսի վարորդի պարտականությունն է (Գլուխ 5, Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգիրքի բաժին 14103): Ցանկացած աշակերտ, ով խախտում է դպրոցական ավտոբուսի երթևեկությունը, անհարգալից վերաբերմունք է ցուցաբերում վարորդի նկատմամբ կամ վտանգի տակ է դնում դպրոցական ավտոբուսի երթևեկության անվտանգությունը, ենթակա է կարգապահական պատասխանատվության, ներառյալ կասեցումը կամ հեռացումը ավտոբուսի փոխադրման ծրագրից: Եթե ծնողները/օրինական խնամակալները հարցեր ունեն դպրոցական ավտոբուսում աշակերտի վարքագծի վերաբերյալ, կապվեք (800) 522-8737 հեռախոսահամարով կամ այցելեք https://achieve.lausd.net/transportation:

ՄԵՏՐՈՅԻ GOPASS TAP ՔԱՐՏ

Լոս Անջելեսի միացյալ շրջանի K – 12-ի բոլոր աշակերտները իրավունք ունեն ստանալու անվճար Մետրոյի GoPass TAP քարտ դպրոցի կայքից՝ անվճար երթևեկելու դեպի Քալվեր սիթի, Նորուոք, կենտրոն (DASH), Մոնտեբելո և Սանտա ավտոբուսներով և գնացքներով: TAP քարտերը պետք է ակտիվացվեն նախքան դրանց առաջին օգտագործումը: Գործող TAP քարտերը կշարունակեն ակտիվ լինել: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք https://achieve.lausd.net/metro կամ զանգահարեք (866) 827-8646 համարով: